15228

Сибили.

891.99
Т-66

Ріфіри
1885

Հրատարակութիւն Թիֆլիսի Ընկ. Հայերէն գրքերի հրատ.

891.5/42-31
Շ-66

№ 19

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

ՆԱՄՈՒՍ

ԵՂԵՐԱԿԱՆ ՎԷՊ

ԹԻՖԼԻՍ 1885

Տպարան Մ. Բաղինեանց, Գոլովինսկի Պրոսպեկտ, սեպհական տուն:

Дозволено цензурою. Тифлисъ, 20 Мая 1885 года.

Հրատարակութիւն Թիֆլիսի Ընկ. Հայերէն գրքերի հրատ.

891.99
6-66

№ 19.

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

ՆԱՄՈՒՍ

ԵՂԵՐԱԿԱՆ ՎԷՊ

-39
378552

ԹԻՖԼԻՍ, 1885

Տպարան Մ. Բոտինեանց, Գոլովինսկի Պրոսպէկտ, սեպհական տուն:

ՍԱՄՍՈՆ

2003

Дозволено цензурою. Тифлисъ, 20 Мая 1885 года.

Խորին երախտագիտութեամբ

նուիրում եմ իմ մօրը,

ՕՎՍԱՆՆԱ ՄՈՎՍԷՍԵԱՆԻՆ

Հեղինակ.

3369

I

1859 թուականի մայիս ամսին պատահած երկրաշարժը մի մեծ թշուառութիւն էր Շամախու համար։ Այդ բաւականին ծաղկած և կանոնաւորված նահանգական քաղաքը մի րոպէում կերպարանափոխվեց, դարձաւ աւերակ։ Պատրերկրեայ զօրեղ հարուածը մի ակնթարթում դուրս թափեց փողոցները հազարաւոր ընտանիքներ, որոնք մինչև այդ րոպէ հանգիստ իրանց տներում նստած, չը գիտէին թէ ինչ դժբախտութիւն է սպասում իրանց։ Հայ, ռուս, թուրք, բոլորը խառնվեցին իրարու, և փողոցները ու հրապարակները մի րոպէում սևացան մարդկանցով։ Բարձրացաւ աննկարագրելի աղմուկ, անորոշ դղրդոց։ Քառասուն հազար բնակիչների միաժամանակ բարձրացրած գոռումոռ գոչումները, խառնվելով փլատակվող շինութիւնների թընդումների հետ, մարդու ականջները խլացնում էին։

Ընդհանուր աղմուկին մասնակցում էին և տնային կենդանիների աննկարագրելի ձայները։ Ցաւարների բառանչումները, շների ոռնալը, թռչունների կչկչոցները, այդ բոլորը միանալով փոշիայի օդի մէջ, սոսկալի տպաւորութիւն էին անում ժողովրդի վրայ։

Առաջին վտանգալի րոպէն ամենքին ստիպեց մոռանալ բացի իւր անձնից ամենայն ինչ, մոռանալ նոյն իսկ իւր սրտին ամենամօտիկ արիւնակիցներին։ Նա, այդ մահաբեր րոպէն, մինչև անգամ մոռացնել տուաւ և մօրը իւր զաւակներին, այն սիրելի զաւակներին, որոնց համար նա մի փոքր առաջ, խաղաղ դրութեան մէջ, գուցէ պատրաստ էր զոհել իւր կեանքը։ Զարմանալի բան. մօտահաս վտանգի բուռն զգացմունքների ճնշման ներքոյ սեպհական անձնի փրկութեան խնդիրը երկրաշարժի րոպէում խաւարեցրեց, անհետացրեց ամենայն ինչ, որ դուրս էր նրա անհատական կեանքից։ Կեանքը քաղցրացել էր ամենքի համար։

Սակայն ահա անցաւ առաջին ահարկու րոպէն։ Մարդիկ փրկված են վտանգից։ Ամենքը փլչող պատերից հեռացած, խռնվում

են փողոցներում։ Այստեղ առաջին անգամ ամեն ոք սկսում է մոտաբերել իւր ազգականներին, արիւնակիցներին։ Կրկին սոսկումը տիրում է ամենքի վրայ և ահա թշուառները զունաթափված, մեռելային դէմքերով, ընդհանուր խառնաշփոթութեան մէջ շուարված, որտեղում են իրարու։

Օդը թնդում է հազարաւոր վայմոյներով։

—Աղբէրս վա՛յ, աղբէրս վա՛յ, բացականչում է մի կողմում մի նաղելի օրիորդ, փեսելով իւր գլխի մազերը և մերկ կրծքին բռունցքներ տալով։ Սովորական ամօթխածութիւնը նրան չի նեղում այդ րոպէում։ Նա մոռացել է իւր հայրենիքի աւանդութիւնը, որը արգելում է չափահաս օրիորդին օտար ազգամարդկանց առաջ բերան բանալը անգամ։

Օրիորդը ուշադրութիւն չի դարձնում իւր շուրջը, նա չի քաշվում ոչ ոքից։ Նրա ուշ ու միտքը կենդրոնացած է հողի և քարերի մի կոյտի վրայ։ Այստեղ կենդանի թաղված է նրա թանդագին եղբայրը, որը մի րոպէ առաջ նրա հետ խօսում էր, զուարճանում էր կամ գուցէ կռվում էր։ Ձեռքերը առաջ տարածելով, օրիորդը աղաչում, պաղատում է անցորդներին, որ օգնեն դուրս բերելու իւր սերելի եղբօրը հողի և քարերի տակից։ Ո՛չ ոք ուշադրութիւն չի դարձնում նրա ազերսալի գոռոցների վրայ։ Ամենքը զբաղված են իրանց մօտաւորների վիճակով, երևի ամենքը ունեն մի մի այդպիսի կենդանի թաղված, հետևաբար, անխելքութիւն է մէկից օգնութիւն սպասելը։ Տեսնելով, որ ոչ ոք չի օգնում, օրիորդը յուսահատված և զրկեալ անզգայ, չտապում է դէպի իւր կենդանի եղբօր տարօրինակ գերեզմանը։ Նա իւր փափուկ և քնքոյշ մատներով աշխատում է բարձրացնել առաջին մեծ քարը։ Քարը չի շարժվում տեղից, շատ ծանր է։ Փափուկ մատներից հեղում են թարմ արիւնի կաթիլներ, եղունգները փշրվում են, բայց քարը դարձեալ չի շարժվում։ Անգութ քար։

Մի ակնթարթում օրիորդը զգում է, որ կանգնած է իւր եղբօր գերեզմանի վրայ, նա զգում է, որ ինքը փոխանակ թեթևացնելու, աւելի ևս ծանրացնում է այդ գերեզմանը իւր մարմնի կշիռով։ Ծայրահեղ սարսափը վերջնականապէս ուշաթափ է անում սիրող քրոջը։ Նա մի ճիչ արձակելով, կամենում է հեռու փախչել, բայց ծնկները չեն հնազանդվում և գնդակահարվածի պէս փռվում է հողի կոյտի վրայ։ Թողնենք, որ ընկնի, երևի ընութեան քիմքը այդպէս էր պահանջում։

—Կնիկ, բալաներս, ա՛յ քրիստոնեաներ, ա՛յ ձեր հէրը լոյս գառնայ, ա՛յ հրէս էստեղ են,—բացականչում է ուրիշ կողմից մի ազամարդ, ցոյց տալով մի մեծ գերան, որի տակից երևում է նրա ամուսնի գլուխը։

Դժուար է նկարագրել այդ կնոջ դէմքը, նրա վրայ ամենայն ինչ կորցնելով իւր բնական ձևը, այլանդակվել է։ Ծանրակշիռ գերանը, որ հորիզոնական ընկած է նրա մէջքի վրայ, այնքան ճնշում է, որ քթի ծակերից թափվող արիւնը տեղ չի գտնում հոսելու։ Միրիչ նրանից հեռու երևում են երկու մանկական գլուխներ և չորս ձեռքեր, իրարու գրկած։ Այդ ձեռքերից մէկում սեղմված է մի փոքրիկ խնձոր, միւսում՝ գոյնզգոյն պաճուճապատանք։

Ողորմելի ամուսին, տարաբաղդ հայր։ Նա կարծես թէ խելագարվել է, այժ է անում գերանի ծայրը բարձրացնելու, սակայն գերանը չի հնազանդվում և յամառութեամբ ընկած է։ Կինը ծանր բեռան տակ անքում է, արձակում է հազիւ լսելի հառաչանքներ։ Ամուսինը կուրծքը գերանին դէմ տված անդադար այժ է անում։ Իզուր։

Այդպէս շարունակվում է մինչև որ մի քանի հարևաններ, կանխապէս հաւատարանալով իրանց ազգակիցների ապահովութեան մասին, չտապում են օգնելու թշուառ հարևանին։

Հարիւրաւոր այդպիսի տեսարանների բեմ էր ներկայացնում Շամախին նոյն ժամին, երբ երկրաշարժ ասված աղէտալի երևոյթը հանդիպեց այսօրուայ յետ ընկած «խարաբա-չահարին»։

Քաղաքի արևմտեան կողմում, մալականեան անուանված թաղի փողոցներից մէկի վրայ գտնվում էին երկու փոքրիկ մի յարկանի տարեան տներ։ Այս տները իրանց արտաքին համեստ և անշուք տեսքով իրարուց զանազանվում էին մի բանով միայն։ Այն՝ որ տներից մէկը փողոցի կողմից ունէր մի փոքրիկ պատուհան, իսկ միւսը—չունէր։ Երկրաշարժից ուղիղ մի ժամ առաջ այս պատուհանի առաջ նստած էր մի կին, մօտ երեսունհինգ տարեկան։ Սա դերձակ Բարխուդարի ամուսինը, Գիւլնազն էր։ Գիւլնազը նստած էր մի ծնկան վրայ, իսկ միւս ծունկը ձգած էր դէպի սենեակի յատակը, որ ծածկված էր ասիական գորգերով։ Փողոցից ոչ

թէ նրա ամբողջ երեսը, այլ միայն կիսաղէմն էր երևում։ Միջօրէի ախորժելի արեգակի ճառագայթները անցնելով երկաթի վանդակով պաշտպանվող լուսամտի ապակիներով, սիրվել էին նրա վրայ։ Զը նայելով Գիւլնազի տարիքին, նրա ոչ այնքան նեհար այտերի վրայ դեռ պահպանվում էր երիտասարդական թարմութիւնը, իսկ խոշոր, սևագոյն աչքերի մէջ փայլում էր մի կրակոտ արտայայտութիւն։ Մեխակագոյն, նուրբ բրթից գործված չալի տակից հինայով ներկած մազերի ծայրերը հանում էին մինչև մէջքը։ Գիւլնազը իւր ձեռքում չտապով գունդգոյն գուլպայ էր գործում, քթի տակ ամփոփելով։ Նա գործում էր և թուրքերէն բարբառով երգում չամախեցի կնոջ սովորական քանթին։

Պաղ, ինձի բռնեցին,
Շամխորի վրայ խորովեցին,
Միսս կերան, կշտացան,
Ոսկորներս ձգեցին։

Տանը, բացի Գիւլնազից, ոչ ոք չը կար։ Նրա ամուսինը, Բարխուդարը խանութումն էր, որ գտնվում էր քաղաքի թրքարնակ թաղում, իսկ մեծ որդին, միակ արու զաւակը, ատանուշենց տարեկան Սմբատը, դեռ ուսումնարանից չէր վերադարձել։

Փողոցում անցուդարձողներ չը կային։ Մանկահասակ աղաների և աղջկերանց մի խումբ, պատուհանի տակ հաւաքված, մի ինչոր մանկական խաղ էին խաղում։ Սակայ տակայ Գիւլնազը իւր հայեացքը դարձնում էր փողոց և նայում խաղացող մանուկների վրայ։ Մանկական անմեղ ճղվլոցների ձայնը հաղիւհաղ թափանցելով փակված պատուհանով, հասնում էր նրա ականջներին։ Այս մանուկների հետ խաղում էր և նրա միակ աղջիկը, մօտ տասը տարեկան Սուսանը։ Գիւլնազը բոլոր ծնողական անկեղծ զգայմունքներով սիրում է իւր Սուսանին և սիրում է այնպէս, որ չի վրատահանում բոլէ անգամ աչքից հեռացնել։ Այդ պատճառով պատուհանի դէմ նստած, նա հսկում է Սուսանին իւր մայրական զգաստ աչքերով, որ չը լինի թէ մէկը ընկերներից որ և է վնաս հասցնի իւր աղջկան։

Գեղեցիկ էր, գեղեցիկ էր փոքրիկ Սուսանը։ Նա գեղեցիկ էր, որովհետև ներկայացնում էր իւր մօր, Գիւլնազի կատարելատիպը։ Փոքրիկ աղջիկը ժառանգաբար ստացել էր բնութիւնից իւր մօր բոլոր ֆիզիկական յատկութիւնները, ամենաանչան մանրամասնութիւններով անգամ։ Բարխուդարը ամենայն անգամ իւր աղջկայ երեսին նայելիս, սովորութիւն ունէր ասելու, «փառք քո գորութեան, Տէր Ամենակարող Աստուած, էդքան էլ նմանութիւն, հէնց կասես, որ մէր ու աղջիկ մի ինձոր լինեն, երկա տեղ բաժնած»։ Պակաս չէր զարմանում և ինքը, Գիւլնազը, այդ նմանութեան վրայ։ Գիւլնազը մտաբերում էր իւր մանկութիւնը ամենայն բոպէ, երբ նայում էր Սուսանի երեսին։ Նրան թւում էր թէ այդ փոքրիկ գէմքի վրայ, ինչպէս հայելու մէջ, տեսնում է իւր գէմքը։ Նոյն փայլուն, սևորակ աչքերը երկար թերթերունքներով, նոյն չնորհալի սրածայր քիթը, նուրբ, վարդագոյն շրթունքները, գեղեցիկ այտերը, ի հարկէ մանկութեան յատուկ թարմութեամբ։

Սուսանի հետ խաղացող երեխաների թւում կար մօտ մի տասներեք տարեկան աղայ։ Սա ամենամօտիկ հարևան «կում ծառոր» Հայրապետի որդի Սէյրանն էր։ Հայրապետը իւր ընտանիքով ապրում էր այն տան մէջ, որ գտնվում էր դերձակ Բարխուդարի տանը կից և որի մասին վերը մի ակնարկութիւն արինք։

Սուսանի և Սէյրանի մէջ նկատվում էր մի տեսակ մտերմութիւն, մի մտերմութիւն, որ երևի յառաջացել էր երկու մանուկների յաճախ տեսնվելուց։ Այդ մտերմութիւնը երևան էր գալիս նա մանաւանդ այն ժամանակ, երբ Սէյրանը կամ Սուսանը կրռվում էին իրանց ընկերակիցների հետ։ Այդպիսի դէպքերում մէկը պաշտպանում էր միսմին։ Օրինակ, երբ Սէյրանը կռվում էր մէկի հետ, Սուսանը խիստ վազում էր նրա հակառակորդի վրա և իւր փոքրիկ ձեռքերով բռնում վերջինի արխալուղի փէշերը քամակից և բոլոր ոյժով քաշում։ Այդպիսով նա նպաստում էր Սէյրանի յաղթութեանը։ Իսկ եթէ Սէյրանի հակառակորդների թիւը մէկից աւելի էր լինում, այդ ժամանակ Սուսանը անմիջապէս վազում էր Սէյրանի մօրը յայտնելու։

—Մարիամ բաջի, Մարիամ բաջի, Սէյրանին երեխերքը ըստանեցին,—ասում էր նա արտասուքը աչքերում և երկիւղից ամբողջ մարմնով գողդողալով։

Մարիամ բաջին իսկոյն դուրս էր թռչում և կռվող մանուկներին իրարից բաժանում։ Այն պաշտպանութիւնը փոխադարձաբար ցոյց էր տալիս և Սէյրանը իւր կողմից Սուսանին, երբ վերջինին պատահում էր մէկի հետ կռվել։ Իսկ այդ փոխադարձ պաշտպանութիւնը նրանց միւս ընկերակիցների մէջ զարթեցնում էր նախանձ, որ շատ անգամ արտայայտվում էր բացարձակ թշնամութեամբ։ Սուսանին և Սէյրանին ծաղրում էին, նրանց վրայ ծի-

ծաղում էին և պատռտում էր մինչև անգամ որ ամենքը միանալով յարձակվում էին նրանց վրայ ու ծեծում։

Գիւլնազին վազուց էր յայտնի այս ամենը և այդ էր պատճառը, որ նա շուտ շուտ նայում էր դէպի փողոց։ Մի առանձին ախորժելի, բայց միևնոյն ժամանակ զառն ժպիտ էր տալիս Գիւլնազի երեսով ամեն անգամ, երբ նա իր հայեացքը ձգում էր Սուսանի վրայ։ Նա տեսնում էր, թէ ինչպէս իր փոքրիկ Սուսանի դէմքը բերկրութեամբ փայլում էր, երբ Սէյրանը մօտենալով նրան և ձեռ ձեռի տալով քաշում էր խաղի տապարէզը, որտեղից Սուսանը սովորութիւն ունէր շուտ շուտ հեռանալ և քաշվել պատի տակ։ Նա տեսնում էր, թէ ինչպէս Սէյրանը ախրում էր, երբ Սուսանին չէր գտնում խաղացողների թուում, թէ ինչպէս Սէյրանը յոնքերը կիտում էր ու դէմքը թթուացնում, երբ որ և է բանով անբաւական էր մնում Սուսանը։

Այդպիսի բոպէներում Գիւլնազի գլխով տեսակ տեսակ մտքեր էին անցնում և նրա մայրական քնքոյշ սիրտը սկսում էր բաբախել իր զաւակի ապագայ վիճակի մասին։ Նա կրկին մտաբերում էր իր անցեալը, սեպհական մանկութիւնը և այդ մանկութեան հետ կապված շատ յիշատակներ։ Մտաբերելով իր անցեալը, Գիւլնազը կրծքի խորքից արձակում էր խորը հառաչանքներ։ Թէ ինչու,—այդ ինքը միայն գիտէր։ Ահա այդ հառաչանքներից մէկի դուրս թռչելու վայրկեանն էր, երբ Գիւլնազը իր նստած տեղը յանկարծ զգաց մի զօրեղ շարժում։ Երկար մտածել չէր կարելի, նա իմացաւ թէ ինչ է նշանակում այդ շարժումը։ Գուլբան ձգեց մի կողմ և մի ակնթարթում ինքը դուրս թռաւ։

Առաջին վայրկեանին Գիւլնազը մտաբերեց իր զաւակներին, յետոյ ամուսնուն։ Որդին, Սմբատը ուսումնարանումն էր, իսկ ուսումնարանը բաւական հեռու է, ուրեմն նախ հարկաւոր է որոնել Սուսանին։ Գիւլնազը վազեց փողոց, որ արդէն լցվել էր հարևաններով։

—Ախչի Գիւլնազ, Գիւլնազ, այ բոյիդ մեռնեմ բալաներս, բալաներս, ասելով հանդիպեց նրան փողոցի դռանը մի միջահասակ կին, երկու ձեռքերով ճանկռտելով իր մերկացրած կուրծքը։

Սա հարևան, «Ղուժ ծախող» Հայրապետի կինն էր, Սէյրանի մայրը։ Մարիամ բաջին Գիւլնազի մէջ կենդանութիւն չէր մնացել, նրա լեզուն կտրվել էր, և խօսելու ոյժ չունէր։ Առանց պատասխան տալու, նա թռաւ առաջ և ընկաւ Մարիամ բաջու գիրկը, ինքն էլ չը գիտէր թէ ինչու համար։

—Ձեռ քաշիր, այ ախչի, խելքդ գլխիդ հաւաքիր, որ տեսնենք բալաներս ինչ տեղ մնացին,—բղաւեց Մարիամ բաջին, իր բոլոր ոյժով հրելով Գիւլնազի կրծքին։ Խեղճ կինը բոլորովին ուժաթափ եղաւ, բայց ոչ երկար ժամանակով։ Մայրական սէրը կրկին վերադարձրեց նրան իր բնական աշխուժութիւնը։ Նա գլխակոր վազելով հետևեց Մարիամ բաջուն, որը նոյն վայրկեանին ինքն էլ չը գիտէր, թէ ուր է վազում։

Այդ ամենը անցնում էր երկրաշարժը պատռած բոպէում։ Երբ մարդիկ զգում էին թէ դեռ երկիրը չի դադարել որոտալուց։ Երկու մայրերը չը գիտէին թէ ինչտեղ էին իրանց զաւակները։ Գիւլնազը այնքան չփոթված էր, որ մոռացել էր թէ մի բոպէ առաջ նրա Սուսանը խաղում էր մանուկների հետ հէնց իրանց տան պատուհանի դէմ, ուրեմն այդ կարճ միջոցում նրանք չէին կարող շատ հեռու փախչել։ Խեղճ կանայք փնտրելով իրան գլխի մազերը և եղունգներով ճանկռտելով իրանց երեսը ու կուրծքը, վազում էին այս ու այն կողմ, սուք ու չիւան բարձրացնելով։ Յանկարծ նրանց առաջը կտրեց մի զուռնաթափված մանուկ, որը արտասուքը աչքերում և խեղդված ձայնով ասաց։

—Մարիամ բաջի, այ Սէյրանը Սուսանի հետ մնացին հողի տակ, շատ արէք հանեցէք, խեղճերի սիրտը կը ճաքի։

Մանուկը ցոյց տուաւ մի փոքր դէպի ձախ այնտեղից, ուր ինքը քիչ առաջ անհոգութեամբ խաղում էր Սուսանի և Սէյրանի հետ։ Մանկան բերանից թռած այդ չարագուշակ խօսքերը, իրրև սուր ասեղներ, ցցվեցին դժբաղդ մայրերի սրտում։

—Բալաս վայ, վայ բալաս, դուրս թռաւ միաժամանակ նրանց կրծքից։ Սա մի վայրենի ձայն էր, մի ձայն, որը կարող է միայն մօր կրծքից դուրս գալ։

II

Բարխուդարի և Հայրապետի խանութները գտնվում էին քաղաքի միևնոյն թաղում և միևնոյն շարքում, այնպէս որ այստեղ նրանք հարևաններ էին։ Նոյն ժամին, երբ Գիւլնազը պատուհանի դէմ նստած գուլբայ էր գործում, նրա ամուսինը, Բարխուդարը, իր խանութում, մինդարի վրայ ծալապատիկ նստած, դազգահի ա-

ուաջ կար էր անում։ Սա մօտ յիսուն տարեկան բարձրահասակ տղամարդ էր, հաստ և բաւական երկար բեղերով, սափրած երեսով, խիտ յօնքերով, որոնց տակ տեղաւորված էին երկու չականագագոյն կոլորակ աչքեր։ Բարխուդարը աւելի նիհար էր, քան թէ գէր, բայց նրա այտերի տակից դուրս ցցված հաստ ոսկորները, լայն թիկունքները և բարձր ուսերը արտայայտում էին նախանձելի առողջութիւն և ոյժ։ Նա հագնում էր երկար թեաւոր կապայ, նոյն ձևի արխալուղ, որի վրայ ուղիղ երեք ծալ կապած էր կապտագոյն մուտաքսեայ գօտի։ Իսկ գլուխը ծածկում էր նա բուխարայի սև մորթուց կարած երկար, սրագագաթ գտակով, որի ծայրերը թէ ներքևից և թէ վերևից քիչ մաշվել էին և տեղ տեղ մորթու մազերը թափվելով, սպիտակ կաշին մերկացել էր։ Բացի Բարխուդարից, խանութում գործում էին երեք աշակերտներ և մի քեարգեար (օգնական վարպետ)։ Բարխուդարը իւր փոքրաւորներին և՛ սիրում էր, և՛ էլ ատում, կամ կակղութեամբ էր վարվում նրանց հետ կամ խստութեամբ, նայելով թէ ինչ հոգեկան արամադրութեան մէջ է գտնվում ինքը։ Եթէ Բարխուդարը գոհ էր լինում իւր աշակերտների բարք ու վարքից, կատարած գործերից, նա կատարեալ մի հայր էր դառնում նրանց համար։ Նա սիրում էր նրանց, ինչպէս իւր Ամբատին և Սուսանին, պարգևներ էր բաշխում, հեռը տուն էր տանում ճաշելու, ընթրելու կամ թէյ խմելու։ Մուշտարի եկած ժամանակ նա աշխատում էր, որքան կարելի է, «շագիրդանան» *) չատ պոկել։ Իսկ երբ նա տխուր էր լինում կամ աշակերտներից անբաւական, այդ ժամանակ նա կատաղում էր և ինչպէս։—Նրա մշտական մռայլ դէմքը կարմրում էր, աչքերը արիւնով լցվում էին և նա մոռանում էր ամեն բան։ Էլ մկրատներ, գաղչափեր, մոմի կռուճներ, մատնոցներ, մահուդի կտորտանք չէին մընում, որ նա նստած տեղից չը հասցնէր յանցաւոր աշակերտի գլխին։ Երբեմն պատահում էր, որ Բարխուդարը գործ էր ունում կրակով լիք արդնուկը, կամ տեղից վեր էր կենում, բարձրացնում էր փոքրիկ յանցաւորին մինչև իւր գլուխը և միանգամից վայր խփում գետնին։ Աշակերտը զգում էր թէ իրը մի բարձր ծառից էր ընկնում, այնքան երկար էր նրա վարպետի հասակը։ Այդ բաւական չէր. պատժվելուց յետոյ, յանցաւորը չէր կարող բարձր ձայնով

*) «Շագիրդանա» մի փոքրիկ պարգև է փողով, որը հին արհեստաւորները սովորութիւն ունեն առնել իրանց աշակերտների օգտին մուշտարիներից։

լաց լինել։ Եթէ ոչ հաւատացած էր, որ երկրորդ անգամ կը պատժվի։ Նա քաշվում էր խանութի մի անկիւնը և սովորաբար այն անկիւնը, ուր ածուխ էր հաւաքած և նստելով այստեղ, լաց էր լինում խեղդվելով, մինչև որ սիրտը հանդարտվում էր։ Այնուհետև Բարխուդարը սկսում էր նրա սիրտը առնել, խրատներ տալ, ի հարկ է միևնոյն ժամանակ արտաքուստ չը ցոյց տալով, թէ փոշիմանել է իւր խստութեան մասին։

—Քիչ սրդտղիր, վեր կաց էս չոխան տար տուր սիրտը, ամա տես հա, առանց չաղիրդանի չի պուք դաս։

Պատժված աշակերտը աչքերը սրբում էր և ցաւը մոռանում։

Երկրաչարժը պատահած բոպէին Բարխուդարը դարձեալ բարկացած էր աշակերտներից մէկի վրայ։ Նա հէնց նոր էր վերջացրել կշտին դրած մոմի կռուճները, գաղչափերը, մահուդի կտորտանքը և ուզում էր տեղից բարձրանալ։ Բայց այդ վայրկեանին յանկարծ նա բոլոր մարմնով դողաց և «թրրփ» մէկ էլ նորից նստեց տեղը։

—Ուստա դուրս թռիր, տափը տիրուն ա կեամ,—գոռաց քեարգեար Սարգիսը և պատասխանի չը սպասելով, ինքը մի ոստումով թռաւ փողոց։ Բարխուդարը և աշակերտները անմիջապէս հետևեցին նրան։

—Սարգիս, դուքանը ձեռաց կապիր, ես տուն եմ վազում,—ասաց Բարխուդարը և գտակը գլխից հանելով (ինքն էլ չը գիտէր ինչու համար), վազեց դէպի տուն։ Տունը բաւական հեռու էր, որովհետև գտնվում էր քաղաքի միւս ծայրում։ Ամբողջ ճանապարհը Բարխուդարը պիտի բարձրանար դէպի վեր, որ մի մեծ դժուարութիւն էր նրա համար այդպիսի դրութեան մէջ։ Նա սկսեց իւր երկար ոտերին ոյժ տալ։ Բայց դեռ մի քանի քայլ չ'անցած, նրան հանդիպեց Հայրապետը։

—Ջրրընդ, զրրնդ,—փչրվեցին, Բարխուդար, տունս քանդվեց։

—Քեչի ջան հաւայրնդա, զատաբ փիչ *),—պատասխանեց միայն Բարխուդարը, ուշադրութիւն չը դարձնելով Հայրապետի վրայ և մինչև անգամ չը նայելով նրա երեսին։

Երկու հարևանները չարունակեցին իրանց ճանապարհը դէպի տուն։ Բարխուդարը արագիլի նման էր ընթանում, մինչդեռ կարճահասակ Հայրապետը հազիւ հաղ կարողանում էր հետևել նրան։

*) Այծը իւր կեանքի հոգսումն է, իսկ սպանդագործը՝ նրա ճարպի։

Հայրապետը ճարահատեալ սկսեց վազ տալ, որպէս զի յետ չը մընայ իւր հարեւանից։

Քաղաքը չէր հանդարտւում, փողոցները դեռ լիքն էին խառնիճաղանճ ամբոխով։ Հայրապետը և Բարխուդարը գժուարութեամբ էին կարողանում իրանց համար ճանապարհ բանալ։ Ամենայն մի քայլափոխում նրանց առաջ հանդիսանում էին մէկը միւսից զարհուրելի տեսարաններ։ Մի կողմում երեք չորս մարդիկ փալասի մէջ փաթաթած տանում էին բազարից դէպի տուն իրանց ազգականներից մէկի դիակը։ Փալասի ծայրերը բռնողները լաց չէն լինում, նրանց աչքերի արտասուքը չորացել է և նրանք առաջ են շարժում լուռ ու մունջ, իբրև գիշերային ուրուականներ։ Մեւս կողմում մէջքից ծռված մի ծերունի կանգնած իւր փլատակված տան աւերակների վրայ, ողբում է իւր որդու կորուստը, ուժաթափ ձեռքերը խփելով ալեզարդ գլխին։ Այստեղ հաւաքված են մի խումբ մանուկներ։ Նրանք իրանց մօր դիակը չրջապատած մի այնպիսի աղաղակ են բարձրացրել, որ լսողի գլխի մազերն են ցցվում։ Այնտեղ ահա, ուղիղ փողոցի մէջ տեղում մի կին է նստած։ Նա իւր գրկում բռնած մանկահատակ աղջկայ ջարդ ու փշուր եղած գլուխը, կատաղած համբուրում է նրան։ Կինը երբեմն, երբեմն բարձրացնում է իւր գլուխը և երկու ձեռքով բռնելով անցորդների հագուստի փեշերից, բղաւում է վայրենի ձայնով։

—Տուէք ինձ, ինձ տուէք մինիկ աղջկանս, դուք էք նրան ոպանել, անտառուածներ, դուք քսակ չի արիք նրան հողի տակից դուրս բերելու։

Սակայն անցորդները ուշադրութիւն չեն դարձնում նրա վրայ, միայն մի վայրկեան նայում են նրա արիւնալի աչքերին, զժվել է, բացականչում և գլուխները շարժելով, շարունակում իրանց ճանապարհը։

Մի խօսքով ամենայն մի քայլափոխում Բարխուդարը և Հայրապետը հանդիպում էին մէկը միւսից աւելի ողբերգական, աւելի սարսափելի պատկերների և բոլոր մարմնով դողում։

Վերջապէս նրանք հասան այն փողոցը, ուր գտնվում էին նրանց տները։ Դեռ փողոցի ծայրից Բարխուդարը տեսաւ, որ իւր տան հանդէպ խռնվում են մարդիկ։

—Տունս թափվել է, կնիկս ու բալաներս տակն են մնացել,—անցաւ նրա մտքով մի սոսկում զգալով։ Պակաս չը սարսեց և Հայրապետը, բայց նոյն վայրկեանին յանկարծ նրանց առաջը կորեց

մի գունաթափ պատանի։

Սա Բարխուդարի որդի Սմբատն էր։

—Սուսանին էլ դուրս բերեցին հողի տակից, Սմբատին էլ սաղ սալամաթ են։ Միքիչ Սէյրանի գլուխը արնվել է, ինքը լաց չի իլում, ասում է չի ցաւում, ծիծաղում է։

—Բան մէրդ, Մարիամ բաջին, սաղ սալամաթ են,—հարցրեց Հայրապետը։

—Չիմ, չիմ սաղ սալամաթ են։ Մարիամ բաջին ինձ ասեց, որ վազ տամ ու ձեզանից խաբար իմանամ։ Շուտ հասնինք, նրանք նիգարան են, դրսում հաւաքված լաց են լինում։

Փողոցում նրանք հանդիպեցին Գիւլնազին և Մարիամ բաջուն։ Մարիամ բաջին տեսնելով իւր ամուսնուն կենդանի և անվնաս, չը կարողացաւ զսպել իւր ուրախութիւնը։ Նա վազեց առաջ և ուզում էր փաթաթվել Հայրապետի վզովը, բայց յանկարծ մտաբերեց, որ փողոցումն է և յետ քաշվեց։ Իսկ ամօթխած Գիւլնազը ուրախութեան արտաքին ոչինչ նշան չը ցոյց տուաւ։

—Սաղ սալամաթ են, խօսեց վերջապէս Մարիամ բաջին,—Սէյրանս ու Սուսանս ազատվեցին, ողորմի մեր հարեւանների մեռելներին, նրանք մեզ ձեռք հասցրին, հանեցինք հողի տակից։

—Փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ,—ասացին միաբերան Բարխուդարը և Հայրապետը, իրանց երեսների քրտինքը սրբելով։

—Ամա տունս քանդվեց Մարիամ ջան, զըրնդ-զըրնդ կուժ ու կուլաս փշրվեցին։ Ո՛ւֆ, էնոց կասես որ ոսկորներս էին փշրվում, հաւատաս մի հատ էլ սաղ չի մնացել, պիտի վազ տամ տանեմ։

—Փիյէ է, զանգա տարիր խօ, յանդիմանեց Բարխուդարը իւր հարեւանին,—ինչ անչնորհակալ մարդ ես իլած, մին երեսից խաչահանիր, որ մենք ամենեսս սաղ սալամաթ գտնվել ենք։

Այդ ասելով Բարխուդարը միւսների հետ չտապեց դեպի։

Երկու հարեւաններից ոչ մէկի տունը չէր քանդվել, միայն բակի կողմից ցած պարիսպը փլատակվել էր կիսով չափ։ Նոյնպէս մի քանի տեղերից ճաքճաքվել է փողոցի պարիսպը։ Այդ կողմից երկու հարեւանները համեմատաբար բախտաւոր էին, քան թէ միւս նրանց հարեւանները, որոնցից չատերի տները կատարեալ աւերակներ էին դարձել։

Բարխուդարը և Հայրապետը տեղեկանալով Սուսանի և Սէյ-

բանի մասին, չասպեցին իրանց ազգականների և բարեկամների մասին «հալ օվհալ» խմանալու։

Մի երկու ժամից յետոյ նրանք կրկին վերադարձան և յայտնեցին թէ՝ փառք Աստուծոյ ամենքը փրկված են, միայն այս ինչի գլուխն է քիչ ջարդվել, այն ինչի կուռն է դուրս ընկել և այլն։

—Ամա բանից երևում է, որ շատ մարդ է փուչացել, ասում են որ մեռ յիսուն հոգի կայ—աւելացրեց Բարխուդարը։

—Ինչ յիսուն, ոռ քաղաքն է սուգի մէջ,—մէջ մտաւ Հայրապետը։ Գնացի Մարիամ ջան դուքանս տեսայ, մեխիր մեխիր, հէնց կասես, որ ամեն չամաններս ձեռքով փչրատ իլեն։ Աղջերը ջոկեցի զրաղ դրի։ Դրուստ երկու հարիւր կուժ է մնացել, հարիւր կուլայ, վեց կարաս, տասներկու խաչխաչի գաւաթներ, է է, մին էլ քանութ գիլասարի ամեն, մնացածը «հիֆֆ» թող։

III

Երեկոյ էր։ Քաղաքը բաւական հանդարտվել էր, ցերեկվայ խլացուցիչ աղմուկի, զզրդոցի փոխարէն այս ու այն կողմերից լսվում էին լալու հանդարդ ձայներ։ Իսկ քաղաքի հեռաւոր մասերից, թրքերի թաղից, երբեմն երբեմն բարձրանում էին ծնծղաների և թմբուկների հնչիւններ։ Կանանց, աղամարդկանց և երեխաների «չահ Հիսէյն, վահ Հիսէյն» բացականչող ձայները խառնվելով այդ հնչիւնների հետ և տարածվելով խաւար մթնոլորտի մէջ, մի տեսակ անբացատրելի զարհուրանք էին ազդում լսողի մէջ։

Սա թուրք գժրազդ ընտանիքներն էին, որոնք սգում էին իրանց ազգականների յանկարծակի կորուստը։

Օդը բաւական մաքրվել էր։ Փլատակված շինութիւններից բարձրացած փոշին նստել էր գետնին։ Երկինքը պարզ էր, լուսին չը կար։ Գժրազդացած քաղաքի ողբերգութեան վկայ աստղերը զայծառութեամբ պպզում էին։ Բնակիչները,—ոմանք իրանց տների բակերում, ոմանք փողոցներում,—բաց օդի տակ—կամ վրանների մէջ,—պատրաստվում էին հանդստանալու։ ցերեկվայ չարչարանքնե-

րից յետոյ։ Ոչոք չէր համարձակվում իւր տունը մտնել, որովհետև վտանգալի էր, ամենքը երկիւղ ունէին երկրաշարժը կրկնվելուց։

Բարխուդարի և Հայրապետի ընտանիքները վճռեցին այս գիշեր միասին անցկացնել։ Գիւղացիք, Մարիամ բաջու օգնութեամբ, սիռելով բակում, խորտակված պարսպից քիչ հեռու, մի քանի կարպետներ, բաւական ընդարձակ տեղ էր պատրաստել երկու ընտանիքների համար։

Ժամանակ է ասել, որ Բարխուդարի և Հայրապետի ընտանիքների մէջ կար մի անկեղծ բարեկամութիւն նահապետական ձևերով։ Երկու հարեան ընտանիքները մոտ քսան տարի էր, որ խաղաղ և անխախտ չարունակում էին այդ բարեկամութիւնը։ Քսան տարիներ ապրելով միասին, նրանք այնչափ ընտելացել էին իրար, որչափ հազիւ թէ կարողանան ընտելանալ երկու ազգական ընտանիքներ։ Մէկի սխրութիւնը բնականաբար սխրութիւն էր պատճառում միւսին, իսկ ուրախութիւնը—ուրախութիւն։

—Մի հատ քեզվէս հարեանը ինձ համար թանգ է, քան տասը ազգականներ,—ղէպքը պատահած ժամանակ Հայրապետը չէր մոռանում կրկնել Բարխուդարին։

Եթէ պատահում էր, որ նրանցից մէկը այս կամ այն ձախորդութեան պատճառով ընկնում էր թէ նիւթական և թէ բարոյական նեղ դրութեան մէջ, իսկոյն միւսը առանց հարցնելու, աշխատում էր իւր հարեանին դուրս բերելու նեղութիւնից։

—Բարխուդար։

—Հը՞մ։

—Ախար երէկ էլի «սուխարի Սարգիսը» բաղարում բռնեց ինձ։

—Պատճառը։

—Դուքանի քրէհ է ուզում։

—Լաւ։

Եւ Բարխուդարը միւս օրը մի կերպ հաշիւը վերջացնելով «սուխարի Սարգսի» հետ, Հայրապետի օձիքը ազատում էր նրա ձեռից։

Այդպիսի սերտ բարեկամութեան չնորհով շատ հազիւ էր պատահում, որ երկու ընտանիքները նեղ դրութեան մէջ մնային։

—Ունայնութիւն ունայնութեանց, այսօր բաղումն ենք, վաղը հողումն,—կրկնում էր յուսա յուսա Բարխուդարը։

Միւս հարեանները տեսնելով Բարխուդարի և Հայրապետի

այդ բարեկամութիւնը զարմանում էին, նա մանաւանդ նրանք, որոնք աւելի մօտիկ էին ծանօթ երկու հարևանների բնաւորութեանը։ Այդպիսիների համար մի հանելուկ էր, թէ արդեօք ինչն է նպաստում Հայրապետի և Բարխուդարի այդչափ սերտ բարեկամութեան։ Նրանք երկար միջոց իրարու հետ վիճաբանում էին այդ մասին։ Վերջ ի վերջոյ իրանց կարծիքով մի կերպ իրրև թէ հանելուկը բացատրեցին։

Առաջ Հայրապետի և Բարխուդարի հարևանները այդպէս էին դատում։

—Տանձ ու խնձոր մի ծառի վրայ ով է տեսել։ Ախար մինը կրակի կարմիր-գայլ է, միւսը գլուխը բոչ-ոչխար, հարար ինչպէս են իրարու աչքը մտել։

Իսկ յետոյ, երբ իրանց կարծիքով, զաղտնիքը խմացան, այդպէս էին դատում։

—Մինը էշ է, միւսն էլ նրա փալանը։

Այսպէս թէ այնպէս Հայրապետը և Բարխուդարը բարեկամներ էին և այդ բարեկամութիւնը իրաւունք էր տալիս նրանց ընտանիքներին միասին զիշերելու։

Բարխուդարը նստած էր փոքրիկ մինդարներից մէկի վրայ։ Նա մի կուռք բարձին յենած, իսկ միւս ձեռով երկար ու բարակ չիբուխը բռնած, մտածողութեան մէջ թաղված, ծխում էր։ Գազրատանի դառն թամբաքուի ծուխը քուլա-քուլա դուրս սրնթալով նրա հատա բեղերի տակից, ոլոր մոլոր պատյաններով բարձրանում էր խաղաղ օդի մէջ։ Ամենայն անգամ ծխի քուլաները բերանից դուրս արձակելու ժամանակ Բարխուդարը գլուխը բարձրացնում էր վեր և կրկին ցած ձգելով, «չրրթ» թքում դեռնին։ Հայրապետը նստած էր նրա դէմ ու դէմ։ Այդ մարդը նոյնպէս ինչոր մտածմունքների մէջ էր, ինչպէս այդ երևում էր նրա ճակատի կնճիռներից։ Երկար տէրոզրմեայի սև ու խոշոր հատիկները կանոնաւոր կերպով պտոյտ գալով նրա ձեռում, չիկչիկում էին միատեսակ ձայնով։ Կար մի տեսակ ներդաշնակութիւն այդ չիկչիկոցների և Բարխուդարի բերանից դուրս եկող ծխի քուլաների մէջ։

Սմբատը մի կողմը քաշված, ճրագի առաջ մի ինչոր գիրք էր թերթում։ Սմբատից մի փոքր հեռու Մարիամ բաջին և Գիւլնազը քիթ քթի տուած ընթրիքի պատրաստութիւն էին տեսնում, երբեմն իրարու հետ քշփշալով։ Իսկ Սուսանը և Աէյրանը պառկած էին Բարխուդարի ձախ կողմում, ջոկ-ջոկ անկողինների մէջ։

Աէյրանի գլուխը և ձախ աչքը փաթաթված էր կարմիր թաշկինակով։ Սուսանի ոչ մի տեղը փաթաթված չէր, նա բոլորովին անվնաս էր պրծել։

Վանդից փրկված մանուկները, իրարու դէմ պառկած, խօսակցում էին մի քանի ժամ առաջ իրանց գլխովը անցած փոթանքի մասին։ Նրանք խօսում էին մի այնպիսի սառնասրտութեամբ, որ կարող էին ամաչացնել հասակաւորներին։

—Ես հողի տակ չը լսեցի կարմիր կովի ձայնը,—ասում էր Աէյրանը։

—Ես լսեցի, նա մին բառանչում էր, մին բառանչում էր, որ ջանս զարդանդում էր,—պատասխանեց Սուսանը։

—Ի՞նչպէս կով էր, պոչեր ունէր։

—Ունէր, ունէր, հար մին պոչը էն ծառի բոյին։

Սուսանը իր փոքրիկ ձեռով ցոյց տուաւ Աէյրանին բակում գտնվող կանաչազարդ թթենին։

—Աչքեր էլ ունէր,—կրկին հարցրեց Աէյրանը։

—Բառ, բառ, այ հար մին աչքը էս բոյի պլոչ-պլոչ։

Սուսանը վերմակի տակից հանեց երկու ձեռքերը և նրանց ծայրերը իրարու մօտեցնելով, կոնելով մի չրջանակ կազմեց։

—Ես պոչերն էլ տեսայ, գլուխն էլ տեսայ, աչքերն էլ տեսայ,—չարունակեց Սուսանը,—բիթոն տեսայ, բիթոն։ Աէյրան, նա բերանը բացել էր ու ինձ ասում էր։ «Սուսան, Սուսան, ես քեզ կուլ կը տամ, իմանում ես։ Ես լաց իլայ, ազաչեցի, որ ինձ կուլ չը տայ։ Վուշ վուշ, Աէյրան, նրա բերանից, քթի ծակերից, աչքերից մին կրակ էր փչում, մին կրակ էր փչում քթի։ կասես մեր էն մեծ թունդուրը իլէր։ Աէյրան դու տեսել ես մեր մեծ թունդուրը։

—Չա, տեսել եմ։

—Իմանում ես, որ հաց թխելիս նրա մէջ ալովը ինչպէս է «գուփ, գուփ» անում։

—Չա, իմանում եմ։

—Այ, կովի բերանի կրակն էլ հէնց էնէնց «գուփ-գուփ» էր անում։ Իմանում ես։ Բառաս, լեզուն էլ մի ասիր, վայ-վայ, տէնց կասես, որ կարմիր նոր թխած հաց լինէր։

—Սուտ ես ասում, ես չեմ հաւատում,—ընդմիջեց նրան Աէյրանը, ուղղելով իր գլխի թաշկինակը։

—Ես եմ սուտ ասում, եէէէս, եէէէս,—բարկացաւ Սուսա-

նը, գլուխը բարձրացնելով և ձեռքերով ճակատի վրայ թափված գանգուր մազերը յետ դարսելով։ Բաս չես իմանում, որ տափի տակին կարմիր կով կայ։ Չես իմանում, որ երբոր մարդիկ կարմիր կովին չատ են կթում, էլ նրա պտուկի բալի համար կաթ չեն թողնում, կովը հրատավում է մեզ վրայ։ Չես իմանում, որ պոզերը բուրբը թափառարում է, մէջքն էլ մին պլնդ քորում է, տափը տրրոր ա տալիս ու մեզ էլ տակովն է անում էսօրվայ պէս։ Հըմ, հրմ, չես իմանում։

—Քեզանից էլ լաւ եմ իմանում, ինչպէս չեմ իմանում, ամա դու էլի սուտ ես ասում, ինչու որ դու նրան հոզի տակ իսկի չես տեսել։

—Սուտը դու ես, որ չես հաւատում։

—Սուտ, սուտ, սուտ։

—Ուտես հաւի կուտ, հէր դէհ լաւ էր,—բարկացաւ Սուսանը և կարմրեց։

—Հա հա հա,—կչկչաց Սէյրանը։

—Ծիծաղիր, ծիծաղիր, անհաւատ, հարցրու հայրիկից։

—Էլի ինչ կայ, ինչու համար էք կռիւ անում,—մէջ մտաւ Բարխուդարը, վերջապէս չիրուխը հանելով բերանից և կշտին դրնելով։

—Սէյրանը չի հաւատում, որ տափի տակին կարմիր կով կայ։

—Սուտ է ասում Սուսանը, ես հաւատում եմ,—արդարացաւ Սէյրանը։

—Հա, կայ բալաներս, բաս որ չը լինէր, էսօր տափը ով տիրուն կը տար,—ասաց Բարխուդարը, քաղցրութեամբ շոյելով Սուսանի մազերը և համբուրելով նրա ճակատից։

—Ո՞վ էր հուրատացրել կարմիր կովին, որ մեզ հոզի տակին թողեց,—հարցրեց Սէյրանը։

—Զեզպէս չար ու կուսարար երեխերքը։

—Մենք ինչ ենք արել, որ ասում ես։

—Էլ ինչ պիտի անէք. մեր խօսքը չէք լսում, մեր ասածը չէք կատարում, չարութիւններ էք անում, երեխաների հետ կռիւ էք անում ամեն օր, այ ինչ էք անում։

—Ես իսկի կռիւ չեմ անում,—հակառակեց Սուսանը։

—Ես Սուսանին էնքան եմ սիրում, էնքան եմ սիրում, որ չեմուզում նա ինձանից հեռանայ, ինչու պիտի կռիւ անենք,—աւելացրեց Սէյրանը։

—Շատ լաւ էք անում, շատ լաւ էք անում բալաներս, ուրիշ երեխաների հետ էլ էնպէս սիրով վարվեցէք, նրանց հետ էլ կռիւ մի անէք։

—Իրանք են մեզ հետ կռիւ անում, մենք իսկի չենք ուզում,—պատասխանեցին միաբերան երկու մանուկները։

—Մեզ փախըլութիւն են անում նրանք,—շարունակեց Սէյրանը,—էնց տեսնում են, որ ես ու Սուսանը մի տեղ խաղ ենք անում, թափվում են մեզ վրայ, ծիծաղում են, մեր աչքերին հող են ածում, մեզ «հրռ-հրռ» են կանչում։ Մենք էլ հուրատվում ենք նրանց վրայ ու կռիւ անում։ Այ, էն օրը թափառողանց Ջհանգիրը ուզում էր Սուսանի մազերից քաշի, ամա էնց որ ես մօտեցայ, մի սիլա տաի, մի սիլա տուի, որ մին բաչ փախաւ իրանց տուն։

—Ի՞նչ էիր խօսում, Սուսի ջան, Սէյրանի հետ հոզի տակ,—հարցրեց Հայրապետը, վերջապէս ընդհատելով իւր տէրողորմեայի չըխկչխկոցը։

—Ի՞նչ էի խօսում, հա, չէ չէ, չեմ իմանում. միտս չի, Սէյրանը կ'ասի։

—Խօսում չէինք, լաց էինք իլում,—մէջ մտաւ Սէյրանը։

—Հերիք է Սէյրան, քիչ խօսիր, այ գեդա, գլուխդ կը ցաւի,—չընչեց Մարիամ բաջին, մօտենալով իւր որդուն։ Յետոյ նա չալը բերանին պահած, մօտեցաւ իւր ամուսնուն և ցած ձայնով աւելացրեց. «այ մարդ երեխա մի թողնիր, որ հոզի տակ մնալը միտը դցի, ախար կղարգանդի ու յետոյ կը հիւանդանայ»։

—Քո բանը չի, թող ինչքան ուզում է խօսի, սիրտը կը պնդանայ, մին էլ, որ կը մեծանայ, կը մոռանայ,—հակառակվեց Հայրապետը։—Ասիր բալաս, ինչպէս մնացիր հոզի տակ, ինչ էիք խօսում։

Սէյրանը կարծես թէ հէնց մի այդպիսի առիթ էր որոնում։ Նա գլուխը բարձրացրեց, ծալապատիկ նստեց անկողնի մէջ և այսպէս սկսեց։

—Սուսանը տիկին-տիկին էր խաղանում Սուսամբարի, Թագուհու, Զազարի, Սապանի, Խաթայիի, Նուրջիի և Յուսուսիկի հետ, էս էլ թամաշա էի անում։ Մին էլ տեսնենք «զիւռ զիւռռ» երկինքը գոռգոռեց, տափը լըխլխեց, իմ գլուխս չուռ տուաւ, ոտի վրայ կանգնել չի կարողացայ։ Զիմ փախան, ես մին էլ Սուսանը մնացինք։ Ես էլ կը փախչէի, ամա Սուսանը կպաւ չորերիցս, պուք չ'եկաւ, ես էլ չի կարողացայ ոտ փոխել։ Մին վախտ տեսնենք Ախ-

չամանանց դուռը «թարաախկ» մեզ վրայ ընկաւ, մի քիչ գլխս կը-պաւ, ամա մին ցաւացրեց, մին ցաւացրեց, որ ես հառայ տուի ու տեղդատեղ ընկայ։ Սուսանն էլ ընկաւ, իմ կողքիս ընկաւ։ Աման աման, խեղճը մին լաց էր իլում, մին լաց էր իլում, որ մաղերս գիք-գիք էր կանգնում, սիրտս մըղկըտ-մըղկըտ էր անում։ Մին էլ տեսնեմ «գիւռ գիւռ» հողը սելի պէս թափվեց մեր գլխին, ամա Աչամանանց դուռը ընկած էր մեզ վրայ ու չէր թողնում, որ հողը մեզ չատ զօռ անի։ Սուսանը վախութենից ինձ զուլ արաւ «վայ մամա, վայ մամա» կանչելով...Յետոյ, յետոյ, հա տեղս գինջ էր, ամա գլխս ճղված տեղը չատ ցաւում էր, նաֆասս էլ մին քիչ փաթաթվում էր։ Սուսանը ասեց, Աէյրան, դա տափի տակի կարմիր կովն է, էլի հուրսոտվել է մեզ վրայ։ Յետոյ...յետոյ, ես ասեցի, Սուսան, եկ մենք էստեղից զուրս գալուց յետոյ էլ չարութիւն չ'անենք, կարմիր կովին չի հուրսոտացնենք, երեխաների հետ կռիւ չանենք, չիմին սիրենք։ Սուսանը ասեց, հա կ'սիրեմ, կ'սիրեմ, չիմ երեխաներին կ'սիրեմ, մինիկ եղբօրս արեր վկայ կ'սիրեմ, թող մին ապաւինք, թող մինիկ մամիս երեսը տեսնեմ։ Այս որ ասեց, էլի լաց իլաւ, ես էլ լաց իլայ, երկուսներս էլ ձէն ձէնի տուինք ու լաց իլանք։ Իմ խեղճս գալիս էր Սուսանին։ Յետոյ...յետոյ, յետոյ ինչ իլաւ, հա չեմ ասիլ։

Աէյրանը վերջին խօսքերը ասելուց յետոյ գլուխը ցած թեքեց և սկսեց ամօթխածութեամբ աչքերի տակով նայել Սուսանին։ Նրա ականջները և երեսը կարմրեցին։ Սուսանը աչքերը գլխած, ականջները խըլչած ուշադրութեամբ լսում էր նրան։

—Յետոյ ինչ իլաւ,—հարցրեց Հայրապետը, ձեռքերով չոչելով Աէյրանի գլուխը։

—Յետոյ, ես դռնի տակից ձեռքերս մեկնեցի, զուլ արի ու պաչեցի, էլ նրանից յետոյ ինչ իլաւ, ինչ չիլաւ, միտս չի։

—Ո՞ւմին պաչեցիր։

—Սուսանին։

—Այ զոչաղ,—բացականչեց Հայրապետը, աջ ձեռը դնելով իւր որդու ուսին և ուղիղ նայելով նրա աչքերին։

—Սուտ, սուտ, սուտ է ասում նա, ինձ չի պաչել,—մէջ մտաւ Սուսանը, որի գեղեցիկ թշերը, որ առանց այդ ես կարմիր էին, Աէյրանի խօսքերից յետոյ վարդի գոյն ստացան։

—Դու ես սուտ ասում, պաչել եմ, քո մտքին չի։

—Լաւ է լաւ, մի հուրսոտվի Սուսի ջան, ինչ անենք որ պա-

չել է։ Եղբայրը քրոջը կը պաչի էլի,—հանդստացրեց մանուկներին Բարխուդարը, քաղցրութեամբ նայելով նրանց երեսին։ Մանուկները լռեցին, Բարխուդարը չիբուխը կրկին վառեց և կրկին նորից ընկաւ մտածողութեան մէջ։

IV

Ընթրիքը պատրաստ էր։ Մարիամ բաջին և Գիւլնազը բացեցին մէջ տեղ կապտագոյն մաքուր սփռոցը և վրան չարեցին տեսակ տեսակ ուտելեղէններ։ Իրարու ջղրու, երկու տանտիկինները ինչ որ ունէին բերին մէջ տեղ։ Գեանախնձոր, քամած մածուն, եփած հաւ, ոչխարի խորոված, խաչած ձուներ, թթուեղէն, կանաչեղէն, մի խօսքով ինչ որ ունէին, բերին դարսեցին։ Իսկ Գիւլնազը իւր կողմից այդ բոլորը զարդարեց խաղողի թանդ օդիով լիքը մի մեծ չիչով, որ նա բերաւ ու դրաւ ուղիղ իւր ամուսնու ծնկան առաջ։ Բոլորը պատրաստելուց յետոյ, Մարիամ բաջին և Գիւլնազը քաշվեցին մի կողմ, որ առանձին ընթրեն։

Վերջապէս ընթրիքը սկսվեց, օղու բաժակները մի քանի անգամ լցվեցին ու դատարկվեցին։ Կարծես թէ երկու հարևանները կամենում էին ալքօհոլի զօրութեամբ ջնջել իրանց սրտերից ցերեկվայ անցքից մնացած ծանր տպաւորութիւնը։

Հայրապետի գլուխը չատ տաքցաւ քան թէ Բարխուդարինը։ Բանը այնտեղ հասաւ, որ նա մինչև անգամ մոռացաւ իւր կուժ ու կուլան։ Դեռ այդ բաւական չէ, նա իւր ալեխառն մազերով զարդարված գլխից հանելով մորթու գդակը, փորձ արեց Գեօռգլոի չիբեաստաներից մինը կըկլպացնելու։ Սակայն Բարխուդարը այդ նկատելով, յիշեցրեց նրան թէ անյարմար է, որովհետև բոլոր հարևանները դրսումն են, կը լսեն և կը ծիծաղեն։

—Ափսոս, ափսոս, Բարխուդար, էշխս միջումս թողիր։ Այ հաչ հայ, փուչ է փուչ աչխարհս։ Տէր-Մաթաը ասում է «և ասէ հող էիր ու հող դառնաս»։ Էհ քէֆդ քեօք պահիր, ինչ կայ, փառք Աստուծոյ, մեռնեմ նրա զօրութենին, նա ուզում էր մեզ խրատել ու խրատեց, լաւ խրատեց, չատ լաւ խրատեց։ Ամա կուժ ու կուլաս զբրընգ զբրընգ հաչ, փահ փահ, սիրտս էր մըղկտում, չունքի դէ էլի

ապրանք է էլի։ Աղա էհ, ջան ու ջհաննամը, խալխը կտրվեցին, կուժ ու կուլա էլ նրանց մատաղ, հոռայ կուժ ու կուլա մատաղ Սէյրանիս ու Սուսանիս գլխի մի մազին։

Արտասանելով այդ ճառը, Հայրապետը օղու բաժակը միանգամից դատարկեց և իր կարճլիկ բեղերը սրբելով, թաչկինակը ձգեց ուսերին։

Բարխուդարը ուտում էր և թէ և ըստ երևոյթին լսում էր իր հարևանի ճառաբանութիւնը, բայց ներքուստ կարծես թէ նրա միտքը մի ուրիշ բանով էր զբաղված։

—Ինչքան որ, Բարխուդար ջան, ֆիքր անես, հարիւր կոպէկը էլի մին մանէթ է։ Հոգ, հոգ, ամենները հոգ ենք դատնալու։ Մարիամ ջան, Գիւնդաղ խանում, կոնծեցէք, որ սիրանները բացվի մուանաք էսօրվայ տեսածներդ։

Բարխուդարը լուռ ու մունջ ընթրում էր, երբեմն օղին կում անելով քիչ-քիչ։ Երբ Հայրապետը լռեց, նա յանկարծ արագութեամբ սրբեց բեղերը և մի ձեռով բարձրացնելով օղու չիչը, իսկ միւսով բաժակը։ ասաց,

—Հայրապետ, մտքովս մին բան է անցնում, մին թաս էլ ուրաղ ածիր, տեսնենք։

—Թող հաղարը անց կենայ, ամա խէր իլի։ Ասում ես, որ ուզեմ։ Օհո, բաշ իստայ, բաշ իստայ, (գլխս վրայ)։ Ջանս դուրս դայ, ինչ անեմ, ճարս կարած պիտի դժուար հրամանդ կատարեմ։

Հայրապետը բաժակը պահեց ձեռքին և Բարխուդարը լցրեց մինչև ծայրը։

—Դէհ, հիմայ կարող ես հրամայել Բարխուդար ջան, ՏԷր-Աստուած, դու խէրը վերաբերեա։

—Խէր չիլած, ինչ կայ, փառք Աստուծոյ։ Հայրապետ, առաջ էս թասը խմենք մեր Սուսանի ու Սէյրանի կենացը։ Ողորմած Աստուածը որ մեր ծերութեան օրում մեզ խնայեց ու նրանց մեզ մէկ էլ նորից բախշեց, թող օրէս դէն էլ պահի ու պաշտպանի մեզ համար։

—Երկու ձեռքերով պինդ պահի, օֆարին, օֆարին, Բարխուդար, ճարտար լեղուիդ դուրբան,—բացականչեց Հայրապետը, միանգամից պարպելով բաժակը։

—Հայրապետ, քանի տարի է մենք միասին հարևանութիւն ենք անում, էսքան ժամանակ, գոհութիւն Աստուծոյ, մենք մի անգամ էլ իրարուց չենք նեղացել։

—Իսկի իսկի, ով է տեսել, որ ես քեզ կամ դու, ինձ ասած իլես «այ մարդ ասդ էրվում է, զրաղ զիր»,—ընդմիջեց Հայրապետը։

—Ինչպէս մենք, էնպէս էլ մեր օղուչաղը, ապրել ենք սէր, միաբան, որ համ Աստուծուն է դուր եկել, համ էլ բանդին խօշ,—չարունակեց Բարխուդարը։—Ղորթ է, ես եղբայր չեմ ունեցել, բայց Աստուած վկայ է, որ միշտ քեզ եղբօրից աւել եմ խնացել։ Է՛հ, Հայրապետ, չեմ խմանում թէ մէրս որ ինձպէս մէկն էլ ծնէր, ես նրա հետ ինչպէս պիտի վարվէի։ Մտիկ եմ տալիս հիմիկվայ աշխարհին, մտիկ եմ տալիս հիմիկվայ եղբայրներին ու ողորմի եմ տալիս մօրս հոգուն, որ նա ինձ համար եղբայր չի ծնել։ Ով է իմանում, նա էլ ինձ համար ուրիշների եղբօրց նման եղբայր կը լինէր, որ հիմայ փողի համար իրարու գլուխներն են ծակում, ինչպէս հրէն Ղարդուչանց Եփրեմը ու Գրիգորը։ Աստուած է վկայ, որ ամեն մի մտիկ անելիս հիմիկվայ աշխարհին, որ միտք եմ անում, մտքերս դիք դիք են կանգնում, մարմինս փշաքաղում է։ Հայրապետ, ցաւերս եռ են գալիս, բախշիր, Հայրապետ, մարդս կեղտոտվել է, մարդս փուչացել է։ Էլ հայայ, էլ արուս չի մնացել, նամուս ասված բանը ճրագով որ պտռես, չես կարող գտնել։ Չը կայ։ Բաս Աստուած ինչ անի, որ էս ամենը տեսնելով, էսօրվայ պէս պատիժ չը հասցնի մեր մեղաւոր գլխին։ Թացն էլ էրվում է չորի կրակով։ Էլ գողութիւն ասես, մարդասպանութիւն ասես, խաբեբայութիւն, սուտ ասել, էլ մի մեղք չի մնացել որ չ'անեն։ Զ

աչքերը չռած, ուշադրութեամբ լսում էր Բարխուդարի ճառը։ Վերջին խօսքերը լսելու ժամանակ խեղճ մարդը այլ ևս չը կարողացաւ զսպել իւր արտասուքը։ Նա սկսեց փոքրիկ մանկան նման հեկեկալ։

—Հիմայ երեխայի պէս լաց ես ելնում, ամա ինչոր մտքովս անցնում է, նա էլ որ ասեմ, Հայրապետ, պիտի ծիծաղես։ Անպատճառ կը ծիծաղես, ինչու որ մին չատ լաւ բան եմ ասելու։

—Ասիր, ասիր, Բարխուդար ջան։ Իմ լեզուս Տէր-Մաթալի ասած Զաքարիայի լեզուի պէս պապանձվել է, ես խօսելու հնար չունիմ։

—Միտքս նա է Հայրապետ, որ մենք պիտի աշխատենք մեր բարեկամութիւնը պինդ պահել որ չը վնի թէ մեր միջովը սև կատու անցկենայ։ Մենք պիտի էնպէս մօտիկ ապրենք, որ ջուրը ջրութենով մեր գլխով չը թափվի։ Լսում ես, ջուրը ջրութենով։ Հիմայ դու կը հարցնես, դա ինչպէս կը վնի։ Ականջներդ լաւ բացիր Հայրապետ ու լաւ լսիր, տես ինչ եմ ասում։ Դու քնում ես այ մարդ։

Իրաւ, որ Հայրապետը, կարծես թէ, ուզում էր քնել։ Նրա աչքերի կոպերը յոգնածութիւնից և մէկ էլ օդի զօրութիւնից այնքան ծանրացել էին, որ նա չէր կարողանում բաց պահել աչքերը։ Իսկ տանձի կոպի պէս թուլացած շլինքը այժ չունէր, որ նրա գլուխը ուղիղ պահէր, վասնորոյ վերջինը տատանվում էր այս կողմ այն կողմ։ Բայց չը կարծէք, որ Հայրապետը ներհում էր։ Ոչ, նրա աչքերն էին միայն խփված, իսկ ինքը ուշադրութիւնով լսում էր Բարխուդարին։

—Մի քիչ գլուխս թարաղ չի, ամա ասիր, ասիր, Բարխուդար, խօսքերից մինն էլ բաց չեմ թողնում։

—Թարաղ պահիր, տես ինչ եմ ասում։

—Հը՞։

Հայրապետը գլուխը մի կերպ բարձրացրեց, աչքերի կոպերը յանքերի հետ այժով քաշեց դէպի ճակատը և նայեց Բարխուդարի երեսին։ Հրաղի դեղնագոյն լուսոյ առաջ նրա կարմրած աչքերը փայլեցին։

—Շատուց է, որ ես տեսնում եմ, իմ Սուսանիս և քո Սէյրանիս մէջ կայ մին մօտաւորութիւն, նրանք իրարու հետ էնպէս են վարվում, ինչպէս մին հօրից ու մին մօրից ծնվածներ։ Ե՛կ Հայրապետ ջան, մենք էլ մեր ձեռով էս երեխաների սէրը հաստատենք և մեր բերանով օրհնենք։ Էսօրվայ օրը նշանաւոր օր է։ Եկ Սէյրանին ու Սուսանին հէնց էս նշանաւոր գիշեր իրարու հետ կապենք ու Աստծուն բախշենք։ Ես Սուսանիս բախշեցի քո Սէյրանին։ Սուսանս, փառք Աստուծոյ, օրից օր չափահասանում է։ Էսօր, էգուց նրան մեր քաղաքի ազաթի գեօրայ կը գցենք տուն, որ եաղ ալի երես չը տեսնի, ինչպէս որ աղջկայ պարտքն է և ինչպէս որ մեր պատիւն է ուզում։ Ամա ես խստակ սրտից խօսք եմ տալիս, որ Սուսանս Սէյրանինը կը վնի։ Իմ ասածս ասած է, գրածս էլ գրած, խօսքիցս յետ չեմ կանգնիլ թէ որ Սէյրանիդ էնպէս կը մեծացնես, որ նա մեր քաղաքի «չաթու քեռասանների» պէս ազայ չի դուրս գայ։ Լսում ես։ Դէհ, ասա Հայրապետ ջան, ինչ ես ասում, լաւ միտք եմ արել թէ չէ։

Բարխուդարի խօսելու ժամանակ Գիւլնազի և Մարիամ բաջու քրչփչոցը քանի գնում էր այնքան կենդանանում։

Երբ Բարխուդարը իւր խօսքերը աւարտելով, դիմեց Հայրապետին, հարցնելով նրա կամքը, վերջինը մի քանի վայրկեան ոչինչ չը պատասխանեց։ Նա ապշած նայում էր իւր հարևանի երեսին, բայց յանկարծ նա սթափվեց, գդակը գլխից վերցրեց և, որքան կռնումը ոյժ կար, խփեց գետնին։

—Մարիամ ջան, Մարիամ ջան, մին մօտ եկ, մօտ եկ, էստեղ վազիր մօտս մօտս, այ, հա՛ հա՛, էստեղ կանգնիր։

Մարիամ բաջին զարմացած մօտեցաւ իւր ամուսնուն և կանգնեց նրա մօտ, մի ձեռով չալի ծայրը բերանին պահած։ Հայրապետը բռնեց նրա արխալուղի փէշից, կարծես թէ, վախենալով, որ մի գուցէ ձեռից փախչի։

—Մարիամ ջան, դու քո հօր աղջիկը չես իլի, մարդու զաւակ չես իլի, թէ որ սուտ ասես։ Չիլաս, հայա մին երեսիդ խաչակնքիր տեսնեմ, հա՛, էգպէս։ Դէհ, Մարիամ գաղ տանեմ, հիմայ ասիր, քանի-քանի անգամ եմ ես փիքր արել հէնց Բարխուդարի ասածը։ Հըմ, միտդ չի, ասիր էլի, լալ խօ չես, հըմ քանի անգամ եմ ես քեզ ասել որ լաւ կը վնի մեր Սէյրանին Սուսանի հետ բէշիզքեարթմա անինք։ Ասիր էլի…

Մարիամ բաջին դէպի Բարխուդարի կողմը գլխով նշան արաւ, թէ ճշմարիտ է ասում Հայրապետը։

—Չէէ, չէ, չիլաս, լեզուովդ ասիր։ Խօսիր, խօսիր, հաջաթ չի, մի ամաչիր,—հրամայեց Հայրապետը։

—Ղորթ է ասում, չատ է ասել, փնթփնթաց քթի տակ Մարիամ բաջին։

—Լսում ես Բարխուդար։ Դէհ, հատ հատ հուռռայ, էս թատն էլ կը խմենք Սուսանիս ու Սէյրանիս բէշիդքարթմի համար։

Մարիամ բաջին մօտեցաւ Գիւլնազին։ Երկու տանտիկինները օգուտ քաղելով յաջող դէպքից, վերջապէս կամեցան գտնել առժամանակ արձակել իրանց լեզուների սանձը։

—Հըմ, ինչ կայ փըչփըչում էք, խօսեցէք, տեսնենք, թէ դուք ինչ էք ասում,—դիմեց նրանց Բարխուդարը։

—Աստուած շնորհաւոր անի, բախտաւոր իլին, մեծանան, պըսակենք, ծլեն, ծաղկեն, մենք էլ խեղճ ենք, տեսնենք մեր էս կարօտ աչքերով ու ուրախանանք,—խօսեց Մարիամ բաջին բարձր ձայնով։

—Այ ախչի, թող մին բան բերենք, որ բերանները քաղցրացնեն,—մէջ մտաւ Գիւլնազը, մի ձեռով չալի ծայրը բերանին բռնած, իսկ միւս ձեռի արմունկով բոթելով Մարիամին։

—Մուրաբաներից բերեցէք, տեսնենք,—հրամայեց Բարխուդարը։

—Թող ես կը բերեմ,—ասաց Գիւլնազը, տեղից բարձրանալով։

—Չէ, թող ես կը բերեմ,—հակառակեց Մարիամ բաջին, բռնելով Գիւլնազի թևից և կամենալով կրկին, որ նստացնի իւր տեղը։

—Չէ, ես կը բերեմ։

—Չէ, չէ մերը լաւն է, նոր եմ եփել։

—Մերը նարինջի է։

—Մերն էլ վարդի է։

Երկու տանտիկինները մի քանի վայրկեան այնպէս ոտի վրայ կանգնած հակառակվում էին, իրարու կրծքին հրելով։ Ոչ մէկը թոյլ չէր տալիս միւսին տեղից շարժվելու։

—Երիտասարդ, զուռնաղաւալը բարձրացրին սատանի ճաերը, ձեռ քաշեցէք, եկաք, խաբարդար,—գոռաց Հայրապետը և գդակը յարձակեց նրանց վրայ։

—Հանդարտվեցէք, լաւ է, երկուսներդ էլ բերէք, տեսնենք ինչ էք բերում։

Բարխուդարի հրամայողական ձայնը ստիպեց Գիւլնազին և Մարիամ բաջուն իրարուց բաժանվելու։

Մի բոպէից յետոյ սփռոցի վրայ չարվեցին փոքրիկ տարելկների մէջ մի քանի տեսակ մուրաբաներ։

Այդ ընդհանուր աղմուկի ժամանակ մանուկները քնից զարթեցան։

—Ինձ էլ մուրաբա տուէք,—գոչեց Սուսանը, գլուխը բարձրացնելով և աչքերը բռունցքներով տրորելով, որ քունը փախցնի։

—Ինձ էլ տուէք,—կրկնեց Սէյրանը։

—Բաս ես, ինձ չէք տալու,—աւելացրեց Սմբատը։

Բարխուդարը, բոլորին բաւականացնելուց յետոյ, ասաց։

—Սուսի, էսօրվանից քեզ ու Սէյրանին բախչում ենք կարմիր կովին։

—Օոо, չէ չէ չեմ ուզում, ես կարմիր կովի պօղերից վախենում եմ։

—Ես չեմ վախենում, ես նրա պօղերի վրայ կը նստեմ,—մէջ մտաւ Սէյրանը։

—Մէք վախիր, մենք ձեզ չենք տալու նրան, որ տանի։ Դուք նրա բալաները կը լինէք հիմիկվանից, ամա մեզ մօտ կը մնաք։ Մենք բաշխում ենք ձեզ նրան, որ էլ էս դիշերից դէն չի հուրատվի ձեզ վրայ, ձեզ հողի տակին չը թողնի։

—Էս թատը մինէլ կոնձում եմ Սէյրանիս ու Սուսանիս կենացը,—ընդհատեց Հայրապետը։ Լսիր, Բարխուդար, մի լաւ աղօթք եմ սովորել Տէր-Մաթալից, թող նա էլ ասեմ ու բանը պրծնի։ Ինչպէս է...հա...Աստուած շնորհաւոր անի, բարով թող ու պսակի արժանանան, կանաչ կարմիր կապեն, «և առեալ զձեռն զնչայի զտուեալ» ...Դէհ, Սէյրան, մին մօտեցիր ու հարսնացուիդ մին լաւ պաչիր, այ ինչպէս որ էսօր հողի տակումն ես պաչել։

—Ինչ հարսնացու,—հարցրեց Սէյրանը երեխայական զարմացմամբ։

—Սուսանին, ձեզ նշանեցինք, դու նրա փեսացուն ես հիմայ։

Պարզամիտ մանուկները լսելով Հայրապետի խօսքերը, կարմրեցին ամօթից։ Հայրապետի ստիպմամբ նրանք իրարու գրկեցին և համբուրեցին։ Այդ համբոյրը եղաւ երկու մանուկների ազատայ միաւորութիւնը երաշխաւորող միակ դրաւականը։

—Դէհ, բալաներս, չոքեցէք ու մին աղօթք արէք ձեր արդար բերանով, որ Աստուած էսօրվայ պէս օր նշանց չի տայ մեզ,—ասաց մանուկներին Մարիամ բաջին։

Մանուկները չոքեցին երեսները դէպի աղօթարան և նախ

«Հայր մեր» ասեցին, յետոյ Մարիամ բաջու թելադրութեամբ, երկրաշարժը չը կրկնվելու համար աղօթեցին։

Աղօթքը վերջացաւ և երկու ընտանիքները բաժանվեցին, որ գնեն։

V

Երկրաշարժը մի անգամ դրօշմելով իւր կնիքը Շամախու ճակատին, կարծես թէ, երգուել էր այնուհետև այլևս ձեռ չը քաշել նրանից։

Տարիներ անցան, բայց քաղաքը չէր խաղաղում։ Նա նմանում էր ընդարձակ ծովի վրայ լողացող մի նաւի, որ խորտակված առագաստներով և փչրված խարիսխներով թողած ճակատագրի հաճոյքին, երերվում է ալիքների մէջ։ Ցիրաւի, երկիրը կարծես թէ մի անգամ կորցնելով իւր ոյժը, կարողութիւն չունէր պահել քաղաքի ծանրութիւնը։ Ինչպէս դաշտում մեծացած մի վայրենի ծի, որ իւր մէջքը չէ կամենում ենթարկել թամբի ծանրութեան, այդպէս և Շամախու երկիրը չարժում էր իւր մէջքը, յամառութեամբ հրաժարվելով քար քարի վրայ թողնել։

—Սողոմ-Գոմորն է,—կրկնում էին ծերունիները իրանց ալեզարդ գլուխները շարժելով։

Կառավարութիւնը տեսնելով, որ քաղաքը չէ խաղաղում, ստիպված եղաւ նահանգատեղին փոխադրելու Բաքու։ Դա եղաւ մի ուրիշ հարուած, որից յետոյ քաղաքը միանգամայն զրկվեց կենդանութիւնից։ Քանի գնաց, այնքան նրա դրութիւնը թշուառացաւ։ Առևտուրը ընկաւ, ժողովուրդը օրըստօրէ սկսեց չքաւորանալ։ Շատերը ստիպվեցին թողնել իրանց պապական երկիրը և դաղթել ուրիշ քաղաքներ, օտարութեան մէջ օրական ապրուստ հայթայթել։ Մեծ մասամբ դաղթում էին հայերը, որոնք զվարաւորապէս գնում էին Ղուբայ, Դերբենդ, ուր այդ ժամանակները առևտրի արդիւնաբերութիւնը նախանձելի վիճակի մէջ էր գտնվում։ Իսկ միւս մասը դաղթում էր Դաղստանի զանազան կողմերը, Պետրովսկ, Վլադիկովկաս, Թէյմուրխան-Շուրայ և այլն։

Այս ընդհանուր դաղթականութեան ախտը, որ, պիտի ասած, խիստ վարակիչ էր, չը համարձակվեցաւ մօտենալ ոչ Բարխուդարին և ոչ էլ Հայրապետին։

Առաջինը այսպէս էր դատում։

—Ես դերձակ մարդ եմ, իմ արհեստս թրքերի հետ է կապված, թրքերն էլ խօ, փառք Աստուծոյ, հալա իրանց տեղումն են։ Նրանք մեզանից խելօք են, իրանց պապական օջաղը չեն քանդում մեր հայերի պէս ու օրքա օրքա ընկնում մին կտոր հացի խաթրու։ Թէ որ Աստուած մարդուս ճակատին մին կտոր հաց է գրել, նա որտեղ որ իլի, կուչտ կիլի, թէ չէ, ու չէ։

Իսկ Հայրապետը այսպէս էր դատում։

—Թուրքը ինքը անօրէն է, ամա խօսքը շատ օրինաւոր, ասում է. «քեօռ իշուն համսի ըիր դի, եա բուրդա, եա Բաղդադա»։ *) Մին քանի հարիւր կուժ ու կուլաս բաքնած ինչտեղ կարող եմ գնալ, ինչ կարող եմ անել։ Էլի Շամախում մին բան կայ, զորթ է մնդք է ասելը։ ամա դրուստն պիտի խոստովանեմ, որ տափը տրոր գալը զորթ է ինձ ձիասեց, խէր էլ տուաւ չունի քաղաքում էլ սաղ կուժ ու կուլայ չի մնացել։ Հիմայ ամենքը մէկէլ նորից են առնում։ Առևտուրս զօռ է։

Այդպէս Բարխուդարը և Հայրապետը մնում էին Շամախում։

Երկու հարևանները չարունակում էին իրանց բարեկամութիւնը։ Նախկին դրացիութեան համակրութեան վրայ ավելացել էր և մի ուրիշ պատճառ բարեկամութեան, այն է՝ խնամութիւնը։ Գիւլնազը և Մարիամ բաջին խնամիներ էին և նրանք կատարում էին մի առանձին եռանդով այն բոլոր պարտականութիւնները, որ պահանջում էր նրանցից քաղաքի աւանդութիւնը։

Ուրեմն էիր, որ բարեկենդան օր է, տաւօտեան կանուխ, դեռ չայ չը խմած, ահա Մարիամ բաջին ցրտից սրթսրթալով, ներսմտաւ, ձեռում երկու տարելկներ իրարու վրայ դրած։ Տարելկների մէջ խնամքով դարսած են դուխաբներ և բիշիներ **)։ Մարիամ բաջին վազելվազ բերել է, որ նրա «աչքի լոյս Սուսանը տաք-տաք ուտի»։

Ցատիկ առաւօտ է, մէկէլ տեսնես Գիւլնազը չալի ծայրում

---

*) Կոյրի համար մեկնոյն է, այստեղ, թէ Բաղդադում։

**) Դուսաց բլինու նման խմորեղէն կերակուրներ են, որ բարեկենդանին պատրաստում են Շամախու հայերը։

փաթաթած տասը քսան խաչած կարմիր ձուեր վազեցնում է Հայրապետանց տունը։

—Աա՛ բալա՛, տար էսօր կռուացրու էս ձուերը, բախտդ փորձիր,—ասում է նա, ձուերը տալով Սէյրանին և մի քանի համբոյրներ դրօշմելով նրա ճակատին ու թշերին։

Դեռ երկրաշարժից մի տարի չանցած Հայրապետը Բարխուդարի խորհրդով Սէյրանին տուել էր Սարգիս վարպետի ուսումնարան, որ գրել ու կարդալ սովորի, ուր նոյնպէս սովորում էր Բարխուդարի որդի Սմբատը։

—Թող սև ու սպիտակը ջոկել սովորի, մեզ նման մարդը ինչի է հարկաւոր,—ասում էր Բարխուդարը։

Սէյրանը առաջին տարին մի այնպիսի ընդունակութիւն ցոյց տուաւ, որ Սարգիս վարպետի ուշադրութիւնը գրաւեց։ Մի տարվայ ընթացքում նա անցաւ այբուբէնի տեսրը, սաղմոսը, բայց երբ երկրորդ տարում նա հասաւ աւետարանին,—սկսեց փոքր առ փոքր ծուլանալ։ Նա օրէց օր զզուեց Սարգիս վարպետի ուսումնարանից։ Շատ աշխատեց Սարգիս վարպետը իւր ընդունակ աշակերտին ազատելու ծուլութեան սխալից, նա չատ անգամ դիմեց այդ նպատակով իւր սովորական մեղմին—փալախկային։ Բայց ոչինչ չ'օգնեց։ Սէյրանը քանի գնում էր այնքան ծուլանում։ Նա չատ ժամանակ տանը Մարիամ բաջուն խաբելով, թէ ուսումնարան է գնում, գրքերը թաղցնում էր բակում, հողի տակ, իսկ ինքը վազում փողոց իւր ընկերակիցների հետ խաղալու։

Հայրապետը սկզբում խրատում էր նրան, պարգևներ էր խոստանում, բայց վերջը տեսնելով որ այդ չէ օգնում, նոյնպէս դիմեց Սարգիս վարպետի միջոցին, այսինքն սկսեց ծեծել։

—Ես չկոլից հէնց վարպետի բոզգիներից եմ փախչում, դու դու էլ տանն ես թակում,—ասում էր Սէյրանը, աչքերի արտասուքը արիալուխի թեերով սրբելով։

Մի օր վարժապետը Սէյրանին մի դաս նշանակելով, ասաց.

—Տես Սէյրան, վաղը այս դասը այնտեղից մինչև այստեղ այնպէս անգիր կ'անես, որ ջուր կ'անես։ Լսեցիր, ջուր կ'անես հա՛, թէ չէ ձեռքդս չես պրծնի, խմացիր, որ այնքան ոտերիդ կը ծեծեմ, որ կաշին կը թափվի, կարմիր միսը կը մնայ։

—Աչքիս վրայ վարպետ, մին ջուր անեմ, որ քէֆդ դայ,—պատասխանեց Սէյրանը։

Նախընթաց օրը Սէյրանը մի սատիկ ծեծ էր կերել և այդ

պատճառով խիստ նեղացած էր վարժապետից։ Նա մտածեց, որ այս ծեծի փոխարէն, մի լաւ խաղ խաղալ վարժապետի գլխին։ Օգուտ քաղելով վերջինի խօսքերից թէ «գաղ ջուր կանես», Սէյրանը միւս օրը գիրքը պահեց Առաքելի աղբի՝ ի տակ այնքան, որ գիրքը թրջվելով, բոլորովին «ջուր դառաւ»։

—Աա՛ վարժապետ, ջուր եմ արել,—մեկնեց նա գիրքը Սարգիս վարպետին։

—Այդ ինչ ես արել,—հարցրեց վերջինը զայրացած։

—Ջուր։

—Այ դու սատանի ճուտ, ինձ ձեռ ես դցել։ Պահեցէք դրա ոտերը, պինդ պահեցէք աղա, որ իսկի տեղից ժաժ չը դայ։

Դա վերջին ծեծն էր, որ Սէյրանը կերաւ Սարգիս վարպետի կողմից։

Միւս օրը ոչքան նրան սոխեցին, այլ ես չը համարձակվեց ուսումնարան գնալ։

Հայրապետը տեսնելով, որ էլ ճար չը կայ, դուրս բերաւ նրան ուսումնարանից և յանձնեց Բարխուդարին, որ սա դերձակութիւն սովորեցնի նրան։ Այստեղ ամենայնիւ երեք տարվայ ուսումը չատ էլ անօգուտ չեղաւ Սէյրանի համար։ Նա սովորել էր քիչ թէ չատ ուղիղ կարդալ և մաքուր գրել։

VI

Բարխուդարը չընդդիմացաւ Գիւլնազի առաջարկութեան այն է,—Սուսանին Հերիքնազ կուսի ուսումնարանը տալու։

—Վնաս չունի, թող Սուսանս էլ սև ու սպիտակը ճանաչի։ Էս ժամանակում հարկաւոր է, ինչ պիտի անենք։ Ես ու դու որ գրել ու կարդալ իմանայինք, էսօրվայ պէս ես վաղ չէի տալ տէրտէրի մօտ, թէ ինչ է, իմանամ երբ են պատը բռնում։

Այդ խօսքերից յետոյ Գիւլնազը չալը դցեց Սուսանի գլխին, ինքն էլ փաթաթվեց չարշովի մէջ, բռնեց աղջկայ ձեռքից և տարաւ կուսի մօտ։ —Աա՛, ուսում տուր, ամա դու քո Աստուածը երեխես քիչ կըթակես։

Երեք տարի Սուսանը մնաց կուսի ուսումնարանում։ Առաւօ-

ոները նա Սմրատի ուղեկցութեամբ գնում էր և այդ տեղից, դարձեալ Սմրատի ուղեկցութեամբ, վերադառնում տուն։ Երբ նա բաւականաչափ սովորեց կարդալը և «բարովագիր» գրելը, Բարխուդարը դուրս բերաւ նրան ուսումնարանից։

Սուսանը օր ըստ օրէ աճում էր ու մեծանում։ Տան ու չորս տարեկան հասակից սկսած նրա մարմինը սկսեց ստանալ իւր կատարեալ և որոշ ձևերը։ Սուսանը դառաւ մի բարձրահասակ, վայելչակազմ օրիորդ։ Նրա դէմքի գծագրութիւնը հետզհետէ զարգանալով, ստացաւ կանացի չափահասութեան յատուկ կատարելութիւնը։ Ուսումնարանից դուրս գալուց յետոյ ծնողները նրան արդելեցին օտար տղամարդկանց առաջ երևալ։ Սուսանը փակվեց տանը։ Սկզբում մի քիչ դառն թւաց նրան ծնողների այդ կարգադրութիւնը։ Մանկական ազատ կեանքից յետոյ, նա բանտարկվելով, սկսեց տաղտկանալ։ Նա սովորել էր ցերեկ ժամանակ փողոցներում այս ու այն հարևանի բակում իւր ընկերների հետ թռչկոտել, խաղալ ազատ, արձակ, բաց օդում։ Նրա համար անտանելի էր, նա մանաւանդ արեգակնային օրերը, նստել սենեակում, իւր մօր կշտին և թոռ կամ դուլբայ գործել։ Սակայն ժամանակի ընթացքը ստիպեց նրան հետզհետէ ընտելանալ այդ ճանձրալի դրութեան և նա ընտելացաւ, թէ և այդ սովորութիւնը այնքան թեթևութիւն չտուաւ նրա սրտին։

Ուղիղ ինը տարի էր անցել երկրաշաժից։

Մի ամարային օր Սուսանը իրանց տան սրահում նստած թոռ էր գործում։ Դէմուդէմը նստած էր նրա մանկութեան ընկերուհիներից մէկը։ Դա հարևան կօշկակար Եղիայի աղջիկն էր։

Սուսամբարը մօտ տասնութ տարեկան օրիորդ էր, միջին հասակով, նիհար ու գեղեցիկ դէմքով և բարակ կազմուածքով։ Նա աւելի տգեղ էր քան գեղեցիկ, բայց և այնպէս խիստ համակրելի դէմք ունէր։ Նրա մուգ կապտագոյն աչքերը խիստ ազդող էին, նրանց մէջ փայլում էր կանացի նրբամտութիւն։

Սուսամբարը գլուխը քարչ գցած չտապով գուլբայ էր գործում լուռ ու մունջ։ Լուռ էր նոյնպէս և Սուսանը։

Ոչ ոք և ոչինչ չէր խանգարում նրանց լռութեանը։ Օրը անցած էր։ Արեգակը չտապում էր ծածկվել հորիզոնի տակ, իւր վերջին պղնձագոյն ճառագայթները տարածելով աւերակաման քաղաքի բարձրագոյն տեղերի վրայ։

Սուսանի դէմռ դէմ, խորտակված պարսպի մօտ գտնվող

բարձրաբոյս թթենու կանաչադարդ կատարի վրայ հաւաքուած ճնճղուկները ճլվլալով, զուարճանում էին արեգակի թոյլ ճառագայթներով։ Բակում տիրող խորին լռութիւնը խանգարվում էր միայն այդ ճնճղուկների ճլվլոցներով, որ քանի գնում էին, այնքան զօրեղանում էին։ Ծառի տակից նայելով այդ փոքրիկ թռչնիկներին, լսելով նրանց աղմուկը, կարելի էր կարծել թէ նրանք մի ինչոր բանի վրայ վիճաբանում են, որ այնքան տաքացած ճլվլում են։ Բայց թէ ինչ բանի մասին է նրանց վիճաբանութիւնը, ինչ մի դժուար փիլիսոփայական խնդիր են լուծում այդ փոքրիկ թեաւոր ու կտուցաւոր արարածները,—դա մեր խելքին մօտ բան չէ։ Ո՛վ գիտէ, շատ կարելի է, որ նրանց աղմուկի պատճառը թաղնվող արեգակն է, ախար չէ՞ որ նրանք մի և նոյն ճլվլոցները, աղմուկը սկսում են և առաւօտները, երբ արեգակը նոր սկսում է բարձրանալ հորիզոնը։ Ինչ և իցէ, ասացինք, որ դա մեր խելքի բանը չէ։

Օրիորդները լռութեամբ շարունակում էին գործել։ Սուսանի դէմքը ախուր էր, նա երբէք գլուխը չէր բարձրացնում, միայն նրա կճռոտած ճակատը և սեղմուած շրթունքները հաստատում էին, թէ նա մի ինչ որ մտածողութեան մէջ էր։ Սուսանբարի դէմքը ոչ ախուր էր, ոչ էլ ուրախ։ Նա շատ շատ գլուխը բարձրացնում էր, աջ ձեռքով ճակատի վրայ թափվող խոպոպ ծամերը յետ քաշում և երբեմն իւր հայեացքը մեխում Սուսանի երեսին։ Վերջինը այդ չէր նկատում։

Վերջապէս Սուսանբարը մի կողմը շպռտեց գուլպան։

—Ախչի, Սուսան, սիրտս ճաքեց, դէն գցիր զահրումարը, քիչ խօսենք։ Սուսանը լուռ էր։

—Ականջներումդ բամբակ կա՞։

—Չը՞մ։

—Զօռ։

—Զօռ ու զրնկում, ինչ ես ասում։

—Ասում եմ, դէն դիր այդ զահրումարը, մինքիչ հանգստանանք, մատներս մաշվեցին, մին քիչ խօսենք էլի։

—Չեմ իմանում, ինչ պիտի խօսենք, որ ասում ես,— ասաց Սուսանը հառաչելով։

—Մին այդ սատանի տոռերը կորցրու դէն, յետոյ կասեմ թէ ինչ խօսենք։

Սուսամբարը այդ ասելով, Սուսանի ձեռից խլեց թոռի դաղդեահը և մի կողմը դրաւ։

—Ուֆ ուֆ, Տէր Աստուած,—արձակեց մի խորը հառաչանք իւր կրծքից Սուսանը, երկար մազերը ուսերի վրայ ուղղելով և գլխի ճուպպան առաջ քաշելով։

—Էլ ինչ ուֆ, հոգիներս դուրս եկաւ, մի քիչ խօսիր, որ սիրտներս բացվի։

—Խօսքս էլ է պրծել, զրույցս էլ։

—Էլի ով է էշիդ կաղ ասել,—հարցրեց Սուսամբարը։

—Միտդ է Սուսամբար երկրաշարժի օրը։

—Հա։

—Այ գիդի օրեր հաա։

—Խէր իլի։

—Միտդ է, ինչպէս եւ ու կուժ ծախողանց Սէյրանը մնացինք հողի տակ։

—Ինչպէս այսօրվայ արեգակը։

—Բախտաւոր էին այն օրերը։

Սուսանը կրկին հառաչեց։

—Դու էլ լաւ օրի ես երանի տալիս։ հողի տակ մնալը չեմ իմանում ինչ բախտ է։

—Ես հողի տակ մնալուն չեմ կարօտում։

—Բան։

—Այն օրերին, երբոր մենք ոտաբաց, գլխաբաց ինչտեղ որ ուզում էինք, այնտեղ էինք վազում։

—Երբոր էլ ուզում էր Սուսանը, կուժ ծախողանց Սէյրանի հետ սիլիկ-բիլիկ էր անում,—աւելացրեց Սուսամբարը, խորամանկութեամբ ժպտալով։

Սուսանը ակամայ կարմրեց։ Այդ առաջին անգամը չէր, որ նա Սէյրանի անունը լսելիս կարմրում էր։

—Հըմ, ինչպէս է, կարմրեցիր բարեկամ։ Զը լինի թէ սրտիդ փափուկ տեղին կպայ։

—Էլի Սուսամբար...ախ, երեխայութիւնդ չես մոռանում, չէ։

—Սուտ եմ ասում։—Թէ որ սուտ է, բաս ինչու կարմրեցիր անունը տալիս։

—Ո՞վ է կարմրում, ախչի, ինչ սուտ խօսողն ես,—հակառակվեց Սուսամբարը, աւելի կարմրելով։

—Թչերդ ալ լալագարի պէս հուփ հրուշնել են, էլի վզով չես

առնում։ Լաւ է լաւ, խեղճ ես, մի ամաչիր, էլ անունը չեմ տալ,—ասաց Սուսամբարը, հեգնօրէն ժպտալով։

—Հողս կուժ ծախողանց Սէյրանի գլխին, նա ով է, ինչ մարդ է, որ նրա անունը տալիս ես ամաչում,—պատասխանեց Սուսանը բարկացած և աւելի ու աւելի շփոթվելով։

—Օհո։ ինչ ասեցիր, որ հէր ու մէրդ լսեն, քեզ ինչ կանեն, գիտես։ Ինչպէս ես սիրա անում նշանածիդ համար անէծք անել։

Սուսամբարը այդ ասաց դիտմամբ, որ աւելի բարկացնի Սուսանին։ Բայց Սուսանի բարկութիւնը անցել էր։ Նա իւր խօսքերը արտասանելուց յետոյ յանկարծ ընկաւ մտածմունքի մէջ։ «Զորթ ինչպէս եմ դմիչ անում հոր ու մոր մին հատ աչքի լոյս ու ճարտղի համար այդպէս անէծք անել»—անցաւ նրա մտքով և մի անբացատրելի զգացմունք սկսեց ճնշել նրան։ Սակայն նա չը գիտէր թէ այդ ինչ զգացմունք է։

—Է՛հ, ինչ ես ֆիքր անում, մեր օրին խօ չես մնացել։ Մի մատ երեխայ ժամանակդ քեզ նշանել են, այսօր էգուց էլ սարքին-կարգին նշանդրէք կ՚անեն ու զուռնադաւալով կը պրակեն։ Մեզպէս խօ աչքդ ճանապարհին չի մնացել։

Սուսամբարը կրկին կամենում էր բարկացնել Սուսանին։

—Դու լինես-քո եղբօր արեր, Սուսամբար, էլ մի խօսիր։ Է՛հ, դալաթ չ՚արի, որ քեզանից մի բան հարցրի։

—Որ եղբօրս արեով երդում տուիր, էլ չեմ խօսիր։ Դու հէնց ես իմանում, որ ես քեզ նախանձում եմ։—Չէ, Աստուած մի արասցէ։ Ես ինքս շատ ուրախ եմ, որ հարսանիքդ շուտ լինի, որ առաջիդ մին լաւ չրրեմա կոփեմ ու պար գամ։ Նա էլ քեզ ժամ տանելիս։ Հոր ու մորս էլ հիմիկվանից պիտի աղաչ-պաղատ անեմ, որ ինձ համար մին ձեռք լաւ չորեր պատրաստեն։ Հիմայ պիտի ասեմ, որ մինչև հարսանիքդ ատածս զլուխ բերեն, թէ չէ անողը չեն։ Ուֆ, մեր հէր ու մէրերն էլ ամա մարդ են հաա, մինչև հարիւր, հազար անգամ չես ասում, մինչև լեզուդ բերանումդ մաղ չէ կտրվում, մինչև մին հալաւ միս չես թափում, մին գլխաչոր չեն առնում։ Մին տարի է, որ այս շալս ճրնթռ չոր է կըտրվել, ամօթ եմ քաշում մին բարեկամի տուն մտնել, հալվում հալբէ՛հալ եմ լինում։ Այ քոյրս մէր, էլ չեն ասում, թէ դա էլ երեսը դռներին աղջիկ է։ Է՛հ, մենք էլ ասում ենք, որ ապրում ենք։ Օհանջանանց Ջառնչանն էլ ապրում է։ Բախտաւորի աղջիկը սանդուխը զըզրազրզ լցրել է, էլի երէկ ասում էր, որ մին նոր իտալիայ չաքրան են կարել տալիս։

Հէնց նա է, որ ինքն էլ այնպէս փարթամացել է, որ մարդու հետ խօսելն էլ լայեաղ չի անում, կասես, որ գիւբօռնաթի աղջիկ լինի։ Լաւ է, որ մին չիր ու չիքիլ էլ չունի, մանման բէչբեաթար (ինձանից հինգ անգամ աւելի վատ), թէ չէ, էլ աշխարհս նրա համար տեղ չէր անի։ Փառք Աստուծոյ, մին քիթ ունի, այ—մին զուռնայ, մին երես ունի—սև սաթ, մին աչքեր ունի—բեօօվ, պլօզ-պլօզ, հէնց իմանաս, որ մարդ է ուզում կուլ տալ։

—Դէնգ ու դանդասար լինես Սուսանբար աղջիկ, գլուխդ ցաւի, քիչ բըլբլայ քի՛չ, վո՛յ։

—Զը խօսեմ, բաս ինչ անեմ, դու ասիր, ախար սիրտս ճաքում է, տեսնելով հարուստների աղջկերոնց։ Ախ, Սուսան, գիտես ինչ կայ։ Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, թէ որ ես մին օր, մին սնաթ Աստուած լինեմ է, ինչքան որ հարուստներ կան, ամենից կըխլեմ նրանց իլած ու չիլածը ու գիտես ինչ կանեմ։

—Ի՞նչ կանես։

—Կըտանեմ ծովը կը թափեմ, բաս, յետոյ թող նրանք գնան տեսնեմ թէ ինչպէս կարող են իրանց աղջկերոնց, հարսերին զառ ու զառբօֆի, ոսկի ու արծաթի մէջ պահել։

—Հա՛, բաս այդպէս կանեմ,—չարունակեց Սուսանբարը տաքացած։ Դու ինչպէս կանես, Սուսան, որ մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ (երեսին խաչակնքելով), մի օր Աստուած լինես։

—Ոչինչ չեմ անիլ։

—Չէ՞, էլի ասիր տեսնեմ, ինչ կանես։

—Զեռ քաշիր, դարդակ դարդակ մի դուրս տալ, մեղք է։

—Չէ, մատաղդ լինիմ, Սուսան ջան, ասիր։

—Էլի։

—Զըխկուռռ, լեղուիցդ խօ քրէհ չեն ուզում, մին խօսք ասիր պրծիր էլի։

—Հարուստներից կ'առնեմ ու քեզպէսներին կը տամ, որ ուրիշներին չի նախանձեն, այ ինչ կանեմ։

—Ախար իմացայ, որ խելօք բան չես կարող ասել,—ասաց Սուսանբարը, ներողամտաբար ժպտալով։

—Ինչու։

—Թէ որ ինձ տաս, ես էլ իսկի քո ռեխիդ մտիկ չեմ անիլ, այ ինչու։

—Կը փարթամանա։

—Բաս չէ, իսկի քեզ հետ չեմ էլ խօսի Օհանջանանց Զառնը-չանի պէս։

—Չէ, Սուսանբար, որ ինձ տան, ես կէս էլ չեմ փարթամանալ։ Փողը ինչ է, ձեռի կեղտ, այսօր կայ, էգուց չը կայ։ Հայրս ասում է, մարդս պիտի իստակ անուն ունենայ։

—Հայրդ ասում է ասում, ամա չի իմանում, որ առանց փող էլ աղքատը չի կարողանում իստակ անուն պահել։

—Ինչպէ՞ս։

—Ա՛յ ինչպէս։ Դու ճանաչում ես Զաւանիրի հօրը, չմուշկ կարող Վարաքին։

—Լսել եմ։ Հայրս նրան գովում է, ասում է չատ հալալ ու նամուսով մարդ է։

—Եկ տես թէ քո նամուսով մարդը հիմայ ինչ է արել։

—Չիմ։

—Գողութիւն։

—Չէէ։

—Հա՛ա։ Չիմ, ինչ անէր, որ գողութիւն չանէր, ասում է. անճարը կերել է բանջար։ Երկու թէ երեք ամիս էր դուքանի քրէհ չէր տալիս, ախար տասը ոչիլ չունի, տասը մանէթ որտեղից տայ մին բօլուք խիղանների տէր մարդը։ Անջախ մին կտոր ցամաք հաց է կարողանում աշխատել, օրական մին ջուխտ չմուշկներ խչտելով։ Դուքանի տէրը չոքում է բոզաղին, թէ աղջիկ ես՝ ծնիր, աղայ ես՝ ծնիր, քրէհը տուր։ Դէս ու դէն է ընկնում Վարաքը, ոչով տասը մանէթ փող չի հաւատում նրան։ Երէկ չէ, մէկէլ օրը տէրը գալիս է ու ասում. «Թէ էգուց մինչև սնաթի տասը փողերս չի տաս, դուքանից դուրս եմ բերելու ու ապրանքդ էլ ծախելու եմ, որ քրէհս հանեմ»։ Վարաքի փոխանը ոտերն է ընկնում, հայ դէս, հայ դէն, աղաչում պաղատում է, ասում է երեխերքս սովածութիւնից մեռնում են։ Չի լինում, դուքանի տէրը խեղճի երկու ոսը մին չմուշկումն է դնում։ Առաւօտեան, Վարաքը կտրված փչրված սրտով, մին կտոր ծաղկած հաց ծոցում դրած, գնում է դուքան։ Գնում է ու մտքումը աղօթք անում. «Աստուած, դու երկնքից ինձ համար տասը մանէթ փող գցես, որ պարտքիցս ազատվեմ»։ Հէնց նոր Վարաքը սկսած է լինում բան անելու, մին թուրք բէկ մտնում է դուքան։ Բէկը նրան մին ջուխտ սադրի չմուշկ է պատուիրում կարելու։ Վարաքը չափը վերցնում է, թուրքը ջրից հանում է արծաթի փողով լցրած մին մեծ քիսա, որ չմուշկի բէհը տայ։ Բէհը տա-

վա՛ Է ու դուրս գնում։ Բայց չեմ իմանում ինչպէս է լինում, ինչպէս չի լինում, փողի քիսան մոռանում է ու թողնում գազգեահի վրայ։ Նրա դուրս գնալուց յետոյ Վարաքի աչքը ընկնում է քիսի վրայ։ Սոված գայլի պէս, խեղճ կոչկակարի աչքերը գրուստ չորսանում են։ Առաջ ուզում է որ բէկին կանչի ու փողը տայ իրան, բայց մէկէն մտածում է։ «Բալքա հէնց Աստուած իմանալով է թուրքին մոռացնել տուել, որ ես նրա փողերով ազատուեմ։» Աստում է ու մին խորը թառանչ քաշելով, քիսան բանում է ու փողերը համարում։ Դրուստ տասներկու մանէթի արծաթներ ու երեք շահանոցներ են լինում։ Վարաքը զզզզալով քիսան կոխում է մինդարի տակը։ Մին ոտաթից յետոյ բէկը նաֆասը կտրված, գալիս է։

—Ուստա, փողիս քիսան քեզ մօտ եմ թողել։

—Չեմ իմանում, պառէր տէր։

Պտռում են, չը կայ։ Թուրքը Վարաքի եախից ձեռ չի քաշում։ «Աստուած, երկինք, հաւատս վկայ, չեմ տեսել,—ասում է Վարաքը։ Թուրքը հաւատում է նրա երդումին ու դուրս է գնում։ Բայց ոտի մինը դուրանի ներսում, մէկէլը դրսում, աչքը ընկնում է մինդարի տակ եղած քիսի ճոթին, որ Վարաքը մոռացած է եղել լաւ ներս կոխել։

—Բաս երդում ես ուտում, անհաւատ, դա ինչ է։

Թուրքը դուրս է քաշում քիսան մինդարի տակից։ Վարաքը տեղն ու տեղը չորացած է մնում։ Բէկի աչքերը արիւն են կոխում, քիսի ճոթից բռնում է ու անօրէնը փողերով կոխում Վարաքի երես-մերեսին, ղլխին։ Խեղճ մարդու գլուխը ճղռում է ու ուշաթափ ընկնում։ Հիմայ երեկվանից դէս ողորմելին երեսի վրայ ընկած է, իւր անում ու ապի արտասուք է թափում, թէ «ա՛խ, բաս ես չիսուն տարի անուն աշխատեմ, նամուս պահեմ, որ էսօրվայ օրը խայտառակվեմ քաղաքում։» Ցեղ ու բարձում մնկնված է, ես ապրի, ես չ'ապրի։

Սուսամբարը իւր պատմութիւնը աւարտեց, աչքերը չռեց Սուսանի վրայ ու աւելացրեց։

—Տեսնում ես աղքատութիւնը ինչ մեղքեր է գործել տալիս մարդուն։

—Ցաւը, ցը ցաւը, խեղճ մարդ,—ասաց Սուսանը, իւր կրծքից մի անկեղծ հառաչանք արձակելով։

—Հէնց քո հայրդ թող ասի, որ փողը դարդակ բան է։ Զէ, այ քոյր, այ մէր, փողը մեծ բան է։ Հիմայ Զառնչանը շատ լաւ է

անում, որ մեզ մարդու տեղ չի դնում։ Ես ինքս աչքով աչք չունիմ Զառնիչանին տեսնելու։ Ամեն մին նրան մոտիկ անելիս սրտիս մէջ նախանձ է շարժում։ Ես էլ ուզում եմ, որ կամ նրա նման հարուստ աղջիկ լինիմ կամ նա իմ օրին ընկնի, ազբատանայ։ Ախար նա էլ մարդ է, խելք ունի—մոռածում է, աչքեր ունի—տեսնում է, որ ես, զորթ է, նրա հետ երեսանց խօսում եմ, ծիծաղում եմ, բայց սրտանց ատում եմ։ Հիմայ ասիր, Սուսի, որ դու նրա տեղը լինես, չես ուզիլ։—Հաւատացիր, որ կուզես։ Ցեղ, միրան ասեմ։ Մենք հիմայ երկուսս էլ աղքատ ծնողների աղջիկներ ենք, կարողանում ենք պարզ սրտով իրարու հետ խօսել։ Բայց Զառնչանի հետ չեմ կարող պարզ լինել։ Գիտես ինչու։ Նրա համար, որ ես նրա հետ խօսելիս, ուշք ու միտքս հէնց նրա չորերի, ոսկիների վրայ է լինում, էլ սիրտս խաղաղ չի լինում, որ կարողանամ հետը անկեղծ լինել։ Ես Զառնչանին աչքով աչք չունիմ տեսնելու, բայց քեզ սիրում եմ, ինչու որ, դու էլ ինձ նման աղքատ մարդու աղջիկ ես։ Դրա համար եմ ասում, որ թէ Աստուած լինիմ, մեղայ Աստուծոյ, չիմ հարուստներից կ'առնեմ իրան չիլածները ու ծովը կը թափեմ, որ ամենն էլ մեզ պէս աղքատ լինին։ Թէ որ ամենն էլ աղքատ լինին՝ լաւ կը լինի, էլ ոչ ով ուրիշին չի նախանձիլ։ Դէ՛, որ նախանձ ասած բանը չը լինի աշխարհիս երեսին, այն ժամանակ ամենքն էլ իրարու հետ պարզ կը լինեն, իրարու կը սիրեն, ինչպէս ես ու դու։ Իմ կարճ խելքովս այդքան եմ հասկանում։ Դու ինչ կասես, Սուսի։

—Քո խելքը կարճ չի, Սուսամբար, դու կարդին վարդապետի հասկացողութիւն ունիս։ Դա որտեղ ես սովորել։ Կոյսը իսկի մեզ այդպիսի բաներ չէր ասում։

—Հոգս կոյսի գլխին, նա ինչ է հասկանում։ Ումից պիտի լսէի, ես ինքս եմ երկար ու բարակ մտածել ամենը։

—Դէ որ այդքան բաներ ես հասկանում, մին բան հարցնեմ, կարող ես պատասխանել։

—Երկուսը հարցրու, թէ որ կարողանամ, կը պատասխանեմ։

—Մեր ծնողները ինչու են մեզ տանը գոգերի պէս պահում։

—Հէ՛ չ, էլի քո էշդ քշեցիր, փորացաւդ իմանում եմ։

—Զէ Սուսամբար, քո արեր, փորացաւ չունիմ։

—Գիտես ինչ է Սուսան, մեր ծնողները շատ անխելք են։

—Ինչու։

—Որ մեզ տանը թաղցնում են։ Մին հարցնող լինի նրանցից թէ ես աղջիկ, որ իմ սրտումս ծուռ բան լինի, չեմ կարող կատա-

ռնել։ Հըմ, կը մեռնեմ, կը սատկեմ, հազար ու մի սատանայութիւններ կը սարքեմ և ուզածս կանեմ։

—Պարզ խօսիր, Սուսամբար, չեմ հասկանում։

—Շատ լաւ ես հասկանում։ Ուզում եմ ասել, թէ մին աղջիկ, որ ուզենայ մին տղի հետ սիլիկ բիլիկ անել, ծնողներին այնպէս կը խաբի, նրանց աչքերը այնպէս կը կապի և իրան բանը այնպէս կը դրստի, որ սատանան էլ սատանայութիւնով չի իմանալ, թէ ինչպէս։

—Մեր քաղաքի աղջկերքը չեն անիլ։

—Հըմ, շատերն են անում։

—Ո՞վ։

—Ո՞վ։ հէնց մինը Աչխանանց Զարաֆիլը, պոչը կտրվածը, ինչեր չի անում իրանց հարևան Բալասիի հետ։ Հըմ, ինչպէս է, զարմանում ես, բաս ֆիքրդ ինչտեղ է, էէէ, մեր քաղաքում բաներ են լինում որ . . . .

Սուսամբարը խորհրդաւոր կերպով գլուխը շարժեց։

—Դա բէնամուսութիւն չէ, Սուսամբար։

—Շատ էլ լաւ են անում, մեր հոր ու մոր հախն է։ Ինչ բէնամուսութիւն, հէնց քեզ ու Սէյրանին վերցնենք, հազար ինձանից կեղես, ես էլի իմանում եմ, որ դու նրա սրտի, նա էլ քո սրտի մէջն է։ Հիմայ որ...

—Կտրիր, կտրիր ձայնդ,—ընդհատեց Սուսանը բարկացած և կրկին կարմրելով։

—Ի՞նչ ես նազ ու բազ անում, զորթ ասողի փափաղը ծակ է լինում։

—Հերիք է, լաւ։

—Արևային կաց, թէ որ չամբալութից եղ դուրս գայ, ինձանից էլ խօրք դուրս կը գայ ուրիշների մօտ քո մասին։

—Թէ ինձ սիրում ես, էլ մի խօսի։

—Աչքիս վրայ, ես էլ նեղացել եմ, օրն էլ մթնեց, գնամ տանը թառ լինիմ։ Մնաս բարով, քիչ ֆիքր արա, առանց այն էլ մաչվել ես։

—Կնաս բարով։

Սուսանը և Սուսամբարը բաժանվեցին։

VII

Այդ օրից անցել էր մի շաբաթ։ Ուշ երեկոյ էր։ Բարխուդարը

սենեակում նստած, կար էր անում։ Մուշտարիներից մէկը, որ մտադիր էր երկու օրից յետոյ ճանապարհ ընկնել մի ուրիշ քաղաք, նրան պատուիրել էր մի չուխայ պատրաստել այդ երկու օրվայ ընթացքում։ Բարխուդարը չտապում էր իւր տուած խոստումը կատարելու, որպէս զի ամօթալի չը մնայ մուշտարու առաջ։

Բարխուդարի դէմուդէմ նստած էր խանութի աշակերտներից մէկը և օգնում էր նրան։

Գիւլնազը և Սմբատը սենեակի մի անկիւնը քաշված, նիրհում էին։ Սուսանը կանգնած էր դրսի պատշգամբի վրայ։

Ամարային էր այդ երեկոն և հիանալի։ Տաճնօրեայ լուսինը կապտագոյն երկնքում փայլում էր իւր հրճուալի գեղեցկութիւնով։ Նրա կաթնագոյն լուսոյ շողքերը, մեղմութեամբ թափվելով ցերեկվայ արձրևով լուացված թթենիների վրայ, շողշողեցնում էին թարջուած տերևները։ Աւերականման քաղաքի համեստակեաց բնակիչները վաղուց արդէն փողոցներից քաշվել էին իրանց ապաստարանները։ Տիրում էր մելամաղձային լռութիւն, որ ոչնչով չէր խանգարվիր, եթէ այս ու այն կողմերից չը լսվէին մի քանի շների հաչելու ձայները։ Իրանց յետքի թաթերի վրայ եռանկիւնաձև նըստած, սրածայր առնչները վեր քաշած, նրանք անախորժ ձայներով ոռնում էին լուսնի վրայ։ Ի՞նչ էին պահանջում այդ թշուառ չորքոտանիները պայծառ լուսնից,—դա միայն իրանց է յայտնի։ Բայց նրանց անախորժ ձայները խանգարում էին գեղեցիկ գիշերի հրապուրիչ ներդաշնակութիւնը։

Սուսանը արմունկներով յենուած պատշգամբին, թաւշամորթ ծնօտը դրած ձեռքերի ափերի մէջ, անթարթ աչքերով կանաչազարդ թթենու խիտաստեղ ճիւղերի միջով նայում էր լուսնին։ Նրա սեագոյն, երկար ու կակուղ մազերը սփռվելով ողորկ ուսերի վրայ, հասնում էին մինչև նազելի կերպով թեքած մէջքը։ Եղանակը բաւական ջերմ էր։ Սուսանը կարմիր թաֆտայից կարված բարակ արխալուղի մէջ ցուրտ չէր զգում։ Նա նայում է լուսնին և մտածում։ Ի՞նչ է մտածում։ Ո՛չինչ և ամեն ինչ։ Շատ բաներ էին անցնում նրա մտքովը, բայց ոչ մէկը երանցից երկար ժամանակ կանգ չէր առնում նրա գլխում։ Նրա պատանեկական վառվռուն երևակայութեան մէջ անցեալ կեանքից նկարվում էին տեսակ տեսակ պատկերներ, որ չուստապատյա կօլէյդոսկոպի նման չրջաններ անելով, փոխարինում էին իրարու։ Սկզբում նա մտաբերեց իւր մանկութեան օրերը դեռ երկրաչարժից առաջ։ Նա յիշում էր այն լուս-

նեակ երեկոները, երբ ինքը իր մոր կողմն սրահում նստած, ուշադրությամբ լսում էր վերջինի պատմությունը լուսնի և երկնքի մասին։ Սուսանը բառ առ բառ մտաբերում է այդ պատմությունը որին այժմ էլ հաստատում է։ Նա հաստատում է, թէ երկինքը առաջ երկրին շատ մոտ է եղել, այնքան մոտ, որ մարդու ձեռը հասել է, բայց մի անգամ մի կին երեխայի տեղը սրբել է լաչակով ու գցել դուրս։ Աստուած տեսնելով, որ կինը իրան տուած առաջին պարգևը հացը այդպէս ապականում է, բարկացել է, երկինքը վերցրել է ու հեռու քաշվել։ Իսկ լուսնի մասին Սուսանը մտաբերում է, որ նա, այսինքն լուսինը, Մարիամ Աստուածածնի աղջիկն է եղել առաջ։ Թէ նա զարմանալի գեղեցկութիւն է ունեցել, այնպիսի գեղեցկութիւն, որ մարդիկ նրա երեսին մտիկ անել չեն կարողացել։ Թէ ով որ ուզեցել է մտիկ անել նրա աչքերը լոյսից և գեղեցկութիւնից կուրացել են։ Թէ մի օր Մարիամ Աստուածածինը լոշ թխելու համար խմոր հունցելիս նրա քաղցած որդիքը հաւաքված են եղել իրանց մոր շուրջը։ Սրանց մէջ եղել է և աղջիկ լուսինը։ Լուսինը շատ անհամբեր աղջիկ է եղել։ Նա գնացել է եկել ու իր մոր, Մարիամ Աստուածածնի գլուխը ցաւացրել։ Թէ «չուտ արա, մայրիկ, չուտ արա լոշը թխիր» քաղցած եմ»։ Վերջապէս Մարիամ Աստուածածինը համբերությունից դուրս է եկել, բարկացել է և խմորաթաթախ ձեռով մի ապտակ է տուել լուսնի գեղեցիկ երեսին։ Խմորի կտորները կպել են լուսնի երեսին ու մինչև այժմ էլ չորացած մնում են։

—Այ, զորթ որ տրէն, քանի քանի տեղեր արատներ են մնացել,—ասաց ինքն իրան Սուսանը, նայելով լուսնի երեսին։

Յետոյ նա իսկոյն մոռացաւ լուսինը և այս անգամ նրան զբաղեցրին ուրիշ յիշատակներ։ Անցան և այդ յիշատակները նրանց փոխարինեցին ուրիշները։ Սակայն այդ բազմաթիւ խառնուրդն յիշողութիւնների մէջ կայ մի ուրիշ միտք, որի շուրջը պատում են միտները, որը հանգիստ չի թողնում Սուսանին և որը նրա սիրտը բաբախում է։ Կայ մի արարածի կենդանի պատկեր, որ չի հեռանում նրա աչքի առաջից։ Ահա նա, այդ արարածը գլխարաց ու ոտաբոբիկ դէմ ու դէմ գտնվող թթենու գագաթը բարձրացած և ճարպիկ կատուի նման նրա բարակ ճիւղերին կպած, իր փոքրիկ ձեռքերով թութ է քաղում։ Նա հագած է սպիտակ չթից կարած արխալուղ, որի բարակ փեշերը երեկոյեան զովարար հողմի թեթև շարժումից օդի մէջ ֆոֆռում են։

—Սէյրան, Սէյրան, պիտի կանգնիր, որ չ'ընդնես,—աղաղակում է ծառի տակից Սուսանը, գլուխը վերև բարձրացրած։

Բայց Սէյրանը չէ լսում։ Քացրահամ պտուղը գրաւել է նրա ուշ ու միտքը և նա շտապով հատ հատ պոկելով այդ պտուղը, լցնում է բրեզենի գրպանները։

—Սէյրան, Սէյրան, ինձ համար էլ թութ ածի, մէնակ մէնակ մի ուտիլ,—կրկին աղաղակում է Սուսանը։

Սէյրանը դարձեալ ուշադրութիւն չէ դարձնում, նա կարծես թէ քաղցրությունն մոռացել է իր սիրելի Սուսանին։ Ծառի տակ կանգնած Սուսանի սիրտը քիչ է մնում, որ ճաքի։ Նա անհամբերությամբ իր փոքրիկ ոտները խփում է գետնին ու գեղեցիկ ուսերը թափահարում, սուտ սուտ լաց լինելով։—ըմ, ըմ, ըմ չեմ ուզում, ինձ էլ տուր, ըրմ, ըրմ։

Վերջապէս Սէյրանը լցրեց իր երկու գրպանները և արագությամբ ցած իջնելով ծառից, մօտեցաւ Սուսանին, որ քաղաց թութը նրա հետ բաժանի։

Այդ երեկոյութիւնով էր յատչասիված Սուսանը, երբ յանկարծ իր աջ ուսի վրայ զգաց մի ինչոր ձեռի թեթև հարուած։

Նրա մտածմունքները փարատվեցին։ Խորը քնից սթափվածի նման նա արմունկները քաշեց պատչգամբի սարաֆինների, իրանը ուղղեց և նայեց յետ։ Նրա դէմ ու դէմ կանգնած էր մի միջահասակ պատանի։ Թուխ դէմքով, ևս աչք ունքով։ Պատանին գլխարաց էր։ Նա հագած էր մի ամարային կապտագոյն թեթև արխալուղ, որի կոճակները բաց էին կրծքի կողմից։

Սուսանը առաջին վայրկեանում չը ճանաչեց պատանուն և վախեցած կամենում էր ձիչ արձակել։ Բայց մինչև նրա ուշքի գալը, պատանին երկիւղածությամբ, չունչը կրկնվելով, ձայնը փոքր զգած, ասաց։

—Սուս սուս, ձայն մի հանիր, ես եմ։

—Սէյրան, դու ես, ինչ ես ուզում, ինչու ես եկել այս ուշ գիշերին։

—Սուս սուս, բարձր մի խօսիր, քաշվենք այն կողմ, յետոյ կասեմ։

Սէյրանը զգուշությամբ բռնելով Սուսանի թևից, տարաւ նրան պատչգամբի մի անկիւնը, որտեղից չէր երևում սենեակի ներսը։

Սուսանը չը հակառակվեց։ Նա գրեթէ անգիտակցաբար հետևեց Սէյրանին, կարծես թէ մի ինչոր ներքին անբացատրելի ոյժ

ստիպում էր նրան հպատակվել պատանուն։

—Ինչ որ ասելու ես, շուտ ասիր ու գնա։

—Մի քիչ համբերիր, չունչս տեղը դայ, յետոյ,—ասաց Սէյրանը, խորը շունչ քաշելով։

—Մայրս դուրս կը գայ, կտեսնի, էլ վայ իմ հալին, շուտ ասիր։

—Սուսանը սկսեց դողալ։

—Եկել եմ քեզ տեսնելու։

—Վախում եմ, Սէյրան, լաւ ժամանակ չես եկել։

—Ուրիշ ժամանակ չէի կարող։ Սիրտս ուզում էր ճաքի, որ քեզ այդքան ժամանակ չէի տեսնում։ Քանի անգամ ուզացել եմ թագուն, գողի պէս քեզ մօտ գալու, բայց յարմար ժամանակ չեմ գտել։ Ինչպէս ես Սուսան, մին ասիր տեսնեմ։

—Սուսանին գցել են տուն ու դռները երեսին կապել, էլ նրա երեսը չես կարող տեսնել։ Մինչև, մինչև...

—Մինչև մեր պսակվելը, չէ։ Ի՞նչ են խօսում ծնողներդ։ Երբ պիտի նշան դրէք անեն։

—Դա չեմ իմանում, բայց մի բան եմ նկատում, Սէյրան, հօր ու մօրս մէջ։

—Ի՞նչ,—հարցրեց Սէյրանը վախեցած։

—Կասես թէ նրանք իմանում են, որ մենք տեսնվում ենք։

—Է՛հ, ես էլ կասեմ ինչ կայ, աչքիդ է երևում։

—Չէ, Սէյրան, ես մէկէլ օրը խոհանոցից տուն էի մտնում։ Նրանք իմ մասին էին խօսում։ Հայրս տաքացած էր, ես որ մտայ, սուս արաւ։ Բայց մինչև ներս մտնելս մի քանի խօսքեր հասան ականջիս։ Հայրս ասում էր։ «այ կնիկ, հրէս ասում եմ, աչքերդ չորս արա, թէ չէ, ըէարուսչութիւն կը լինի հաա»։

—Է՛հ, քեզ համար չի ասել երևի։

—Չէ, էլ, անցեալ օրը չմուշկ կարող Եղիայի աղջիկն էլ մին էյհամ արաւ։

—Սուսամբարը։

—Հա, շատ սատանան է։

—Սուտ է, ես չեմ հաւատում։

—Չէ, Սէյրան, էլ մի դալ ինձ մօտ։

—Չեմ կարող, սիրտս կը ճաքի։ Միթէ խեղճդ չի գալիս ինձ։

Սուսանը, պատասխանելու փոխարէն, մի խորը հառաչանք արձակեց կրծքից։

—Քանի որ ուսումնարանում էի, այնտեղ էի տանջվում,—շարունակեց Սէյրանը։ Վարժապետի ասածները գլուխս չէր մտնում, ամեն օր դուրս էի փախչում, որ քեզ տեսնեմ։ Հիմայ էլ հօրդ դուքանումն է սիրտս ճաքում։ Շատ ժամանակ, որ միտս ես ընկնում չբչկվում եմ ու մէկէլ տեսնես ասեղը մատս մտաւ։ Հայրդ էլ խօ, Աստուած ազատի, նրա մօտ մի սխալ չի կարելի անել, այնքան է թակում, որ մարդու հոգին է ուզում քթի ծակով հանել։

—Քեզ էլ է թակում։

—Հէնց ինձ ու մէկէլ եղբօրդ։ Ասում է, ես ձեզ շատ եմ թակում, որ միւսները տեսնեն և իմանան, թէ իրանց էլ սիրելուց եմ թակում։ Սուսան, մէջքումս սաղ տեղ չի մնացել, կապոյտ կապոյտ գոլեր են կոխել։ Նեղացել եմ, Սուսան, ուզում եմ դուրս գալ, բայց հայրս չի թողնում, մէկ էլ վախում եմ, որ թէ ես դուրս գամ հօրդ մօտից, չի լինի թէ քեզանից զրկուեմ։Ախ, երբ պիտի վերջանայ մեր բանը։

—Բարեկենդանից առաջ չի կարող գլուխ գալ։

—Ի՞նչ ես ասում։ Ութ ամիս պիտի համբերեմ։

—Ճար չկայ, հօրս փող չունի, փող է հաւաքում հարսանիքի համար։

Սուսանը կրկին հառաչեց։

—Ի՞նչու չես ծիծաղում, Սուսան։

—Մարդու սիրտը պիտի ուրախ լինի, որ երևան էլ ծիծաղի։

Մի քանի վայրկեան տիրեց լռութիւն։

—Մի՞տ է, Սուսան, մեր երեխայութիւնը,—հարցրեց յանկարծ Սէյրանը։

—Ի՞նչպէս այն լուսինը։ Տես, սիրտս ինչպէս թռթռում է մորթած ծտի պէս։ դա ինչինն է։

Սուսանը այդ ասելով, բռնեց Սէյրանի ձեռը և դրաւ իւր ձախ կողքին։ Նրա սիրտը սաստիկ բաբախում էր։ Սէյրանը մի ձեռը դրած նրա կողքին, միւսը զգուշութեամբ բարձրացրեց և սկսեց քնքշութեամբ շոյել Սուսանի գանգուր մազերը։ Եթէ Սուսանը նոյնպէս իւր ձեռքը դնէր Սէյրանի ձախ կողքին, կարող էր զգալ թէ ինչպէս է բաբախում վերջինի սիրտը։ Անցան մի քանի վայրկեաններ։ Նրանք լուռ էին։ Սուսանը չէր նայում Սէյրանի երեսին, բայց վերջինը նայում էր։ Օրիորդի ձեռքերը պատանու ուսերի վրայ դողդողում էին։ Դուրեկան և քաղցր էր նրա համար այդ դողը։ Մի ինչոր կախարդական հեղուկ տարածվելով նրանց ջղերի մէջ, ախորժալի զգացմունքներ էր պատճառում։ Իսկ մի դիւթիչ

գորութիւն այդ բոպէին կաչկանդել էր նրանց լեզուները։ Սակայն լուռ էին նրանց լեզուները, իսկ սասակի բաբախող սրտերը նոյն միջոցին մի ինչոր դաղտնիք էին հաղորդում իրարու։

Անցաւ մի քաղցր բոպէ, մի բոպէ, որ պարունակում էր իր մէջ երկու պատանիների գոյութեան խորհուրդը և որը չատ քիչ մահկանացուներին է վիճակւում անցաւոր աշխարհում։ Յանկարծ Սուսանը ձեռքերը քաշեց Սէյրանի ուսից։

—Վայ, մաղա կարմիր, ինչ եմ անում։

—Ինչ պատահեց, Սուսան,—հարցրեց Սէյրանը, չփոթվելով։

—Գնա, հեռացիր, հերիք է։

Սուսանը կամեցաւ փախչել, բայց Սէյրանը բռնեց նրա թևից և չը թողաւ շարժվելու։

—Բաց թող, եմէ, ինձ սիրում ես, մայրս դուրս կը գայ,—հանկարծակի Սուսանը, աշխատելով ազատել իւր թևը Սէյրանի ձեռից։

—Մօտեցիր, ասանջիկ մի խօսք ասեմ, յետոյ փախիր։

Սուսանը կամայ ակամայ հնազանդվեց նրան։ Սէյրանը թեքելով նրա գլուխը դէպի իւր կուրծքը, մի ջերմ համբոյր դրոշմեց նրա թաւշամորթ այտերից մէկին։

—Լցուց գիշեր էլ այդ ժամանակ դրսում սպասիր,—ասաց Սէյրանը շտապը կրկնվելով և բաց թողաւ Սուսանին։

—Դա ինչ արիր, Սէյրան,—շշնջեց Սուսանը, անդիտակցաբար արխալուխի թևով սրբելով համբոյրի տեղը։

Բայց Սէյրանը արդէն հեռացած էր։

—Դա ինչ ձայն է,—յանկարծ լսեց պատշգամբի վրայ Սուսանի եաւեից մի ազամարդու սուր և գօրեղ ձայն։

Ձայնը պատասխան չը տուաց։

—Դու ես Սուսան, ինչ ես անում այստեղ,—կրկնեց նոյն ձայնը։

Սուսանը լուռ էր։

—Ո՞վ էր այն փախչողը, էյ էյ էյ, ով ես,—դուրս գալիս ձայնը, աւելի ու աւելի գօրեղանալով։

Բայց պատասխան չը կար։

Սուսանը երկիւղից և ամօթից չը կարողացաւ ոչինչ խօսել։ Նա գունաթափված, գլուխը տակ ընկաց արձանացած։

VIII

Հետևեալ օրը առաւօտեան Մարիամ բաջին խոհանոցում

հաց թխելու պատրաստութիւն էր տեսնում։ Դա մենակ էր, տանը ոչ ոք չը կար։ Դեռ երեկ երեկոյեան Մարիամ բաջին յայտնելով Գիւլնազին, թէ հետևեալ օրը պիտի հաց թխի, խնդրել էր սրան, որ գայ իրան օգնելու։ Օրը բաւական անցել էր, բայց Գիւլնազը որ պիտի գար արեւածագին, մինչև այդ ժամանակ չէր երևում։

Մարիամ բաջին ալիւրը մաղեց, ջուրը տաքացրեց, աղաջուրն էլ պատրաստեց, բայց Գիւլնազը չը կար։—Եարաբ մին գնամ տեսնեմ ինչ իլաւ, որ չեկաւ,—մտածում էր Մարիամ բաջին,—ամա չէ, էս գիշեր ճրագը չուրու ստամի երեքը չորսը վառ էր, երևի մարդը կար է արել, ինքն էլ անբուն մնացել, խեղճ է, թող քնի։

Վերջապէս Մարիամ բաջին տաչար դրաւ, ոչխարի մորթիներից մէկը ձգեց տակին և երեսին խաչակնքելով չոքեց, որ խմորը չաղախի։ Բայց նա հենց նոր էր արխալուղի թևերը մինչև արմունկները ծալել և աջ ձեռի ցուցամատով պատրաստվում էր մի խաչ գծելու ալիւրի վրայ, Գիւլնազը ներս մտաւ։

—Լոյսը քեզ տեսնողին, ա քա ինչ պատահեց, որտեղ մնացիր, չատ սպասելուց աչքերս ջուր դառան խօսի,—յանդիմանեց նրան Մարիամ բաջին։

—Բախտիր Մարիամ բաջի, գլուխս խառնվեց, չը կարողացայ չատ գալ,—պատասխանեց Գիւլնազը, խորը հառաչելով։

—Ի՞նչ կայ ախչի, որ աչք ունքդ զարդել ես, հրմ, ինչու ես սպրանել,—հարցրեց Մարիամ բաջին, այս անգամ երկու ձեռքերով յենվելով տաչտի ծայրին։

—Է՛հ, ոչինչ...աղաջուրը որտեղ է։

Գիւլնազը չփոթված չալը գլխից քաշեց և մի կողմ շպրտելով մօտեցաւ օջախին։

—Երեսիս մտիկ արա տեսնեմ, ախ ու ոչիկ առանց պատճառի չի, ես խմանում եմ։

Գիւլնազը երեսը փոխանակ Մարիամ բաջու կողմ չուռ տուաւ հակառակ կողմ։ Նրա տխուր դէմքը, կարմրած աչքերը, տամուկ թերթերունքները ցոյց էին տալիս, թէ նա քիչ առաջ արտասվել է։

—Երանի էն կնկան, որ զաւակներ չունի,—ասաց Գիւլնազը, կրկին հառաչելով։

—Աստչինը, լեզուդ տակիանն չորանայ, որ էսպիսի խօսքեր չ'ասի, յետոյ քեզանից բան եմ հարցնում, պատասխանս տուր։

—Սուսանս քէֆ չունի։

—Ի՞նչ, ինչ ասեցիր,—հարցրեց Մարիամ բաջին, իւր ականջներին չը հաւատալով։

—Երեխաս տաքացրել է, անկողնում ընկած է, այս գիշեր չուրու լոյս դէլ է խօսել։

—Ցուրտ է կպել, գիշերը մրսել է, բաց է քնել ինչ է, արիւն, արիւն, մէջքից, վզակոթից, կռներից արիւն հանել տուր, լեադու թափի։

—Երանի թէ մրսած իլէր։ Ախ Աստուած, չեմ իմանում մէնակ իմ ճակատիս ես գրել դա, թէ ինձպէս մի ուրիշն էլ կայ։

—Սիրտդ ճաքի, սիրտս ճաքացրիր, հրբը։ Ախչի, դէ չուտ ասիր տեսնեմ, ինչ է պատահել, վայ,—գոռաց վերջապէս Մարիամ բաջին, համբերութիւնից դուրս գալով։

—Աստուած գլխիս խռովել է ու պրծել, ինչ պիտի իլի։ Երէկ բախտաւոր, էս կոտրած ձեռքերովս սաղ օրը էնքան լուացք էի արել, որ իրիկնադէմ ինձանում էլ հարաքաթ չէր մնացել ոտի վրայ կանգնելու։ Ձրագը վառեցի թէ չէ, մին զահրումար մուռափ աչքերս կոխեց։ Գլուխս տրմտրմալով, էս պատին էն պատին կպչելով մին կերպ երեկնահացը պատրաստեցի, իրան ու երեխերքոնց հաց ուտացրի։ Դէ չորեքշաբթի էր, պաս օր էր, խաչխաչով չլաէի ուտել, ինքս էլ մին քանի պատառ դրի բերանս։ Յետոյ չորերս հագիս, քաշվեցի մին կողմ, գլուխս դրի բարձին, որ քիչ հանգստանամ։ Սմրատս էլ երէկ տասը բեռը ճախ էր կտրել, շատ նեղացած էր, նա էլ մօտովս ընկաւ։ Ձրագը վառ էր, ինքը նստած աչակերտի հետ կար էր անում, Սուսանս էլ թոռի միխակին էր գործում։ Ախչի, աչքերիս աղջուր ածէին, որ ոչ քնէի։ Հէնց նոր խուփ էի արել, մէկ էլ տեսնեմ ականջիս մին ձայն հասաւ, մին ձայն հասաւ, որ կասես թէ մարդ են խեղդում։

—Հըմ, հըմ, հըմ,—արտասանեց Մարիամ բաջին, նստած տեղը զանազան անհամբեր շարժուածքներ անելով։

—Զարդանդած քնից վեր թռայ օձի կծածի պէս,—շարունակեց Գիւլնազը։—Մարիամ բաջի ոչ տեսնես, էս քոռացած աչքերս բացեցի թէ չէ, մէկէլ տեսնեմ, ինչ տեսնեմ։

Գիւլնազը արիւնոտի թևով սրբեց արտասուքը, որ խեղդում էր նրան և չէր թողնում ազատ խօսելու։

—Փուչիկդ ճաքի, Գիւլնազ կնիկ, սիրտս պատառ պատառ արիր, մին անգամ ասիր, վերջացրու էլի։

—Ինքը……էն էն էն անաստուածը, տեսնեմ Սուսանիս թևից բռնած, ոյժով ներս է քաշում, գոռգոռալով ու ոտները գետնին խփելով։

—«Այ մարդ, ինչ իլաւ դա,—հարցնում եմ ես վախեցած, տեղիցս թռչելով ստի։

—«Ա՛ռ, առ աննամուս աղջկանդ։ Ա՛ռ, աչքդ կոխիր ու մին քար էլ վրէն դիր, առ։

—Դա որ ասում է հառայ տալով, խեղճ երեխիս ճընթռ չորի պէս շպրտում է ինձ վրայ։ Մարիամ բաջի, նրա աչքերը կարմրել են, ինքն էլ հրսից մին սպրտնել է, ինչպէս էս ալիւրը։ Էն որ Սուսանս է, էլ նրանում ջան չը կայ, կասես դերեզմանից դուրս եկածի։ Յետոյ…

—Յետոյ, յետոյ, յետոյ,—կրկնեց անհամբերութեամբ Մարիամ բաջին։

—Յետոյ, Մարիամ բաջի, ախ, էլ ինչ յետոյ։ Թշնամիդ, աչքիդ գրողը էն սնաթին Գիւլնազի տեղը չը լինէր։ Էն անաստուածը, էն քարասիրտը, էն էն մոլթանին մին ձեռով բռնեց Սուսանիս մազերից ու մէկէլ ձեռով սկսեց նրա գլխին կարկուտի պէս…

——Ո՛ւֆ, ջան ջան բալաս, մի ասիր, ոչ լսեմ, քառանում,—բացականչեց Մարիամ բաջին, երկու ձեռքերով ծնկներին խփելով։

—Էլ ինձանում կենդանութիւն չի մնաց,—շարունակեց Գիւլնազը։—Վազ տուի առաջ, որ երեխիս առնեմ գազանի ճանկից, ամա ինչ կարող էի անել։ Աչքերը մարդ չէին տեսնում, նա կրծքիս մին կոփեց, մին կոփեց, որ չունչս կտրվեց, վայր ընկայ։

—Ջան, ջան, ջան բալաս։

—Ո՛ւֆ, Մարիամ բաջի, Գիւլնազը էն մնութին տեղն ու տեղը հոգին փչէր հազար դաթ լաւ կը լինէր, քան աչքերը բաց տեսնէր նա, ինչ որ տեսաւ։ Ջալլաթբաշիի կռնատակին Սուսանիս երեսը հալաւիդ ռանդի պէս կապուտ կապտել էր։ Աչքերն էլ արիւնի չանախներ էին դառել, որ հէնց էիր իմանում, որ դա է, պիտի դուրս պրծնին։

—«Ախար, այ քարասիրտ, ինչ է արել,—հարցնում եմ ես, մազերս քանդելով, դօշս ճղռտելով։ Ցե՜ս, դա՛էլ եղունկներիս տեղերը։

Այդ ասելով Գիւլնազը հալաւը յետ քաշեց և նրա սպիտակ կրծքի վրայ երևեցան մի քանի արիւնոտ գծեր։

—«Ի՞նչ է արել…նամուսս ցեխի մէջն է գցել, անունս տալին է կոխել, վաղվաղ սոնատակ է արել, այ ինչ է արել։ Դուրս է ե-

կել գիշերվայ կիսին Հայրապետի տղի հետ սովքամբ է անում, պաշպըշվում է։ Ա՛յ ինչ է անում։

Լսելով իր որդու անունը, Մարիամ բաջին մի ճիչ արձակեց։

—Գիւլնազը չարունակեց։

—«Սուտ բան է, աչքիդ է երևացել այ մարդ,—ասում եմ ես, գլխապատառ մէջ ընկնելով, որ երեխես առնեմ նրա զարմանք-զարմանք ձեռքերից։

—«Կորիր, կորիր, հեռացիր դու չ...չ...տղջիկ,—բղավում է վրէս։ Չես հաւատում, էլի չես հաւատում, ես քեզ ասում էի, ասում էի, որ ականջովս է լսեցել տաղ քաղաքում խօսում են։

—Դա որ ասում է, մի ձեռով երեխես մազերից բռնած, միւս ձեռով կրծքիս մին պլնդ կոփում։ Էլ նրանից դէն ինչ է իլում ինչ չի իլում, ոչինչ չեմ իմանում։ Աչքերս մթնում են, ուշքս գնում է և ընկնում եմ։ Շատ եմ մնում թէ քիչ։ Ասուած գիտէ, մեկէլ աչքերս բաց եմ անում, տեսնում եմ, որ Սմբատս երեսիս ջուր է շաղ տալի։ Սուսանս մազերը թափված, կապտած երեսով անձրևի պէս արտասուք է թափում աչքերից։ Ինքն էլ չիրուս քաշելով, դիժ կովի պէս պտոյտ պտոյտ է անում։

—Անունդ սև քարին դրվի Սէյրան տղայ,—աղաղակեց յանկարծ Մարիամ բաջին, կրծքին խփելով։

—Լեզուդ պապանձվի, մի ասիլ, մի ասիլ այ կնիկ,—ասաց Գիւլնազը, կնկին արտասվելով։

—Չի ասեմ, բան ինչ անեմ։ Դա, նա, էն սև երեսը բան մեզ ուզում է խայտառակ անի։ Բան ուզում է էս քաղաքի մէջ, խալիֆի բերանում մեզ ատկզ (ծամոն) չինի։ Վայ քո օրին Մարիամ կնիկ։ Սէյրան տղայ, թէ տուն կը դաս, կը տեսնես թէ քո գլխին ինչ օյին բերել կը տամ։ Քո հէրդ էս լեղին խմողը չի, նա կը թափվի դլխիդ։ Ասում եմ ախար էս գիշեր հալդ հալ չէր։ Սէյրան տղայ։

—Դու իլես, մին էլէն Ասուածը, Մարիամ բաջի, չը լինի չիմանամ, որ Սէյրանին մին բան ասես, ես հէնց դրանից եմ վախում, տաքարին տղայ է, ով գիտէ, ինչ կանի, ինչ չի անիլ։ Ինքը առանց էն էլ երդումնաք իլաս, որ մարդիդ պիտի ասես։ Դու իլես-էսօրվայ օրը, Մարիամ բաջի, էնպէս արէք, որ էս բանը քնի, թէ չէ մին Շամախին կիլի, մին էլ մենք, մին մաս մեղը կը դառնանք խալիֆի ուխտում։

Մարիամ բաջին արխալուղի թևերը կրկին քաշեց իր տեղը,

մազերը ուղղեց, բարձրացաւ տեղից, փեշերից ալիւրի փոշին թափ տուաւ և ասաց։

—Վեր կաց ոտի, վեր կաց, գնանք երեխես մօտ։

—Ինչ գնաս, տաքացրած ընկած է...օրը անց է կենում, հացդ կը մնայ։

—Զանրումար ուտեմ հացի տեղ, վեր կաց, ասում եմ։

Գիւլնազը և Մարիամ բաջին գնացին Սուսանի մօտ։

Սուսանը պառկած էր անկողնում։ Երբ Մարիամ բաջին և Գիւլնազը ներս մտան, նա մի վայրկեան գլուխը հանեց վերմակի տակից, նայեց նրանց և կրկին փաթաթվելով, երեսը պատին շուռ տուաւ։ Սուսանի ճակատը մինչև յոնքերը փաթաթված էր թաշկինակով, նրա թշերի վրայ երևում էին կապտայ ծծեր—բարիուղարի տուած ապտակների հետքերը։ Երբ նա մի վայրկեան վերմակի տակից նայեց, արտասուքից ուռած աչքերը փայլեցին դառն թախծութեամբ։

Մարիամ բաջին նստեց Սուսանի բարձի մօտ, ձեռը դրաւ նրա ճակատին և իր դէմքին փորձառու բժշկի լրջութիւն տալով, ծանր եղանակով ասաց։

—Կրակի պէս էրվում է երեխես ճակատը։ Էլ մի ուշացնի, Գիւլնազ, դալլաք Հազանին կանչել տուր, որ արիւն բաց թողնի խզատակից։

Յետոյ Մարիամ բաջին զգուշութեամբ յետ քաշեց Սուսանի երեսից վերմակը և սկսեց հարց ու փորձ անել։

—Մարիամ բաջին ցաւդ առնի, որ տեղդ է ցաւում, աչքերդ ինչու ես խփել, գլուխդ չի զմզմում։

Սուսանը չը պատասխանեց, միայն անքանքալով վերմակը կրկին քաշեց երեսին և սկսեց հեկեկալ խեղդված ձայնով։

—Լաց մի իլիլ, բալաս, կը լաւանաս, ինչ կայ, փառք Աստուծոյ, ինչ անենք, հէրը աղջկան կը թակի էլի, մենք էլ քեզզէս չատ ենք թակվել ու հիւանդացել։

Բայց այս անգամ Սուսանի արտասուքի պատճառը իր մարմնի ցաւը չէր, այլ նա տանջվում էր բարոյապէս։ «Երանի թէ ես էլ ձեզ նման թակվէի, խայտառակվեցի, Աստուած»։ մտածում էր նա։

Մարիամ բաջին և Գիւլնազը մի քանի րոպէ խօսեցին, խորհեցին, վիճաբանեցին և վերջը այն եզրակացութեան եկան, թէ անպատճառ և առանց յետաձգելու հարկաւոր է դալլաքին կանչել։

Բայց ոչ թէ դալլաք Հապանին, այլ Սաղեանցի ուստա Պետրոսին։ «Չունքի դալլաք Հապանը ջալլադի պէս ածելին խոռ է կոխում, խըռթացնում է»։

IX

Բարխուդարը առաւօտեան բաղար գնալիս Հայրապետին պատմեց երեկուան անցքը։ «Թէ որ ազիզ կապը չը քաշես,—աւելացրեց նա,—որ մին էլ էս զալաթները չանի, էլ ոչ ես, ոչ դու, Հայրապետ։ մեր բարեկամութիւնը կը կտրվի մինչև յաւիտենական դուռը»։

Լսելով այդ խօսքերը, Հայրապետը բաղարի մէջ տեղում մընաց տեղն ու տեղը։ Նա մի քանի վայրկեան ոչ կարողացաւ շարժիլ, ոչ կարողացաւ խօսել, միայն գլուխը ծռեց դէպի աջ ուսը, յօնքերը վեր քաշեց, աչքերը չռեց, ծնօտը լախացրեց և ապշած սկսեց նայել Բարխուդարին ոտից ցըլուխ։ Բարխուդարը, որ այդ միջոցին մի քանի քայլ առաջ էր գնացել, տեսնելով որ իւր հարեւանը կանգնեց, ինքն էլ յետ նայեց և նրա հայեացքը ընկաւ ուղիղ Հայրապետի դէմքին։

—Հըմ, ցուրա է, բաս, ստած կը մնաս բաս չէէ։ Ականջներդ բացիր ու լաւ լսիր, թէ որ լակոտիդ ջլովը ձեռդ չառնես, մեր բանը վերջացած է։

Հայրապետը դարձեալ ոչինչ չը պատասխանեց։ Նա մի քանի վայրկեան ևս զարմացած մտիկ տուաւ Բարխուդարին, յետոյ շտապով չուխայի թեերը դցեց ուսերին, գտակը գլխին դրատեց, երեսը չուռ տուաւ դէպի տուն ու վազեց։

—Գնաց, որ տընդրզի, թող տընդրզի, ախ, թէ իմ էլ ձեռս կընդնես, Սէյրան լակոտ, սաղ թիքաղ ականջդ կը թողնեմ,—ասաց Բարխուդարը և շարունակեց իւր ճանապարհը։

Հայրապետը գնալիս ճանապարհին ինքն իրան խօսում էր, զանազան յիշողներ էր տալիս, յայտնի չէր թէ ումը, և ձեռքերով ու գլխով անսովոր շարժուածքներ էր անում։ Անցորդները տեսնելով նրան, կանգնում էին ու մտիկ անում զարմացած, «գժվել է էս մարդը, ինչ է» կրկնելով։

Վերջապէս Հայրապետը հասաւ տուն։ Սէյրանը տանը չէր։

Հայրապետը մտաւ խոհանոց Մարիամ բաջուն տեսնելու, բայց դըրան ևս այդտեղ չը գտաւ։ Նա կամեցաւ անմիջապէս գնալ Բարխուդարանց տուն, բայց յետոյ փոշմանեց, և մի քանի քայլ չ'անցած, կրկին վերադարձաւ իւր սենեակը։

Քառորդ ժամից յետոյ ներս մտաւ Մարիամ բաջին։

—Քեզ նման կնկան սիրտը պիտի հանեմ, չամիրին քաշեմ ու թէժ կրակի վրայ դէս խորովեմ, դէն խորովեմ, որ բալքա սիրտս հովանայ,—գոռաց Հայրապետը, յարձակվելով իւր ամուսնու վրայ։

Մարիամ բաջին խսկոյն հասկացաւ նրա բարկութեան պատճառը։

—Ես ինչ մեղաւոր եմ, այ մարդ, որ իմ գլուխս ես ծակում։

—Բաս ես եմ ծնել էն լակոտին, հըմ, ես եմ ծնեէէլ։

—Ծնողը ինչ հոգ ածի գլխին։

—Սև հոգ։ Մեղաւորը դու չես, բաս ով է։ Դու չես, որ նրա հետ աղաչանք-պաղատանքով ես խօսում։ դու չես, որ փայտը ձեռքս վերցնելիս գլխապատառ մէջ տեղ ես մտնում, որ ես էն էնին չի խրատեմ։ Հըմ, գնա, գնա, դէհ հիմայ սաղ քաղաքում խայտառակ իլիր։ ըրբ ես քո էդ էդ էդ, մեղայ քեզ Տէր Ամենակարող Աստուած հա։ Հըմ, քեզ եմ հարցնում։ ինչու ես էն լակոտին ծնել, հըմ, ասիր տեսնեմ, ինչու ես ծնել։

Հայրապետը վերջին հարցը կրկնելով, ուսերը վեր քաշեց, մօտեցաւ Մարիամ բաջուն, բռնեց նրա թիկունքից և սկսեց թափահարել անդադար կրկնելով «ինչու ես ծնել»։

—Խաթի բալի մէջ չընկանք։ Այ մարդ, ֆիքր արա, տես ինչեր ես դուրս տալիս, խելքդ որտեղ ես թողել։

—Խելքս փափաղիս տակին է։ Մին էլ եմ հարցնում, ախար ինչու ծնեցիր, հըմ, ինչու, որ էսօրվայ օրը ինձ Բարխուդարի մօտ սև երես թողնի, հաա ես քո էն...Տէէէր Աստուած։

Մարիամ բաջին տեսնելով, որ իւր ամուսինը չատ է երկարացնում, երեսը չուռ տուաւ ու դուրս եկաւ։ Հայրապետը մինչև երեկոյ այս կողմ այն կողմ չուռ տուաւ, դէս վազեց, դէն վազեց մինչև որ իրիկնադէմին Սէյրանը եկաւ տուն։

Առանց մի խօսք ասելու, առանց որ և է հարց ու փորձի, Հայրապետը մի ահագին դպանակ խլեց, որ յարձակվի իւր որդու վրայ։ Վերջինը հէնց սկզբից հասկացաւ իւր հօր յարձակութեան պատճառը, փախաւ դուրս և ամբողջ օրը և գիշերը չը վերադարձաւ

տուն։ Բայց և այնպէս նա չ՚աղատվեց պատժից։ Հայրապետը միւս օրը երեկոյեան բռնեց Սէյրանին և այնքան ծեծեց, որ ինքը յոգնեցաւ։

Սուսանի հետ տեսնուելուց յետոյ Սէյրանը այլ ևս դադարել էր յաճախելու Բարխուդարի խանութը։ Նա վախում էր, բայց որ ամենագլխաւորն է, ամօթից չէր համարձակվում երեսի իւր ա-հարկու «ուստայի» աչքին։ Առաւօտեան նա դուրս էր գալիս տնից և մէկ էլ վերադառնում էր երեկոյեան։ Հայրապետը ամեն օր չարունակում էր գործ ածել խրատելու սովորական միջոցը—ծեծը։ Մարիամ բաջին աշխատում էր խելքի բերել Սէյրանին իւր մայրական քնքոյշ խրատներով։

—Այ գեղա, այ գեղա, խնայիր մեզ, անուններս տափը մի կոխիր, խելքի եկ, գնա բանիդ։

—Կը թակի, չեմ ուզում։

—Հուրսը քնել է, լաւ է, բախչել է, մի վախիր։

—Հըմ, մի վախիր։ Ամբատը ասում է, ամեն օր անուն լսելիս, բեղերը կոծոտում է։ Չէ, չեմ ուզում, լաւն է քաղցած մնանեմ, քան թէ նրա երեսը տեսնեմ։ Ես թակից խօ չեմ վախենում։

—Բաս ինչից ես վախում։

—Ամաչում եմ, ամօթ է։

—Մին բան ես բռնել, որ չ՚ամաչես, սև երես գեղա։

Սէյրանի համար ամենացաւալի բանն այն էր, որ չարագուշակ երեկոյից յետոյ նա չէր կարողանում տեսնել Սուսանին։ Նա կամենում էր գէթ մի անգամ մի բոպէ պատահել Սուսանին, հարցնել, իմանալ նրա դրութիւնը։ «Ո՚վ գիտէ, կարելի է նա նեղացած է ինձանից, որ ես համբուրեցի և այսքան չարչարանքների պատճառ դարձայ»»—ասում էր ինքն իրան Սէյրանը։ «Բայց չէ, այստեղ համբոյրը չէ գլխաւոր պատճառը։ ասում են, որ Բարխուդարը վաղուց է իմացել մեր տեսնվելը։ Ախ Աստուած, մի անգամ էլ տեսնեմ Սուսանիս երեսը, հարցնեմ իմանամ նրա միտքը, յետոյ ինչ ուզում են, թող անեն ինձ»։

Եւ այդ նպատակին հասնելու համար գիշեր ու ցերեկ նա մտածում էր, տեսակ-տեսակ ծրագիրներ էր կազմում։ Ամեն երեկոյ,

մութը ընկնելուց յետոյ, նա վազում էր ու թաղնվում Բարխուդարանց տան պատերի տակ, որ Սուսանը բակը դուրս գալու ժամանակ գուցէ նրան հանդիպի։ Բայց իզուր։ Սուսանը չէր երևում, կարծես թէ նա չը կար աշխարհում։ «Չը լինի թէ հիւանդ պառկած է անկողնում»—մտածեց մի օր Սէյրանը։ Բայց հետևեալ օրը նա կոզմնակի կերպով հարցրեց այդ մասին Ամբատից և վերջինի խօսքերից երևեց, որ Սուսանը վաղուց է առողջացել։

Այսպէս Սէյրանը մի ամբողջ ամիս անցկացրեց։

Կէսօրվայ ժամն մէկն էր։ Արեգակը խաչում էր։ Ամենուր գտնվում էին Բարխուդարի և Հայրապետի տները, դատարկ էր։ Միայն երբեմն այս կամ այն տան դռներից դուրս էր գալիս չալի մէջ փաթաթված մի կին կամ օրիորդ և շտապով մտնում հարևան տներից մէկը, ձեռքում չալի տակ մի տարելի պատած, Նա այսօրվայ եփած կերակրից իւր հարևանի համար «զօշի փայի» (հարևանի բաժին) է տանում։

Արեգակի տաքութիւնից նոքն իսկ թափառական շները քաշվել էին փողոցի կիսախարխուլ պատերի տակ ու իրանց լեզուները մինչև արմատը դուրս բերած, «լահ էին թակում»։ Օգուտքաղելով նրանց թուլացած դրութիւնից, չանաճանճերը վրայ թափված, անխնայ կերպով կծոտում էին նրանց։ Շները անդադար թափահարում էին իրանց գնչերը, որ ճանճերին փախցնեն։ «Ցը՚զզ» թռչում էին ճանճերը մի վայրկեան և կրկին նստում իրանց տեղը, որ նորից սկսեն ծծել խեղճ չորքոտանիների արիւնը։

Փողոցի մելամաղձոտ լռութիւնը երբեմն երբեմն ընդհատվում էր ամբողջ քաղաքին ծանօթ, բուխարու հին գդակներ գնող, արաբացի կարճահասակ, չալ մրքով, սպիտակ ակռեքներով, հատու ու կարմիր շրթունքներով, փոքրիկ աչքերով «զարաչի Բաշիրի» հատու ու խռպոտ ձայնով։ «Քօնայ փըփաղ, քօնայ փըփաղ, քօնայ փըփաղ»,—կրկնում էր նա կանգնելով այս ու այն տան դռների առաջ և յօնքերը վեր քաշած, նայում դէպի բակը։ Հեռուից լսելով նրա ձայնը, մարդ երևակայում էր թէ գտնվում է Արաբիայի անջուր, աւազոտ և չոր դաշտերում։ Բակում խաղացող մանուկները լսելով նրա տարօրինակ ձայնը, աղաղակում էին։ «այ բաջի, այ գաղաչ,

զարա Բաշիրը եկաշ այ, որ մեզ տանի դեսվի մոտ։ Աղաղակում էին նրանք ու փախչում ներս։ «Զարա բաշիրի» ձայնին հետևում էր նույնպես ամբողջ քաղաքին յայտնի «թեվի առնող» թաղիի ձայնը։ Ահա հրէն էէէ, թաղին մի չուալ թեվի չալակած, մէջքից երկու զաթ ծռված, անքանքալով անցնում է այս փողոցից դէպի միւսը, ուժասպառ ձայնով բացականչելով «սաթարը քեսափասակ օլան»։ Եւ թաղիի ձայնը, որ կարծես մի վիրապի խորքից է դուրս գալիս, տարածվելով «խարարա չահարի» առանց այն ևս մռայլ աւերակների վրայ, կրկնապատկումէ նրանց մռայլութիւնը։

Մարիամ բաջին այդ ժամանակ իրանց բակում պատի տուտերում նստած կար էր անում, տմտրմալով։ Նա նստած էր երեսը դէպի բակի փլատակված պարիսպը դարձրած։ Բակում ուրիշ ոչ ոք չը կար։ միայն խոհանոցի առաջ հաւաքվել էին հնաները ու աքաղաղները և կուտակում էին գետնին թափված խաչած բրինձները և երբեմն կչկչալով իրարու կոցահարում։

—Քիիշշ, քիիիշշշ, այ անտէր մնաք, ուֆ, մարդու սիրա կը ճաքացնէք դուք,—բացականչում էր չուտ-չուտ Մարիամ բաջին հաւերի վրայ, իւր կշտին դրած բարակ ճպռոը գետնին չրփացնելով։

Մարիամ բաջու միտքը այդ բոպէին զբաղված էր այդ պատճառով էր նա չուտ-չուտ բարկանում հաւերի վրայ, որ խանգարում էին նրա մտածմունքներին։

Մի քանի բոպէ կարելուց յետոյ Մարիամ բաջին յանկարծ ասեղը ցցեց կարի մէջ, մատնոցը մատից հանեց և կարի հետ չպրտելով մի կողմ, ձեռը մեկնեց մինդարի տակ, որի վրայ ինքը նստած էր ծալապատիկ։ Նա այդտեղից դուրս բերաւ մի հին չորի փոքրիկ կապոց և բացեց նրա կշկուտները։ Դուրս թափվեցին կապոցի միջից մի բուռն չորացած ու սևացած սիսեռներ։ Մարիամ բաջին վեր առաւ քթախոտամանը, գուցամատի և բութ մատի ծայրերով դուրս բերաւ այն տեղից մի պղտոց քթախոտ։ Մի երկու անգամ ախորժակով քաշեց, փռչտաց, հազեց ու երեսին խաչակնքեց, ասելով։ «Տէր Աստուած, դու չարը խափանես, բարին առաջ բերիս։ Յետոյ Մարիամ բաջին քթախոտամանը կրկին դրաւ իւր տեղը, կրկին երեսին խաչակնքեց, այս անգամ երեք անգամ, և ջերմեռանդութեամբ սկսեց «Նոխութ բացել»։ այսինքն սիսեռների վրայ հմայելը, քթի տակ տրմտմալով։ «Իլի, դա, Տէր Ամենակարող Աստուած, իմ Սէյրանիս բաղդը իլի, թէ որ երեսիս

վերջը բարի է, էս նոխութը բաց դուրս գայ, թէ չէ չառ է, փակ դուրս գայ»։

Այդ ասելով Մարիամ բաջին աջ ձեռի ափով հօթն անգամ տրորեց սիսեռները և մատների ծայրերով բաժանեց երեք մասերի։ Նա այս կողմը դարսեց, այն կողմ դարսեց սիսեռները, մի տեղ աւելացրեց, մի տեղ պակասացրեց, յետոյ կրկին խառնեց ու մէկ էլ բաժանեց, այս անգամ ինը տեղ։ Այնուհետև նա ձեռքերը սիսեռներից հեռացրեց, դէմքին լրջութիւն տուաւ և նայելով նրանց, սկսեց ինքն իրան խօսել։

—Դա բաց ճանապարհն է, էս մէկն էլ Սէյրանս է, տես, տես ինչպէս է կանգնել ֆիքրի մէջ կորած։ Հա, սա էլ Սէյրանիս առաջ մէկը կանգնած է, ով լինի հրմ—Հալբաթ Սուսանս է։ Յետոյ դէ դրանք էլ Սէյրանիս ընկերներն են, ուֆ Աստուած ինչպէս են չարերի պէս երեխիս պատել չորս կողմերից։ Չեմ տեսնում, որ բէրեկեթներդ ջուր իլի ու օուշներիդ թափվի, եարաբ ինչ էք ուզում երեխիցս։ Հա, լաւ, բաս էս մէկը ով է, Տէր Աստուած, որ էդպէս երեխիս առաջը կապում է սև թելի պէս։ Ո՞ւֆ, քո աչքն էլ հանեմ, որտեղից դուրս պրծար դու։ Ո՞վ պիտի իլի, Աստուած, հրմ։

Մարիամ բաջին աջ ձեռի մատները ծռելով, դրաւ ծնօտի վերայ, խակ ցուցամատով ծածկելով բերանը, խորը մտածողութեան մէջ ընկաւ։

—Չէ, չէ, բաս նոխութը պակաս է, ասաց նա ինքն իրան, ձեռը ծնօտից հեռացնելով։ Մին-չորս, երկու-չորս, երեք-չորս, չորս-չորս։ Դա հինգ չորս։ Մին-չորս, երկու-չորս, երեք-չորս, չորս-չորս, հինգ-չորս։ Դա էլ հինգ չորս, դա էլ մին թաք։ Դրաւտ տասը չորը մին թաք է։ Պակաս չի, մէկել բաց անեմ։

Նա կրկին խառնեց սիսեռները և կրկին մի և նոյն տեսակ բաժանեց։

«Փիէէ, էլի բերէզը դուրս եկածը պրպղից երեխիս առաջ»—ասաց Մարիամ բաջին և սկսեց երրորդ անգամ բանալ։ Յետոյ նա չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, վերջապէս մինչև տասնուհինգ անգամ բաժանեց և բացեց։ Վերջապէս Մարիամ բաջին յոգնեց, ինքն իրան բարկացաւ և սիսեռները հաւաքեց։

—Անտէր մնաս, այ նոխութ, մին խէր խարար չես ասում, Կարիր,—ասաց նա, արագութեամբ մի կողմ շպրտելով սիսեռների կապոցը և կարը վերցրեց։

Այդ ժամանակ յանկարծ նա լսեց մի բարձրաձայն աղաղակ,

որից յետոյ իսկոյն մի գլխարաց երիտասարդ, գդակը ձեռքում բռնած, ներս թռաւ։

—Դամարդներ, ինձ մենակ էք տեսել, սպասեցէք, ես ձեր գլխին մի օյին բերեմ, որ ճանաչէք, թէ ես ով եմ,—գոռում էր երիտասարդը, վազելով բակի միւս կողմը, ուր խոհանոցն էր գտնվում։

Մարիամ բաջին հայեացքը ձգելով երիտասարդի վրայ, սարսափեց և տեղն ու տեղը անշարժ մնաց։ Նրա ձեռքերը թուլացան և կարը ընկաւ գետնին։

—Սէյրան, Սէյրան, այ գեղա, էլի ումի հետ, էլի ումի հետ,—աղաղակեց նա, ուշքի գալով և տեղից վեր թռչելով։

Բայց Սէյրանը չէր լսում։ Նա վազեց խոհանոց, մի երկար կարմրագոյն փայտ վերցրեց, մի վայրկեանում չուխան հանեց, փաթաթեց ձախ թևից և թռաւ փողոց։ Մարիամ բաջին հետևեց նրան։

Փողոցում սպասում էին երկու առողջակազմ երիտասարդներ նոյնպէս երկար փայտերով զրահաւորված և իրրև վահան ձախ թևերի վրայ իրանց չուխաները փաթաթած։

Սէյրանը գլխակոր վազեց նրանց դէմ։ Կռիւը սկսվեց։ Սէյրանը պաշտպանվում էր և յաջող վայրկեաններ գտնելով, հարուածներ էր տալիս իւր հակառակորդներին։ Մէջ ընկաւ սարաց և գլխի մազերը փետելով Մարիամ բաջին։

—Ա՛յ ձեր մէջքը տափին կփչի, այ մեռածներ, այ ձեր մէրերը սեռում մնան, այ ձեր աչքի լոյսը ջուր դառնայ երեսներդ թափվի։ Ինչ էք անում։

Սէյրանի հակառակորդներից մէկը փայտի մի հարուած տալով Մարիամ բաջու ուսին, չրթոցաւ մէջ մտնելու։

—Ուֆ, ջիգարդ դաղվի, հառայ, այ հայ քրիստոնեաներ, երեխս սպանեցին, վայրս հասէք,—գոռաց Մարիամ բաջին և ուժաթափված ընկաւ գետնին։

Այդ վայրկեանին կռվողներին մօտեցաւ մի ուրիշ բաձրահասակ երիտասարդ։ Դա նոյնպէս զրահաւորված էր փայտով։ Հասաւ թէ չէ, երիտասարդը Սէյրանի հակառակորդներից մէկի թևին մի սաստիկ հարուած տուաւ։

—Ուխայ, ուխխայ, բօյիդ մեռնեմ, Սմբատ, ուխխայ մին էլ,—բացականչեց Մարիամ բաջին։

Հակառակորդի թևը թուլացաւ, նրա ձեռից փայտը ընկաւ և սկսեց փախչել։ Միւս ընկերը անմիջապէս հետևեց նրան։ Սէյրանը

և Սմբատը վազեցին իրանց հակառակորդների յետևից, բայց դրանք անհետացան փողոցի ծայրում։

Սմբատը և Սէյրանը յաղթութեան զգացմունքով վառված վերադարձան յետ։ Մարիամ բաջին չէր դադարում աղաղակել և մազերը փետել։

—Հերիք է, սուս արա, տեսար խօ ինչ բերինք նրանց գլխին, ասաց Սմբատը, փայտը դնելով պատի տակ, որ չուխան հագնի։

—Թափվել են ինձ վերայ, ուզում են, որ սպանեն, բաս ես սուս անեմ։

—Ախար, այ մեռած, քեզ ինչ գործ ունիս չաղլասանների հետ, քեզ ով է ասում, որ նրանց հետ խառնվես։

—Քիչ խօսիր, մի քիչ ջուր բեր, որ գլխս արիւնը լուանամ։

Մինչև այդ ժամանակ Մարիամ բաջին չըգիտէր թէ Սէյրանի գլուխը վիրաւորվել է փայտով։ Տեսնելով նրա ճակատի վրայով ծլող արիւնը, նա քիչ մնաց որ ուշաթափվէր։

—Էս օրուայ օրը ուչ լուսանար մօրդ համար, Սէյրան տղայ, ախար նոխութը զուր չէր թարս նշան տալիս,—ասաց Մարիամ բաջին և վազեց խոհանոց որ ջուր բերի։

X

Երեկոյ էր։ Մարիամ բաջին վշտացած հոգով ընթրիքի պատրաստութիւն էր տեսնում։ Հայրապետը դեռ խանութից չէր եկել։

Սէյրանը գլուխը կարմիր թաշկինակով կապած, առանց չուխայի, սպիտակ չթից կարած բարակ արխալուղով նստած էր փողոցում, իրանց դռների առաջ։ Սմբատը և մի քանի ուրիշ հարևան երիտասարդներ շրջապատելով նրան, խօսում էին ցերեկվայ անցքի մասին։ Սէյրանի դէմքը տխուր էր, աչքերը գետնին յառած։ Նա խօսակցութեան չէր մասնակցում։

—Ախար, ամոդա մին ասի տեսնանք ասքան դալմաղալը հինչի էր,—հարցնում էր մի մօտ քսան ու երկու տարեկան երիտասարդ։

Դա հագած էր կարճլիկ արխալուղ, որի վրայից կապած էր լայն արծաթեայ գօտի, սև մահուդեայ չերքեսկա բուզմաններով և վազմաններով, մի փոքր սովորականից լայն վարտիկ և երկար կը-

տուցներով մուչկի չմուչկներ։ Իսկ գլխին դրած ունէր նա կոլորակ մեխակագոյն բուխարու գդակ։ Երիտասարդի բեղերը սրած էին և ծայրերը մկան պոչի պէս բարակացրած։ Բայց նա այսու ամենայնիւ չէր դադարում էլի մատների ծայրերով նրանց ոլորելու։

—Ես ինքս հանց ինտեղ ի ալի, աչքիս առաջին ընկաւ քի կը-ռեբը,—պատասխանեց Սէյրանի փոխարէն մի ուրիշը։

Դա էլ մի կարճահասակ երիտասարդ էր նոյն ձևով հագնված և ծոծրակը մաքուր սափրած պարսկական եղանակով։

—Դ՛է, ես մեռնամ լօթիանայ, մին նաղլ արա տեսնանք,—դիմեց նրան մի երրորդը, որի գդակը այնքան ծուռ էր դրած, որ տեսնողը կրկարծէր թէ հրէս պիտի գլորվի գետինը։

Կարճահասակ երիտասարդը հաղելով, բեղերը ոլորելով, սկսեց հանդիսաւոր կերպով։

—Ադա, ես իի, Սէյրանը, Սմրատը, Թափուղանց Ջանանդիրը, Շամչեանց Աթանէսը, ճատի-կատուրանց Ենգիբարը, Ինքեաթանց Թաթին, Թուքունանց Փափանը, Բեսդալանց Մարտիրոսը, մին ալ Սատանափոնողանց Պետրին։ Դարա մանլումը «ալթի ղոզ» ինք հաղ անում։ Քիցողը Սմրատն էր։ Ճատի-Կատուրանց Ենգիբարը մին մանէթ տիրաւ տափին, լոզայ լոզայ ասեց Սմրատին, որ մին բաչ նրա մանէթի քիցի։ Ադա, Սմրատի բաղդը բերաւ, զոչչաղը անանց քիցեց, որ հափի միջին դիւրիւտ չորս դիրաւ, ձեր արևը, ոչ ևվալ ոչ պակաս։ Ենգիբարի բերանը բաց մնաց, ախար մանէթ կասան հա, քիչ փող չիմանաք, մին դանայ ջըղջղալի Նիկալայ ա։ Հըմ։ հինչ անի, հինչ չ՛անի, ճարը կըտրված, մանէթը ետ վեր կալաւ։

—Փահ նամարդ քեօփոզլի,—արտասանեց բեղերը սրած երիտասարդը։ Եռով, եռով։

—Եռով, ալ հինչ եռով։ Սմրատը ասըմա, «ադա հինչ ես անում։ Ենգիբարը ասըմա—հանագ իի անում, գիժ ամ, որ ասքան փողով մին բաչ հաղ անամ։ Սմրատը քի «տեսա տուր մանէթը ասըմամ, չես տալ, գլոխդ ձուի պէս փիչիր-փիչիր կանամ»։ Ճատի-Կատուրանց Ենգիբարը քի՝ «ձանդ կըտրի, քո աթանդդ անանդդ»։ դէ, հինչ ասամ։ ճրնանչըմէք ալի Ենգիբարին, ըռեխը որ բացեց, ալ Աստած ազատի։ Ը՛հհ, տղերք Սմրատի հոտերը հաւաքվեցին, ուչունցը ուչունցի ետևից։ Ենգիբարը դա որ լսեց քի չէ, կատաղեց, կեապիւտ կեապիւտեց։ Սան օլասան, զարաուվի դիլիմ (դու մեռնես, սեղ հաղնեմ), զաալըմը ըռեխը բացեց, մին խօսք տիրա բեր-

բաւ, որ Սմրատի աչքերը առուն կոխեց։ Ասըմա, քինա հայասրդ, անանամուս քիւրանչդ ջուլովը հաւաքի, որ գիշերները Սէյրանի հետանան...

—Փահ, ադա չը կարացաք հանց տեղրատեղ նրան քեօնդալա քիցիլ,—ընդհատեց պատմարանի խօսքը գդակը ծուռ դրած երիտասարդը, ուսերը վեր քաշած, ծնօտը ծռելով, աչքերը չըռելով և ձեռքերը զարմացած առաջ տարածելով։

—Մին կանանի դէ ալի, ախար մին տես հինչ իլաւ, եռով էէ,—չարունակեց պատմարանը։—Դէ, Քեօխանց Սմրատին աթանց խօսք ասիլ կիլի։ Բիրդան նրա աչքերը կարմիրեց, առունով միցվեց։ Հանց նոր դանակը ուզում էր ջիրան հանի, մին ալ տեսանք, հինչրու նրա տիրա բերիլը։ Սէյրանը մին թեափիկ Ենգիբարի թափան թիրիքին։ «Այ ես քո աթանցը, անանցը, աթանց անամ, անանց անամ»։ Ենգիբարը թախկ, ձիւնի պէս թիր լափաչվեց տափին։ Ամա ալի չիտ վեր կացաւ, փափազը վեր կալաւ ու հայդա մին բաչ հինչրու առուն։ Նրա քամական վազ տուաւ Սատանափոնողանց Պետրին։ Մին մեռի չը քաչեց, մին ալ տեսանք երկուսներն ալ փէտ-ները սրած, վեալգեան սրած հարաս եկան փէտ-փէտի կոխ անիլ։ Սմրատը, մին էլ Սէյրանը, առանց բանը երկարացունելի մին բաչ առուն։ Դա էր, որ եկան իւրանք ալ զըրմզի-հոլ-հոլ գեսանագ-նների կոթին թիրեցին ու աչքդ նամարդների ըռեխը ետ տուին, փախցուրին հինչրու խանջանները կորվելը։ Ամա քեօփոզլի Սատանափոնողանց Պետրին Սէյրանի մօր ուսին մին փէտ տիրաւ, խեղճ կնիկը տունգուտուզի վրայ նստեց։

—Փահ ես նրանց հերն անիծեմ,—գոչեց բեղերը մկան պոչի պէս սրած երիտասարդը,—ադա նրանք մեր մանլի ջանիլների հետ փէտ-փէտի կոխ անան։ Տղերք, նամուսը մերն ա, ալ ֆիքր անիլի տեղը չի։ Տիւք մեռնանք, լօթիանա, էդուց մին մանլադաւասի ոարքանք քի, ասղ քաղաքը դարմանայ։

—Հարկաւոր չի, ես առանց դրան էլ փոշիմանել եմ,—ասաց Սէյրանը, իւր հայեացքը գետնից չը հեռացնելով։

—Ես էլ իմ փոշիմանել,—աւելացրեց Սմրատը։

—Ձեր բանը չի, տիւք խակի մեք խօսիլ, տեղներդ դինջ նստեցէք տես ու փառ։ Մենք բանը գլուխ կըբերանք առանց ձեզ ալ,—մէջ մտաւ կարճահասակ երիտասարդը, դիմելով Սմրատին և Սէյրանին։

—Բաս որ աթանց ա, ես եավաչ եավաչ քինամ քեօռամալս

եղամ,—աչքերից գդակը ծուռ դրած երիտասարդը։ Հնվ էք կռիվը բաշտամիշ անիլու։

—Հանց էդուց կէսօրան եռավ,—միաբերան գոչեցին կարճահասակ ու բեղերը միան պոչի պէս սրած երիտասարդները։

Այդ միջոցին փողոցի ծայրում երևեցաւ Հայրապետը, որ չուխայի տակ մի ինչոր բան բռնած, գալիս էր առաջ։

Սէյրանը և Սմբատը անյապաղ մոտն առան։ Միւսները նոյնպէս հեռացան իրանց տեղերը, մտածելով, թէ ինչպէս վաղը կռիվը սկսեն և վերջացնեն, որ իրանց «մահլի ջահիլների համաւոր տարիը չը կոխան»։

XI

Օրը բաղարովին մթնեց։ Մարիամ բաջին խոհանոցում ճարպի մոմը վառեց և բերաւ ներս։ Հայրապետը նստած էր պատի տակ, մենդարի վրայ։ Մէջքը բարձին, մի սար ծալած, միւսը մեկնած։ Նա մի ձեռքում երկար չիբուխն էր բռնել ու ծխում, միւս ձեռքում տերողորմեան էր չիչխկացնում։

Հայրապետը ըստ երևոյթին շատ տխուր էր։ Երբ Մարիամ բաջին աչտանակը դրաւ մէջ տեղ, աղօտ լոյսը ընկաւ Հայրապետի վրայ։ Այդ մշտապէս ուրախ ու պայծառ դէմքը երբէք այդչափ թթռուած չէր։ Մարիամ բաջին սովորական «բարի երեկոն» կրկնեց երկու անգամ, բայց Հայրապետից պատասխան չըստանալով, հեռացաւ սենեակի մի անկիւնը։ Սէյրանը դրսումն էր։ Վախում էր, թէ ամաչում էր նա, բայց չէր ուզում դուրս գալ։ Երկու ամուսինները նստած էին լուռ ու մունջ։ Մարիամ բաջին հայեացքը չէր հեռացնում Հայրապետի ճակատից, իսկ վերջինը առատաղի մի կէտից։

—Բարի երեկոյ,—ներս մտաւ մի բարձրահասակ մարդ։

—Ա՛յ Աստուծոյ բարին, Բարխուդար։

Հայրապետը և Մարիամ բաջին բարձրացան տեղերից։

—Համեցէք, համեցէք, ախչի Մարիամ, մին փափուկ մենդար բերը։

—Նեղութիւն մի քաշիլ, նստիր Հայրապետ, ես էս պատի տակ էլ կընստամ։

—Չէ՛, բաս որ էդպէս է, անցկաց տեղումս նստիր, մէջդ էլ բարձին տուր,—ասաց Հայրապետը, խորին պատկառանքով ցոյց տալով իւր տեղը։

Մարիամ բաջին փռեց մի մենդար Հայրապետի տակ և երկու հարևանները նստեցին։

—Է՛հ փառք քեզ Աստուած,—սկսեց Հայրապետը, աջ ձեռը քսելով ճակատին։

—Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ, Բարխուդար։

Վերջինը պատասխանելու փոխարէն Հայրապետի երեսին նայեց և աչքերով մի նշան արաւ։ Հայրապետը իսկոյն հասկացաւ, թէ ինչ է նշանակում այդ նշանը։

—Մարիամ, վեր կաց, դուրս եկ,—դարձաւ նա իւր ամուսնուն։

Մարիամ բաջին դուրս եկաւ։

—Ես չեմ սիրում, որ երբոր տղամարդիկ մին շատ հակաւոր բանի վրայ խօսում են, կանայք լսեն,—ասաց Բարխուդարը, ծխախոտի չորացած տերևը ձեռքերի ափերում տրորելով, որ չիբուխը լցնի։

Բարխուդարը խօսում էր սառն և քիչ կոշտ։ Նրա դէմքը արտայայտում էր տխրութիւն և բարկութիւն։

—Ես էլ չեմ սիրում, Բարխուդար, կնիկարմատի բերանում տոպ չի թրջվում, հենց բան որ լսեցին, էլ Աստուած տղատի։

Հայրապետը նկատելով իւր հարևանի սառնութիւնը, ինքը ևս աշխատեց, որքան կարելի է իւր դէմքին լրջութիւն տալ և տուաւ էլ։

—Էդպէս է, Հայրապետ, ես եկել եմ քեզ մին քանի բաներ ասելու, թող հենց առանց պատեպատ ընկնելու սկսեմ։ Այդ ասելով, Բարխուդարը չիբուխի ծայրը դրաւ բերանը և միւս ծայրը մեկնեց ճրագին, որ ծխախոտը վառի։

—Իմ էլ զանգէս տանում են բազի մարդիկ, որ իրանց ուզածը ասելու տեղ, սար ու քոլ են ընկնում։

—Խօսք չկայ, Հայրապետ, որ լաւ միտք է երկրաչարժի երեկոն։

—Պարզ, ինչպէս էս ճրագը։

—Միտք է, որ էն երեկոյ միասին հաւաքված անցկացրինք։

—Լա՛ւ։

—Նա էլ է միտք, թէ ինչ խօսեցինք։

—Միան է, ամա էնքան էլ պարզ չի, չէ՝ հրմ, կաց մին ֆիքր անեմ։

—Մենք խօսեցինք մեր բարեկամութեան ու մէկ էլ Աստանիս ու Սէյրանի մասին։ Միտ է։

—Աֆարիմ Բարխուդար, ուզում ինձ տարի է անցել, ափարիմ որ էդպէս միտք ունիս։

—Ես, Հայրապետ, էն երեկոյ խօսք տուի, որ թէ աղջիկս մեծանայ ազիզ տամ,—շարունակեց Բարխուդարը հանդիսաւոր կերպով և ամենայն մի բառը առանձին չեչտելով։—Էն օրվանից անցել է ինը տարի։ Հիմայ, Աստուած պահի, աղաղ մեծացել է, իմ աղջիկս էլ չափահաս է դառել։ Ուրեմն թէ իմ աղջկան, թէ քո ազիզ պատկվելու վախտն է։ Լա։ Ինչպէս դու էլ ճանաչում ես, Հայրապետ, ես խօսքիս տէրն եմ, թքածս լզոզը չեմ։

—Իսկի դրան խօսք կայ, ինձանից հարցրու՝ քո ինուֆիանը։

—Էդ պատճառով էլ մի ամիս սրանից առաջ միտք էի անում, որ մին օր քեզ կանչեմ, խորհուրդ անենք, որ էդ բանը վերջացնենք։

—Ես էլ եմ ֆիքր արել, Բարխուդար...

—Կաց, խօսքս մի կարիր, ասելու բաներ շատ ունիմ,—ընդմիջեց Բարխուդարը իւր սովորական հրամայող ձայնով։

—Ես մեղայ Աստուծոյ, հրամայիր,—ասաց Հայրապետը, ձեռը դնելով շրթունքների վրայ ի նշան խոնարհ լռութեան։

—Տղաղ, Հայրապետ, էն Սէյրան լակոտը, մին բան բռնեց, մին զալաթ արաւ, որ հիմայ միտս ընկնելիս արիւնս խառնվում է, գլուխս շուռ է տալիս, աչքերս մթնում են։ Ուզում եմ, որ դանակը վերցնեմ, նրան էլ, աղջկան էլ էնքան կտորեմ, որ մեծ թիքանները ականջները մնան, բայց...

—Արժ են, արժ են, իմ արեր, արժ են։

—Մի ամսից առել է, որ էս բանը պատահել է, ամա էլի դադար չունիմ։ Հեչ բան չիմանաս։ Հայրապետ, քանի որ երեխաներ էին, ես ինքս էլ ուրախ էի, որ իրարու սիրում էին, չունքի էն ժամանակը չէին հասկանում։ Բայց հիմայ, Հայրապետ, չափահաս են, խելք ունեն, պիտի հասկանան, որ իրանց արածը խայտառակութիւն է, բէնամուսութիւն է...

—Էլ հայեաթումը ճախ չի մնաց որ բեաղզաթի մէջքին փըշրած չը լինիմ, որ չի փոխվում, ինչ անեմ։

—Լսիր, Հայրապետ, թող խօսքս վերջացնեմ։ Ինչ էի ասում,

հա, էն օրվանից դէս Սէյրանը դուքան չի գալիս, երես չունի։ Շատ լաւ էլ անում է, թէ չէ հիմայ ոսկորը փթում էր հողի տակ։ Փողոցներում խառնվել է լիրը, կեղտոտ ջահիլների հետ ու օրից օր փչանում է։ Դա հերիք չի, ինքը ջաւ ու ջհանանամը, որ փչանում է, մեր անունն էլ է կեղտոտում։ դա է իմ ցաւը։ Ես երեկոյ բազարից տուն եմ գալիս ներքևի փողոցով, տեսնում մի դաստ ջահիլներ պատի տակ թաղնած լախկոթու են տալիս։ Գլուխս քարշ արած անցնում եմ, բայց մին քիչ հեռացած չը հեռացած, մէկ էլ լսում եմ, ինչ եմ լսում։ Էն լրբերից մինը բարձր ձայնով, երևի ինձ լսացնելու համար, ասում է։ Ինչ է ասում, հրմ, գիտես, ասում է։ «այ, Սէյրանի հետ գիշերները պաչպչվող աղջիկը էսնամուսով զուռումսազի աղջիկն է, տեսէք, տեսէք, չի ամաչում ոչ սպիտակ մազերից, ոչ էլ փափաղից։ Էլի երես ունի, բազար է դուրս գալիս։ Հայրապետ, դա որ լսում եմ, խելքս քիչ է մնում, որ գլխից դուրս թռչի։ Աչքերս արիւն է կոխում, մարմինս մին սառը քրտինք է պատում, քիչ է մնում որ յետ դառնամ ու էն լրբերի գլուխը ջարդ ու փշուր անեմ։ Բայց մին էլ ֆիքր եմ անում, նահլաթ եմ տալիս չար սատանին, երեսիս խաչակնքում եմ ու մին կերպ շարունակում ճանապարհս։ Գալիս եմ մեր փողոց։ էս տեղ էլ մի ուրիշ խաբար եմ լսում։ Մեր հարևան «գդուլ» Մաթին ասում է։ «էսօր Սմբատը ու Սէյրանը աղաջդավասի են արել ներքևի մահլի ջահիլների հետ»։ Գալիս եմ տուն, Սմբատին մին քանի սիլլաներ եմ տալիս ու յետոյ հարցնում եմ կռվի պատճառը։ Սմբատը պատմում է։ Բանից դուրս է գալիս որ կռիւ սկսողը էլի աղաղ է իլել...

—Փա՛ռ քո տունը Աստուած չը քանդի, ասում ես Սէյրանը,—հարցրեց Հայրապետը աւելի ու աւելի զայրանալով։

Բայց Բարխուդարը անուշադիր թողաւ նրա հարցը։ Նրա սառնութիւնը փոխվեց բարկութեան և մի կողմ ձգեց չիբուխը, որ մինչև այդ ժամանակ անդադար ծխում էր, խօսելով։

—Հրմ, էս որ լսում եմ, բռնում եմ Սմբատի երկու ականջներից ու գետնին խփում։ Առանց դէս, առանց դէն ոտերիս տակն եմ գցում նրան, էնքան կոխոտում եմ, որ չունչը կտրվում է։ Մայրը գալիս է ու ձեռիցս առնում։ Հայրապետ, բաս հիմայ դու ասիր, բաս դա օրէնք է, բաս իմ նամուսս վեր կ'առնի, որ քո տղիդ խաթրու սաղ քաղաքում էդպէս խայտառակվեմ։ Հրմ, ասել կը լինի, որ Քեռիանց Բարխուդարը օրը ցերեկով բաց փողոցում իրան աղջկայ վրայ էդպէս բաներ լսի։ Բաս որ էդպէս է, ես իսկի

մարդ չեմ, ես նամուս—դրիաթ չունիմ, բաս, բաս էս էս էս փափաղը իմս չի, հրիը…

Բարխուդարը կատաղած վերցրեց գլխից իր գդակը և բոլոր ոյժով զարկեց գետնին։

Հայրապետը սպրանեց։ «Նահլաթ քեզ չար սատանայ, էս մարդը գժվեց, ձեր արեը վկայ, գժվեց», անցաւ նրա մոտով։ Նա կամեցաւ մի բան խօսել, բայց վախեցաւ և չը համարձակվեց առիւծի պէս կատաղած Բարխուդարի առաջ քերան բանալ։

—Բաս թող ասիրս (գերիս) Հնդստան դուրս գայ, թող կնիկս ու բալաներս ակլոր չոլերը ընկնեն, ես էլի էդ բանները զարուլ անող մարդ չեմ։ Հայրապետ, տղիդ կապը քաշիր, քաշիր, ասում եմ քեզ, էն լըկոված կապը, թէ չէ Աստծուն է յայտնի թէ ինչ կանեմ նրան էլ, աղջկաս էլ, քեզ էլ ու ինձ էլ։ Հերիք չի, որ ինքը լիրբացել է, հերիք չի որ տղիս էլ հետն է փուչացրել, լոթիների մինն է չինել, իմ անունս էլ սաղ քաղաքում կեղտոտեց։ Դա իմ մէյրդիս (դիակիս) ասել չիվ։ Բաս էգուցվայ օրը ես էլ ինչ երեսով պիտի բաղար դուրս գամ, ես, ես, Բարխուդարը, որ մինչև օրս խալխի վրայ եմ ծիծաղել։ Ես որ ճշմարտութեան համար իմ անունս խոտակ պահելու համար, ամենից հեռու եմ քաշվում։ Ես, ես որ իմ նամուսիս եսիր դառած մարդ եմ, իմ յոժար կամքով Սիրիր կը գնամ, բայց էդ բանները զարուլ չեմ անիլ։ Ինչ փող, ինչ դավլաթ, ինչ մեծ մեծ տներ, ես թքել եմ դրանց վրայ, հալալ քրտինքովս փող եմ աշխատում, կէս քաղցած, կէս կուշտ ապրում եմ թէ ինչ է, նամուսս մաքուր պահեմ։ Նա էլ Սէյրանի ու Սուսանի պէս լակոտները կեղտոտում են։ Բաս թու էս բեղերիս, ես իսկի տղամարդ չեմ։

—Ի՞նչ անեմ բաս, Բարխուդար ջան, ինչպէս անեմ, որ չեմ կարողանում մին ճար անել—խօսեց վերջապէս Հայրապետը դողդողուն ձայնով։

—Ինչ անեեեա, ա՛յ ինչ արա։ Դա հէնց էս գիշեր մոխիր արա ու տղիդ աչքերը ածիր։

Այդ ասելով Բարխուդարը արիալուղի գրպանից դուրս հանեց մի բաց ծրար և չպրտեց Հայրապետի վրայ։ Երբ ծրարը ընկաւ Հայրապետի առաջ, վերջինը սարսափած յետ քաշվեց և մի քանի վայրկեան ապշած նայեց ծրարին, ինչպէս մի մարդ, որ դաշտում զբօսնելիս յանկարծ իր ոտի տակ տեսնում է մի օձ։ Վերջապէս Հայրապետը զգուշութեամբ դողդողուն ձեռը մեկնեց դէպի

ծրարը, կարծես թէ վախենալով, որ նա հրէս պիտի կծի իր ձեռը։ Ցուցամատի և բութ մատի ծայրերով նա բարձրացրեց գետնից ծրարը, մօտացրեց ճրագին և յօնքերը վեր քաշելով սկսեց զննել երբեմն հարցական հայեացքներ ձգելով Բարխուդարի երեսին։

— Նը զարմանաս, բաս չես զարմանալ։ Կեր քո տնկած ծառի պտուղը, կեր…

—Դա դա, Բարխուդար, դա ախար, փիէէ, Նահլաթ քեզ չար սատանայ,—մրմնջաց Հայրապետը, շարունակելով նայել ծրարին։

—Չես իմանում, խեղճ մարդ, բարովաղիր է քեզ վրայ, Մակարիից տղաղ է գրում առևտուրի մասին,—պատասխանեց Բարխուդարը, հեգնօրէն ժպտալով։

Հայրապետը սպրանած շարունակում էր նամակը ձեռում շուռ ու մուռ տալ։

—Էն թուղթը, որի վրայ աւետարանի տուրը խօսքերն են գրրվել, էսօրվայ օրը աշխարհը էնքան փուչացել է, որ Սէյրանի նման լիրբերը էդպէս կեղտոտում են։ Կարդա էլի, կարդա ու ձեռդ կըրծքիդ քսիր, բախտաւոր մարդ։

—Զորանամ ես, թէ որ մին բան հասկանում եմ էս թղթից։

—Կանչիր, կանչիր էն լակոտին ու թող ինքը կարդայ։

Հայրապետը ծրարը ձեռում սեղմած վազեց դուրս Սէյրանին կանչելու։ Բայց դեռ նրա մի ոտը սենեակումն էր, երբ յանկարծ ինքը, Սէյրանը, երևեցաւ իր հօր դէմ ու դէմ։

—Ներս եկ,—հրամայեց Հայրապետը իր որդուն, ինքը յետույետ քաշվելով։

Սէյրանը վազեց ներս, դիմեց հօրը, խլեց վերջինի ձեռից նամակը և փախաւ դուրս։ Այդ այնքան կարճ միջոցում կատարվեց, որ Հայրապետը չը կարողացաւ որ և է շարժում անելու։ Նա մընաց մի քանի վայրկեան տեղն ու տեղը։ Բարխուդարի բարկութիւնը կրկնապատկվեց Սէյրանի այդ անսպասելի վարմունքով և նա բարձրացաւ տեղից։

—Տարաւ բեաղդաթը,—արտասանեց Հայրապետը, ձեռքերը տարածելով առաջ։

—Թող տանի, ջուր անի, խմի, որ սիրտը հովանայ, շատ է տաքացել։

—Ախար, մարդ Աստուծոյ, մին ասիր, տեսնեմ, նա ինչ թուղթ էր է։

—Ինչ թուղթ էր։ Քեզ ու քո տղիդ...նահլաթ քեզ չար սա-թայէլ հան։

Բարխուդարը ատամները կրճատեց և բռունցքները սեղմեց։ Կարծես թէ նա պատրաստվում է յարձակվել իւր հարևանի վրայ և տեղն ու տեղը ջարդ ու փշուր անել։ Հայրապետը երկիւղից էր, թէ բարկութիւնից, բայց սաստիկ դողում էր։

—Բաս տղաղ գիր է գրում իմ աղջկաս վրայ ու ակօշկից ներս է գցում, հա, էդպէս ես խրատել նրան, հա։

—Գիր, ինչ գիր, Բարխուդար, ես իսկի ոչինչ չեմ հասկանում, ինչ է գրում։

—Սարգդ չի, ի հարկ է չես հասկանալ։ Ինչ է գրում։ գրում է թէ ես քեզ սիրում եմ, ասում է, թէ ես առանց քեզ ապրել չեմ կարող, ասում է, չունքի, ասում է, շատ եմ սիրում, ասում է։ Էս գիչեր, ասում է, տասը սնաթին դուրս եկ, ասում է, ես կը դամ ձեր սրահը, ասում է, ու էնտեղ կը տեսնվենք, ասում է։ Այ ինչ է գրում, հասկացար թէ չէ։

—Լաւ է գրում, ղօչչաղ տղայ, այ ես քո էն էն էն։ Ցեսնում էք ինչ զալաթներ է անում։ Համբերիր, Բարխուդար, համբերիր ու կը տեսնես թէ ես նրան ինչպէս չանսատակ կանեմ։ Մեղաւորը դու ես, Բարխուդար, թէ որ դու բիչտի չը տայիր, ես նրան սումարան տվողը չէի։ Չէ, բաս կը տայի, որ էսօրվան օրին հասցնէր մեզ։

—Ես եմ մեղաւորը։ Լեղուդ կապիր թէ չէ...դէհ, սուս, սուս, Հայրապետ, ինչ որ է, էլ օրէս դէն երկար խօսելը աւելորդ է։ Լաւ լսիր, ես եկել եմ քեզ ասելու, որ էսօրվանից դէէն քեզ հետ բան չունիմ, պրծաւ, գնաց։ Դու ես իմանում, ինչոր ուզում ես, արա։ Մին էլ, որ թէ տղիդ տեսնեմ իմ հանդավարում, առանց դէս, առանց դէն, խանչալս փորն եմ կոխելու ու խառնի-խառնի անեմ։ Էլ ոչ ես, ոչ դու։ Տէրը քեզ հետ։

Աւարտելով իւր խօսքերը Բարխուդարը քայլերը ուղղեց դէպի դռները։ Հայրապետը, որ երբէք չէր սպասում թէ բանը այդպիսով կը վերջանայ, մնաց տեղն ու տեղը անշարժ։ Նա անմիտ դէմքով, ձեռքերը առաջ տարածած, մէջքից քիչ ծռված, նայում էր Բարխուդարի հեռացող քայլերին։ Նա կամեցաւ այդ վայրկեանին մի բան խօսել կամ գոռալ, խնդրել, աղաչել Բարխուդարին, առաջը կապել, որպէս զի չը թողնի դուրս գնալու, բայց չը կարողացաւ։ Հայրապետը ինչպէս կար, նոյնպէս և մնաց, մինչև որ Բարխուդարը

մի ոտը դուրս դրաւ։ Այստեղ միամիտ մարդը ուշքի եկաւ, ձգեց գլխից գդակը մի կողմ, վազեց դէպի դռները և երկու ձեռքերով գրկեց Բարխուդարի մէջքից։

—Բաց թող, բաց թող, եթէ չէ...

—Բարխուդար, Բարխուդար, քեզ հետ կերած աղ ու հացը աչքերս կը քոռացնեն, եթէ Սէյրանի նման լակոտի խաթրու ես քեզանից խռովեմ։ Կանգնիր, կանգնիր, Բարխուդար։

Բարխուդարը կանգնեց, երեսը շուռ տուաւ դէպի իւր հարևանը, նայեց վերջինի աղերսող դէմքին, նայեց, իսկոյն գլուխը թեքեց կրծքին և երկու ձեռքերով գլուխը սեղմեց։

Չէ որ Բարխուդարը խօսք է տուել, երդում է կերել՝ այդ մարդու հետ մինչև իւր կեանքի վերջը բարեկամութիւն պահել։ Էլ մայ ինչ է անում, ինչ է անում։ ոտը դուրս է դնում նրա տանից, որ էլ մինչև յաւիտեան ներս չը դնի։ Միթէ այդ թքածը լղել չէ։ Բայց ով է մեղաւորը, Բարխուդարը։ Ինչով։ Բաս նրա նամուսը, նամուսը, տափը կոխի, ցեխի մէջ չպրտի, ոտնակոխ անի։ Չէ, այդ անկարելի բան է, անկարելի է, որ «Սէյրանի պէս լակոտը» նրա փափաղը աղբի մէջ գլորի և այնուհետև էլի նա ոտ կոխի այն տունը, ուր ապրում է Սէյրանը։ Ո՛չ, Բարխուդարը աւելի հեշտ կը համաձայնի կոտորել Սէյրանին էլ, իւր աղջկան էլ, իրան էլ սատանաների փայ կանի, բայց զաբուլ չի անիլ որ իւր ականջները այսօրվայ խօսքերի պէս խօսքեր լսեն։

Մինչդեռ այդ ամենը անցում էին Բարխուդարի մտքով, Հայրապետը ապշած մտիկ էր տալիս նրան, չը համարձակելով խօսք անդամ արտասանել։

—Ասել եմ, պիտի կատարեմ, թէ չէ, նամուս ինձ կը խեղդի, մնաս բարով Հայրապետ,—ասաց յանկարծ Բարխուդարը և շտապով դուրս եկաւ։

—Կանգնիր, մի փախչիր,—լսվեց դրսից և երկու երիտասարդական ձեռքեր այժմ Բարխուդարին ներս հրեցին։

Դա Սէյրանն էր։

—Լսիր, այ մարդ, լսիր մի քանի խօսք ասեմ ու յետոյ ուր որ ուզում ես գնա։

Սէյրանի կողմից այդ անսպասելի յանդգնութիւնը այն ազդեցութիւնը ունեցաւ Հայրապետի վրայ, որ խեղճ մարդու լեզուն այս անդամ բոլորովին «փէտացաւ», ինչպէս ինքը յետոյ պատմում էր Մարիամ բաջուն։ Նա չուխայի թեերը ուսերին գցեց, ձեռքերը

պահեց բերանի դէմ, իրանը ծռեց և ասաց. «այ քեօփ...փը...փը... Բայց չը կարողանալով արտասանել ուզած բառը, կրկին չուխայի թեևերը ցած գցեց և մի կողմ նայելով, ուր ոչ ոք չը կար, աւելացրեց. «տեսնում էք էս լակոտին, նահլաթ չար սատանին հա»։ Մինչ-դեռ Հայրապետը զանազան անհամբեր շարժուածքներ էր անում, Սէյրանը Բարխուդարին ներս հրելով, կանգնել էր դրան առաջ կարծես թէ դիտմամբ, որպէս զի վերջինը «չը փախչի»։

—Հրէս ասում եմ, այ մարդ, ջառ ջհաննամը դու էլ, քո բարեկամութիւնն էլ, մենք քեզ կարօտ չենք։ Բայց Սուսանը իմս է, դու Սուսանին ինձանից չես կարող խլել, դու նրան ինձ ես բախչել, դու երդվել ես և թքածդ լզող մարդ չես։ Լսում ես, Սուսանը իմս է, իմս...

Սէյրանը այդ խօսքերը արտասանում էր բարձ ձայնով, դրէ թէ գոռալով։

—Կորիր ձայնդ...լակոտ, թէ չէ գլխիդ ողողը չների փայ կանեմ,—խօսեց վերջապէս Բարխուդարը, ատամները կրճտելով և բռունցքները ամուր սեղմելով։

—Աղա ադա, լեզուդ կուլ տուր, ՏԷՔ մեղայ քեզ Աստուած,—մէջ մտաւ Հայրապետը, մօտենալով իւր որդուն։

—Քո բանը չի,—կտրեց իւր հօր խօսքը Սէյրանը։ Մէկ էլ եմ ասում, Բարխուդար, աղջիկդ, Սուսանը, իմս է, դուք կարող էք կըռվել, թշնամանալ, բայց Սուսանը իմս է։ Հա, Սուսանը իմս է, ով որ նրան իմ ձեռից ուզենայ խլել, ես նրան, հա, ես նրան իմանում էք ինչ կանեմ, իմանում էք, ես նրա փորը ձուկնի փորի պէս ջրրըզ ջրրըզ կը ճըզեմ։ Տեսնում էք...

Մէջքի կողմից, չուխայի տակից Սէյրանը դուրս հանեց մի մերկացրած դաշոյն, որ խկոյն պսպղաց ճրագի լոյսից։

Հայրապետը թուլացաւ։ Բարխուդարը մնաց նոյն դրութեան մէջ, ինչպէս առաջ։

—Ուրախացիր, Հայրապետ, փառաւորվիր, որ դրա պէս տղայ, ունես,—ասաց նա, գդակը գլխին դնելով, որ դուրս գնայ։

Սէյրանը մնաց արշարժ։ Նա չէր սպասում թէ իւր սպառնալիքը այդպիսի անյաջող ազդեցութիւն կունենայ Բարխուդարի վրայ։ Նա կարծում էր թէ վերջինը տեսնելով իւր յուսահատութիւնը, կը վախենայ և կը զղջայ։

—Սպասիր, մի գնար, ես ինչ եմ արել, ումի տղից եմ վատ։ Հէյ, ինձ ինչու ես չառլատան ասում։ Ես ինչ մեղաւոր եմ, ինչ

մի մեծ յանցանք եմ գործել, որ մի քանի անգամ եկել եմ Սուսանին տեսնելու։ Սիրում ուզում էր, դա ինչ մեղք է, որ դրա պատճառով այդքան ինձ չարչարում էք։ Հայրս ծեծել է ինձ ու փողոցները գցել և դու այդ հասակի մարդ, չես ամանչում, եկել ես, ասում «մեր բարեկամութիւնը էսօրվանից կտրվում է»։ Ինչ ուզում ես ասա, բայց Սուսանին իմ ձեռից մի խլիր, թէ չէ Աստուած է իմանում, որ այս խանչալը նրա էլ, իմ էլ սիրտը կը մտնի։

—Քաշիր, ասում եմ քեզ, այ տաւար, լակոտիդ կապը։ Նահլաթ, նահլաթ, աչքերս արիւն են կոխում, հէնց կը կոփեմ, որ հոգին քթի ծակերից դուրս կը գայ։

—Աղա կորիր ձայնդ, դուրս եկ, կորիր քեօփ...,—գոռաց վերջապէս Հայրապետը, յարձակվելով իւր որդու վրայ և բռնելով նրա կոկորդից։

—Հեռացիր,—հրեց ձախ ձեռով իւր հօր կրծքին Սէյրանը։ Ո՛չ քեզանից եմ վախենում, ոչ էլ նրանից։ Ի՞նչ էք ուզում ասել։

Հայրապետը կրկին մօտեցաւ նրան, և այս անգամ բռնելով երկու ձեռքերով նրա փեշերից, ասաց։

—Համեցէք, համեցէք աղբէր, դուրս կորիր էլի, չեմ ուզում, դու իմ որդիս, դու իմ սոնկս չես, աղբէր, կորիր էլի, փիէէ...

—Թող, ես խօ կռիւ չեմ անում, թող մէկ սրտիս ուզածը ասեմ...

Հայրապետը նրա բերանը սեղմեց մի ձեռով, իսկ միւսով սկսեց նրա գլխին բռունցքներ տալ։

Ներս վազեց Մարիամ բաջին ճչալով և գլխակոր ընկաւ իւր ամուսնու և որդու մէջ։ Սէյրանը մի հարուած տուաւ իւր հօր կրծքին, ազատվեց նրա ձեռից և դուրս փախաւ գոռալով։

—Կտոր կտոր կանեմ ես այն մարդուն, որ կը համարձակվի Սուսանիս խլել իմ ձեռից։

—Պարծեցիր, պարծեցիր, Հայրապետ, լաւ տղայ ունես։ Մընաս բարով,—ասաց Բարխուդարը և գդակը ծածկելով դուրս եկաւ։

—Քանդվեց տունս,—բացականչեց Հայրապետը և թուլացած ընկաւ մինդարի վրայ։

XII

Բարխուդարի և Հայրապետի բարեկամութեան թելը կտրվեց։ Երկու ընտանիքները, որ այդքան սիրում էին, որ այդքան ընտե-

լացել էին իրարու, երկար տարիներ միասին ապրելով, այժմ անջատվեցին։

Գիլենաղը ցերեկները Սուսանի մօտ միայնակ նստած մտաքերում էր այդ հին բարեկամութիւնը, մտաբերում էր և շատ անդամ լաց լինում։ Բայց նա դեռ յոյս ունէր, որ դարձեալ կարող է վերականգնել այդ բարեկամութիւնը։ Նա կարծում էր թէ Բարխուդարը այդ արել է պատահած անցքերից, յուզված լինելով սրտանց թարմ տպաւորութեան ներքոյ, առանց մտածելու։ Սակայն անցան շաբաթներ, անցաւ մի ամիս, վերջապէս երկու, երեք ամիս և Գիլենաղը տեսաւ, որ իւր ամուսինը չի կոտրվում։ Վերջապէս մի օր նա վճռեց համարձակորէն խօսել նրա հետ, մտաբերելով նրան իւր երդումը և Սուսանի ու Սէյրանի մասին տուած հաստատ խօսքը։ Այդ խօսակցութեան հետևանքը այն եղաւ, որ միւս օրը Բարխուդարը վարձեց մի որմնադիր և պատուիրեց՝ իւր տունը Հայրապետի տնից սրահի կողմից բաժանող պարսպի փլատակված մասը նորոգել։ Այդ մի թշուառ օր էր, նա մանաւանդ Մարիամ բաջու և Գիլենաղի համար, որոնք իրանց ամուսիններից գաղտնի միանալով երկար ու բարակ «ախ ու վախ» քաշեցին, արտասվեցին և հեռացան իրարուց։

Այդ հանդամանքը, այսինքը պարսպի վերանորոգումը, կրկնապատկեց Սէյրանի յուսահատութիւնը։ Սէյրանը, որ նոյնպէս Բարխուդարի կողմից սպասում էր կամաւոր հաշտութեան, այժմ տեսնելով, որ ամեն ինչ վերջացած է, մնաց չուարած։

—Ուրեմն Սուսանին ուժով ինձանից խլեցին։ Ես այլ ևս նրա երեսը չեմ տեսնիլ։ Բայց ինչ է մտածում ինքը Սուսանը իմ մասին։ Պէտք է նրա հետ խօսել։ Ի՞նչպէս կարող եմ տեսնել նրան, ցերեկները դուրս չի գալիս, գիշերներն էլ նոյնպէս փակված է։ Միթէ յաւիտեան զրկվեցի Սուսանիս երեսից, միթէ այլևս չեմ տեսնելու նրա հրեշտակի պէս գեղեցիկ դէմքը, չեմ լսելու նրա քաղցր ձայնը։ Ի՞նչպէս, ով է ասում։ Չէ, ես հենց այս շաբաթ, հենց այս քանի օրերս պիտի տեսնեմ նրան, պիտի իմանամ, թէ նա էլ ինձպէս տանջվում է թէ չէ։ Ախ, եթէ Սուսանը ինձ սիրում է, ես գիտեմ ինչ կանեմ։—Ի՞նչ կանեմ։ Եթէ Բարխուդարը չկոտրվի, ես Սուսանին կրփախցնեմ, բաս, կրփախցնեմ։ Բայց չէ, առաջ հարկաւոր է աշխատել, որ բանը խաղաղութիւնով վերջանայ։

Այդ մտածմունքներով էր զբաղված Սէյրանի գլուխը նոյն օրերը, երբ որմնադրի ձեռի տակ շարադուշակ պարիսպը արագ

արագ բարձրանում էր։ Սէյրանը հանգստութիւն չունէր, նա գիշեր ու ցերեկ մտածում էր Սուսանի մասին, մտաբերում էր այն երեկոն, երբ նա վերջին անգամ խօսելով Սուսանի հետ, համբուրեց։ Զարմանալի համբոյր։ Միթէ դու եղար միակ պատճառը այդքան դժբախտութիւնների։ Միթէ ինքը, Սէյրանը չէ միակ մեղաւորը։ Ի՞նչ է ուզում նա Բարխուդարից, հը՛մ, որ սա այն երեկոյից յետոյ հրաւիրէր իրան մօտ, համբուրէր ճակատից և ասէր։ «գոչաղ տղայ, լաւ ես անում, շատ լաւ ես անում, որ իմ աղջկան գիշերները համբուրում ես»։ Ի՞նչպէս չէ, «իշտահտ սաֆ արա, Սէյրան»։ Այո, Սէյրանը շատ վատ արեց, չը համբուրեց։ Ախ անզգուշութիւն։ Ինչպէս նա չըկարողացաւ առաջուց մտածել այդ ամենը։ աչքերը արիւն էր կոխել ախար։ Դա բաւական չէր, նա Բարխուդարի հետ էլ կոչտ վարվեց այն գիշեր։ Ո՛վ գիտէ, կարելի է, եթէ նա մէջ տեղ ընկած չը լինէր, Բարխուդարը կը փոշիմանէր և էլի կըշարունակէր իւր բարեկամութիւնը։

Այդպիսի մտածմունքներով պաշարուած մի երեկոյ Սէյրանը իրանց բակում գլուխը կրծքին թեքած շրջում էր յետ ու առաջ։ Նա մտածում էր, որ մի հնար գտնի այդ երեկոյ Սուսանի հետ տեսնվելու։ Երկար, երկար նա պտտեց այս ու այն կողմը, վերջապէս նա կանգ առաւ պատի տակ և նրա աչքին ընկաւ մի չարժական սանդուխք, որ ձգուած էր պատի տակին։ Սէյրանի գլխում մի միտք ծագեց։ Մի քանի րոպէ նա անշարժ կանգնեց, ինքն իրան կրկնելով։ «անեմ թէ չէ, անեմ թէ չէ»։ Ի՞նչ որ լինելու է, թող լինի —ասաց վերջապէս վճռական եղանակով, մօտեցաւ սանդուխքին, բարձրացրեց երկու ձեռքերով և զգուշութեամբ պարսպի դէմ կանգնացրեց։ Կատուի արագութեամբ նա բարձրացաւ պարսպի գլուխը և սկսեց նայել դէպի Բարխուդարանց տունը։ Դռները բաց էին, ճրագը վառ էր։ Բարխուդարը մէջքը պատին տուած, նստած չիբուխ էր ծխում։ Գիլենաղը նոյնպէս նրա դէմուդէմ նստած կար էր անում։ Ամբաւ և Սուսանը չէին երևում։—Երևի նրանք քնած են,—մտածեց Սէյրանը մի նոյն ժամանակ Սուսանին ուրտնելով։ Ցանկարծ սենեակի դռների սեամի վրայ նշմարվեց մի կանացի կերպարանք։ Սէյրանի սիրտը թռմռաց։ Նա իսկոյն ճանաչեց Սուսանին։

—Ինչպէս է դեղնել, լղարել, երևի խեղճը հիւանդ է։ Դուրս է գալիս, ձեռում տարեկներ կան, գնում է խոհանոց։ Ի՞նչ անեմ թռչեմ, առաջը կտրեմ։ Բայց չէ, կրվախի։ Ի՞նչ անեմ, էհ, ինչ որ լինելու է, թող լինի, էլ ուրիշ յարմար ժամանակ դուցէ էլ չունենամ։

Մի ակնթարթում Սէյրանը պարսպի գլխից թռաւ Բարխուդարանց բակը։ Պարիսպը բաւական բարձր էր։ Սէյրանի ընկնելու ոտաձայնը հասաւ Սուսանի ականջներին և վերջինը վախեցած, գլուխը բարձրացրեց։ Ցեսնելով որ մի մարդկային կերպարանք մօտենում է իրան, Սուսանը կամեցաւ ներս փախչել, բայց Սէյրանը նրա առաջը կարեց։

—Սուսան, Սուսան, աղաչում եմ, սպանիր ինձ, գլուխս կըտրիր, դէն գցիր, բայց երկու բոպէ ինձ լսիր։

—Էլի դու ես, Սէյրան, ինչ ես ուզում, հեռացիր, հեռացիր։

—Չեմ կարող, ես կըգժվեմ, չոլերը կընդնեմ, սիրտ տուր ինձ։

—Գնա, եթէ ինձ սիրում ես, էլի դուրս կըգան,—պատասխանեց Սուսանը, երկիւղից դողալով։

Սէյրանը նրա ձախ ձեռը խլեց, որովհետև Սուսանը աջ ձեռով տարելիներ ունէր բռնած։

—Ինձ փախցնում ես, Սուսան։

—Սուսանը լեզու չունի, Սուսանը աչքեր չունի, Սուսանը այս աշխարհում չի, Սուսանը մեռել է, դէ, ձեռ քաշիր,—պատասխանեց օրիորդը թոյլ և դողդոջուն ձայնով։

Սէյրանը չը հաւատաց իւր ականջներին։ Մթթէ, մթթէ, նա այդ խօսքերը լսում է մի կենդանի արարածի բերանից, մթթէ դա Սուսանն է կանգնած իւր առջև։ Նրան թվում էր թէ այդ յուսահատական ձայնը խաւարի միջից արձակում է մի ուրուական։ Բայց ահա Սուսանը, ահա նրա ձեռը, որ սեղմած պահում է իւր ափերի մէջ Սէյրանը։ Սուսանը աշխատում է դուրս խլել իւր ձեռը, բայց Սէյրանը բաց չէ թողնում, նա աւելի ու աւելի սեղմում է և փոքր առ փոքր մօտեցնում իւր շրթունքներին։

—Գիտեմ, որ քեզ շատ են չարչարել, Սուսան, ներիր ինձ, մեղաւորը ես եմ։ Մեղաւորը ես եմ և եկել եմ քեզ ազատելու։

—Ազատելու, հը, Սուսանին Աստուած կարող է ազատել այս աշխարհից։

—Չէ՛, ես քեզ կազատեմ, կը փախցնեմ։ Ես քեզ եմ սիրում, դու ինձ։ Այդպէս չի։ Գնանք ուրիշ քաղաք, Սուսան, գնանք, փախչենք։

—Փախչել, բաց թող, Սէյրան, դու գժվել ես։

—Չէ, խելքս գլխումս է, ես հասկանում եմ, թէ ինչ եմ ասում։ Դու ինձ խօսք տուր, ես հէնց այս շաբաթ կը փախցնեմ քեզ։ Ես շատ լաւ ընկերներ ունիմ, նրանք ինձ կ'օգնեն։

—Ցեսնում ես, որ Սուսանը մեռած է, որտեղ պիտի տանես նրան։ Ցես ինչ օրն եմ ընկել։

Նրանք կանգնած էին խոհանոցի դռների առաջ։ Ճարպի մոմը, որ վառվում էր խոհանոցում, թոյլ կերպով լուսաւորեց Սուսանի դէմքը, երբ վերջինը երեսը չուռ տուաւ դէպի խոհանոց, որպէս զի ցոյց տայ Սէյրանին իւր դէմքը։ Սուսանը նիհարած էր, դեղնած էր։ Նրա առաջվան բոցավառ այտերը հալվել էին, կաշին թուլացել էր ու տեղ-տեղ ծալծվել։ Նրա շրթունքները կապտել էին և սեղմվել իսկ խոշոր աչքերի մէջ փայլում էր մի խորին հոգեկան տանջանք։ Սէյրանը նրա երեսին նայեց և նրա մարմնով անցաւ մի սառսուռ։ «Ցէր Աստուած, Ցէր Աստուած, Սուսանը ձեռից դուրս է գալիս», անցաւ նրա մտքով, բայց նա աշխատեց զսպել իւր երկիւղը։

—Գնա, գնա, Սէյրան, թող ինձ, որ իմ ցաւերովս խեղդվեմ ու մեռնեմ։

—Գնալով, ի հարկ է կը գնամ, որ դու ինձ չես սիրում, էլ ինչու կը մնամ,—պատասխանեց Սէյրանը դառնացած։

Այստեղ տիրեց մի քանի վայրկեան մի խորհրդաւոր լռութիւն։

—Սուսան, հէնց միայն մի խօսք, մի խօսք ասիր, ասիր, որ դու ինձ չես սիրում, էլ այնուհետև ես գիտեմ։

—Աղաչում եմ, գնա, Սէյրան, հայրս դուրս կը գայ։

Սուսանը անդադար նայում էր սենեակի դռներին։

—Գնա, մուռացիր ինձ, Սէյրան։

—Ինչ, մուռանամ։ Հը՛մ, հասկացայ, բաս օրս լաւ տեղ մըթնացրի։ Բաս Սէյրանը քո աչքից այնքան ընկել է, որ դու փախցնում ես էլի։ Լաւ, Սուսան, ես կը գնամ, բայց ինչ որ ինձ պատահի, մեղքը քո վզին։

Այդ ասելով, Սէյրանը դէմքը չուռ տուաւ, որ հեռանայ։ Սուսանը բռնեց նրա թեից և նա իսկոյն կանգնեց։ Կարծես թէ Սէյրանը հէնց սպասում էր, որ Սուսանը չի թոյլ տալ իրան հեռանալու։

—Լսիր, Սէյրան։ Ցեսնում եմ, որ դու նեղանում ես ինձանից։ Բաս որ այդպէս է, թող կարճառօտ պատմեմ քեզ իմ միտքը և դու կը հասկանաս թէ ինչու համար եմ ասում, որ դու ինձ մոռանաս։ Գնանք խոհանոց, այստեղ անյարմար է։

Սուսանը բռնեց Սէյրանի ձեռից և քաշեց ներս։ Օրիորդը

տարեկները գետնին դրաւ, մազերը ուղղեց և իւր նիհարացած ձեռը դնելով Սէյրանի ուսին սկսեց.

—Սէյրան, ես քեզ սիրում եմ, ուզում ես հաւատացիր, չես ուզում՝ մի հաւատար, բայց ես քեզ սիրում եմ։ Մտիկ արա ինձ, դա քո սէրն է, որ ինձ այս օրն է դցել։ Բայն ես պարտաւոր եմ, որ քեզանից բաժանվեմ։

—Սիրում եմ, բայց պարտաւոր եմ բաժանվել—կրկնեց Սէյրանը վիրաւորված։

—Համբերիր, լսիր մինչև վերջը։ Գիտես, որ հայրս, եթէ նրան սպանեմ, կախ տաս, քեզ աղջիկ ովոլը չի։ Այդ դու պիտի լաւ հասկանաս, եթէ նրան ճանաչում ես։ Գալով փախչելուն, դա մեր կողմից յիմարութիւն կը լինի, որ ոչ դու ես կարող անել, ոչ էլ ես կանեմ։ Մեր փախուստը անպատիւ կանի մեր ծնողների անունը, որ առանց դրան էլ իմ պատճառով անպատված է։ Ես չեմ ուզում, որ ինձ համար ծնողներս ամօթից սև երես մնան ուրիշների առաջ։ Ես գիտեմ, որ հայրս հենց մեր փախչելու օրը իրան կախ կը տայ։ Նա այդպիսի մարդ է, ես ճանաչում եմ։ Քեօխանց Բարխուդարը նամուսի գերի է։ Թող ես չարչարվեմ, տանջվեմ, սառը գերեզմանը մտնեմ, այդ ինձ համար լաւ է, քան թէ հօրս խայտառակութիւնը։ Ճշմարիտ է, նա ինձ թակում է, աչքով աչք չունի ինձ տեսնելու, բայց ես նրան սիրում եմ, որովհետև հայրս է։ Գիտես, Սէյրան, ինչ ասել է ծնողներ։ Լաւ մտածիր։ Նրանք ինձ լոյս աշխարհ են գցել, մեծացրել են, լաւ թէ վատ կրթել են, այս հասակին են հասցրել, վերջապէս նրանք ինձ սիրում են։ Զեռ հաւատում, որ սիրում են։ Զէ, սիրում են և շատ են սիրում։ Սէյրան, մտիկ արա հօրս երեսին, տես թէ այս կարճ ժամանակի մէջ նա ինչպէս է փոխվել։ Ծերացել, լզարել, փորը մէջքին կպել, թէները ներս ընկել, աչքերը խորը փոսերի մէջ կորել, մէջքը երկու դոթ ծռվել։ Դա իմ պատճառով է։ Այն օրից, երբ ձեզ հետ կարել է բարեկամութիւնը, ոչ մի անգամ կուշտ փորով հաց չի կերել, ոչ մի անգամ մօրս հետ կարդին չի խօսել։ Օրը ախ ու վախով է անցկացնում, հանգստութիւն չունի, մարդու երես չի ուզում տեսնել, կարծում է, որ ով որ պատահի, պիտի իրա երեսին խօսի։ Գիշերները մին տեղ նստել չի կարողանում, չիրուխը բերանին դրած, ծխում է ծխում մինչև կէս գիշեր, առանց խօսելու։ Դէ հիմայ դու, ինքդ ասիր, Սէյրան, բաս դա մեղք չի մեր կողմից։

«Իսկ մայրս, ախ Աստուած, ինչ է մնացել նրանում։ Խեղճ կը-

նիկը հօրս երեսին մտիկ անելով, մի կտոր մոմի պէս հալվում է։ Առաջվայ այն գեղեցիկ կնիկը կուչ է եկել, պառաւել է, հէնց իմանաս, որ այս երեք ամիսը նրա համար երեսուն տարիներ են դարձել։ Մայրս քեզ սիրում է, Սէյրան, շատ է սիրում։ Խեղճ կնիկ, նա շատ չարչարվեց, որ հօրս կակղացնի, բայց չիլաւ, չի կարողացաւ հօրս ծռել։ Ո՞վ կարող է ծռել Քեօխանց Բարխուդարին, երբ բանը նրա նամուսին է վերաբերվում։ Հիմայ տեսնելով որ էլ ճար չը կայ, խեղճ կնիկը լռել է, ցաւերը թաղցրել կծքի տակ և այդ ցաւերը այսօր մըղ-մըղ ուտում են նրան։ Տեսնում ես, Սէյրան, տեսնում ես այս ամենը, հիմայ ինքդ դատիր, թէ ես ինչ անեմ։ Մըտիկ եմ տալիս նրանց երեսին, ջիղարս է կտրատվում, սիրտս է մղկտում, ախար չէ որ նրանց ցաւերի պատճառը ես եմ։ Զէ, Սէյրան, ինչ ուզում ես արա, բայց ես չեմ կարող նրանց այդ հալում թողնել ու քեզ հետ գալ թէ ինչ է, որ ես պիտի ուրախ ապրեմ։ Թող ես չարչարվեմ, մեռնեմ, միայն թէ ծնողներիս չը սպանեմ։

Սուսանը ամբողջ ժամանակ խօսում էր թոյլ, հանդարտ, բայց դողդոջուն ձայնով։ Նրա շարժուածքի, արտասանութեան մէջ երևվում էր մի դառն ներքին հոգեկան տառապանք։ Երբ նա կանգ առաւ, Սէյրանը իւր ձեռը հեռացրեց նրանից, թեքեց իւր գլուխը կրծքին և վշտալի ու յուսահատական եղանակով արտասանեց.

—Կորաւ Սէյրանը, փուչացաւ, էլ ինչ օրվան է ապրում, որ Սուսանը նրան չի սիրում։

—Սուսանը Սէյրանին չի սիրում։ Մտիկ տուր, Սէյրան, Սուսանի երեսին, մտիկ տուր ու յետոյ ասիր։ Տես, թէ Սուսանը ինչ օրն է ընկել և մտածիր թէ ում պատճառով։

—Դու քո հօր նամուսը ինձանից շատ ես սիրում։ Ես այդպէս չէի իմանում, ես կարծում էի, որ քո աչքում այս աշխարհում Սէյրանից թանգ բան չը կայ, բայց բանից դուրս է գալիս, որ ես խաբուած եմ եղել։

—Ես քեզ ամենը ասեցի, Սէյրան, դու ինձ չես հաւատում։ Վնաս չունի, իմ մահը քեզ մի օր կը հաւատացնի։

—Ինչու ես մեռնում, ապրիր, փառք Աստուծոյ, ինչ կայ լսել եմ, որ քեզ համար նոր նշանած են ճարել և շուտով պիտի պսակեն—ասաց Սէյրանը դառն հեգնութեամբ։

—Ճշմարիտ է, բայց ոչ թէ մենք ենք ճարել, ինքն է ճարվել։ Ես չեմ էլ ճանաչում թէ նա ով է, ինչ մարդ է, բայց ես գլուխս

քարշ արած պիտի նրան գնամ, պիտի ծնողներիս կամքին հնազանդվիմ։

—Պիտի գնամ, պիտի հնազանդվիմ,—կարողացաւ միայն կըրկնել Սէյրանը։

—Հա, Սէյրան, ես պիտի անպատճառ պսակվիմ։ Դու գիտես որ մեր անզգուշութիւնը սաղ քաղաքում խայտառակել է իմ անունը։

—Դրանով ինչ ես ուզում ասել։

—Այն, որ ես մէկի վրայ պիտի պսակվեմ, որ ծնողներիս և իմ անունից լուանամ այն կեղտը, որ իզուր տեղից կպցրել են ինձ չար լեզուները։

—Եւ ուրիշի վրայ պիտի պսակվես։

—Եթէ քեզ վրայ պսակվեմ, մարդիկ կասեն. «կոտրված ամանը կոտրողին տուին, որ ինքը կոծկի»։ Հասկանում ես թէ չէ։ Ես կը պսակվեմ ուրիշի վրայ և երբ կը հաստատվի թէ ես «կոտրած ամանն» չեմ, այնուհետև կանցնեն մի քանի ամիսներ, ամենաչատը մի տարի և դու ինձ կը գտնես հողի տակ։

—Սիրտս, սիրտս հէնց վկայում էր, որ դու ինձ չես սիրում,—կրկնեց Սէյրանը դառնագին, երկու ձեռքերով իւր գլխին խփելով։

—Համբերիր և կը տեսնես։

—Համբերեմ, որ տեսնեմ թէ ինչպէս իմ սիրածին ուրիշը տանում է. չէ, Սուսան, այդ տանջանքին ես տանել չեմ կարող։

—Դէ, հերիք է, Սէյրան, էլ ուրիշ ասելիք չունիմ։ Մի բան եմ խնդրում քեզանից, Սէյրան, եթէ ինձ սիրում ես, այսուհետև էլ ինձ վրայ նամակներ չը գրես։ Այն օրվայ քո նամակը իմ ձեռը չէր ընկել։ Դու երեխայաբար պատուհանից էիր ներս գցել հէնց այն ժամանակ, երբ հայրս պատուհանի առաջ կանգնած էր։ Նա վերցրեց նամակդ և տուաւ եղբօրս կարդալու։ Ես նրա մէջ գրված տողերի չափ հարուածներ ստացայ։ Դէ, էլ այսուհետև չը սխալվես։ Ես առանց նամակի էլ գիտեմ քո դրութիւնը։ Ե՛կ, մօտեցիր, վերջին անգամ մնաս բարով անենք։

Սուսանը ուժով թեքեց Սէյրանի գլուխը դէպի իւր կուրծքը և մի տաք համբոյր գրոշմեց նրա ճակատին։ Արտասուքի երկու խոշոր կաթիլներ գլորվելով նրա վաղաթառամ երեսով ընկան Սէյրանի այտերի վրայ։

—Քարասիրտ աղջիկ, քանդեցիր տուն, մնաս բարով, ինչ

որ ինձ պատահի, այսուհետև մեղքը քո վզին,—ասաց Սէյրանը, երեսը չուռ տուաւ և խոհանոցից դուրս եկաւ։

—Մի նեղանար, համբերիր և կը տեսնես, գնաս բարով,—պատասխանեց Սուսանը խեղդված ձայնով։

XIII

Վիրաւորված սրտով, փշրված յոյսերով Սէյրանը բաժանվելով Սուսանից, ուղղակի չը վերադարձաւ տուն։ Նա դժուարութիւնով բարձրացաւ պարսպի վրայ, ցած եկաւ սանդուխքով դէպի իրանց բակը, սանդուխքը կրկին դրաւ իւր առաջվայ տեղը և դուրս եկաւ փողոց։

Գիշերից բաւական անցել էր, փողոցներում ոչ ոք չէր երևում։ Սէյրանը իւր քայլերը ուղղեց դէպի ներքին փողոցը։ Նա գնում էր գլխակոր, թոյլ և անհաստատ քայլերով, անդիտակցաբար, առանց ինքն իրան հարցնելու, թէ ուր է գնում և ինչու է գնում։

Ուրեմն այդպէս, Սուսանին նրա ձեռից խլում են և տալիս Քոչարեանց Ռուստամին, այն «սև երես», «այրէժառ», «սատանայի կերպարանք ունեցող» Ռուստամին։ Իսկ Սուսանը։ Նա էլ յօժար է գնալու, նա վախում է Սէյրանի հետ փախչելուց։ Դատարկ բան է, նա սուտ է ասում, թէ իւր ծնողների նամուսն է պահում։ Ո՛չ, նա չի սիրում Սէյրանին, չի սիրում։ Եթէ սիրէր, ուրախութեամբ ձեռը կը տար նրան և կ'ասէր. «առ, տար ինձ, Սէյրան, ուր որ ուզում ես, ես քոնն եմ, ես ոչ ոքից չեմ վախում»։ Քիչ են պատահել այդպիսի բաներ, քիչ է պատահել, որ տղան աղջկան փախցնի նրա ծնողներից։ Քարասիրտ աղջիկ, դու հոգի չունիս, սիրտ չունիս, չես իմանում թէ Սէյրանը ինչքան է չարչարվում քեզ համար։ Չէ, եթէ դու իմանայիր, այդպէս պատասխան չէիր տալ։ Դու կընկնէիր Սէյրանի գիրկը, լաց կը լինէիր, արտասուքով կողողէիր նրա ձեռքերը, կ'աղաչէիր, կը պաղատէիր, որ քեզ ազատի նա, ազատի քո կատաղի հօր ճանկերից, որ դուք միասին ապրեք։ Ախ, Սուսան, Սուսան, այս ինչ օրի հասցրիր Սէյրանին, բաս դու մոռացար այն գիշերվայ խօսքերդ. «Սէյրան, ես քեզ սիրում եմ և յաւիտեան չեմ մոռանալ»։ Որտեղ մնաց քո այդ սէրը, հիմայ ինչու Սէյրանի վիզը կարեցիր և գիշերվայ կէսին գցեցիր փողոցները։

—Ո՞ւր եմ գնում և ինչու, խելքս կարծես թէ տեղը չի,—արտասանեց յանկարծ Սէյրանը, ընդհատելով իւր մտածմունքները։

Նա փողոցի մէջ տեղում կանգ առաւ և նայեց իւր չորս կողմը։ Ոչ ոք, ոչ ոք չը կար, բացի գիշերային խաւարից։ Մի քանի վայրկեան նա մնաց կանգնած և յետոյ դարձեալ շարունակեց իւր ճանապարհը։ Կրկին մտածմունքները պաշարեցին նրա գլուխը։ Ինչեր է դուրս տալիս նա, հրմ, միթէ Սուսանը կարող է մոռանալ Սէյրանին, միթէ չի սիրում։ Եթէ չի սիրում, «բաս ինչու է այս օրը ընկել, այդպէս լղարել, մաշվել»։ Ո՞րտեղ է այն առաջվայ Սուսանը։ Նա չը կայ, նրա միայն կմախքն է մնացել։ Ախ, Տէր Աստուած, ինչպէս է փոխվել խեղճ աղջիկը այս երեք ամսվայ մէջ։ Աչքերը փոսերի մէջ են թաղվել ու պլշվել, այն առաջվայ կարմիր թշերը նարնջի պէս դեղնել են, այն առողջ մարմինը հալվել է, փորը մէջքին է կպել, վիզը բարակել է։ «Չէ, չէ, Սէյրանը չարաչար սխալվում է, Սուսանը նրան սիրում է և նրա սէրն է, որ խեղճ աղջկան այդքան փոխել է։ Բայց ինչպէս սէր է դա, որ չի կարողանում յաղթել ուրիշ մնացեալ զգացմունքներին,—ծնողական սիրուն, ինչու Սուսանը այնքան կամքի ոյժ չունի, որ ոտնակոխ անելով հասարակական կարծիքը, արհամարհելով աւանդական նախապաշարմունքները, ընկնի իւր սիրեկանի գիրկը և վայելի այն երջանիկ օրերը, որ շատ քիչ մահկանացուներին է վիճակված այս անցաւոր աշխարհում։ «Փախչել, փախցնել, հրմ ինչ եմ ասում, ինչ եմ դուրս տալիս, փախցնել։ Մին հարցնող լինի ուր, կարող եմ ես նրան փախցնել և ինչպէս։ Ոչ փող ունիմ, ոչ էլ մի արհեստ գիտեմ, որ կարողանամ պահել թէ նրան և թէ ինձ։ Ինչ անխելքութիւն, ինչու ես արհեստ չը սովորեցի, որ այսօրվայ օրը ինձ հարկաւոր է գալիս։ Էհ դրա մասին այժմ ուշ է մտածել»։ Այո, ուշ է, ուր գնայ այժմ Սէյրանը, Տէր Աստուած, ինչ անի, ումը դանդատվի։ Միթէ գնայ հօր առաջը չոքի, մեղայ դայ, ապաչի, պաղատի, որ նա մի կերպ Բարխուդարի հետ հաշտվի։ Հըմ, ինչ կը լսի Հայրապետը իւր որդու խօսք։ Ասենք թէ նրան խղճալով լսեց էլ, միթէ խեղճ մարդը կարող է այսուհետև մի բան անել։ «Առանց ինձ էլ, նա երեք ամիս էր, որ ամեն կերպ աշխատում էր հաշտվելու։ Բայց ինչ արաւ։ Բարխուդարը, օհօ, Բարխուդարը առիւծ է, նրան մօտենալ չի կարելի, թէ կուզ աշխարհը տակնուվրայ լինի, նա իւր թքածը լղող մարդ չի։ Քանի պարիսպը չը կար, ես յոյս ունէի, իսկ այժմ չինվեց, չինվեց այն և մինչև յաւիտեան կը մնայ մեր և

Բարխուդարի մէջ, ինչպէս մի անյաղթելի խոչընդոտ մեր բարեկամութեան։ Ինչ, ինչ ասացի։ Բարխուդարը իւր ասածի մարդ է, թքածի լղողը չի, հաստատ կամք ունի։ Չէ, բաս ուրիշ ինը տարի սրանից առաջ նրա տուած խօսքը։ Այդ է միթէ նրա հաստատակամութիւնը, այդպէս է կատարում նա իւր տուած խոստումը։ Պարծենկոտ մարդ, ինչու մոռացար քո խօսքը, այդ միթէ անաղնվութիւն չէ»։

Սէյրանը կրկին կանգ առաւ և մի քանի վայրկեան նայեց իւր չորս կողմը։ Յետոյ դարձեալ նա շարունակեց իւր ճանապարհը և կրկին սկսեց մտածել ու ինքն իրան խօսել։ «Տէր Աստուած, Տէր Աստուած, ինչեր եմ դուրս տալիս, ով է Բարխուդարը, ինչ եմ պահանջում ես նրանից։ Չէ որ նա հայր է, այն էլ հին, վաթսուն տարեկան մարդ։ միթէ ես լինէի նրա տեղը, ուրիշ կերպ կը վարվէի։ Չեմ կարծում։ Նա ասում է «նամուս չի վերցնիլ, որ աղջիկս օտար տղի հետ գիշերները սովրաթ անի, մարդիկ թքով կը հանեն աչքս»։ Ճշմարիտ է, բոլորովին ճշմարիտ է, որ «մարդիկ թքով նրա աչքը կը հանեն»։ Մարդիկ, մարդիկ, դուք, օհօ, դուք պատրաստ էք ամեն մի վայրկեան ամեն մի քայլափոխում մրոտել, ցեխ քսել ուրիշների երեսին և այդ ձեզ բաւականութիւն է պատճառում։ Ուրիշների կեղտոտութիւնը ձեզ ուրախութիւն է պատճառում, որովհետև առիթ է տալիս ձեզ ներողամտութեամբ վերաբերվելու ձեր սեպհական կեղտոտութիւններին։ Բարխուդարը մինչև հիմայ իրան ձեր կեղտից ազատ պահելու համար ձեզանից հեռու է ապրել, չէ խառնվել ձեզ հետ և դուք, այդ տեսնելով, ի հարկ է նրա հպարտութեանը տանել չէիք կարող։ Դուք գիշեր ու ցերեկ մտածում էիք, թէ ինչպէս անէք, որ մի արատ գտնէք նրա կեանքում, որպէս զի նրան ձեզ հետ հաւասարացնէք։ Աշխատեցիք և ձեզ յաջողվեց էլ գտնելու։ Դուք մի չնչին լուն մի մեծ ուռ չինեցիք։ Բայց Տէր Աստուած, ով, ով . . . . . .

Սէյրանը այստեղ յանկարծ երկու ձեռքերով մի հարուած տուաւ գլխին և մնաց մեխված փողոցի մէջ տեղում։ Կար մի կէտ, մի նշանաւոր խնդիր, որի մասին Սէյրանը մինչև այդ ժամանակ չէր մտածել և չէր էլ յիշում մինչև անգամ։ Բայց ահա նոյն վայրկեանին, երբ նա անիծում էր մարդկանց, նոյն վայրկեանին այդ խնդիրը ծագեց նրա գլխում։ Սէյրանը սկսեց ոյժ տալ իւր յիշողութեան մի ինչ որ բան մտաբերելու։ Մի քանի րոպէ նա մնաց այդ դրութեան մէջ։ Ստէպ ստէպ նա գլուխը բարձրացնում էր և

ձեռքերը օդի մէջ տարածելով, կրկնում. «ով, ով լինի, ով լինի»։ Ցանկարծ նա ձեռքերը կրկին խփեց գլխին և սկսեց ինքն իրան խօսել այնքան բարձր ձայնով, որ եթէ մէկը քսան քայլ նրանից հեռու լինէր կանգնած, հեշտութեամբ կարող էր լսել և հասկանալ նրա խօսածը։

—Վայ իմ գլխիս, ինչու եմ ապրում, էլ ինչ երևսով եմ ուրիշներին մեղադրում, քանի որ ես անպիտանս եմ միակ մեղաւորը, —ասում էր նա, իւր գլխի մազերը փետելով և շրթունքները կըրծոտելով։ Լեղու, քեզ ստեղծողին ինչ ասեմ, պիտի չորանայիր տակտան ինչպէս մի փայտի կտոր, որ այն օրը ջահիլների մէջ չը խօսէիր։ Սէյրան, Աստուած քո բողազը կապէր, որ այն սեւացած օրը սրանից երեք ամիս առաջ ընկերներիդ հետ քէֆ անելիս, այն լեղին չը լակէիր։ Ինչ արի ես, ինչ արի, իմ ձեռքովը իմ տունը քանդեցի։ Կեր, կեր, Սէյրան, հախդ է...բայց, Տէր Աստուած, ախար չէ՞ որ ես ուրիշ կերպ եմ ասել, չէ՞ որ ես միայն ասեցի. «չուտով ես էլ եմ պսակվելու Քեռիանց Բարխուդարի աղջկայ վրայ»։ Էհ, հերիք էր, հերիք էր, չար լեղուների համար հէնց այդքանն էլ բաւական էր, որ ճոթը տուիր նրանց ձեռը և ահա նրանք մի մեծ կծիկ են փաթաթել։ Ի՞նչ անեմ հիմայ, ինչ կարող եմ անել։ Ոչինչ, ուշ է, անցեալը չի կարելի յետ բերել...

Սէյրանը իւր չուարված հայեացքը խաւարի մէջ ձգեց իւր չորս կողմ։ Նա բաւական հեռացել էր իրանց փողոցից և այժմ գտնվում էր ներքին փողոցներից մէկի ծայրում, ուր քաղաքի հին եկեղեցին էր գտնվում։ Փողոցներում ոչ ոք չը կար, նա մօտեցաւ պատին և այստեղ տեսնելով մի բաւական մեծ քար, շուռ տուաւ և նրա վրայ նստեց։

Պարզ երկնքում աստղերը փայլում էին։ Սէյրանը բարձրացրեց իւր գլուխը և սկսեց նայել երկնքին։ Ինչեր էին անցնում այդ բոպէին անբախտ սիրահարի գլխով։ Աստուած է իմանում։ Բուռն զգացմունքների ճնշման ներքոյ նրա միտքը երերվում էր, ինչպէս մի փոքրիկ մակոյկ լայնատարած ծովի ալիքների մէջ։ Ծնողներից անարգված, սիրելիից մերժված պատանին այնքան վշտացած էր կեանքից, որ նա իւր գոյութեան համար չէր տեսնում մի յենարան։ Մի ահագին ծանրութիւն ճնշում էր նրա սիրտը և նա ոյժ էր անում ազատվելու այդ ծանրութիւնից, բայց ի զուր։ Որպէս զի զէթ մի քանի բոպէ փարատի իւր դառն մտածմունքները, Սէյրանը սկսեց երգել մի ինչ որ պարսկական երգ։ Նա սկսեց ուրախ երգ, բայց մի քանի բառեր չ'արտասանած, եղանակը փոխվեց և թոյլ ու հազիւ լսելի ձայնով սկսեց տմտմալ պարսկական «մուղամմաթներից» մէկը որոնք արտայայտում են միայն վիշտ, վիշտ ու վիշտ։ Թէ ինչու և ինչպէս Սէյրանը ուրախ եղանակը այդպէս շուտ փոխեց տխուր եղանակի, այդ ինքն էլ չը գիտէր։ Բայց նա այդ ևս երկար չ'երգեց։ Մի քանի բոպէ տրմտմալուց յետոյ, նա ճակատը սեղմեց երկու ձեռքերով և իւր հայեացքը բևեռեց գետնին։

—Չէ՞, չէ՞, ով է ասում, որ ես կորած, փչացած եմ, արտասանեց Սէյրանը, յանկարծ ձեռքերը ճակատից հեռացնելով։ Սուտ է, ես դեռ կենդանի եմ, ով է ասում թէ Սուսանը ձեռիցս դուրս եկաւ, այդ էլ սուտ է։ Կը տանջվեմ, կը չարչարվեմ, ոտաբաց գլխաբաց չուլերը կընկնեմ, բայց չեմ թողնիլ, որ իմ սիրեկանին իմ ձեռից խլեն և նա էլ ով, հրմ. Քեռչարանց Ռուստամը։ Հողը գլխիդ, Սէյրան, բաս դու մարդ չես, բաս քո նամուսը շները կերել են...

Նա կրկին գլուխը բարձրացրեց, նայեց այս կողմ այն կողմ և կրկին ձեռը դրաւ ճակատին։

—Գլուխս կարծես թէ տաք ջրի մէջ խաշվում է, ճակատիս թելերը տրաքում են։ Ինչպէս եմ դողում, այդ ինչիցն է։ Տէր Աստուած, Ցուրտ էլ չի, որ ասեմ թէ մրսում եմ։ Ճակատս, ճակատս այրվում է։ Իսկ սիրտս օ՜օ, նա մորթված ծտի պէս թրթռում է, կարծես թէ ոյժ է անում, որ դուրս գայ կրծքիս տակից։

Նա մի ձեռը դրաւ ձախ կողքին։

Զարմանալի բան, հէնց մի և նոյն երեկոյ, երբ Սէյրանը Սուսանի հետ ուրախ ուրախ խօսում էր, էլի թրթռում էր նրա սիրտը։ Ինչու, այն ժամանակ իսօ այդ ցաւերը չունէր։ Բայց ոչ, այն ժամանակվայ թրթռոցը ուրիշ էր և այդպէս չէր թրթռում, չէր նեղացնում, տանջում նրա հոգին, ինչպէս այժմ։ Ո՜չ, այն ժամանակ նրա համար քաղցր, դուրեկան էր այդ թրթռոցը, իսկ հիմայ..... օ՜օ...կարծես թէ մի և նոյն սիրտը չէ։

Սէյրանը նայեց երկնքին։ Երկինքն էլ, աստղերն էլ, ամենն էլ փոխվել են նրա աչքում։ Ախ, ինչպէս այն երեկոյ ուրախ ուրախ ծիծաղում էին նրա երեսին այդ աստղերը, իսկ հիմայ որքան թթռուած դէմքով են նայում նրա վրայ։ Մինթէ նրանք էլ ծաղրում են Սէյրանին։

Խաւարի միջից մի թոյլ ձայն հասաւ Սէյրանի ականջներին և նրա մտածմունքները փարատեց։ Փողոցի միւս անկիւնից էր լսվում

այն ձայնը։ Այդ էին թառի՝ արևելեան Մուսայի այդ հռչակաւոր գործիքի մեղմ հնչիւնները, որ պարսկական երգչի հանդարտ կլկլոցներին հետ խաւար միջնադարի մէջ տարածվելով, հասնում էին Սէյրանին։ Որտեղ է այդ ուրախութիւնը, ինչպիսի բան է։ Որտէղ որ է, թառը մօտ տեղումն են ածում, բայց ձայնը կարծես թէ խեղդված է և գետնի տակից է դուրս գալիս։

Սէյրանը բարձրացաւ տեղից և դիմեց դէպի այն կողմ, որտեղից գալիս էր երաժշտութեան ձայնը։ Այս ու այն կողմ նայելով, նա հասաւ փողոցի հանդիպակաց անկիւնը։ Այստեղ նրա հայեացքը ընկաւ դէմուդէմ շինութեան ներքին յարկում գտնուող մի ցած նկուղի վրայ։ Սէյրանը նկատեց, որ նկուղի փոքրիկ պատուհանից դուրս են թափվում աղօտ լուսոյ ճառագայթներ։ Սա գինետուն էր և անշուշտ երաժշտութեան ձայնը այստեղից էր դուրս գալիս։ Իրաւ որ նա որքան մօտենում էր գինետան, այնքան երաժշտութեան ձայնը զօրեղանում էր։ Վերջապէս Սէյրանը բոլորովին մօտեցաւ և կեռացած սկսեց զգուշութեամբ պատուհանից դէպի ներս նայել։ Այդ միջոցին երաժշտութիւնը դադարեց։ Բարձրացաւ գոռում կոչում, աղաղակ։

—Ադա հուռռայ։

—Ադա հուռռայ, հափ հափ...

—Կոմերի կենացը։

—Կոնծեցէք։

—Թամրազ, մին ստաքան ալ ան Մադրասի գինիան ածի։ Հափ հափ հուռ...

—Խամուշ, խօսքը թամադինն ա։

Մի քանի վայրկեան աղմուկը դադարեց։ Սէյրանը պատուհանից նկատեց, որ ներսում, սեղանի շուրջը նստած երիտասարդներից մէկը բարձրացաւ ոտի վրայ, մի բաժակ գինի ձեռքում պահած։

—Թամադան է, տեսնենք ինչ է խօսելու, մտածեց Սէյրանը և ականջը սեղմեց պատուհանի ճեղքին։

—Տղերք, ես մեռնամ լօթիանայ, աս թառն ալ խմանք ան մեր ջահիլի կենացը, հորն որ ինքի իսաղ չի, ամա սրրտը իստեղ ա, հափ հափ։

—Սուս, աղա թամադա, ամօթ չիլի հարցունիլը, նա հինչ ջահիլ ա։

—Կուժ ծախողի տղան։

—Սէյրանը։

—Չա։

—Ես անանց նամեարդ, բէնամուս ջահիլի կենացը չամ խմիլ, որ ասպուռնած քեանդռ քիցես բողազիս։

—Պատճառը։

—Պատճառը, որ նա մեր դեատի անրմը բիաբուռ ա արալ։

—Հինչպէս եանի։

—Հարանացուին ցեքան առնրման, ինքը հայասրդի պէս աչքերը բաց սուս ա անրմ։

—Ես ալ կասամ հինչ ա ասրմ, կոնծիր, այ բօչբողազ ան հրմ, կը թողնանք խսկի մեր դեատի ջահիլի ցեքան աղջիկ առնան։ Սէյրանի կենացը, հափ հափ հուռռայ։

—Ադա հուռռայ,—կրկնեցին միաբերան բոլոր հանդիսականները, բարձրացնելով մի խառն աղմուկ։

Երաժշտութիւնը կրկին սկսվեց։

Սէյրանը հեռացաւ պատուհանից, դիմեց գինետան դռներին և սկսեց թակել դռները։

Մի րոպէից յետոյ դռները բացվեցին և նա անմիջապէս ներս մտաւ։

XIV

Մինչդեռ Սէյրանը իւր մտածմունքների մէջ թաղված գիշերվայ կէսին թափառում էր փողոցներում, Սուսանը ևս մտածում էր։ Բաժանվելով Սէյրանից, Սուսանը մօտեցաւ օջաղին, ուր կաթսայի մէջ եռում էր ջուրը, որով նա պիտի տարեկները լուանար։ Նա կաթսան վերցրեց, դրաւ գետնին և նրա մօտով սփռելով մի ոչխարի մորթի, նստեց և սկսեց իւր գործը։

—Նա չի հաւատում, որ ես նրան սիրում եմ,—մտածում էր Սուսանը, տարեկները մի առ մի թողնելով ջրի մէջ, որ թրջվեն։ Չի հաւատում, որ այդպէս հալվելուս, մաշուելուս, այսքան տանջանքիս պատճառը ինքն է և միայն ինքը։

Սուսանը մի խորը հառաչանք արձակեց կրծքից. յիշելով թէ ինչպէս Սէյրանը նեղացած, դառնացած բաժանվեց իրանից։ Ով գիտէ, նա դուրս եկաւ, ուր գնաց, ով է իմանում, իւր անբախտ գլուխը որտեղ կը տանի։ Ախ Աստուած՝ ախ Աստուած, քո ձեռով

կապել ես, քո ձեռով էլ բաժանում ես մեզ», ասաց բարձր ձայնով Սուսանը, նայելով խոհանոցի սևացած առաստաղին։ Ինչու, ինչ մեղք են արել, որ Աստուած այդքան բարկացել է իրանց վրայ և այդպէս պատժում է։ «Էհ, մեռնեմ քո սուրբ զօրութենին, ինչ անեմ, թող քո կամքը լինի, դու ուզում ես մեզ չարչարել և չարչարում ես։ Ինքդ մեզ ստեղծել, այս աշխարհն ես գցել մեր կրծքի տակ սիրտ ես դրել, որ այդ սիրտը այսօր մեզ մըղ-մըղ ուտի, այ ինչպէս այն որդն է ուտում փտած սևացած կոճին ներսից։

Սուսանը աջ ձեռը բարձրացրեց դէպի խոհանոցի առաստաղը, որտեղից լսվում էր որդի կրչկըրչալու ձայնը։

—Ուֆ, ուֆ, սիրտդ մաչվի, դու էլ մի կողմից ես մաչում ինձ, ձայնդ կտրիր։ Կրակ է եղել մինչև օրս ինձ համար այս մի կտոր միսը։ Այն օրից, երբ ես ինքս ինձ ճանաչել եմ, չի պատահել, որ մի անդամ ուրախ լինէի։ Տխուր էի այն օրերն էլ, երբ Սէյրանը ձեռիցս չէր դուրս եկել, տխուր էի այն դիշերն էլ, երբ մեր պատշգամբի վրայ կանգնած խօսում էինք։ Ես հէնց առաջուց իմանում էի, որ այդպէս պիտի վերջանայ մեր բանը։ իմ սիրտը հէնց ասում էր։

Օջաղի մէջ այրվում էին չորացած փայտի կտորտանքը, իրանց պղնձագոյն և մռայլ լուսով օգնելով ճրագի աղօտ լուսաւորութեան։ Սուսանը նստած էր ուղիղ օջախի դիմացը։ Կրակի լուսաւորութենից նրա մաչված դէմքը ստացել էր աւելի վըշտալի, աւելի մելամաղձոտ կերպարանք։ Նրա ցամաքած շրթունքների վրայ խաղում էր մի դառն ժպիտ, մի ժպիտ, որ արտայայտում էր ջախջախված սրտի սուր կսկծանքը։

—Մեղայ քեզ, մեղայ քեզ, Տէր Աստուած,—ասաց Սուսանը երեսին խաչակնքելով։ Մտքովս տեսակ տեսակ վատ բաներ են անցնում։ Թող ես քեզ խոստովանեմ։ Միտս է, երբ ես կոյսի ուսումնարանումն էի, կոյսը մեզ պատմում էր, թէ դու, Աստուած, ինչպէս ես ստեղծել մեր աշխարհը։ Կոյսը ասում էր, թէ մինչև մարդուն ստեղծելը, դու առաջ ամեն բան քո ձեռքով պատրաստել ես նրա համար։ Ցետոյ, երբ որ Ադամին և Եւային ստեղծել ես, նրանց ասել ես։ «առէք, ձեզ եմ բաշխում այս ամեն կենդանիները, այս դունիան ձեզ է պատկանում, դուք նրանց թագաւորն ու տէրն էք, նրանք ձեզ պիտի հնազանդվին»։ Մի խօսքով, Դու Աստուած, ամեն բան աշխարհում տուել ես մարդուն, ամեն իրաւունք էլ հետը։ Բայց, մեղայ քեզ Աստուած, մեղայ քեզ Աստուած (Սուսանը երե-

սին խաչակնքեց)։ Ինչու մի բան նրանից խնայել ես։ Ինչու դու չես ասել մարդուն, թէ «առ, քո սիրտն էլ քեզ եմ բաշխում, թէ նրա իրաւունքն էլ քեզ եմ տալիս»։ Մեղայ քեզ Աստուած, իմ կարճ խելքս ասում է, որ եթէ դու ասած լինէիր։ «մարդ, դու քո սրտի թագաւորն ես», հէնց այդ միայն մարդուն հերիք էր։ Մարդը այսօրվայ պէս այդքան չէր չարչարվիլ, այդքան մեղքեր չէր գործիլ և դու էլ մեղաւորների համար դժոխք չէիր չինիլ, որովհետև մեղաւորներ չէին լինիլ։ Ախար չէ՞ որ ինչ որ անում է, մարդու սիրտն է անում։ Ասում են թէ այնպիսի մարդիկ կան, խելօք մարդիկ, որ ամեն բան իրանց խելքով են անում, ոչ թէ սրտով։ Ես չեմ հաւատում, եթէ որ կան էլ այդպիսի մարդիկ, երանի, հազար երանի նրանց։ Իմ խելքն ինձ ասում է «Սուսան, օրէս դէն Սէյրանին չը պիտի սիրես, ինչու որ քո հօր նամուսը այդպէս է պահանջում, դու պիտի քո սիրեկանից ջոկվես»։ Ո՞վ գիտէ, չատ կարելի է, Սէյրանի խելքն էլ այդպէս է ասում։ Բայց ինչ, ուր է, կարողանում ենք մեր սրտերին յաղթել։ Չէ՞, չէ՞, իսկի չենք էլ կարող։ Ո՞վ է կարող։ Ո՞չ մի մարդ։

Ինքն իւր հարցին պատասխանելուց յետոյ, Սուսանը մի ձեռում տարելիկը, միւս ձեռում սրբիչը առած, ձգեց իւր հայեացքը օջաղի կրակի վրայ, որ չըրթչրթալով շարունակում էր այրվել։ Մօտ մի րոպէ նա այդ դրութեան մէջ անթարթ աչքերով նայում էր կրակին։ Ցետոյ նա կրծքի վրայ թափված կակուղ մազերը յետ ձգելով, շարունակեց սրբել տարելիկները։

—Չէ՞, չէ՞, ինչքան որ միտք եմ անում, էլի իմ ասածն է դուրս գալիս։ Վերցնենք հէնց հօրս, նա խօ յիմար չի, նա խօ իրան ասածի վրայ հաստատ մնացող մարդ է, բայց տեսնում եմ, նա էլ որ այդքան անում է, էլի խելքով չի անում, սրտով է անում։ Ասում է թէ «նամուսիս համար եմ կարել իմ բարեկամութիւնը Հայրապետանց հետ»։ Մի հարցնող լինի, ինչ ասել է նամուս։ Իմ կարճ խելքով ես հասկանում եմ, որ նամուսը մարդուս սիրտն է։ Չէ՞։— Հա՛, հայրս ասում է «իմ սիրտս մղկտում է, երբ որ լսում եմ թէ քաղաքում ինձ վրայ վատ բաներ են խօսում։ Սիրտս, սիրտս, սիրտս, ամենքն էլ իրանց սրտի վրայ են դցում իրանց ցաւերի պատճառը։ Հայրս ասում է։ «ես իմանում եմ, որ ինչ որ աղջկաս վրայ խօսում են, սուտ է, բայց էլի ամօթից կարմրում եմ, երբ որ լսում եմ»։ Ինչու է կարմրում, թէ որ ինքը չի հաւատում։— Որովհետև սրտին դուր չի գալիս։ Տեսնում էք, հայրս էլ, նրա պէս

մարդն էլ չի կարողանում իրա սրտին տիրանալ և այսօր ինքն էլ է տանջվում ու մեզ էլ է տանջում։ Չէ, ամեն բան մարդու սրտիցն է կախված։ Մեղայ քեզ, մեղայ քեզ Աստուած, մեզ շատ իրաւունքներ ես տուել, բայց մեր սրտի իրաւունքը ձեռումդ ես պահում։ Թող քո կամքը լինի։ Ես իմանում եմ, որ ինչքան էլ ուզենամ Սէյրանին մոռանալ, չեմ կարող։ Մի անգամ, որ մտել է սիրտս, մէկ էլ դուրս կը գայ այն տեղից հոգուս հետ։

Սուսանը կուռը բարձրացրեց և արխալուղի թևով սրբեց աչքերի մէջ լցված արտասուքը։

—Ինչ ուզում ես արա, Աստուած, քո կամքը սուրբ է, բայց մի բան եմ խնդրում, խնայիր ինձ և իմ ծնողներիս և այս խնդիրս կատարիր։ Դու ինձ այնքան այժ տուր, որ կարողանամ ապրել մինչև այն ժամանակ, որ ինձ պսակեն Ռուստամի կամ մի ուրիշի վրայ, յետոյ մի քանի ամիս էլ ապրեմ, որ իմ ծնողներիս և իմ անունից ջնջեմ իզուր տեղը կպած կեղտը։ Այնուհետև ես ինքս յօժար կամքովս իմ հոգին քեզ կը տամ, ինչու որ ես առանց Սէյրանի ապրողը չեմ։ Սէյրանիս համար էլ խնդրում եմ, Աստուած, որ նրա սրտից ինձ հանես և իմ եղբ տղին չը փչացնես։

Սուսանը բարձրացաւ տեղից, տարեկները մաքրեց, չորացրեց և հաւաքելով միատեղ, դուրս եկաւ խոհանոցից։ Դեռ սենեակի դռներին չը հասած նրա ականջին հասաւ ծնողների խօսակցութեան ձայնը։

Երկար ժամանակ էր, որ Բարխուդարը չէր խօսում Գիւլնազի հետ։ Սուսանը շատ զարմացաւ, լսելով նրա խօսակցութիւնը և խիստ հետաքրքրվեց իմանալու, թէ ինչու վրայ են խօսում, չը կամենալով մի և նոյն ժամանակ խանգարել իւր ծնողներին։

Նա տարեկները դրաւ մի կողմ, իսկ ինքը թաղնվելով բաց դռներից մէկի յետևում, սկսեց ուշադրութեամբ լսել։

—Ցասն անգամ ասել եմ, հիմայ վերջին անգամն եմ ասում, այ կնիկ, որ ես արածս քեզանից լաւ եմ հասկանում,—խօսում էր Բարխուդարը ծանր և ամեն մի բառը առանձին շեշտելով։ Իմ խելքը քամին չի տարել, որ աչքերս բաց-բաց ինքս ինձ աւելի խայտառակեմ։ Ի՞նչ կասեն լսողները ու տեսնողները, քեզ եմ հարցնում, որ եթէ աղջկաս Հայրապետի տղի վրայ պսակեմ։ Վատ չեն ասիլ, որ հէնց զորթ էս մարդու աղջիկը մին կտոր կեղտոտ չոր էր, տուին կեղտոտողին, որ ինքը լուանայ։ Կ'ասեն ու մին քիչ էլ կ'աւելացնեն։ Դու ճանաչում ես իւ շամախեցիներին, գիտես,

որ նրանք ինչքան են սիրում ոտի տակ կոխոտել էն մարդուն, որ մի անգամ սկվել է ու ցեխի մէջ ընկել։ Խելքի եկ, թող, մեր երեսի արուռը մի կերպ պահենք։

Վերջին խօսքերը արտասանելու ժամանակ Բարխուդարը ձայնը քաշացրեց, չը նայելով որ սենեակում բացի Գիւլնազից ոչ ոք չը կար, որովհետև Սմբատը խանութի աշակերտի հետ միւս սենեակում քնած էին։

Լսելով իւր հօր վերջին խօսքերը, Սուսանի ամբողջ մարմնով մի դող անցաւ։

—Մեռիր, տատիր մտիր, Սուսան, էլ ինչ երեսով ես ապրում, տես որքան ընկել ես հօրդ աչքում։ Տէր Աստուած, Տէր Աստուած, միայն քեզ է յայտնի իմ անմեղութիւնը և դու հաւը նահախին չէս տալ։

—Վիզս կը կտրեմ, գլուխս ջների առաջ կը գցեմ, թէ որ աղջիկս էս ճրագի լոյսի պէս խտակ չը լինի։ Հաւատացիր, Բարխուդար, որ Սուսանս անմեղ է հրեշտակի պէս,—պատասխանեց Գիւլնազը նոյնպէս հաղիւ լսելի ձայնով։

—Հաւատում եմ, բայց եկ, դու քաղաքին էլ հաւատացրու։ Երկու ձեռքեր ունիմ, երկուսի բերանը կը կապեմ, բաս մնացածինը։

—Բաս ինչպէս կապենք, Բարխուդար, չար լեզուները, որ մեր երեխին տանջանքներից ազատենք։

—Ես մի անգամ ասել եմ, բանը վերջացած է։

—Որ պիտի Քեօչարանց Ռուստամին տանք։

—Թէ նա էլ չիլաւ, մի ուրիշին։

—Բարխուդար, պարզն եմ ասում, Սուսանս Սէյրանին է սիրում, նա ուրիշի հետ ապրել չի կարող։

—Աղա ջան, ու ջհանանամը որ սիրում է, ես էլ իմ պատիւս եմ սիրում։ Թող տասը Սէյրան-Սուսաններ փչանան, միայն թէ անունս կեղտից սրբվի։

Տիրեց լռութիւն։

Սուսանը դրան ճեղքից ներս նայեց։ Գիւլնազը արտասվում էր։ Վերջին երեք ամիսները նա մի անգամ էլ չէր արտասվել, չը նայելով այն դառն վշտերին, որոնցով լցված էր նրա սիրտը։ Աղի արցունքները բուռն զօրութեամբ մի անգամից դուրս թափվելով նրա խորը թաղված աչքերից, կարկտի պէս գլորվում էին նրա նիհար ու մաշված երեսով։

Բարխուդարը չէր արտասվում։ Բեղերը ոլորելով և երբեմն կծոտելով, նա մոլոր հայեացքով սենեակի կոճերին էր նայում։

—Մայրս լաց է լինում, հայրս ոչ, մտածեց Սուսանը։ Բայց ինչպէս հայրս սպրտնել է, ինչպէս նրա պռօշները կապոյտ կապտել են։ Օ՜օ, քեզ պէս մարդը արտասվել չը գիտէ, քո բնաւորութիւնից հեռու է սրտի վշտերը արտասուքով արտայայտելը։ Դու քո արցունքները բաց ես թողնում ներս, սրտիդ մէջ, որ աւելի բորբոքեն ցաւերդ։ Օ՜օ, ես իմանում եմ դու մօրիցս շատ ես տանջվում, այդ երևում է քո վառված աչքերից։ Խեղճ մարդ, ինչու ես քո օրը սևացնում։ Տէր Աստուած, մի հնար ցոյց տուր, որ ես իմ ծնողներիս ազատեմ այդ տանջանքից։ Եկ, ներս վազեմ, ընկնեմ հօրս առաջ, արտասվեմ, ներողութիւն խնդրեմ, ամէն բան նորից պատմեմ, ասեմ՝ սխալվել եմ, հայր, բախշիր։ Բայց օ՜օ, ինչպէս ասեմ, ինչպէս երեսս կը պատի նրա առաջ այդպէս պարզ խօսելու և ինչ մեղք ունիմ։—Չէ, աւելի լաւն է, ես հէնց վաղը առաւօտեան մօրս հետ առանձին կը խօսեմ։ Ես մօրս կը հաւատացնեմ, որ Սէյրանին չեմ սիրում, թէ ուզում եմ ուրիշին գնալ։ Այդ ամենից լաւն է, խեղճ կնիկը կը հանգստանայ, էլ չի չարչարվիլ։

—Լսիր, ինչ եմ ասում,—ընդհատեց լռութիւնը Բարխուդարը, լաց լինելով բան չես կարող առաջացնել, լաւն է մեր գլխի հոգսը խելքով քաշենք։ Բանը վաղ թէ ուշ պիտի վերջացնենք։ Շըպպանիկ է, ինչ զահրումար է, որ ասում ես չաբաթը հինգ զաթ գլխիդ է գալիս Ռուստամի կողմից, էգուց կամ միւս օրը թէ որ մէկ էլ եկաւ, ասիր, որ ես զարուլ եմ Սուսանին տալու։

—Ռուստամին։

—Հա, հէնց Ռուստամին։ Թէ որ ուզում են, թող հէնց էս քանի օրերը նշանը բերեն, վերջացնենք։ Էլ երկարացնելու տեղը չի, դու էլ խելքդ գլուխդ հաւաքիր, ֆիքր արա, տես հարսանիքի համար ինչ որ հարկաւոր է, առնեմ բազարից։ Լսեցիր։ Դա վերջին խօսքս է։

—Շըպպանիկը երկու չաբաթ է, որ ոտը մեր տնից կտրել է,—պատասխանեց Գիւլնազը, աչքերը սրբելով։

—Պատճառը։

—Հալբաթ Ռուստամի մօր ականջն էլ լցրել են էլի։

—Հըրմ։

—Բաա։ Տեսնում ես, մեր բանը որտեղումն է։ Դէ ես էլ

հէնց էդ պատճառով եմ ասում, որ Սէյրանին տուր, Սէյրանին տուր էլի…

Բարխուդարը լռեց, գլուխը թեքեց կրծքին։ Նա մի քանի վայրկեան գլուխը պահեց ձեռքերի ափերի մէջ և կրկին բարձրացրեց։

—Դու էգուց շըպպանիկին կանչել տուր, ես նրա հետ կը խօսեմ։

—Բարխուդար, լաւ բան չես անում։

—Թէ որ գլխիդ զադրը իմանում ես, սուս արա, թէ չէ…

—Փառք քեզ Աստուած,—հառաչեց Գիւլնազը։

—Դու ինձ կոտրել չես կարող, բանը վճռած վերջացած է, լաւ իմացիր, հրէս, ասում եմ, գիւլլախորով կանեմ ամենին։

—Բարխուդար…

—Կարիր ձայնդ, հայասրդ, արիւնս գլխովս է տալիս։

Գիւլնազը թաշկինակը դէպի աչքերը տարաւ և սկսեց հեկեկալ։

Սուսանը ներս մտաւ։

XV

Առաւօտ էր։ Արեգակը նոր նոր դուրս գալով «Աջի դարա» ասված փոքրիկ սարի յետևից, վսեմաբար բարձրանում էր, շառագունելով հորիզոնը։ Նրա ծիրանագոյն լոյսը ընկնելով քաղաքի հիւսիս-արևմտեան կողմում գտնվող «Փեգրաքու» և «Ղըզղալասի» սարերի վրայ, հանդարտութեամբ ցած է իջնում գագաթներից, հետզհետէ փոխելով իւր գոյնը և աւելի ու աւելի պարզվելով։ Ահա վերջապէս նա հասաւ սարերի ստորոտը, որի մակերևոյթը հաւասար է հայոց և ռուսաց նորաշէն եկեղեցիների գմբեթներին։ Ահա գմբեթների ոսկեզօծ խաչերը արեգակի ճառագայթների տակ փայլում են նոյն իսկ արեգակի նման։

Քաղաքի բնակիչները քնից զարթել են և շտապում են իրանց գործին։ Փողոցները փոքր առ փոքր կենդանութիւն են ստանում։ Գիւղացիները բեռնած էշերը իրանց առաջ դցած քշում են փողոցից փողոց։ Դրանք մրգավաճառներ են, որ անդադար գոչում են բարձրաձայն, «այ զողալ (հոն) առնող, մանը երկու շահի» այ խիար (վարունգ) առնող, հարիւրը մի արասի» և այլն և այլն։ Գիւղացի-

ների ձայնին հետևում է քաղաքացի լուսաւորեալ մրգավաճառի ձայնը, որը ահա սև թուղով լցրած մի անագին տաշտ գլխին անցնում է, ստէպ ստէպ կրկնելով. «տարահիրի, այ զարա ինջիլ։ Երբեմն երբեմն բացվում են այս ու այն տան դռները և մի կին կամ օրիորդ չալով փաթաթած գլուխը դուրս է ցցում։ Նախ և առաջ նա նայում է աջուձախ և տեսնելով որ օտար մարդ չկայ փողոցում, մի պղնձեայ սկուտեղ ձեռում ամբողջ մարմնով դուրս է գալիս փողոց։ Շալի տակից նա ձեռով նշան է անում մրգավաճառին։ Մրգավաճառը մօտենում է, մի քանի բոպէ շարունակվում է սակարկութիւնը։ վերջապէս գնողը մի քանի սև փողեր ձգելով մրգավաճառի առաջ, միրգ է կշռել տալիս, սկուտեղը լցնում և շտապով ներս սլքվում։ Ահա արհամարհական ժպիտը երեսին, բեղերը անդադար ոլորելով, աջուձախ մտիկ անելով ուղիղ փողոցի մէջ տեղով գնում է իր խանութը նոր հարստացած մանրավաճառ Խաչովը։ Նա բոխարու գդակի տեղ ծածկած ունի ֆուրաշկայ, իսկ չումուշկների փոխարէն՝ եւրոպական կօշիկներ հագած։ Կօշիկները ճրռճռում են և Խաչովը կարծես թէ հենց դիտամբ է սալահատակի աւելի հարթ և մեծ քարերի վրայով գնում, որ այնտեղ աւելի բարձր ձայն հանեն իւր կօշիկները։ Ամեն անգամ ոտը փոխելիս զրընգ-զրընգում են նրա ձեռի բանալիները, չբիկ-չիկ կըպչում է ժամացոյցի քողը արծաթի քամարին և դրանց ձայները խառնվելով կօշիկների ճրռճռոցների հետ, կատարեալ մի կոնցերտ են կազմում։ Իսկ ինքը, Խաչովը, այդ կոնցերտով յափշտակված, աչքերը վառված, ընթանում է առաջ ծանր և հպարտ քայլերով, ինչպէս յաղթութեան նախազգացումներով լի մի զօրապետ, որ շտապում է դէպի պատերազմի դաշտը։ Խաչովի յետևից, կեղտոտ թաշկինակի մէջ փաթաթած հաց ու պանիրը կոնատակին դրած և մի կապ կիսակար չումուշկներ ուսովը ձգած, գալիս է կօշկակար Թամրազը։ Ահա Թամրազը հասասարվեց մանրավաճառին, քիչ հեռացաւ յետ ու յետ, մի վայրկեան կանգնեց, երեսը դարձրեց նրան, ձեռքերը կրծքին դարսեց և «քարի լոյս աղին» ասելով, գլուխս տուաւ։ «Աստուծոյ բարին, ուստայ,» պատասխանեց մանրավաճառ Խաչովը, առանց նայելու «ուստայի» երեսին և առանց ընդհատելու իւր կոնցերտը։

Մի խօսքով ամենքը իրանց գործին էին շտապում։ Իսկ մեր Հայրապետը, չընայելով որ առաւօտները սովորաբար ամենից վաղ

էր գնում իւր խանութը, դեռ փողոցում չէր երևում։ Նա դեռ տանն էր։

Թեաւոր չոխան ուսերին ձգած, սրածայր գդակը գլխին, նա անցու դարձ էր անում սենեակում, անդադար ներս ծծելով չիբուխից դառն ծխախոտի թունաւոր ծուխը և կրկին անագին քալաններով դուրս թողնելով սենեակի խոնաւ օդի մէջ։

Հայրապետի գունատպառ դէմքը, կնճռված ճակատը, ծռմռված շրթունքները, դողդողջուն ձեռքերը, անհատատաս և անկանոն քայլուածքը, այդ բոլորը, բոլորը հատատում էին, որ նա գտնվում է հոգեկան սաստիկ խռովութեան մէջ։ Ժամանակ ժամանակ, երբ նա չիբուխը հանում էր բերանից և ծուխը բաց թողնում, նրա ծռմռված շրթունքներով տահում էր մի դառն, մի կսկծալի ժպիտ։ Այդպիսի վայրկեաններում ծերունու անորոշ հայեացքը կարծես թէ անպիտակցաբար ընկնում էր Մարիամ բաջու վրայ, որը նստած էր սենեակի մի անկիւնում։

Մարիամ բաջին չէր նայում իւր ամուսնուն։ Սովորականից դուրս նրա գլուխը բաց էր և կարճիկ մազերը անկանոն կերպով սփռված ուսերի վրայ։ Գլուխը կարմիր թաշկինակով փաթաթած նրա դէմուդէմ անկողնի մէջ պառկած էր Աէյրանը։ Աէյրանի փակ աչքերից, սեղմված և հանդարտ շրթունքներից երևում էր, որ նա քնած էր։ Մարիամ բաջին անդադար հառաչելով, ախ ու ուֆ քաշելով, շատ շատ իւր ձեռը դնում էր նրա ճակատին և կրկին յետ քաշելով, կրկնում «տաքացրած է»։ Թաշկինակի տակից Սէյրանի ճակատի վրայ փայլում էին արիւնի կարմիր կաթիլներ, որ չորացել էին ու կպել կաշուին։ Նրա երեսը ուռած էր և տեղ տեղ կապտած։

Երբ վերջին անգամ Մարիամ բաջին գլուխը դարձրեց դէպի իւր որդոյ երեսը և համոզվեց որ նա քնած է, զգուշութեամբ բարձրացաւ տեղից։

—Դուրս եկ, երեսդ լուացիր, գլուխդ կարգի բեր, հիմայ կըգան ու կըհաւաքվեն կեղծաւորները ու էլի կըսկսեն սուտ սուտ ախ ու վախ քաշել,—խօսեց Հայրապետը ցած ձայնով, երեսի նայելով չկամենալով խանգարել Սէյրանի քունը։

—Չհանեմ, որ կըգան, դարդս խօ նրանք չեն,—պատասխանեց Մարիամ բաջին, մի խորը հառաչանք արձակելով կրծքից և ուղղելով գլխի մազերը։ Ախար, այ մարդ, էլի դու կարգին չես ասում, թէ ինչպէս է պատահել էս անդրը երեխու։

—Խոցոտված սրտիս մատ մի կոփիլ, Աստուած սիրես,—պատասխանեց Հայրապետը, երեսը չուռ տալով իւր ամուսնուց։

—Երդան Աստուած, դու նրանց հախին դաս, դու նրանց ծնողներին էլ էս օրին հասցնես։

—Իսկի խալխի համար անէծք մի անիլ, ոչ նրանք են մեղաւոր, ոչ էլ ծնողները։

—Բաս ով է երեխիս չախլախ արել ու էս օրը գցել։

—Ինքը, հախն է։ Թող չարչարվի, տնքտնքայ, խելքը գլուխը կըգայ։ Հըմ, ինչ սոնկէ «խելքը գլուխը կըգայ»։ Եթէ որ էշի աքին տափին կըհասնի, դա էլ կըխելօքանայ։ Սէյրան, ուրիշ անէծք չունեմ, տայ Աստուած, որ դու էլ ինձ պէս հայր լինես ու քեզպէս տղի ձեռին ինձպէս տանջվես։ Էս ինչ օր է, ինչ ապրել է։ Տէր Աստուած, մի անգամ առ հոգիներս ու ազատիր էլի։

—Հերիք է, այ մարդ, քիչ սիրտդ մըղ մըղ մաշիր։ Էլի օրհնեալ լինի Աստուած, որ երեխիս կենդանի են բերել, որ սպանած լինէին ինչ պիտի անէինք։

—Երանի չէր, որ սպանէին ու քութահը տային, մենք էլ ազատված կըլինէինք։

—Ո՞ւֆ, քեզի տեսնեմ, որ լեզուդ կպչի։

—Չէ, բաս մնալու է, էսօր կենդանի են բերել, վաղը կամ միւս օրն էլ Աստուծոյ կարող զօրութիւնով կամ գլուխը կըբերեն կամ փորը ծխով լցրած։

Մարիամ բաջին, որպէս զի չը լսի իւր ամուսնոյ կսկծալի խօսքերը, հեռացաւ սենեակի միւս անկիւնը ու այդ տեղ սկսեց իւր հագուստը կարգի բերել։

—Հրէս ասում եմ, Աստուծով մին օր կըլինի ու դու էլ կըտեսնես,—չարունակեց Հայրապետը, կարծես թէ դիտմամբ, որ աւելի ու աւելի վշտացնի Մարիամ բաջու սիրտը։ Այն օրից, երբ որ ընկերացել է լրբերի, գողերի, հարբեցողների, թութ խաղացողների, պապիրոս քաշողների հետ, էլ ես նրանից ձեռ եմ քաշել, ասել եմ, «հէջ, դահի բուննան օղուլ չըխմազ»։ (*)։ Իմացար։ Հիմա նրա աւեսարանը կարդված է, թող կտորվի ու չների կերակուր դառնայ էլի, փիէլ։ Չէ, չեմ ուզում, չեմ ուզում, ջանըմ, գեօզում, էնէնց տղին, որ գիշերվայ կէսին տնից փախչում է ու մտնում գինետուն մօր կաթը կտրածների հետ լակում, կալում ու չան պէս էնքան թակ-

*) Չէ, էլ սա որդի չի դուրս գալ։

վում, ջարդ ու փշուր լինում, որ փալասով են տուն բերում։ Տար, տար, քեզ լինի, խէրը տեսնես, ես նրանից ձեռ եմ քաշել, եախաս թափ եմ տալիս։

Իսկոյն Հայրապետը այդ ասելով երկու ձեռքերով բռնեց իւր արխալուղի օձիքից և թափահարեց։

—Հրէս ասում եմ, հենց որ աչքերը բացեց, ուշքի եկաւ, ասիր նրան որ էլ աչքիս չերևայ։ Թող դուրս գայ, կորչի որտեղ որ ուզում է, ես նրա հետ էլ բան չունիմ։ Հասկանում ես։ Ես նրա հայրը չեմ, իմացար, ես կուժ ծախող Հայրապետս էլ օրէս դէն նրա հայրը չեմ, պրծաւ գնաց։ Հրէս ես էլ կըգնամ Կունդուստոր, սեկլատարին կասեմ, որ նրա անունը դաւթարից հանի դուրս։ Ցնոյ կըգնամ Նաչառնիկի մօտ ու ամեն բան նրան մին մին նաղլ կանեմ, էսպէս, էնպէս, Սէյրանը տղաս չի, վաս սալամ, չիւտ թամամ...

—Պրծաւ գնաց, իմ բանս էլ դրատվեց, եարիս էլ մահլամ դրիր։ Քիչ ենք խայտառակվել միթամ, դու էլ գնա կունդուստորի-մունդուստորի, սըկլատարի-մըկլատարի դաւթարը գցիր անուններս։ Հայրապետ, շուն է, գել է, լիրբ է, փչացած է, ինչոր է էլի տղաղ է, էլի հայրն ես, դու պիտի մին կերպ էս չար ճանապարհից հեռացնես նրան։

—Չեմ ուզում, ջանըմ, չեմ ուզում էլի, որ նա իմ տղաս լինի։ Տար վզովդ գցիր, ես բան չունիմ, ես ձեռքերս լուանում եմ, թող գնայ չոլերը ընկնի։ Նա չէր պատճառը, որ Բարխուդարը քսան երեսուն տարվայ բարեկամութիւնը մին օրում քիրթ կտրեց ինձ հետ։ Նա չէր պատճառը, որ խեղճ մարդու աղջկայ անունը սաղ քաղաքում ընկաւ, ինքն էլ խայտառակ իլաւ։ Չէ, չէ, չէ, չեմ ուզում, նա իմ տղաս չի էլի, փիիէէ, նահլաթ քեզ...

—Քո խեղճ Բարխուդարին տեսնեմ, որ խեղճ օձ կծի,—ընդհատեց Հայրապետի խօսքը Մարիամ բաջին։ Բարխուդարին տեսնեմ, որ սիրտը տասը դանակ միասին խրվեն, Աստուծուց մահ խնդրի, մահը ձիաւոր իլի, ինքը փիադա, վազտայ, վազտայ, չը հասնի։ Նա, նա, էն քեօփակ Բարխուդարն է երեխիս էս օրին հասցրել։

Մարիամ բաջին այդ թունաւոր անէծքը արտասանեց աչքերը դէպի երկինք բարձրացրած և երկու ձեռքերով անդադար կրծքին խփելով։ Հայրապետը դէմ ու դէմ կանգնած, բարկացած նայումէր

Նրա երեսին, մի ձեռով չիբուխը քիչ բերանից հեռու բռնած, իսկ միւս ձեռով ատկ ատկ գդակը գլխին սեղմելով։

Երբ Մարիամ բաջին իւր անէծքը աւարտեց, Հայրապետը կամեցաւ մի ինչ որ բան խօսել, բայց բարկութիւնից էր, թէ ինչից, չը կարողացաւ ոչինչ ասել։ Նա չիբուխը խրեց գօտում, ձեռքերը քարշ ձգեց և գլուխը աջ ու ձախ շարժելով, շարունակեց մտիկ անել իւր ամուսնոյ բերանին։

Այդ պատկերը տեսեց կէս բոպէի չափ, յետոյ Մարիամ բաջին կռացաւ, վերցրեց գետնից շալը և գլխին փաթաթելով, ասաց։

—Տափին կպչեն բախտաւորները։ Խալիսը առաւօտվայ ժամ-ժամքին աղօթք է անում, ես ուրիշների համար անէծք եմ թափում բերանից։

—Ինչու որ օձ ես, օձի արգանդէն դուրս եկած,—ասաց Հայրապետը, կրկին չիբուխը գօտուց դուրս հանելով։

—Դու էլ ցաւիս վրայ ցաւ մի դնիլ, Աստուած սիրես։

—Զայնդ կարիր, թուրքի աղջիկ։ Լեզուդ կծած պահիր, թէ չէ ամենի աչքը քեզանից դուրս կը բերեմ,—բարկացաւ կրկին Հայրապետը, այս անգամ մօտենալով Մարիամ բաջուն և չիբուխը բարձրացնելով նրա գլխին։

—Հանիր, հանիր, ինչ ուզում ես արա, էլ օրէս դէն ինձ համար սև ու սպիտակ մին է։ Չէ, սիրաս էրվի, խորովվի, մին անէծք էլ չ'անեմ սարաբի համար, հա։

—Սարաբը դու ինքդ ես։

—Սարաբը քեօփակ Բարխուդարն է։ Թող, թող աղջկանը տանի տայ հայասրդ Սանամի լակոտ Ռուստամին։ Ինչու չի տալ հարուստ սովդաքար...ըմ, ըմ...եարադան Աստուած, դու հախը նահախին տուողը չես։ Շատ չի քաշիլ, ես կը տեսնեմ Բարխուդարին փոչիմանած, գլխին գլխին թակելիս։

—Շատ ես լեզուիդ զօռ տալիս, հա, փիէէ,—ընդհատեց Հայրապետը, դարձեալ կանգնելով իւր ամուսնոյ դէմ ու դէմ և մի սպառնողական հայեացք ձգելով նրա վրայ։

Մարիամ բաջին երեսը շուռ տուաւ նրանից։

—Չէ, տեսնում եմ, որ դարիդ շատ է ընկել, բաս որ էդպէս է, առ, աղրէր, դա՝ քեզ, նա՝ ինձ, հա ջանըմ, դա՝ քեզ, նա՝ ինձ։

Այդ ասելով Հայրապետը վերցրեց իւր գլխից գդակը և Մարիամ բաջու գլխից—շալը։ Նա գդակը դրաւ ուժով Մարիամ բաջու գլխին, իսկ շալը ձգեց իւր գլխին։

—Հիմայ համեցէք, ես մեղայ Աստուծոյ, դու մարդութիւն արա օրէս դէն, ես կնիկութիւն կանեմ։

—Եարաբ, Աստուած, էս մարդուն մին ծոի խելք էիր տուել, նա էլ ինչու խլեցիր սրանից,—ասաց Մարիամ բաջին, գդակը գլխից մի կողմը շպրտելով և իւր շալը Հայրապետի գլխից քաշելով։

Գդակը ընկաւ անկողնի վերայ։ Սէյրանը զարթեց։

Նա վերմակը յետ քաշեց և գլուխը բարձրացրեց։ Հայրապետը մօտեցաւ՝ որ գդակը վերցնի անկողնի վրայից։ Մի վայրկեան հօր և որդոյ հայեացքները հանդիպեցան իրարու, Հայրապետը արագութեամբ վերցրեց գդակը և իսկոյն երեսը շուռ տուաւ, որ որդոյ երեսը չը տեսնի։ Սէյրանի դէմքը արտայայտումէր մի հոգեկան անբացատրելի տանջանք։ Արդեօք որն էր այդ վայրկեանին վերտացեալ պատանու մէջ զօրեղ՝ խղճի խայթոցը իւր ծերունի ծնողներին պատճառած ցաւերի մասին, թէ սեղնական չարչարանքը։

—Զուր,—արտասանեց Սէյրանը թոյլ ձայնով։

Մարիամ բաջին չուսակց բաւականացնել նրան։ Սէյրանը նկատեց թէ ինչպէս հայրը իրանից երեսը շուռ տուաւ զզուանքով, նկատեց և յանցաւոր որդու երեսը շառագունվեց։

—Առ, խմիր, ասաց Մարիամ բաջին, ջրով լի բաժակը մօտեցնելով իւր որդու բերանին։

—Ո՞րտեղդ է ցաւում,—հարցրեց նա, երբ Սէյրանը բաժակը ագահութեամբ դատարկելով յետ դարձրեց։

—Գլուխս, պատասխանեց Սէյրանը, կրկին վերմակը գլխին քաշեց և պառկեց։

—Մին քիչ նստիր, խօսիր, որ քէֆդ բացվի, բալա, հէրիք է քնածդ,—շարունակեց Մարիամ բաջին, խնամքով ծածկելով իւր որդու ոտերը վերմակի ծայրով։

—Նստել չեմ կարող, գլուխս ցաւում է։

—Երևոդ դէս պարանիր ու խօսիր։

—Չեմ ուզում, չեմ ուզում, թող,—պատասխանեց Սէյրանը, գլուխը աւելի խորը թաղելով վերմակի տակ։

—Չեմ ուզում, հրմ, երես ունիս, որ ուզես, ամօթից պիտի խեղդվես, ոչ թէ խօսես,—մէջ մտաւ Հայրապետը, որ այդ ժամանակ երեսը միւս կողմ դարձրած չիբուխ էր ըմպում։—Ադա ամաչում ես իսկի,—շարունակեց նա, երեսը դարձնելով Սէյրանի անկողնին և մօտենալով,—ամանչում ես, թէ երեսիդ մեռոնը լավ թափվել է ու սկված կաչին է մնացել, հրմ։

—Ողորմի քո հօրը, այ մարդ, ողորմի օխտը պորտիդ, սուս արա, սուս արա, թող տեսնենք գլուխներս ինչ օյին է գալիս,—խնդրեց Մարիամ բաջին, մի աղերսալի հայեացք ձգելով իւր ամուսնոյ երեսին։

—Այ քեօփեօղլի աղջիկ, չես թողնելու, թիէյ, թիէյ, ինչ ես գլխիս չաքուչ դառնալ, խեղդվեցի խօմ,—գոռաց Հայրապետը Մարիամ բաջու վրայ։—Ասիր, ասիր, անառակ տղայ, ասիր, տեսնեմ, դա ինչ օյիններ է, որ դուս մեր գլխին ես բերում, հըմ։

Սէյրանը լուռ էր։

—Չես խօսում, լեղու չունես, լալացել ես, հըմ, լալացիր, այ «սանի դօղանն բոյնի սնսուն, բէլա բոյնի սնսուն Սէյրան օղլան։ *)

—Մնսուն, սնսուն, հա, սնսուն,—երեք անգամ կրկնեց Մարիամ բաջին վշտացած ձայնով։

Վերմակը շարժվեց և Սէյրանը գլուխը դուրս հանեց։ Նա քիչ բարձրացաւ և ձախ կողմով յենվելով անկողնին, մի քանի վայրկեան նայեց իւր հօր երեսին և կրկին երեսը ծածկեց ու ընկաւ։

—Ի՞նչ ես ուզում, բալաս,—հարցրեց Մարիամ բաջին։

—Հըմ, ուզում էիր, որ մին բան հաչես, հաչիր, հաչիր, անառակ։

—Եթէ ես լաւ որդի չեմ, դու էլ ինձ համար հայր չես,—փնթփնթաց Սէյրանը, գլուխը աւելի խորը թաղելով վերմակի տակ։

Հայրապետը լսեց այդ խօսքերը։

—Լսեցիր, այ կնիկ, սէս, սէս, բէղբղաադը ջուրիսթ էլ ունի...։

Նա չը կարողացաւ իւր խօսքերը աւարտել, չուխան ուսերից մի կողմ ձգեց, չիբուխը աջ ձեռքում սեղմեց և ատամները կրճտելով, սկսեց բոլոր ոյժով ոտերը դեսնին խփել։

—Հայրապետ, Հայրապետ, խելքդ գլուխդ հաւաքիր,—մէջ մըտաւ Մարիամ բաջին։

—Կտրիր ձայնդ դու, հըմ, հարամզադա, համարձակվում ես հօրդ գլխին չաքուչ բանացնել։ Դուրս, դուրս, ասում եմ, հէնց էս սնաթիս դուրս, օձի զաւակ։

Հայրապետը յարձակվեց Սէյրանի անկողնի վրայ, վերմակը խլեց և մի կողմ շպրտեց։

Մարիամ բաջու մազերը թափվեցին երեսին և նա կուրծքը ճանկռտելով ընկաւ իւր ամուսնոյ ոտերի տակ։

*) քեզ ծնողի վիզը կոտրվի, այո, վիզը կոտրվի։

—Աման դըր, աման դըր, այ մարդ, տունս մի քանդիլ, խեղճ եմ . . . .

—Շորեր, շորեր, ես չեմ ուզում էլ այսուհետև ձեր որդին լինել, դուրս եմ գալիս հէնց այս բոպէ։

Այդ ասելով Սէյրանը արագութեամբ ոտի կանգնեց անկողնի վրայ։

Բաց թողնելով ամուսնոյ ոտերը, Մարիամ բաջին այս անգամ չոքեց որդու առաջ, մազերը փետելով։

—Սէյրան, Սէյրան, խնայիր ոտի վրայ չորացած մորդ բամբակած մազերին, խնայիր,—գոչեց խեղճ կինը, աչքերից աղի արտասուք թափելով և մազերը տարածելով որդու ոտերի առաջ։

Հայրապետը մնաց անշարժ։ Նրա ալեխառն գլուխը և ձեռքերը բարկութիւնից դողում էին։ Կարծես թէ իւր մօր աղերսանքը ազդեցին Սէյրանի վրայ։ Թշուառ պատանին, տեսնելով նրան այդ դրամատիկական դրութեան մէջ, նոյնպէս մնաց անշարժ։ Նրա ձեռքերը թուլացան ու քարշ ընկան կողքերքին, իսկ գլուխը թեքվեց կրծքին։

—Բաց թող, բաց թող գնայ, տեսնեմ որտեղ է գնալու, ինչ կարող է անել առանց ծնողների,—խօսեց Հայրապետը, այս անգամ քիչ մեղմացած։

—Չէ, չեմ թողնիլ, միսը եղունկից բաժանել, հայրը որդուց ջոկել։ Չէ չէ, առաջ վիզս կտրեցէք, յետոյ ջոկվեցէք։

—Մատաղ լինես, Սէյրան տղայ, քո ծերացած մորդ, թէ չէ Աստծուն է յայտնի, որ մեծ թիքադ ականջդ կը մնար ձեռումս։

—Թող մնայ, այսուհետև Սէյրանի համար ողջ մի է, ինչ էլ որ լինի։ Ես էլ մօրս եմ խնայում, բայց իմացիր, որ էլ օրէս դէն ես այստեղ մնալ չեմ կարող։ Կը թողնեմ այս տունը հէնց այն բոպէին, երբ ոտերս կարող կը լինին տեղից շարժվիլ։

Սէյրանը այդ ասելով այլ ևս չը կարողացաւ ոտի վրայ կանգնել։ Նա բոլորովին ուժաթափվեց և ընկաւ անկողնի վրայ։

—Տանջիր Աստուած, տանջիր, պապակիր ինձ, ինչքան ուզում ես,—բացականչեց Մարիամ բաջին, վերմակը քաշելով Սէյրանի վրայ։

Այդ վայրկեանին դրսից լսվեցին ոտի ձայներ։ Մարիամ բաջին չտապեց կարգի բերել իւր ցիր ու ցան եղած մազերը և հագուստը ուղղել։

Հայրապետը դռներից դուրս նայեց և իսկոյն դէպի ներս չուռ գալով, ասաց։—Սատանաների նախիրը եկաւ, վեր կաց ոտի։

Մի բոպէում ներս թափվեցին մի խումբ կանայք խայտաճամուկ չարշովների մէջ փաթաթված, տնքտնքալով, ծանր հառաչանքներ արձակելով, ախ ու վախ քաշելով։

Հայրապետը չուխան հագաւ և դուրս գնաց։

Մարիամ բաջին առաջ չարժվեց, որ հիւրերին ընդունի։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Քաղաքի հայոց թաղի միջին բաժնում, Բարխուդարի և Հայրապետի տներից բաւական հեռու, մի ընդարձակ և ուղղագիծ փողոցի ծայրում գտնվում էր մի յարկանի մի տուն։ Այդ տունը նոր էր և ինչպէս երևում էր նրա պատերի ճերմակ և տաշած քարեր դեռ մաքուր գոյնից,—կառուցված էր երկրաշարժից յետոյ։

Այդ Քեօչարանց Ռուստամի տունն էր։

Գինետնում Սէյրանի կռվելու երեկոյից ուղիղ երեք օր անցած, կէսօրվայ դէմ, յիշեալ տան ներսում նստած էր Ռուստամի մայրը, Սանամ խանումը։ Տունը բաղկացած էր ընդ ամենը երկու կէս եւրոպական և կէս ասիական եղանակով կահաւորված սենեակներից։ Սանամը մօտաւորապէս յիսունեհինգ տարեկան միջահասակ մի գէր, առողջ և կարմրադէմ կին էր, թէ և տարիքը արդէն կնքել էին նրա երեսին պառաւութեան առաջին անկասելի կընճիռները։ Սանամը հագնուած էր ոչ այնքան շքեղ և ոչ էլ շատ աղքատ, բայց բաւական մաքուր, այնպէս, ինչպէս որ սովորաբար հագնվում են Շամախում միջին կարողութեան տէր կանայք տանը մէջ։ Սև սատինից կարած լայն շարկի, ընկեր կապտագոյն մետաքսեայ շապիկ լայն թևերով, բաղդատի գոյնզգոյն շալից կարած արխալուղ,—ահա նրա հագուստը։ Արխալուղի թևերը հասնում էին

միայն մինչև արմունկները, իսկ այս տեղից սկսվում էին զառբոֆից տերևաձև, ծայրերով կարած ուրիշ թեռներ։ Սանամը մեջքին կապած ունէր նոյնպէս մետաքսից գործված գոտի, որի մութկապոյտ գոյնը նշան էր նրա այրիութեան։ Իսկ նրա գլխի պաճուճանքը բաղկանում էր տեղական բարակ-նրբագործ, «քեալայաղի» ասված մետաքսեայ նախշուն թաշկինակից, մանիշակագոյն թոռից և մի սևագոյն բրդէ շալից։ Այդ բոլոր պաճուճանքի տակից։ Սանամը գլխին անմիջապէս կապած ունէր ճութղին, որի տակից երևում էին հինայով ներկած մազերը։

Սանամ խանումը միայնակ էր։ Նրա միակ որդին, Ռուստամը, գտնվում էր օտարութեան մէջ։ Երկրաշարժից յետոյ, երբ առևտուրը ընկաւ Շամախում, Ռուստամը հաւաքել էր իւր ապրանքները և գաղթել Թէյմուր-խան-Շուրայ, ուր արդէն երեք տարի էր, որ ապրում էր։ Որովհետև Սանամը բացի Ռուստամից ուրիշ զաւակ չունէր, այդ պատճառով նրան մի առանձին դառնութիւն էր պատճառում իւր միակ որդու բացակայութիւնը։ Մի ծանր, մի ողբալի օր էր Սանամի համար այն օրը, երբ Ռուստամը ուղևորվեց դէպի օտարութիւն։ Խեղճ մայրը բոլոր իւր հնարները գործ դրաւ, բոլոր իւր պերճախօսութիւնը սպառեց, որպէս զի իւր որդուն համոզի՝ չը թողնելու իւր հայրենի քաղաքը։

—Շամախում առևտուրը հաց չի տալիս, հիմայ էլ հարկաւոր է, որ բախտս ջոկ քաղաքներում փորձեմ, ուրիշների պէս,—ասում էր Ռուստամը։

—Ինչու՞ ես ուրիշներին մտիկ անում, բալաս, նրանք քեօմագ ունեն, արխա ունեն, քեզ պէս խօմ մէն մենակ չեն։ Դու որ գնում ես, բաս ինձ ո՞մի ումուդին ես թողնում։

—Կը գնամ Շուրայ, գործերս քիչ ժամանակում կարգի կը բերեմ ու յետոյ կը գամ, քեզ էլ ինձ մօտ կը տանեմ։

—Այդ էր պակաս, ծերութեանս օրերում օլքա օլքա ընկնիմ, որ այս փղած չորացած ոսկորներս զարիբ երկիրներում ցիր ու ցան լինեն։ Լաւն է այստեղ, իմ պապերիս օջաղի մօտ, քաղցած, ծարաւ մեռնեմ, քան զարիբութենում ոսկի արծաթի մէջ ապրեմ։ Ասում է «ինչ եմ անում ոսկի թեշտը, որ միջին պիտի արիւն թքեմ»։

—Չեմ իմանում է քեզ համար ինչ քաղցր բան կայ «խարաբա շահարի մէջ»։ Ցանում ես, որ քար քարի վրայ չի թողնում Աստուած։ Դիշեր ու ցերեկ սիրտներս եղի պէս հալվում է, թէ հէնց այս է պի-

տի տակն ու վրայ լինի։ Լաւ չի, որ մի անգամ այս անիծված քաղաքից դուրս գնանք ու պրծնինք։

—Մի ասիլ, որդի։ Մարդուս հայրենական հողը քաղցր է, ուֆ քաղցր։ Այն մարդը որ սովորել է նրան, էլ չի կարող ուրիշ հաղում ապրել։

—Մենք այնպէս կարող ենք, որ քէֆդ գայ։

—Չէ՛, չէ, տեսնում ես, բալաս, ծիծեռնակներին։

—Հը՞ը։

—Աստուածութիւնը էնէնց է ստեղծել էն պստիկ արարածներին, որ նրանք էլ իրանց օջաղը սիրում են։

—Սիրում են, բայց տեսնում ես, որ նրանք էլ հիմայ թողել են իրանց բունը ու թռել ուրիշ քաղաքներ։

—Կը գան, էլի կը գան, չունքի իրանց կարճ խելքով հասկանում են իրանց պապական օջաղի դաղրը։ Նրանք, որ սպանես էլ, ուրիշ տեղ չեն գնալ, էլի իրանց հին բները կը գան։ Հիմայ, բալաս, ծիծեռնակը թռչուն լինելով, որ էդքան սիրում է իրան բունը, բաս մարդը։

—Ցանն անգամ ասել եմ, էլի ասում եմ, որ պապական հող, հայրենական օջաղ, չը գիտեմ էլ ինչ զիրթ ու զիրիլ, դրանք դատարկ բաներ են։ Մարդուս պապն էլ, հայրն էլ, օջաղն էլ այնտեղ է, ինչտեղ որ աշխատանք կայ, փող կայ։ Հասկացար, թէ չէ։ «Ինչտեղ որ հաց, այնտեղ կաց»։ Շամախում հաց չը կայ, չը կայ ու չը կայ։ Այստեղ փողը ձիաւոր է դառել, մարդը փիադա, հա վազ տուր հա՛, հա վազ տուր, որ չես կարող հասնել։ Էլ մի երկարացնի, ասածս արած է, կարճ կապիր։

Այդ խօսքերից յետոյ Սանամ խանումը այլ ևս չը կարողացաւ հակառակել Ռուստամին, ճանաչելով իւր որդու ընաւորութիւնը։ Մի օր նա դառն արտասուքներով ճանապարհ դրաւ իւր միակ զաւակին դէպի օտարութիւն։

Ինչպէս վերը ասացինք, արդէն երեք տարի էր, որ Ռուստամը Շամախուց հեռացել էր և այդ երեք տարուայ ընթացքում Սանամը մի անգամ ևս չէր տեսել նրա երեսը։ Ծանր և վշտալի էր Սանամի համար միայնակութիւնը։ Նա նամակ նամակի յետևից էր ուղարկում, աղաչում էր, խնդրում էր, որ գոնէ մի անգամ կարճ միջոցով Ռուստամը գայ իւր մօր հետ տեսակցելու։ Ռուստամը միշտ պատասխանում էր թէ այս ամիս կը գայ, միւս ամիս կը գայ, այս գործը վերջացնի, իսկոյն կ'ուղևորվի, միւսը վերջաց-

նի, կը գայ։ Եւ այդպէս նա ամբողջ երեք տարի էր, որ ձգձգում էր, բայց չէր գալիս։

Սակայն վերջին ժամանակները Սանամը շատ ուրախ էր։ Ռուստամից երկու ամիս առաջ մի ուրախալի նամակ էր ստացել։ Ռուստամը այդ նամակով յայտնում էր մօրը, թէ հերիք է ինչքան ինքը ազատ մնաց, հիմայ տանտէրվել է հարկաւոր, չունքի փառք Աստուծոյ, գործերը լաւ են գնում և այլն։ Յետոյ նա խնդրում էր իւր մօրը, որ անշուշտ մի լաւ աղջիկ ճարի Շամախում և ճարելուց յետոյ, շուտով գիր գրի իրան, որ գայ պսակվելու։

Ռուստամը հարստացուի ընտրութեան բոլոր իրաւունքները տալիս էր իւր մօրը այդ նամակով։

Սանամը խօսմ հէնց մի այդպիսի պատուէրի էր սպասում։ Նա նամակը ստացած օրը, իսկոյն, առանց ուշացնելու, ոտի ձեռի ընկաւ «զարանգիզի» Շըպպանիկին կանչեց և պատուիրեց, որ մի «լաւ, գեղեցիկ, խելօք, բան անող, կարդացած, հայալուս» աղջիկ ճարի Ռուստամի համար։ Երկար մտածեց, նա երկար խորհրդակցեց Շըպպանիկի հետ։ Քաղաքի բոլոր աղջկերանց անունները տուաւ նա մի առ մի, բոլորին քննեց, քննադատեց, հետազօտեց։ Մէկը գեղեցիկ էր, բայց շնորհ չունէր, միւսը խելօք, բան անող, կարդացած էր, բայց ագեղ, երրորդը ամեն կողմից լաւ էր, յարմար էր, բայց գեռ պատիկ էր, չորրորդի քիթն էր ծուռ, հինգերորդի մազերն էին կարճ, ծնօտը «լախ» էր և այլն և այլն։ Մի խօսքով մի քաղաքում էլ աղջիկ չը մնաց, որ Սանամը չի տեսել։ Մի ամբողջ ամիս այդ հարցով նա տրաքացրեց իւր գլուխը, մինչև որ վերջապէս երկար աշխատութիւնից յետոյ, վիճակը ընկաւ Բարխուդարի աղջիկ Սուսանի վրայ։

—Ինչ աղջիկ է, ինչ աղջիկ է, ինչ բոյ ունի, ինչ աչքեր ունի, ինչ շիր ու շիքիլ ունի, հէնց կասես քիթ դալամով քաշած լինի,—ասում էր Սանամը մի օր Շըպպանիկին Սուսանի մասին։ Բախտաւոր մէրը, Գիւլնազն էլ, մարալի պէս գեղեցիկ է։ Աղջիկն էլ մօրն է եկել, ամա խելօքութենով, ես իմանում եմ, որ նա մօրից տասնապատիկ խելօք է, չունքի դէ կոյսի սումարանումն է կարդել։ Ջատկին ես ժամումը բռնեցի, որ մին քիչ խօսացնեմ, խեղճը ամաչելուց կարմրեց, հուշնեց, լեղուն կտրվեց, չը կարողացաւ խօսել։ «Ֆարիմ աղջիկ» ասեցի մտքումս։ Շըպպանիկ, ջահթ արա, դու բանը գլուխ բեր, յետոյ ես եմ իմանում, թէ քո խաջալաթութենից ինչպէս դուրս կը գամ։

Շըպպանիկը խօսմ այդպիսի բաներ ճրագով էր պտռում։ Այդ օրից սկսած նա այլ ես հանգստութիւն չէր տալիս Բարխուդարի ընտանիքին։ Շաբաթը երեք անգամ, չորս անգամ, «վախտ ըէվախտ», նա վազում էր Գիւլնազի գլխին խնամախօսութեան, բայց բանը գլուխ չէր գալիս։ Սակայն վերջին երկու շաբաթներ Շըպպանիկը այլ ես չէր երևում Բարխուդարանց կողմերում։ Սանամի բարեկամները իմանալով որ նա մտադիր է իւր որդու համար Քեօխանց Բարխուդարի աղջիկ Սուսանին ուզելու, մի օր հաւաքվեցին զալմաղալով նրա գլխին։

—Ախչի Սանամ, դա ինչ ենք լսում, դու որտեղ, Գիւլնազի հայասրզ, կապը, կտրած չոլերը ընկած աղջիկը որտեղ։ Այ կնիկ, չես լսել, քի նա ինչ սոնկ է, ինչ բաներ է արել կուժ ծախող Հայրապետի տղի հետ։

—Ի՞նչ է արել, զարմացած հարցրեց Սանամը, որ առաջին անգամն էր լսում այդ լուրը։

—Վա՛յ վայ, էլ ինչ պիտի անի, մազս կտրվի, էլ բան է մընացել, որ չ'անի,—պատասխանեց Սանամի տալը «քեանդուկ» Մանանը, որ ինքն իրան Շամախու ծանրաբարոյ այրիքն «քեալթա» կանանցից մէկն էր համարում։ Բան է մնացել որ չանի, էլ գիշերները չոլերում սիլիկ-բիլիկ անել, պաչպչվել, ղուչղուչվել...

—Յետոյ, յետոյ։

—Յետոյ, էլ ինչ յետոյ, իմանում ես էլի, ջահիլ տղայ, ջահիլ աղջիկ, այ հայ հայ...

Եւ «քեանդուկ» Մանանը խորհրդաւոր կերպով շարժեց իւր գլուխը աջ ու ձախ։

—Վա՛յ, պոչս կտրվի, լաւ էր առել Աստուած խելքս։

—Բաս, բաս սաղ քաղաքում մին մատը մեղր կը չինէին քեզ էլ, տղիդ էլ ու կը լպզտէին հա, կը լպզտէին։ Մին իստակ անուն ունիս, ուզում ես, որ կեղտոտես, խելքի եկ, խելքի...

Այդ օրուանից դէն Սանամը Շըպպանիկին բարձրագոյն հրաման տուաւ այլ ես չը գնալ Գիւլնազի մօտ և մինչև անգամ ոչ ոքին էլ չը յայտնել թէ Քեօչարանց Սանամը կամեցել է Քեօխանց Գիւլնազի աղջկան իւր տղի համար ուզել։ Այնուհետև նա, դարձեալ նոյն Շըպպանիկի օգնութեամբ, սկսեց որոնել մի ուրիշ հարստացու։ Երկու շաբաթ էր, որ նրանք մտածում էին այդ մասին, բայց մի ուրիշ յարմար աղջիկ չէին գտնում։

Ահա հէնց այդ մտքով էր զբաղված Սանամի ուղեղը և այժմ։

Նա մէջքը պատին առած նստած էր պարսկական գորգերով զարդարած թախտի վրայ։ Երեսը դէպի բակը և հմայում էր խաղաթղթերով։ Ուղիղ մի ժամ էր, որ Սանամը հմայութեամբ էր պարապած և այդ մի ժամուայ ընթացքում նա առ նուազը տասն անգամ դարսած և բացած կը լինէր, բայց ոչ մի անգամ կամակոր թղթերը չը ցոյց տուին Սանամի ուզածի պէս։ Վերջապէս նրա ձեռքերը յոգնեցին թղթերը շատ դէս ու դէն բաժանելուց և նա բարկացած հէնց նոր կամենում էր հաւաքել և մի կողմ անել թղթերը, երբ դրսից մի կանացի ձայն լսուեց։ Մէկը թրքերէն լեզուով երգում էր և ծափահարում։ Սանամը առանց տեղից շարժելու նայեց դէպի դուրս և նրա դէմքը մի առանձին զարմանք չ'արտայայտեց, երբ տեսաւ երգեցողը—ծափահարին։

—Այ բալամ, այ ջանան, դիլ դիդիլ դահրի դաղահ, դիլ-դիդիլ չրթ-չրթ, այ սաղօղլ, այ սաղօղլ,—ներս թռաւ մի բարձրահասակ, նիհար կին, պարելով և ձեռքերը գլխից վերև աղեղնաձև պահած երկար ու բարակ մատներով «չրրթմա» տալով։

Դա զարանդիի Շըպպանիկն էր։

—Դիլիլի դիլդիլ դիլիլի դիլդիլ պարով խանըմիս, պարով նրա տուն ու տեղն,—սկսեց Շըպպանիկը մաքուր տեղական բարբառով, առանց որ և է խառնուրդի։

—Պարով, մին ալ պարով,—շարունակեց նա,—հազար բարով, ա բալամ, հինչ ես անըմ, հինչ ես.չինիմ, հինչեան պեանի ես։ Քէֆը՝ դ, հալդ, ոլհալդ։ Հը՛մ, դամաղդ չաղ ա։ Ասիր դէ ալի ախըր քանի վախտ ա քու լիս իրեսդ չամ տեսնըմ։

Սանամը ոչինչ չը պատասխանեց, միայն նա մի քանի վայրկեան նայեց Շըպպանիկի երեսին, խաղաթղթերը դրեց մինդարի տակ և չորերի ծայրերը քաշեց ներքև, որ ծածկի աջ ոտի հաստ և մսալի սրունկը։

—Հը՛մ, խոսիր դէ ալի,—դարձեալ սկսեց Շըպպանիկը, շալը գլխից վերցնելով և մի կողմ շպրտելով։

Նա կանգնեց ուղիղ Սանամի դէմ ու դէմ և ձեռքերը դրաւ կողքերքին, այնպէս որ նրա մարմինը ստացաւ փ գլխատառի ձև։

—Չես խոսիլու, հինչ կայ եարաբ, աչքունդդ փայիզվան պէս կախ ես քիցեալ, ալի էշիդ հովա կաղ ասալ։

—Թողնում ես, որ խոսեմ, կրակ բռնածի պէս ներս ես մտել թէ չէ, էլ լեզուդ բունը չի մանում։ Կարկուտի պէս հէնց թափում ես հա,—պատասխանեց վերջապէս Սանամը, տեղից բարձրանալով։—

Ախար մարդ ես, մարդու աղջիկ ես, եկել ես քաղաքավարի նստիր ու յետոյ լեզուդ զօռ տուր էլի։

—Զամ լալանալու լալարանդ իլիլու քի։ Ատած մարդիս լիզուա տուալ, որ խօսի ալի։ Զոփուռանց Նունիզը չամ քի, որ նըստամ քիթիվ անամ։

—Հերիք է, նստիր ու պատմիր, տեսնեմ ինչ խաբար ես բերել, աղջիկ ես թէ տղայ։

—Հալա մին լաւ զակուսկա չինի, քի մին քէֆս պեացվի, փորս վեց վեց ա անըմ։

Շըպպանիկը իւր փորին խփեց երկու ձեռքերով, ցոյց տալու համար, թէ յիրաւի փորը դատարկ է։

—Ուֆ, փորդ որդնը դնի, այ Շըպպանիկ, ոչ կշտանաս։

—Վալլահ քի, լիւցինիմամ, լիւցինիմամ, ալի հանց զուռզուռում ա «տուր, տուր, տուր»։ Փոր չի քի, բաշի բալա եա գլխիս ալի։ Անտէր մնայ նա հալա։

Սանամը դնաց միւս սենեակը Շըպպանիկի համար «զակուսկա» պատրաստելու։

Շըպպանիկը երգելով և «չրրթմա» խփելով հետևեց նրան։

Հարկաւոր է մի քանի խօսքով ընթերցողին ծանօթացնել այդ Շըպպանիկ անուանված արարածին։

II

Մօտ քառասուն տարեկան մի կին էր Շըպպանիկը և ինչպէս ասացինք, նիհար և բարձրահասակ։ Նա ունէր թուխ դէմք, մեծ բերան, լայն ծնօտ, ուղղագիծ քիթ և խորամանկ աչքեր, որ խօսելու ժամանակ անդադար խփվում էին ու բացվում։ Շաբաթը մի անգամ նա ձեռքերը և գլուխը հինայով ներկում էր։ Բայց չը պիտի կարծել, որ Շըպպանիկը հինան բաղարից իւր սեպհական փողով էր առնում ու քսում գլխին։ Ոչ երբէք, նա հինան քսում էր գլխին սրա ու նրա տանը, որտեղ որ հարսանիք էր լինում։

Շամախու կանանց սովորութեան հակառակ նա միշտ ամառ թէ ձմեռ չրջում էր առանց չարշավի, մի հասարակ կիսամաշ բրդէ շալով, որի տակից անկանոն կերպով միշտ սփռված էին

ուսերի վրայ նրա ոչ այնքան երկար մազերը։ Շըպպանիկը իւր արտաքին տեսքով մի փոքր նմանում էր թափառական գնչուհու և նրա անունը քաղաքում կնքել էին «զարաչի Շըպպանիկ»։ Սակայն պիտի աւելացրած, որ նա «զարաչի» մականունը ստացել էր ոչ այնքան իւր արտաքին տեսքի, որքան իւր ընաւորութեան համար։

Շըպպանիկը իւր ամուսնու և երկու զաւակների հետ ապրում էր քաղաքի յետ ընկած փողոցներից մէկում, մի հասարակ տան մէջ, որ բաղկացած էր ընդամենը մի չախլախ սենեակից, մի փոքրիկ խոհանոցից և մի հաւաթառից։ Նրա ամուսինը—նիհար, կարճահասակ, նեղ ճակատով, ուռած ու կապտած թշերով, կարմրած և պըլզված աչքերով—զուռնաչի Ցատունը ի սկզբանէ անտի հէնց դատապարտված էր մշտական հարբեցողութեան։ Նա հարբում էր առաւօտները, հարբում էր կէսօրներին, հարբում էր գիշերները, մի խօսքով «վախտ-բէվախտ» նրա համար միևնոյնն է, միայն թէ փող ունենար։ Որտեղ որ կորցնէիր Ցատունին, կարող էիր շատ անգամ այս կամ այն գինետանը գտնել։ Քսան տարեկան հասակից սկսած նա գինետանն էր անցկացրել իւր կեանքը և այստեղ էր գլխաւորապէս զուռնաչութիւն անում։ Շատ քիչ էր պատահում, որ նրան հարսանիքատուն կամ մի ուրիշ զուարճատեղ տանէին, որովհետև նրա ձեռքերը կարողութիւն չունէին զուռնան բերանում ուղիղ պահելու։ Եւ այդ ոչ թէ այն պատճառով, որ նա միշտ հարբած էր լինում, այլ առ հասարակ պիտի ասած, որ արթուն ժամանակն էլ Ցատունը իսկի մի կարգին ածող չէր։ Սակայն հարկաւոր է աւելացնել, որ ինքը Ցատունն էլ այդ մասին շատ չէր հոգում, այսինքն նա երբէք չէր էլ աշխատում, որ մէկը իրան հրաւիրի հարսանիք։ Ցատունի համար միևնոյն էր որտեղ որ փչէր զուռնան, միայն թէ «փչէր» և մէկ էլ որ մի քանի չահի-բիստի ստանար արաղի ու գինու համար։ Այդ պատճառով նա միշտ զուռնան գրպանում պատրաստ հետը ունէր, որ հարկաւոր եղած ժամանակ էլ նեղութիւն չը քաշի տուն վազելու։

—Ցատուն, ապեր, մէն փիչի,—բռնում էին նրան փողոցի ջահիլները։

—Բաշ իստա,—պատասխանում էր Ցատունը և երկար ու իւղաթաթախ արխալուղի գրպանից դուրս հանում դուդուկը։

Նա փառաւոր կերպով ծալապատիկ նստում էր փողոցի մէջ տեղում, չումուշկները հանում, առջևը դնում։ Յետոյ Ցատունը գըլխի ահագին փափաղը ուղղում էր, ծռում էր այս կողմ այն կողմ,

որ, էհ, բան է, զուռնան փչելու ժամանակ յանկարծ չընկնի ու չը խանգարի։ Այնուհետև ծվանը դնում էր դուդուկի ծայրին, պինդ պնդացնում ու սկսում։ Բայց վայ այն սկսելուն, որ նա էր սկսում։ Մինչև զուռնայի դրստելը, մինչև բերանը դնելը, մինչև նրա մատերով հարկաւոր տեղերի գտնելը, խեղճ ջահիլների սիրտները հալվում էին։

Վերջապէս Ցատունը մի կերպ բոլորը պատրաստեց և ահա նրա յօնքերը վեր քաշվեցին, ճակատը ծալերով ծածկվեցին, աչքերը չոփեցին ու կարմրեցին, թշերը ուռան, կապտեցին, հէրը սկսվեց մշտական «սահարի» եղանակը։ Բայց աւաղ, մէկէլ տեսար, որ Ցատունի վզակոթին «զըիկ» մի բռունդք հասաւ և զուռնան փափաղի հետ միասին թռաւ փողոցի մէջ տեղը։

—Այ օլմիշ, անամօթ, անմեռուն, ալի հինչ ես մահրաքաղ սարքալ։ վեր կաց, տուն կորի,—բղավում է Շըպպանիկը և իւր ամուսնու կռնից բռնելով, չպրտում մի կողմ, ինչպէս մի կտոր կեղտոտ շոր։

—Ալի, ալի, ա կնիկ եանի եանի...Ցէր մեղայ հախ միան Ցէր...եանի հինչ ամ անըմ այ օձի ճուտ, չես թողնիլիս որ քեասիբութիւնս անամ,—երկիւղածութեամբ փնթփնթում է Ցատունը, փափաղը թափ տալով։

Բայց Շըպպանիկը չէ թողնում նրան երկար խօսելու։ Նա մի ձեռով բռնում է իւր ամուսնու չուխայի փեշերից, իսկ միւս ձեռում զուռնան բռնած, նրա գլխին տալով, քաշում է ուղիղ մինչև տուն։

Այստեղ սկսվում է մի ուրիշ տեսարան։

Շըպպանիկը սեղմում է Ցատունին սենեակի մի անկիւնում և փափաղը ճխտելով բերանին, կարկտի պէս թափում է նրա գլխին հարուած հարուածի յետևից։ Փոքրիկ մարդը ուզում է դուռալ, օգնութեան կանչել, բայց չէ կարողանում, որովհետև նրա բերանը փափաղով սեղմված է։ Նա այժ է անում ազատվելու կնոջ ճանկերից, դարձեալ չէ կարողանում։ Ի՞նչ անի, ինչ չանի,—ճարահատեալ մի կերպ ձեռքն է առնում Շըպպանիկի մազերը։ Ամբողջ մարմնով Ցատունը կախ է ընկնում նրանց վրայ և խեղդված ձայնով, ինչպէս ասում է «աթանց, աթանց, հա, լօօլի, սըրաս էրվեց»։

—Բրախ տուր,—գոռում է Շըպպանիկը, գլուխը թափահարելով և ոտերով աքացի տալով Ցատունի փորին։

—Դու բրախ տուր, ես ալ բրախ տամ,—պատասխանում է Տատունը, աւելի ու աւելի պիտի քաշելով կնոջ մազերը։

Եւ այդպէս շարունակվում է մինչև որ երկուսն էլ յոգնում են և իրարու ազատում։ Երբ Շըպպանիկին հարցնում էին, թէ ինչու է նա այդչափ անրարեխղճարար վարվում իւր ամուսնու հետ, որին պիտի իսկապէս ուրիշ կանանց պէս հպատակվի—նա պատասխանում էր։

—Հինչ անամ, ա քիւր, ա մէր, քիչեր ը ցիրեկ լակըմա, աշխատածը կինի արադի ա տամ, տուն մին կոպէկ չի պերըմ։ Ես ալ բախտավար ախր կնիկ ամ, տուն ու տեղ ունամ, իմ աշխատածս ալ քամին ա տանըմ, հերիք չի անըմ։

Նշանաւոր դեր է կատարում Շըպպանիկը։ Հայերի մէջ նա յայտնի էր ամենքին, ծերունիներից սկսած մինչև ամենափոքր մանուկները։ Առանց հարցնելու, համարձակօրէն նա մտնում էր ամեն մի տուն, ամեն մի ընտանիք և պիտի ասած, որ ոչ ոք, ծանօթ թէ անծանօթ, նրան չէր արգելում։

Շըպպանիկը, ինչպէս քաղաքի մէջ ամենայայտնի զարանդիկի (միջիմարդ), ամենքին հարկաւոր էր և ամենքը որ և է բանով կարևորութիւն ունէին դէպի նա։ Մէկը տղայ ունի նշանելու, միւսը հասած աղջիկ ունի, փեսայացու է որոնում, երրորդը հարսանիք ունի, կանայք պիտի հրաւիրի, չորրորդը կնունք ու հինգերորդը մեռելատէր է, մի խօսքով թէ ուրախութեան թէ տխրութեան դէպքում Շըպպանիկը հարկաւոր մարդ է։ Ինքը Շըպպանիկը ամենից առաւել էր զգում իւր արժանաւորութիւնը և միշտ աշխատում էր, որ ուրիշներին ևս հասկացնէ այդ արժանաւորութիւնը։ Նա ամենքի հետ անխտիր վարվում էր աներկիւղ, ոչ ոքից չէր վախում, չէր ամաչում, ոչ ոքի առաջ չէր լռում։ Իսկ եթէ պատահում էր որ վախում էր, ամաչում էր կամ լռում էր, խորամանկութեամբ էր անում այդ և անշուշտ ոչ առանց նպատակի։

Բայց շատերն էին վախում Շըպպանիկից, մանաւանդ այնպիսիները, որոնք տանը չափահաս օրիորդներ ունէին։ Այդպիսիների աչքում Շըպպանիկը, կարծես թէ, մի տեսակ չաստուածուհի լինէր, որի գերբնական ոյժը կարող էր իւր կամքի համեմատ ստորացնել կամ բարձրացնել քաղաքի աչքում իրանց աղջկերանց անունը։ Եթէ Շըպպանիկը ուզում էր մի աղջկայ վարկը վայր գցել քաղաքում, նրա համար յիրաւի որ շատ դժուար չէր այդ անելու, թէ կուզ աղջիկը լինէր անմեղ, անարատ։

—«Ես նրան մին մատ արախաթունան ամ ճընանչըմ, կապը կտրածն ա, որ թայը չը կայ։ Սախկըզի պէս ա կըփչըմ մեծերի երեսին։ Իրեսի մեռունը գեղանները լըպտաղ ան։

Ահա ինչ խօսքերով էր Շըպպանիկը մրոտում խեղճ օրիորդին։ Դէհ, օրիորդի քարը ծովի յատակը գլորվեց, էլ ոչ մի տղայ չի վըստահանալ նրան մօտենալու և օրիորդը ստիպված է երկար տարիներ ապրել իւր ծնողների մօտ կուսական կեանքով։ Սրա հակառակ եթէ Շըպպանիկը ուզում էր մէկի վարկը բարձրացնել—թէ կուզ աղջիկը լինէր հաչմանդամ, տգեղ—նա այնքան կը գովէր, այնքան կը գովէր նրա գեղեցկութիւնը, «չիրը-չնորքը», «բոյը-բուսաթը», որ մինչև գօրով կը բանար նրա համար բախտի դուռը։ Մի խօսքով Շըպպանիկի լեզուն մեծ և մեծ նշանակութիւն ունէր քաղաքի աղջկերանց համար։ Ահա ինչ պատճառով էին նրան այդքան պատվում ընտանիքներում։ Ահա ինչու, երբ նա մէկի դռներից ներս էր մտնում, տան տիկինը նախ և առաջ անհրաժեշտ էր համարում նախազգուշացնել իւր աղջկերանց, որ դրանք համեստ և զգոյշ վարուեն Շըպպանիկի ներկայութեամբ։

Ահա այդ Շըպպանիկն էր, որ եկաւ Սանամի մօտ։ Սանամը ձեռաց նրա համար պատրաստեց եղաձու և ինքն էլ նստեց նրա հետ միասին ուտելու։

—Տղաղ հինչ ա գիրիմ,—հարցնում էր Շըպպանիկը, եղաձուի պատառները ագահութեամբ կլանելով։

—Սաղ սալամաթ է, ջանիդ դուա կանի։

—Հէր ա գեալու, որ նրան պսականք, ա ես նրա չիմչատ բոյին մնանամ։

—Պիտի գրող լինի, որ գայ, չէ՞,

—Հինչի չես գիրիմ։

—Ինչ երեսով գրեմ, սաղ քաղաքը չորացել է, մի աղջիկ չի ճարվում երեխիս համար։

Սանամը հետաքրքրութեամբ նայեց Շըպպանիկի երեսին, մի բաւականացուցիչ համբաւի սպասելով սրանից։

—Չի չորացալ,—պատասխանեց Շըպպանիկը, յօնքերը վեր քաշելով և կրկին ցած գցելով։

—Է՛հ, արտասանեց Սանամը, հառաչելով։

Շըպպանիկը մի քանի պատառներ ևս կլանելով, բերանը անձեռոցիկով սրբեց ու յետ քաշվեց։

—Շնորհակալութիւն։

—Անուշներ։

—Դէհ, չիւտ արա սիւֆրան հաւաքիր, կողքիս նստիր, պան ունամ քեզ նըհետ,—ասաց Շըպպանիկը հրամայական եղանակով։

Սանամը իսկոյն հաւաքեց սեղանը, տարաւ միւս սենեակը և կրկին վերադարձաւ ու նստեց Շըպպանիկի կողքին։

III

—Ասիր, տեսնեմ, ինչ բան է, խէր լինի,—ասաց Սանամը, հետաքրքրութեամբ նայելով Շըպպանիկի երեսին։

Շըպպանիկը մաղերը երեսից հեռացրեց, գլուխը քիչ թեքեց դէպի մէջքը և ուղիղ Սանամի երեսին ժպտալով ասաց։

—Աղջիկը ճարվալ ա։

—Ղորթ ես ասում, Շըպպանիկ, ով է, ում աղջիկն է,—հարցրեց Սանամը, ուրախութենից ուսերը վեր քաշելով և իւր հաստ իրանը ծռելով դէպի Շըպպանիկը։

—Դոնիա գեօզալին, խաների-բագերի թոռնը, սաղ քաղաքի աչկը, ջին-ջավահիր, մարալի պէս գեօկչակ, խանում խաթուն, ծվդար . . .

—Ո՞վ է, ով է։

—Մին խեղճ, անըմով, պատիւով հօրումօր աղջիկ։ Մին թառլան զուչ, մին գեօզալ, մին գեօզալ, քիլի...ալ հինչ ասամ։

—Սիրտդ ճաքի, տրաքի, այ Շըպպանիկ։ Ո՞վ է, ումի՞ աղջիկն է, անուն չունի՞։

—Բիւլբիւլ բիւլբիւլ բիւլբիւլ...

—Ուֆ, կրակ բռնես, կրակ բռնես, հերիք է,—վերջապէս համբերութենից դուրս գալով, բղավեց Սանամը, աջ ձեռով խփելով Շըպպանիկի ուսին։

—Ասամ,—հարցրեց Շըպպանիկը, խորամանկօրէն նայելով Սանամի երեսին։

—Ասիր, ասիր։

—Հինչ կը տաս,

—Ինչոր խոստացել եմ։

—Այի նա։

—Ո՞վ։

—Հայալու, արբուլու Գիւլնազի աղջիկ . . .

—Սուսանը,—ընդհատեց Սանամը։

—Հա, հանց Սուսանը։

—Հանաքներդ մի կողմը դիր, ողորմի քո հօրը։

—Դիւ նշանը հազիր արա։

—Էհ, հանաքի ժամանակ չի, Շըպպանիկ, ասիր, տեսնեմ, ով է գոված աղջիկդ։

—Հանաք չամ անըմ, մինիկ աղիս, մինիկ տղիդ արեր վկայ։

—Խելքդ տեղը չի, Շըպպանիկ։

—Քալաֆիդ ճոնդը կորցուրալ ես, պան ամ ասըմ, դու հանց էշդ ես քշըմ։ Իմ խելքս գլխըմս ա։ Չիմ մացայ, չիմին հարց ը փորձ արի, սուտ, սուտ, լաի սուտ։

—Սուտս որն է, սաղ քաղաքն է խօսում։

—Բարբրաղ իլի մեր քաղաքը, հինչպէս քի հանց բարբրաղ ա իլիմ։ Հախ միայն ՏԷրը քանդի դիւշմանի տունը, որ խեղճ աղջկան անըմը նահախսան կոտրալ ա։

—Ո՛վ է դուշմանը։

—Կուժ ծախողի տղան, ան մին վիժա բոյի տէր օլմիշը, Սէյրանը, Սէյրանը, Սէյրանը։ Ան դալուն տափան կպած Սէյրանն ա նահախ տեղան չով արալ սաղ քաղաքում, քիի «Բարխուդարի աղջիկը իմ հարմնացուս ա, ամանց ա, անանց ա, ֆլան ա, բէչմաքան ա»։

—Նահախս որն է, զորդ է։ Սուսանը Սէյրանի հարմնացուն է։ Ասում են, մին մատ երեխերք են եղել, որ ծնողները նշանել են։

—Դէ հանց պանն ալ տա ես ալի։ Հանց Սէյրանի ցաւը տա ես, քիի առաջ բէշիզբեարթամա ան արալ հիմի չան տատամ, պրծաս, քինատ։

—Պատճառը ինչ է, որ հիմայ չեն տալիս։

—Հինչ պիտի իլի։ Սարարը նա ես, քի Հայրապետի տղան, ան էօլմիշ Սէյրանը, հիմիկվանան որ մին վիժա բոյ ունի, անքան չառլատանացալ ա, քի, որ—մեռալ ամ Արարիչ Աստուբոյին—ես ինքը մինին կըսպանի, Սիրիր կիքինա, ես ալ իւրան կըսպանան։ Բարխուդարը, Գիւլնազը գիժ ան, քի նրա պէս հէյվարին աղջիկ տանն։ Օխտը քաչալ աղջիկս իլի, մինի մաղը նրան չամ տալ ես, դու հինչ ես խօսըմ, չամ մանըմ իսկի։

—Չեմ իմանում. էլի խելքս բան չի կտրում։

—Հինչ խելքի պան ա, չատ պարզ, չատ աչկարա նաղլ ա։

Մուկուլ օրը քիշերվան կէսին մտալ ա չիրախանա, անքան կոնծալ ա, որ ճանրալակուկուչ ա դառալ։ Եռով հինկերների հետնան կռեռ ա արալ, գլոխ—մլոխը չախչախ ան արալ, հիմի տունում ընկած տընքանքըմ ա։

—Խեղճ աղայ, խեղճ հէր ու մէր։

—Խեղճ օձ կծի խեղճ տղին։

—Այ ախչի, այ ախչի, ինչպէս ես զմիչ անում, որ հոր ու մոր միակ տղի համար անէծք ես անում։

—Ը՛մ, գիւլլախրով իլի նա, որ խեղճ աղջկան անրմը սաղ քաղաքի պիրանն ա քիցալ։ Նա եալ հինչ աղջկան, հինչ աղջկան, որ աստրվան լիւսի պէս լիւս ա, երկինքի հարաշտարակի պէս սուրբ ա։

—Ախար Հայրապետի տղան ինչ միտք ունի, որ նահախ տեղից Բարխուդարի աղջկան խայտառակ է անում։ Չէ՛, Շըպպանիկ, մէջ տեղ էլի մին փուտ կայ։

—Աղջիկը իսկի փուտ չ՛ունի։ Ասըմ ես, Սէյրանը հինչ միտք ունի, մըտքը նա ես իլալ, քի որ անմեղ աղջկան անրմը չով անի քաղաքում, հինչ ա քի մին դանա տղայ ջուրիաթ չ՛անի նրան ուզելի, որ վերջը իրան վիզին մնայ։ Խմացար։ Առա էէ, հիմի անկոջիդ քամակը ադամ տեսնես, Սուսանին ալ կը տեսնես, առա էէ, առ էյ . . .

Վերջին խօսքերը արտասանելու ժամանակ Շըպպանիկը երկու ձեռքերի մատերը չըռեց և ճանդ արաւ դէպի դուրս, Սէյրանին վերաբերելով։

—Հիմայ ինչ անենք, Շըպպանիկ, ախար սուտ թէ զորթ էս ձայնը դուրս է եկել էն մարդու աղջկայ վրայ։ Ես էլ, դրուստը ասեմ, իսկի ինքս չեմ էլ հաւատում, որ էն հոր ու մոր աղջիկը վատ-վատ բաներ անի, ինչու որ ախար նրան հէնց իմացիր, որ զնդանի մէջ են պահում։ Ցանից չեն դուրս բերում, որ Աստուծոյ լոյսն էլ է տեսնի, ախար ինչպէս կարող էր Սէյրանի երեսը տեսնել։ Դուրսն ասեմ, Շըպպանիկ, զորթ է ես նրանից ձեռ եմ վերցրել, բայց սիրտս իսկի չի կորվում։ Գիշեր ու ցերեկ նրա պատկերը հէնց աչքիս առաջ կանգնած է։ Ախար էն բոյ ու բուսաթը, էն շիր ու շնորքը, էն գեղեցկութիւնը որ աղջիկը ունի։

—Իսկի հով, իսկի հով, մին դանա ես, թայը չը կայ։ Ես ալ հանց անդիւրամ ասըմ, քի ցեքա պաց չը թողնանք ալի։ Ախր ասի տեսնամ, անանց աղջիկ հինչ տեղան ես կարող քիթանալ, հով ունի։—Իսկի հով, իսկի հով։ Սաղ քաղաքի աղջկերանց ճընանչը-

մամ, չիմին ղընդրղալամ, ուզիմ ես չիմին մին մին մատերով համբրրամ։ Առա, դա քեզ Շավալի թոռնը—թամբալ այբէժառ։ դա քեզ Եղինանց Խանըմի աղջիկը—մէջքան դաթված, կարճ, որ հանց մանռա հաջիջ—մաջիւջներան իլի։ Հաջիջ—մաջիւջը նա ես, որ աչխարքի վերչըմը պիտի կեայ։ Հա, դա քեզ Ագրիփաչանց Մամառի աղջիկ Սապանը,—հինչ ա, իսկի երեսին թիքիլի ալ չի։ Ալ հոր մինը ասամ, առ դա քեզ...

Շըպպանիկը երկար ժամանակ մի առ մի թուեց Շամախու չափահաս աղջկերանց անունները առանձին առանձին։ Բանից դուրս եկաւ որ միակ բացառութիւնը կազմում էր Սուսանը։

—Ալի, ալի Սուսանը, ալի Գիւլնազի աղջիկը։ Քաղաքը չը բացալ ա, նրանից սվայ ուրիշը չը կայ։ չը կայ։ Ա կնիկ, ցեքապաց մի թողնիլ,—կնքեց Շըպպանիկը իւր ատենաբանութիւնը, մի սպառնողական հայեացք ձգելով Սանամի երեսին։

Այդ հայեացքը նշանակում էր, թէ եթէ վերջինը հրաժարվի Սուսանին իւր որդու համար ուզելուց, յետոյ շատ ու շատ կ՛ափսոսի։

Սանամը գլուխը թեքեց կրծքին և ընկաւ մտածողութեան մէջ։ Շըպպանիկը լռեց և սկսեց աչքերի տակով խորամանկութեամբ նայել նրա երեսին, կարծես թէ, կամենալով թափանցել նրա միտքը։ Մի քանի րոպէ շարունակվեց այդ լռութիւնը։ Վերջապէս Սանամը գլուխը բարձրացրեց, ծռեց դէպի աջ ուսը, ձեռքերը իրարու վրայ դարսեց և դրաւ կրծքին։

—Չէ՛, Շըպպանիկ, ինչքան որ ֆիքր եմ անում, էլի տեսնում եմ, որ բանը գլուխ եկող չի։—ասաց նա խորհրդաւոր կերպով, նայելով Շըպպանիկի երեսին։

—Սարարը։—հարցրեց վերջինը, իւր դէմքի վրայ խաղացնելով մի կեղծ զարմացական ժպիտ։

—Ես, Շըպպանիկ, ինքս, ինչպէս ասեցի, չեմ հաւատում, որ Գիւլնազի աղջիկը էս բաները արած լինի Սէյրանի հետ։ Բայց...

—Հը՞։

—Դժուար է աղջկայ կոտրված անունը սաղացնել։ Հախնահախ Սուսանը ընկել է քաղաքի աչքում, ես թէ որ ուզեմ նրան, խալիը աչքս թքով կը հանի։ Դու գիտես, որ ազգականներ կան, բարեկամներ կան։ Չէ՛, Շըպպանիկ, չեմ կարող ես էս վարսս նրանց ձեռից ազատել,—վերջացրեց Սանամը, աջ ձեռով առաջ քաշելով գլխակներից մինը և ցոյց տալով Շըպպանիկին։

—Ես ալ կասամ հինչ ես ասիլիս։ Ղէյիդդ կըարվի, ազգականներ, բարակամներ, ֆլան բէյմաքան։ Քեանդիւկ-Մանանը չի յարակամիդ մինը։ Հըմ, ես նրա բարակամ բաբադը հանամ հալա։ Մի ինջիմիշ իլիլ ինձանայ, Սանամ խանըմ, որ բարակամիդ աթանց ուշունց ամ տամ, չունքի ես մանըմ ամ—հով ա բարակամդ, հով ա չարակամդ։ Քեանդիւկ-Մանան, Թուխիկ-Մուխիկ, ֆլան-ֆստան, դրանք չիմ, ա կնիկ, դիւշմաններդ ան, դիւշմաններդ։ Տակաղ բիշտի ան տամ, հայ մի ուզիլ Գիւլնազի աղջկան, հայ բիարուս կիլես, հայ աթանց, հայ անանց։ Անկոջներդ լաւ բացի, լաւ լիսի, նրանք չիմ քու փիսդ ան ուզում։ Թուխիկը Թուխիկը իւրան գլուխն ա քորըմ, Թուխիկը քեզ բիթիմ ա, որ չուգես Սուսանին, ամա ինքը տական ջահթ ա անըմ, քի իւրան տղի հետի ուզի։ Հըմ հինչ կայ, զարմանում ես։ Բա՛ս, բա՛ս աթանց ան քու բարակամներդ։

—Բաս ինչպէս կը կապամ ես նրանց բերանը։

—Դա Շըպպանիկի վրայ քիցիր, չիմ իմ վիզիս դիր, չիմ, չիմ։ Տես ես հինչպէս կը կապամ ես քեանդիւկ-Մանանի, ես Թուխիկ-Մուխիկի, ես ալ սաղ քաղաքի բերանը։ Զիմի, չիմի ըռեխը կը ցեխամ, դու բանիդ կաց։ Ինձ ճընանչըմ ես, քի փառք Աստու, իմանըմ ես, քի Շամախին մին զաղան ա, ես ալ նրա չիրեփը, խառնի հա խառնի։

—Շըպպանիկ, ես չատ եմ վախում, որ մեր իստակ անունը...

—Չունչրու աստ Շըպպանիկի ցեքով փիս բան չի եկալ, ումուզ ամ, օր օրաս դանն ալ չի կեալ։ Սաչ ամ աղարթմիշ արալ ա-թանց բանեբրմ, դիւ ինձ մին ցեքով ես փռնալ հինչ ա։ Ալ չաթուն մի երկարացունիլ, ես հինչ քի ասըմամ, ինձ լիսի, ետով թողմեզքը իմ վիզիս մնայ։

—Շըպպանիկ, բաս Ռուստամը։

—Հըմ։

—Կրակի կտոր է, որ իմանայ, օհհ, թիքա թիքա կ'անի մեզ։

—Այ ես նրա կրակի կտոր բոյին մեռնամ հալա։ Ախչի, ախչի, նա հինչ ա մանըմ օխտը սարի ետըմը, քի իստեղ Սէյրանի պէս հէյվարանները հինչ ան խօսըմ իւրան հարանացուի վրայ։ Մին ալ, քի ախբը հանց ասըմանք, քի «սաղ քաղաքն ա մանըմ, սաղ քաղաքն ա մանըմ»։ Հով ա ասըմ։ Ես ասքան չուռ ամ կեամ, իսկի մին տեղ չի լիսեցի Սուսանի անըմը։ Մինիկ քեանդիւկ-Մանանը, Թուխիկ-Մուխիկներն ան խօսըմ, մին ալ մին քանի աղջիկառներ, ալ հով ա խօսըմ։

—Ես ինչ գիտեմ, ոչինչ չեմ հասկանում, ես Թավաքալի կնիկ եմ։ Շըպպանիկ, դու քո Աստուածդ, իմացիր, որ հոգի ունիս ահեղ դատաստանի առաջ տալու։

—Թող Շըպպանիկի հոգին քառասուն հզար ստանաների փայ իլի, ագեամ նա քեզ մուխանաթութիւն ա ուզում անի։

—Թող լինի։

—Հաուր, հզար ստանի գլուխ կը ճըճեխամ, չամ թողնիլ քի ձեր մատին փուչ մանի։ Դէհ, վերկաց մին քիչ մըրարա բեր, որ բերանս քաղցրացունամ, ետով քինամ բանը վերջացունամ։

—Ինչ ես վռազում, մի քիչ համբերիր, որ ֆիքր անեմ։

—Ալ ֆիքր անիլի տեղը չի, քանի տաք տաք ա բանը վերջացրու քինա։ Ես արագ, ասոր Բարխուդարանց տունումն ամ իլալ, զորթը ասամ, իսկի ինքի, Բարխուդարը, ռազի չէր իլիմ, որ տղիդ աղջիկ տայ։ Աղաչանք, պաղատանք արի, ախբրը մին թահար խափեցի։

—Լ՞ինչ, աղաչել-պաղատելս ո՞րն է։ Ասում է «փուսոնիկին դրին խալիի վրայ, թող իլաս»։ Հիմա ես Բարխուդարի աղջիկը ուզեցի, մնաց նրան նազ անելը, այ երի հա։

—Երի հա չի, Սանամ խանում, մի նեղանալ, դէ Բարխուդարն ալ մարդ ա, ախբր չի ասիլիս, քի «հրը առա, վիզովդ ամ քիցիմ աղջկանս, տար»։ Մին քիչ նազը-բազ կանի ալի, բաս հինչ։ Ամա դիս արխային իլիր. ես բանը քութահ ամ արալ։ Դիս հանց ասոր նչանի մատանիքը հազիր արա, մին ալ տղիդ գիր գիրի, որ չուտ կեայ, ալ չի եղանայ։ Գիրիր էէ, որ չի եղանայ, ասիր, իրեղ թռչած ա, եկ իստեղ վեր արա։ Ամա լաւ կանես, Սանամ խանըմ, որ նա հինչ ա եա, ան զահրմարի անըմը, որ թելով քինեամ ա։ Նա ալի, որ աս տարի ան չինալ։

—Ցեպէ՞չ։

—Հա հա, ան ստանի քեարխանան, որ ասըմ ան մին սահաթըմ համ խարար ա տանըմ, համ բերըմ։ Դէ լաւ, հինչպէս ուզում ես, անանց արա։ Ամա հաց ասոր վերջացրու բանը հա։ Դէհ, ախբր ասեցի, վեր կաց մըրարա բեր, որ բողազս քացրացունամ։

—Ո՛ւֆ, բողազդ որդնը դնի։

Սանամը բարձրացաւ տեղից, գնաց միւս սենեակ։ Մի քանի բոպէից յետոյ նա վերադարձաւ բաժակակալը ձեռին, որի

վրայ փոքրիկ տարեկիններով դրած էին երկու տեսակ մուրաբաներ և մի բաժակ օղի։

—Աստած չանեսօր անի, դիւշմանի աչկը քոռանայ,—բացականչեց Շերպպանիկը, դատարկելով օղիի բաժակը և իրարու յետեւից մի քանի գդալ մուրաբայ կուլ տալով։

—Ես ինչ գիտեմ տայ Աստուած, որ վերջներս խէր լինի,—արտասանեց Սանամը հառաչելով։

—Դէհ, հալալի դա, մնաս բարով։ Ես վաղ տամ Գիւլնազի գլխին, որ նրա հետանա ալ բանը քիւթահ անամ։ Դիւ հինչպէս ասեցի, Սանամ խանում, մին կտոր գիր գիրիր. ան ստանի թելով խրկիր տղիդ, որ ալբա ալ յդի ընկնի։ Մնաս բարով։

Շերպպանիկը չալը ձգեց գլխին և դուրս եկաւ։

Սանամը մուրաբաները տարաւ միւս սենեակը, յետոյ եկաւ թախտի վրայ նստեց և մտածողութեան մէջ ընկաւ։

IV

Այդ օրից ուղիղ հինգ շաբաթ էր անցել։ Աշնանային մի ուշ երեկոյ էր։ Հոկտեմբերի յորդառատ անձրեւներից կիսախարխուլ Շամախու լայն, բայց կեղտոտ փողոցներում գոյացել էր անտանելի ցեխ և բազմաթիւ մանր ճահիճներ։ Եղանակը բաւական ցուրտ էր։ Թանձր մառախուղը հասնելով մինչև երկրի մակերեսոյթը, քաղաքը պատել էր անթափանցելի խաւարով։ Ամենայն ինչ խաղաղ էր։ բնակիչները վաղուց արդէն քնած էին։ Փողոցներում տիրում էր մեռյալ լռութիւն, որ երբեմն ընդհատվում էր գիշերային պահապանների քնաթաթախ ձայներով կրկնվող «հայ հուշ»-ներով։ Այդ ժամանակ քաղաքի կենդրոնում գտնվող գինետներից մէկում հաւաքված էր երիտասարդների մի խումբ։ Սրանք, թւով մինչև ութ հոգի, մի կիսամաշ և կեղտոտ սեղանի շուրջը նստած «քէֆ էին անում», այսինքն արաղ գինի էին խմում և խորոված անուշ անում։ Ը նայելով որ երիտասարդները աննման թւով էին, մի այնպիսի խառնաշփոթ և խլացուցիչ աղմուկ էր տիրում գինետնում, որ կարծես թէ այստեղ մի ամբողջ խումբ կար։ Մէկը բռնարու գդակը իւր բերանին պահած, երգում էր մի ինչ որ պարսկական երգ։ Միւսը երկու ձեռքերով խփում էր սեղանին և բերանով չը-

ռացնում, իբրև թէ երգեցողի հետ ներդաշնակութիւն պահելով։ Երրորդը՝ կարմրած դէմքով, վառված աչքերով, գինով լի բաժակը ձեռին, ոտի կանգնած, գոռում էր, ինչքան որ ձայնում այդ կար, մի ինչ որ «կենաց» առաջարկելով։ Մի ուրիշը տաքացած վիճաբանում էր իւր մօտը նստած ընկերոջ հետ մի այնպիսի ձայնով, որ կարծես թէ նրա խօսակիցը կէս վերստ հեռու էր նստած։

Այդ բոլոր խառնաշփոթ, անճոռնի և այլանդակ ձայները միանալով ծխախոտի և խորոված թանձր ծխով և ըմպելիքների չոգիով տոգորված խոնաւ մթնոլորտի մէջ, մի անախորժ ազդեցութիւն էին անում մարդու վրայ։ Իսկ միջահասակ, հաստափոր, աչքերը փիհ կոխած գինեվաճառը մի առանձին զօրութիւն էր տալիս այդ աղմուկին։ Կեղտոտ գոգնոցը փորովը կապած, նա գինետան մի անկիւնում խորոված չամիթները պատեցնում էր ճզվզվող կրակի վրայ և հաստ ու խռպոտ ձայնով անդադար գոռում։ «փահ փահ, հինչ քեարաբ ա, քէֆ արեցէք, մնում ամ ես ձեզ պէս ջահիլների դամաղին, հափ հափ ադա հուռռա»։ Եւ գինեվաճառի զօրեղ ձայնը սրընթաց անցնելով գինետան կամարաձև առաստաղի տակով ճնշում էր միւս ձայները։

Այս ընդհանուր խառնաշփոթութեան չէր մասնակցում միայն մի երիտասարդ։ Դա արմունկներով սեղանի մի անկիւնին յենված, գլուխը ձեռքերի ափերի մէջ դրած, անշարժ նստած էր։ Գինետունը լուսաւորվում էր առաստաղից քարշ արած մի կանթեղով, որ ծածկված էր հարիւրաւոր չորացած ճանճերով։ Կանթեղի դեղնագոյն լոյսը, հազիւ հազ թափանցելով թանձր մթնոլորտը, երիտասարդի կռների արանքով ընկել էր նրա նիհար և դեղնած դէմքի վրայ։ Երիտասարդը աչքերը սեղանին յառած ինչ որ մտածողութեան մէջ էր։ Ընկերների աղմուկը կարծես թէ նրա ականջներին չէր հասնում։

—Աղա, Ենգիբար, մին ստաքան գինի պարսիր ան նամարդի գլխին, հինչ ա մռափրմ, ստ գիշեր մեր քէֆը նա հարամ արաւ քիւֆ,—գոռաց բեղերը ոլորած մի երիտասարդ, դառնալով դէպի մի ուրիշը և մատնացոյց անելով տխուր երիտասարդի վրայ։

—Բացվիր, ադա Սէյրան, բացվիր բահարվան վարդի պէս, խակի ֆիքիր մի անիլ, հարաս նրանք կիդան, մին քիչ կոնձիր, որ սըրաղ պինդանայ,—ասելով դարձաւ Ենգիբարը տխուր երիտասարդին, բռնելով սրա գլխի մազերից և գլուխը վեր բարձրացնելով։

—Մին ստաքան գինի, մնձը, մնձը ածեցէք, տուէք Սէյրանին,

ես, հինչպէս Թամադա, հրամայում ամ,—չարունակեց սրած բեղերով երիտասարդը, ինքը ևս իւր բաժակը նորից լցնելով։

Մի քանի վայրկեանում Սէյրանի առջև չարվեցին գինով լի մի քանի բաժակներ։ Սէյրանը մակ առաւ բաժակներին և գլուխը չուռ առաւ։

—Խմիր, ասում ամ, թէ չէ գլխիդ ածել կըտամ,—հրամայեց Թամադան։

—Ջեմ ուզում,—մրմնջաց Սէյրանը, բաժակները իրանից հեռու դնելով։

—Հինչի։

—Սիրտս խառնվում է,—պատասխանեց նա թոյլ ձայնով։

—Դարակիր, ասում եմ, թէ չէ ցեքիցս չես պրծնիլ, հըմ։

Սէյրանը մի բաժակ դատարկեց։

—Աթանց, քամիր, ստաքանդ ալ թարս պարանիր։ այ ջան։ Դա իմ կենացս, դէ մինն ալ վեր կալ, ասում ամ քեզ կուժը գլխիդ եկաւ հա։

Սէյրանը երկրորդ բաժակը դատարկեց։

—Հա, աթանց, այ զօչչաղ Սէյրան, աղամարդ ես, աղամարդ, հավ հավ հուռռայ։

Սէյրանը գլուխը շարժեց և բաժակները զզուանքով մի կողմ դնելով, դարձեալ գլուխը թեքեց կրծքին։

Նրա կարմրած աչքերի մէջ արագութեամբ խաղացող բիբերից, ծռմռվող շրթունքներից, կակազող լեզուից երևում էր, որ գլուխը խիստ տաքացած է։ Պակաս չէին հարբած և միւսները։ Բայց դրանք դեռ մեծաւ հաճութեամբ չարունակում էին բաժակներ դատարկել, այն ինչ Սէյրանը վերջին բաժակները խմեց մի այնպիսի տհաճութեամբ, նա իւր դէմքը այնպէս թթուացրեց, որ կարծես թէ քինաքինայ էր խմում։

Աղմուկը քանի գնում էր, այնքան զօրեղանում էր։ Ամենաչնչին պատճառներից սկսվում էին տաք վիճաբանութիւններ։ Թամադան անդադար կենացներ էր առաջարկում և միևնոյն ժամանակ աշխատում էր հանգստացնել վիճաբանողներին։ Բայց ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում նրա վրայ, ամեն մէկը իւր ձայնն էր լսում և իրան համար խօսում։

Գինեատան դռները յանկարծ բացվեցին և ներս մտաւ մի բարձրահասակ երիտասարդ, որ իւր մէջքին կապած ունէր արծաթեայ գօտի և աջ ձեռքում մի երկար փայտ։ Երիտասարդը

գլխին դրած ունէր ձմերուկաձև, կարմիր ոչխարի գդակ, որի ծայրերը հանում էին նրա փոքրիկ և խորամանկ աչքերին։

—Շիտ արեցէք, ագա—ներս մտաւ թէ չէ, գոչեց երիտասարդը հնչեղ ձայնով։

—Դուրս եկան,—հարցրին զրէթէ միաբերանությամբ հանդիսականները։

—Հա՛ հա, փէսներդ վեր առեցէք,—պատասխանեց երիտասարդը, ձեռի փայտը անհամբերութեամբ զարկելով գինետան յատակին։ Մի բոպէ սիրեց խորին լռութիւն։ Ամենքը տարակուսութեամբ նայում էին իրարու երեսին։

Սէյրանը արագութեամբ վեր թռաւ տեղից և չուռ ու մուռ գալով, սրան ու նրան կպչելով, դիմեց դէպի դռները։ Լրաբեր երիտասարդը վազեց դռների առաջ, ձեռքերը աջ ու ձախ տարածեց և կուրծքը դուրս ցցելով, կտրեց նրա ճանապարհը։

—Կանգնիր։

—Հեռու—բացականչեց Սէյրանը, երկու ձեռքերով հրելով երիտասարդի կրծքին։

—Մի թալամիչ իլիլ։

—Բաց թող։

—Համբերիր, միասին դուրս կիգանք,—հակառակվեց լրաբերը, իւր ուժեղ ձեռքերով տեղն ու տեղը պահելով գինու զօրութիւնից թուլացած Սէյրանին։

Սէյրանը չուռ եկաւ և մի հայեացք ձգեց իւր ընկերակիցների վրայ։ Ոչ ոք չէր շարժվում իւր տեղից։ Լրաբերը կրկին փայտով զարկեց յատակին և գոռաց։

—Շիտ արեցէք դէ ալի, ախըր ասուն կըհանան, հետով ալ բանը բանից անց կը կենայ։

Անցան մի քանի լուռ վայրկեաններ ևս։ Վերջապէս Թամադի դեր կատարող երիտասարդը բարձրացաւ իւր տեղից, վազեց գինետան դէպի մի անկիւնը, խլեց այդ տեղից մի երկար փայտ և փափաղը սեղմեց գլխին։ Յետոյ նա կանգնեց գինետան մէջ տեղում և հանդիսաւոր եղանակով արտասանեց հետևեալ խօսքերը։

—Ցղերք, դիւք—ձեր նամուսը, զօչչաղ պահեցէք ձեզ, սրտներդ գիւլի սըրտի նման։ Վայ ան նամարդի գլխին, հորը երեսը չուռ կըտայ նրանցանա, հարաս ասում ամ, փախչողի թափան—թիրիքը կըթափամ հա, տեսնում ըք, դրանով հա։

Այդ ասելով նա չուխայի փեշը յետ ծալեց, մէջքը պարանեց երիտասարդներին և ցոյց տուաւ գօտիից քարշ արած խանչալը։

—Դէհ, վէր կալեցէք փէսներդ, հայդա,—աւարտեց նա իւր խօսքերը և դուռալով դուրս վազեց։

Բարձրացաւ մի խառնաշփոթ աղմուկ։ Ամենքը մի մի վայտ խլեցին։ Մի րոպէում խումբը շուռ ու մուռ գալով, իրարու կպչելով, դուրս թափվեց։ Գինետունը դատարկվեց։

Սէյրանը ամենից առաջ էր դուրս եկել։

V

Առախուղը աւելի թանձրացել էր։ Փողոցների անկիւններում թաղած լապտերների լոյսը հազիւ հազ թափանցելով գիշերային խաւարի մէջ, սփռվում էր ցեխոտ ճանիճների վրայ և փայլեցնում սրանց կեղտոտ մակերևոյթը։

Քաղաքի կենդրոնում գտնվող «հին ժամ» անուանված եկեղեցուց քիչ հեռու, փողոցի ծայրում երևեցաւ մի զօրեղ լոյս և լսվեցին զուռնայի և նաղարայի (թմբուկ) խլացուցիչ ձայներ։ Այդ լոյսի և երաժշտութեան հետ միասին դիմում էր առաջ կանանց, տղամարդկանց և մանուկների մի բաւական մեծ խումբ։ Ժամանակ-ժամանակ զուռնայի ձայնը խլանում էր բարձրաձայն կրկնվող ուրախ բացականչումներով, չոլոներով և ծափահարութիւնով։ Խումբը ընթանում էր առաջ ծանր և հանդիսաւոր քայլերով։

Այս Սուսանի հարսանիքի հանդէսն էր, որ այդ գիշեր կատարվում էր։ Սուսանը ոտից ցդլուխ փաթաթված էր մետաքսեայ խայտաճամուկ չարշովի մէջ։ Նրա երեսը ամբողջապէս ծածկված էր թանձր քողով, ասիական սովորութեան համեմատ։ Մօտ քսան ուհինդ տարեկան մի միջահասակ երիտասարդ գալիս էր նրա ձախ կողմով։

Երիտասարդը հագնված էր ոչ եւրոպական և ոչ ասիական եղանակով, կամ պարզն ասած, նրա իրանը ասիացի էր, իսկ ոտները և գլուխը՝ եւրոպացի։ Մեխակագոյն աթլասեայ նորակար արխալուղ, ոսկեայ բարակ գօտի, նուրբ սևագոյն մահուդից կարած վ ե ն դ ե ր կ ա, մի մեծ ֆուրաշկայ, (որի սև կօղիրօկը փայլում էր լուսոյ ճառագայթների տակ) նեղ անդրավարտիկ և ճռճռող կօշիկներ ու կրկնակօշիկներ,—ահա նրա հագուստը։ Նրա լայն թիկունքներից, բարձր և բաւական դուրս ցցված կուրծքից, հաստոսկոր երեսից, սուր այտերից, ամուր բազուկներից, այդ ամենից երևում էր ֆիզիքական ոյժ և առողջութիւն։ Իսկ սրեգակի տաքութիւնից նրա այրված թուխ դէմքը, հաստ և քիչ տափարակ քիթը, խորը խորշերի մէջ թաղնված մեխակագոյն բոլորակ աչքերը և խոշոր սև յոնքերը մի քիչ անախորժ, բայց օտարոտի տպաւորութիւն էին անում մարդու վրայ։ Երիտասարդի երեսը մաքուր սափրած էր և նորարոյս, բարակ սևագոյն բեղերը խնամքով սրած։ Առհասարակ մի տիպուր, մայլ, լուռ և, եթե կարելի է այսպէս ասել, խորին ինքնասիրութեան զգացմունքներին ենթարկված մարդու բաւական տպեղ կերպարանք էր։

Սա Սանամի որդի Ռուստամն էր, Սուսանի նշանածը։

Երկար չենք պատմիլ թէ ինչպէս գլուխ եկաւ Սուսանի և Ռուստամի նշանվելը և վերջապէս հարսանիքը։ Միայն այդքանը հարկաւոր է ասել, որ այս բանում գլխաւոր դեր կատարողը դարձեալ դարանդիզի Շպպանիկն էր։

Սիրով չափ համոզելով Սանամին, որ սա իւր որդու համար Սուսանին ուզի, Շպպանիկը հենց նոյն օրից սկսեց գործ դնել բոլոր իւր հնարները, բանը անյապաղ վերջացնելու։ Նախ և առաջ նա գնաց Սանամի ազգականների և բարեկամների, «Թուխիկի—Մուխիկի» մօտ, որ ամենքի առաջ Սուսանին արդարացնի։ Թէ և Բարխուդարը նրան չէր խնդրել, որ այդքան աշխատի իւր աղջկայ մասին, և միայն կիսաբերան մի թեթև անկնարկութիւն էր արել, սակայն այդքանն էլ հերիք էր Շըպպանիկին։ Շպպանիկը շատ էր լսել, ինքն էլ անձամբ փոքր ինչ ծանօթ էր Բարխուդարի բնաւորութեանը և գիտէր թէ ինչ նշանակութիւն ունի մի թեթև ակնարկութիւն Բարխուդարի պէս «չամբաղութ մարդու» կողմից։ Այդ պատճառով Շըպպանիկը հանգստութիւն չունէր, ամբողջ երեք շաբաթ այստեղ ու այնտեղ սրա ու նրա մօտ վազեց, գործ դրաւ բոլոր իւր խորամանկութիւնը, ստատեց բոլոր հնարագիտութիւնը, լեզուի բոլոր ոյժը, մինչև որ բանը յաջողացրեց։

Բայց այստեղ պիտի աւելացրած, որ մի քանի կողմնակի հանգամանքներ ևս քիչ չը նպաստեցին Շըպպանիկին։ Բանն այն է, որ այդ ժամանակները Շամախի եկել էր մի օտարաքաղաքացի երիտասարդ վաճառական։ Ցայսմի չէր թէ ինչպէս Շըպպանիկի գլուխը մտել էր, որ իւր այդ երիտասարդը եկել է «Շամախիի դեղաշնորհան մինին դարմիչ» անելու, այսինքն ոսկվելու նպատա-

կով և պարում է մի գեղեցիկ ու խելօք աղջիկ։ Այդ պատճառով Շըպպանիկը մի օր ձեռքերը հինայով ներկեց, մազերը կարգին սանրեց, երեսը Պաղանի սապոնով լուաց, մեղուկից դուրս հանեց նոր շալը, ձգեց գլխին ու հայդա Երիտասարդի մօտ։

Նա ծանօթացաւ վերջինին, մի քանի բաժակ չայ խմեց նրա մօտ, զննեց, քննեց, հարց ու փորձ արաւ նրան թէ ով է, ինչ տեղացի է, ինչ գործի է, որքան կարողութիւն ունի և այլն։ Բանից երևեցաւ, որ Երիտասարդը գանձակեցի է, պարապում է մետաքսի առևտուրով և բաւական կարողութիւն ունի։ Թէ նա Շամախի է եկել առևտրական գործերով և ոչ թէ պտակվելու, թէ ինքը արդէն պտակված է և երբէք մտադրութիւն չէ ունեցել երկրորդ կին ունենալու, «չունի առաջի կնիկը կռեվ կանի, համ էլ դէհ, հայ քրիստոնեայի օրէնքով մին մարդ երկու կնիկ չի կարող պահել» և այլն և այլն։

Տեղեկանալով այդ բոլոր մանրամասնութիւններին, Շըպպանիկը բիթը քարշ արած «քեօռը փէշման» դուրս եկաւ Երիտասարդի մօտից, բայց առ ժամանակ վճռեց ոչ մի մարդու չըյայտնել թէ ինքը սխալված է եղել։ Նա նպատակ ունէր։ Անմիջապէս Շըպպանիկը վազեց Սանամի գլխին և սուտ սուտ չունչը փորը գցելով, հաղորդեց նրան։—«Ա, կնիկ, հանց աս սահաթին ան գենջեցի տղի մօտան ամ դամ։ Փոգ գեօվլաթ, սիլի պէս։ Ինքն ալ մին գեօզալ ա, մին գեօզալ ա, մին բոյ-բուսաթ ունի, բիրի որ դիւ ալ պառաւ տեղովդ տեսնես—հազդ կը դայ, կը սիրահարվես։ Ինձի թափչուր արաւ որ ալ-բա-ալ մին լաւ աղջիկ ճարամ նրա հետի։ Ցիթասուն դանա ջըրնդալի նիկոլայներ խոստացաւ ինձ։ Ես նրա մօտ Գիւլնազի աղջկան թարիֆ արի, խեղճ գեղի բերանը բաց մնաց, ասեց՝ հանց նա ինքն ա իմ ուզած աղջիկը։ Հիմի, ա կնիկ, ալ ինձ խօսացունել չի իլիլ, ամիր, տեսնամ, ագեամ ուզում ես տղիդ հետի Սուսանին—ուզիր, ադամ չես ուզում—ալ ան մարդի աղջկան բանդուվանի մի քիցիլ թող քինամ ան տղի հետի քիւթահ անամ, քինայ բանը»։

Սանամը Շըպպանիկի խօսքերին հաւատաց և մի օր ժամանակ խնդրեց, որ մտածի։ Միւս օրը Շըպպանիկը կրկին ներկայացաւ նրան և այս անգամ Սանամը վճռողաբար ասաց, որ ցանկանում է Սուսանին ուզել։ Շըպպանիկը ոտն ու ձեռն արաւ, երկու օրում նշանդրէքը գլուխ բերաւ։ Սանամը հեռագրել տուաւ Ռուսաստանը երկու չարաթից յետոյ հասաւ Շամախի և ահա արդէն նրա

հարսանիքը այդ դիշեր կատարվում էր։

Սուսանի միւս կողմով դալիս էր կնքահայրը—Ռուստամի վաճառական ընկերներից մէկը։ Իսկ Ռուստամի կողքով գալիս էր Սմբատը, իրրև հարսնդրայր։ Սրանց յետևից գալիս էին հանդիսականները, որոնց մէջ ամենից առաջ երևում էին Գիւլնազը և Սուսանի ընկերուհի Սուսանբարը։

Սուսանբարը Սուսանի համար ուղեցոյցի դեր էր կատարում, որովհետև վերջինի երեսը ծածկած էր թանձր քողով և ոչինչ չէր տեսնում կամ հազիւ կարողանում էր նշմարել։ «Ախչի, զլուխդ այս կողմ պահիր, ախչի, կռներդ ծռիր, ախչի, մէջքդ դրսիր, ախչի չարչվդ հաւաքիր»—քշփշում էր անդադար Սուսանբարը։ Սուսանը հլու հնազանդութեամբ կատարում էր բոլոր նրա պատուէրները։

Սուսանբարը նորապսակի բոլոր պարտականութիւնները անգիր գիտէր, որովհետև դեռ մի ամիս չը կար, որ նա ինքը անցել էր այդ քուրայով։ Թէ ով էր Սուսանբարի նշանածը և ինչպէս էր պատահել, որ նա պսակվել էր—այդ մասին մանրամասն տեղեկութիւններ յայտնի չէին։ Միայն մի առաւօտ Սուսանը լսեց իւր մօրից, որ վերջապէս Սուսանբարին նշանել են և երկու օրից յետոյ պսակելու են մի օտարաքաղաքացի մարդու վրայ։ Անչափ ուրախացաւ Սուսանը իւր ընկերուհոյ այդ անսպասելի բաղդաւորութեան վրայ, բայց նոյնը չէր կարելի ասել Սուսանբարի վերաբերութեամբ։ Երբ Սուսանը շտապեց շնորհաւորելու Սուսանբարին, վերջինը կրծքից մի խորը հառաչանք արձակելով պատասխանեց։—«ինչ պսակվել է, չըզիտեմ, ծնողներս կռնիցս բռնել են ու անտէր շորի պէս շպրտում են մի անծանօթ ու անյայտ տղի չնքին»։ Ինչ և իցէ Սուսանբարը նորահարս էր։

Հանդէսը մօտեցաւ փողոցի ծայրին և ծռվեց դէպի այն փողոցը, ուր գտնվում էր Ռուստամի տունը։ Խլացուցիչ զուռնան անընդհատ փչում էր։ Նաղարաչին երկու բարակ, տաշած, սրածայր փայտերով անդադար խփում էր կռնատակին բռնած նաղարայի չորացած կաշուին, թնդացնելով մառախուղը։ Ցանկարծ հանդիսականների յետևից լսվեց մի ինչոր զոռոց և միևնոյն վայրկեանին մի ռումբի չափ քար թռաւ հանդիսի մէջ տեղը։ Քարը կպաւ ջահ պահողի թևին, որի ձեռից ջահը իսկոյն ընկաւ և հանգաւ։

Այդ անսպասելի դէպքը մի խառնաշփոթութիւն գցեց հանդիսականների մէջ։ Սկսվեց իրարանցում, ամենքը խառնվեցին իրարու հետ մթան մէջ։ Կանայք բարձրացրին ճիչ ու զոռոց, տղամար-

դիկ շուարվեցին և չը գիտէին թէ ինչ անեն։ Անթափանցելի խաւարի մէջ իրարու չըտեսնելով, ոչ ոք չէր հասկանում թէ ինչ է կատարվում։ Ամէն մէկը վախենալով մի որ է յանկարծական վտանգից, պաշտպանողական դիրք էր բռնել։ Այդ ընդհանուր խառնաշփոթութեան մէջ նա մանաւանդ շփոթվել էին նորապսակները, մէկ էլ Սմբատը, Սուսանբարը և Գիւլնազը։

Աղմուկը շարունակվում էր, լսվում էին սպառնալից խօսքեր, անվայել յիշոցներ և ոչ ոք չըգիտէր թէ ով էր հայհոյողը և ում դէմ։ Միայն այս անհասկանալի խառնաշփոթութեան մէջ որոշվում էր մի երիտասարդական ձայն, որ կակազող լեզուով անկապ յիշոցներ էր տալիս։

—Ջահը վառեցէք,—բացականչեց յանկարծ Ռուստամը իւր սուր, զօրեղ և անյողդողդ ձայնով։

Ջահ պահողը մի կողմում ընկած, անքանքում էր։ Հանդիսականներից մէկը խակոյն մի լուցկի վառեց։ Սենեակի մէջ թաթախված ցնցոտիները մի վայրկեանում բոցավառվելով, լուսաւորեցին խառնաշփոթութեան ասպարէզը պղնձագոյն և ծխախառն լուսով։ Հանդիսականները սարսափած ցրվել էին այս ու այն կողմ։ Միայն Գիւլնազը, Սուսամբարը և Սմբատը չէին հեռացել նորապսակներից։ Առաջին երկուսը Սուսանին կպած, կարծես թէ, պատրաստվել էին իրանց մարմնով պաշտպանել նրան, եթէ մի վտանգ հասնելու լինէր։

—Ինչու էք փախչում, էյ, էյ, կանգնեցէք, այ նամարդներ, էյ վախկոտներ,—գոռում էր մի մարդ հանդիսականների յետևում դէպի փողոցի միւս կողմը, որտեղից լսվում է մի խումբ փախչող մարդկերանց ոտնաձայնը։

Ցեռոյ գոռացողը երևաց շուտ տուաւ դէպի հանդիսականները և սկսեց դարձեալ յիշոցներ տալ։ Այս անգամ նրա յիշոցները որոշվում էին։ Նա հայհոյում էր նորապսակներին, նա մանաւանդ Ռուստամին, որին ուղղում էր տասնեակներով անվայել և կեղտոտ խօսքեր։ Հայհոյողը մի երիտասարդ էր։ Ջահի լուսոյ ճառագայթները լուսաւորեցին նրան։ Երիտասարդի դէմքը գունաթափ էր, ինչպէս մի մեռելային կերպարանք։ Նրա հագուստը ոտից ցզլուխ շաղախված էր ցեխով, մազերը ցիր ու ցան եղած, աչքերը վառված։ Նա աջ ձեռին պահած էր մի երկար փայտ, իսկ ձախ թևի վրայ փաթաթած ունէր ջերքեզկան։ Նա կամենում էր առաջ շարժվել, բայց չէր կարողանում, ոտները չէին հնազանդվում

նրա կամքին։ Երիտասարդը սաստիկ հարբած էր, այնպէս որ կանգնած տեղը ամբողջ մարմնով տատանվում էր, ինչպէս մի լարախաղ պարանի վրայ։

—Ոչինչ չը կայ, զուռնան փչեցէք, առաջ գնանք,—խօսեց բարձր ձայնով Սմբատը և ինքը չտապով վազեց դէպի յիշոցներ տուող երիտասարդը։ Նա խլեց վերջինի ձեռից փայտը, բռնեց նրա թևից և հեռացրեց հանդիսականներից։

—Այդ ինչ պատահեց, ով էր այն ազան, ինչ էր ուզում,—հարցնում էր անդադար Ռուստամը շրջապատողներից։ Սակայն ոչ ոք նրան մի որոշ պատասխան չէր տալիս։

—Է՛հ, դատարկ բան է, գիշերվայ շառլատաններից մէկն էր,—պատասխանեցին նրան։

—Բայց ով էր, կարելի է ես ճանաչում եմ անունը։

—Թուրք էր,—դարձեալ պատասխանեցին նրան, աշխատելով անյայտութեան մէջ պահել երիտասարդի անունը։

—Ախ, Տէր Աստուած, այդ ինչ կրակ էր, ես ճանաչեցի։ Նա ինքն էր,—քչփչաց Սուսանբարը Սուսանի ականջին։

—Ո՞վ էր,—հարցրեց Սուսանը հաղիւ լսելի ձայնով։

—Սէյրանը։

—Սէյրանը,—կրկնեց Սուսանը թոյլ ձայնով և ուշաթափվեց։

—Սուսան, Սուսան, ուշքի եկ,—բացականչեց Գիւլնազը գբրկելով իւր աղջկան։—Ա՛յ ջամահաթ, բալաս վախեցաւ, բալաս ձեռքիցս դուրս եկաւ, օգնեցէք։

Այդ նոր և անսպասելի դիպուածը հանդիսականներին բոլորովին չփոթեցրեց այս անգամ։ Զուռնայի ձայնը կրկին ընդհատվեց և ամենքը մօտեցան նորապսակներին օգնելու։

—Ջուր, ջուր բերէք երեսին սրսկելու,—գոռում էր Ռուստամը մի ձեռով իւր ամուսնուն գրկած, իսկ միւս ձեռը դէպի հանդիսականները մեկնելով։

Այն գինետունը, ուր մի փոքր առաջ Սէյրանը իւր ընկերակիցների հետ հարբել էր, դեռ ևս փակված չէր։ Սմբատը հեռուից նկատելով ճրագի լոյսը, վազեց անմիջապէս գինետուն, որ ջուր բերի։

Սուսանի երեսից քօղը քաշեցին։ Ջահի լոյսը լուսաւորեց նրա գունաթափված դէմքը, որի վրայ կենդանութեան նշոյլ չէր մընացել։ Անցան առաջին վայրկեանները և Սուսանը յանկարծ աչքերը բացեց։ Նրա դողդոջուն շրթունքներից դուրս թռաւ մի

խօսք և այնուհետև կրկին նա ուշաթափվեց։ Հանդիսականներից ոչ ոք չը լսեց այդ խօսքը, թէպէտև որոշ կերպով հասաւ այն Գիւլնազի և Սուսամբարի ականջներին։ Այդ Սէյրանի անունն էր։ Ռուստամը ևս լսեց այն, լսեց և Գիւլնազի ու Սուսանբարի վրայ տարակուսական մի խորը հայեացք ձգեց։ Այդ հայեացքով նա, կարծես թէ, զարմացած հարցնում էր, արդեօք ինչ է նշանակում այդ անունը Սուսանի շրթունքներում։ Գիւլնազի և Սուսանբարի վրայ այդ խորհրդաւոր հայեացքը մի սառուցեալ ազդեց և նրանք միաժամանակ գլուխները կրծքերին թեքեցին, իրանց դէմքերը Ռուստամի սրատես աչքերից թաքցնելու համար։

VI

Մինչդեռ խառարի մէջը տեղի ունէր այդ տեսարանը, գինետունում, ուր վազեց Սմբատը ջուր խնդրելու, կատարվում էր մի ուրիշը։ Իւր արշաւանքի անյաջող հետևանքից յուսահատված, Սէյրանը կրկին վերադարձաւ գինետուն։ Գիշերվայ կիսին նա ուրիշ ապաստանարան չը գտնելով, թախանձաքով խնդրեց, աղաչեց գինեվաճառին, որ սա թոյլ տայ իրան գինետանը գիշերելու։ Գինեվաճառը թթուած դէմքով և վերին աստիճանի անբարեկամութեամբ, համաձայնվեց կատարել նրա խնդիրը։

Թուլացած մարմնով, վշտացած հոգով և փշրված սրտով, Սէյրանը քաշվել էր գինետան մի անկիւնը և այնտեղ մի կատր կեղտոտ շորի պէս ընթռված մտածում էր։ Ինչ էր մտածում նա։— Ոչինչ։ Ըմպելիքների չոգիի մէջ խաչված ուղեղը ինչ կարող էր գործել այդ ժամանակ մի պատանու գլխում։ Այն տեսարանը, որ մի քանի բոպէ առաջ կատարվեց փողոցում և որտեղ ինքը կատարում էր ամենագլխաւոր դերը, այժմ նրան երազ էր թուում։ Նա չէր կարողանում պարզ հասկանալ կամ երևակայել թէ ինչ էր պատահել և ինչու համար ինքը կրկին գինետանն էր գտնվում այժմ։ Ընկերների խարերայութիւնը և անպատութեամբ դաւաճանելով փախչելը, այն անվայել և փողոցային կեղտոտ յիշոցները, որ ինքը ուղղեց նորապսակներին, Ռուստամի յաղթութիւնը, Սուսանի գլուխը խոնարհած իւր ճակատագրին հնազանդվելը—այդ բոլորը և ուրիշ զանազան մտքեր իրարու խառնվելով, մի անթափանցելի խաւօր էին դոյացնում անարգված և ստորացած պատանու գլխում։ Պատանին ճնշուած, յաղթված, ոչնչացած այդ մտքերի ծանրութեան տակ, թաւալվել էր գինետան մի անկիւնում և այժ չունէր իւր տեղից շարժվելու, ինչպէս իւր շուրջը ընկած դատարկ գինետակերից մէկը։

Այդ դրութեան մէջ էր Սէյրանը, երբ գինետան դռները բացվեցին և ներս թռաւ մի երիտասարդ։ Սէյրանը մի նոր ձայն լսելով, դժուարութեամբ բարձրացրեց աչքերի ծանրացած կոպերը, որ տեսնի թէ ներս մտնողը ով էր։

Ներս վազողը Սմբատն էր։ Մտաւ թէ չէ, նա թախանձանքով խնդրեց գինեվաճառին մի փոքր ջուր։ Գինեվաճառը չուապեց կատարելու նրա խնդիրը։ Երբ Սէյրանի հայեացքը ընկաւ Սմբատի երեսին, կարծես թէ մի էլեքտրական թելի ծայր կպաւ նրա մարմնին։ Մի վայրկեանում նա այժի գալով, բարձրացաւ տեղից։ Սմբատը ևս իւր կողմից նկատեց նրան։ Մի քանի վայրկեան երկու նախկին ընկերակիցները իրարու երեսին մտիկ արին, ամեն մէկը, կարծես թէ, սպասելով թէ ինչ պիտի ասի միւսը։

—Էհ՝...չշուտն...չ—ասեց Սէյրանը, բայց չը կարողանալով արտասանել ուզած խօսքերը, գլուխը կրծքին թեքեց և բերանից դուրս թափեց գինու փրփուրը։

Սմբատի դէմքի վրայ սահեց մի ժպիտ, որ արտայայտում էր կէս զզուանք և կէս խղճահարութիւն դէպի իւր ընկած ընկերակիցը։

—Ադդա զըզըլուխդ կը փշրեմ,—դարձեալ թոթովեց հարբած Սէյրանը և աջ ձեռի բռունցքը սեղմելով կամեցաւ առաջ շարժվիլ բայց չը կարողացաւ։

Սմբատը այդ շարժումից հասկացաւ նրա միտքը։ Սակայն ինքը տեղից անգամ չը շարժվեց։ Սէյրանը կրկին մի քանի վայրկեան թոթովեց և այս անգամ նրան յաջողվեց արտասանել մի ինչ որ անվայել խօսք։ Սմբատը պարզ լսեց նրա բերանից թռած այդ անվայել և կեղտոտ խօսքը, որ սաստիկ վիրաւորական էր նրա համար։ Մի վայրկեանում նրա ականջները կարմրեցին և պըռուշները սպրանելով սկսեցին ցնցողաբար դողալ։ Նա մի կողմ դնելով գինեվաճառից ստացած ջրով լիքը կուլան, սեղմեց իւր բռունցքները և կարծես թէ պատրաստվում էր յարձակվելու Սէյրանի վրայ։ Գինեվաճառը զարմացաւ։ Նա մի քանի վայրկեան բերանը բացած և կարմրած աչքերը չռած նայում էր կամ Սէյրա-

նի կամ Սմբատի դէմքին, իբրև թէ ձգտելով երկու պատանիների այդ տարօրինակ շարժուածքների գաղտնիքը թափանցելու, որ ամենեին նրա խելքին մօտ բան չէր։ Սէյրանը մի ձեռը սեղանին յենած, միւսը ամուր սեղմած (ի հարկ է այնչափ ամուր, որչափ այժ էր մնացել նրա կռնում), իսկ աչքերը Սմբատի կրծքի մի կէտին յառած, անդադար տատանվում էր, երբեմն արտասանելով ինչ որ անհասկանալի խօսքեր։

—Ամաչիր, ամաչիր, Սէյրան, տես ինչ օրն ես ընկել քո յիմարութեանով,—խօսեց վերջապէս Սմբատը և նոյն վայրկեանին մոտաբերելով իւր քրոջ դրութիւնը, վերցրեց ջրի կուլան և երեսը չուռ տուաւ, որ դուրս գնայ։

Սէյրանը մի քանի քայլ հետևեց նրան և կրկին կանգ առնելով գոռաց բարձր ձայնով, որքան այժ ունէր։

—Կանգնիր...ես չեմ ուզում։

Սմբատը կանգնեց և յետ նայեց։

—Չէ, չեմ ուզում կեղտոտ շորը, չեմ ուզում լպստած պատառը, տարէք ու չների առաջը գցէք,—արտասանեց Սէյրանը այս անգամ բաւական պարզ։

—Երդվում եմ, Սէյրան, այս գիշերվայ սուրբ պատկով, որ ոտերիս տակ քեզ չանստոտակ կանեմ, եթէ քո այդ ազատ լեզուն փորդ չես քաշի,—պատասխանեց Սմբատը, ատամները կրճտելով և նորաբոյս բեղերը կրծոտելով, որ զսպի իւր կատաղութիւնը։

—Սուրբ...սուրբ, հըմ, չէ կեղտոտ, ինչպէս այ, տեսա, ըմբրոշդ...

Սէյրանը բերանը բացեց և դուրս թափեց մի բուռը թթուած գինի խորոված ի անմարս կոորների հետ։

Այս անգամ Սմբատի համբերութիւնը սպառվեց։ Նա ջրի կուլան կրկին սեղանի վրայ դրաւ, յարձակվեց Սէյրանի վրայ, բռնեց նրա կոկորդից և սկսեց խեղդել։

Գինեվաճառը բղաւելով մէջ ընկաւ, որ նրանց բաժանի։ Սէյրանը Սմբատի ճանկերում նմանումէր քաղցած կատուի թաթերում ընկած մի հնչին միկան։ Նա հնչասպաս մէջքից ծռվեց և թուլացած երկու ձեռքերով քարշ ընկաւ Սմբատի մաղերից։

—Ցետ լղիր թքածդ, ասիր՝ մեղայ Աստուծոյ, թէ չէ Քրիստոսը վկայ, հոգիդ այս բոպէին սատանաներին կը չպրտեմ,—գոռում էր Սմբատը, իւր մատներով Սէյրանի վիզը չղթայած և անդադար թափահարելով նրա գլուխը։

Սէյրանում խօսելու այժ չէր մնացել։ Նրա լեզուն դուրս էր ընկել, կարմրած աչքերը չռվել էին, կարծես թէ քիչ էր մնում, որ դուրս պրծնէին։

—Այ աղրէր, դա հինչ կրակ էր, որ ինձ մէջը գցեցիք։ Ձեռ քաշիր, Աստուած սիրես, հինչ ես սպանում խեղճ տղին,—բացականչում էր գինեվաճառը, աշխատելով Սմբատի ձեռքերը հեռացնել Սէյրանի կոկորդից։

—Բաց եմ թողնում, գնա, ազատում եմ, առանց այդ ես դուփչացել ես, թող իղուր ձեռքերս չը կեղտոտեմ,—ասաց Սմբատը և բաց թողնելով Սէյրանին, երկու ձեռքերով հրեց նրա կրծքին։

Սէյրանը յետ ու յետ գնալով թաւալվեց պատի տակ, ինչպէս ուժեղ ձեռից արձակված մի բրդեայ գնտակ։ Նա կրկին կամեցաւ բարձրանալ, բայց այս անգամ Սմբատը ուշադրութիւն չը դարձրաւ նրա վրայ և ջրի կուլան վերցնելով, շտապով դուրս գընաց։

VII

Մինչև Սմբատի հասնելը Սուսանին արդէն ուշքի էին բերել։ Ցուռնան կրկին սկսեց փչել և հանդէսը առաջվայ կարգով շարժվեց առաջ։ Քառորդ ժամից յետոյ հասան Ռուսաստանի ազն և ծանր քայլերով մտան բակը։ Այստեղ նորասրտակների դէմ դուրս թափվեց կանանց և տղամարդկանց մի ուրիշ խումբ, որի գլխին կանգնած էր Սանամը, մետաքսեայ շորերով զուգված ու զարդարված։

Սանամի դէմքի վրայ խաղում էր մի զուարթ ժպիտ։ Երիտասարդական կենդանութենից վաղուց զրկված նրա աչքերը փայլում էին ներքին բաւականութեամբ։ Գիրաւի Սանամի ուրախութեան ինչ չափ պիտի լինէր, քանի որ այդ գիշեր նրա իղձը կատարվում էր արդէն և վերջապէս նրա միակ և սիրելի որդին պատվում էր։ Նրա մայրական զգայուն սիրտը զարկում էր միայն և միայն իւր որդու բախտաւորութեանով։ Եթէ կար մի ուրիշ անձնասիրութիւն, որ թէև ուրիշ զգայմունքներից դրդված, բայց նոյնչափ այդ գիշեր ուրախ էր, որչափ Սանամը,—այդ Շրպպանիին էր։

Շըպպանիկը, օձ, էլ մի ասէք, նրա բաւականութիւնը անսահման էր, նա թեւեր չունէր, որ ուրախութենից երկինքը բարձրանար։ Նա այս անգամ ձեռքերը մինչև բազուկները և գլխի կարճիկ մազերը ներկել էր հինայով մի առանձին հոգացողութեամբ։ Երբ հարսանիքի հանդէսը ներս մտաւ, Շըպպանիկը իսկոյն դուրս ընկաւ նորապսակների դէմ և երկար բազուկները վեր քաշելով, սկսեց պարել զուռնայի եղանակով։

—Աստած չանեսցի, այ օղուլ, Շըպպանիկը չինար բոյիդ մատաղ,—բացականչեց նա, ընկնելով Ռուստամի վզովը և մի քանի անգամ համբուրելով նրա ճակատը ու թշերը։

Յետոյ նա բաժանվելով Ռուստամից, չարունակեց պարելը։

—Ղայթաղի ածեցէք, աղա,—հրամայեց նա զուռնաչիներին, և կոնատակից հանելով մի փոքրիկ բաժակակալ, պահեց իւր գլխից վեր, պարը չարունակելով։

Սանամը ծոցից քսակը հանեց և մի բուռն արծաթադրամ թափեց բաժակակալի մէջ։ Զորս կողմերից հանդիսականները հետևեցին նրան և մի քանի բոպէում Շըպպանիկի բաժակակալը ծանրաբեռնվեց պղնձէ, արծաթէ և թղթէ դրամով։ Երաժիշտների վառված աչքերը ագահութեամբ ճանապարհ դրին այդ փողերը մինչև Շըպպանիկի գրպանը, որտեղից վերջինի աջ ձեռը հեռանալով, մի կասկածաւոր նշան արաւ զուռնաչիներին։ Այդ մի նշան էր, որի միտքը հասկանալի է միայն չամախեցուն։ Վերջապէս Շըպպանիկը ասպարիզից դուրս եկաւ, իւր հնձով բաւականացած և նրա տեղը մէջ մտաւ պառաւ Սանամը։ Երաժիշտները իրարու աչքով արին և աւելի սաստկացրին զուռնաների ծվծվոցը։ Սանամը իւր հաստիկ մարմինը լալանացնելով և մինթանայի փեչերը ֆռռացնելով, սկսեց պար գալ։ Ռուստամը մի հնգանոց թղթադրամի ծայրը թքով թրջեց և խփեց իւր մօր ճակատին։ Սուսանը իւր լղարած, դողդոջուն ձեռով հանելով մի կապոյտ թղթադրամ, ամօթխածութեամբ դրաւ իւր սկեսրոջ ափի մէջ։ Հանդիսականները ոգևորվեցին և ամէն մէկը չուզեց իւր լման ասպարէզ հանել։ Սանամը հաւաքած փողերը յանձնեց զուռնաչիներին և դուրս եկաւ ասպարիզից։ Այնուհետև հանդիսականներից մէկը մի ուրիշ բաժակակալ պահեց նորապսակների գլխին և ներկայ եղողները մի առ մի հերթով ձգեցին նորապսակների համար իրանց նուէրները։ Որը ձգեց թուղթ փող, որը ոսկի, որը մի որ և է ոսկեղէն կամ արծաթեղէն, որը մի ինչ որ

հագուստացու և այլն։ Վերջապէս զուռնան դադարեց և հանդիսականները ներս մտան ընթրելու։

Սուսանին տարան կանանց բաժանումը, որ Սանամի հարեանի տանն էր, իսկ Ռուստամը բաժանվելով նրանից, մնաց աղամարդկանց բաժանման մէջ։

Իրրև նորահարս, Սուսանը, քաղաքի աւանդութեան համաձայն, պարտաւոր էր ամբողջ ընթրիքի ժամանակը ոտի վրայ կանգնած մնալու։ Բայց այս անգամ այդ աւանդութեան դէմ մեղանչեցին։ Հանդիսականներից մի քանիսը, որոնք ներկայ էին այս գիշերվայ անպատեալի անցքին և Սուսանի ուշագնացութեան ականատես, համոզեցին վերջինին և նստեցրին սենեակի ծայրում, յատուկ իրան համար պատրաստած մի փափուկ մետաքսեայ մինդարի վրայ։ Գիւլնազը և Սուսանբարը նստեցին նրա կողքին, մէկը—աջ, միւսը—ձախ։ Ընթրիքի ժամանակ Սուսանբարը անդադար քշփշում էր Սուսանի հետ թագուն, այնպէս որ ոչ ոք նրանց լսել չէր կարող, նա մանաւանդ որ բոլորը զբաղուած էին աւելի ուտելով, քան թէ նորահարսով։

—Խեղճս գալիս են նրա ծնողները, հիմայ ես գիտեմ ինչ հալումն են նրանք,—ասում էր Սուսամբարը։

—Չեմ իմանում, թէ այսքան մեղքերիս համար ինչ պատասխան պիտի տամ ահեղ դատաստանի առաջ,—քշփշաց Սուսանը։

—Դու ինչ մեղաւոր ես։

—Չէ, Սուսամբար, մեղաւորը ես եմ, հօրս տանջողն էլ ես եմ։ Աստուած ինձ ստեղծել է, որ ուրիշներին չարչարեմ ու տանջեմ։ Էհ, երկնային թագաւոր, փառք քո զօրութենին, փառք, ինչ պիտի անեմ։

—Խնդդ քեզ մի փչացնիր, տես, ախար հէնց առանց այդ էլ վրադ մի ոսկոր է մնացել ու մի կաշի։

—Երանի կը լինէր, որ այն էլ չտաով հողի տակ փտէր, ես էլ կը հանգստանայի, ուրիշներն էլ։ Մտիկ արա, Սուսամբար, կողքիս նստած մօրս, մտիկ արա նրա երեսին և տես թէ նա ինչ օրն է ընկել։ Տես խեղճ կնիկը կռները ծոցումը ծալած մնաս այնպէս նստել է, որ կարծես թէ իմ թաղման հանդէսն է կատարվում այս տեղ։ Ուրիշները ուտում են, խմում են, ուրախանում, բայց նա կասես թէ միւս աշխարհ է թռել։ Ախ ծնողներ, ծնողներ, սպանեցի ես ձեզ իմ յիմարութենով։ Ախար ինչ մեղք ունիք դուք։

Այդ խօսքերը արտասանելու ժամանակ Սուսանի աչքերից

դուրս թափվեցին արտասուքի մի քանի կաթիլներ և ողողեցին նրա մաշված ու վաղաթառամ երեսը։ Նա իր ձայնը խեղդեց փորում և նրա կուրծքը ծանր շնչառութենից սկսեց բարձրանալ ու ցածանալ այնպէս, որ կարծես թէ թշուառ նորահարսը մահուան մահճում մնէր պառկած, Հանդիսականները այդ չը նկատեցին, բացի Սուսամբարից։ Չէր նկատում նոյնպէս և Գիւլնազը, որ աչքերը սեղանի մէջ տեղին յառած, արձանացած, նստած էր։ Նրա կիսամաշ աչքերը կորցրել էին իրանց նախկին կրակոտ փայլը և կենդանութեան մի թոյլ նշան էր մնացել։ Նրա պչկած երեսը տեղ-տեղ ծածկվել էր կնճիռներով և մի խորը գիծ նրա ոսկրացած ճակատի մէջ տեղով ուղղաձիգ անցնելով, բաժանում էր կուչկուչված յոնքերը իրարուց։

— Սուսամբար,—չշնչեց կրկին Սուսանը։

— Հրմ, խօսիր, հոգիս, ինչ ես ուզում,—հարցրեց Սուսամբարը, թեքվելով դէպի նրա ականջը։

— Մի բան որ հարցնեմ, ճշմարիտը կը պատասխանես։

— Սուսամբարը ե՛րբ է քեզ սուտ ասել, որ հիմայ ասի—պատասխանեց Սուսամբարը խորը յանդիմանական եղանակով։

— Ղո՞ւրդ է, որ ասում են թէ Աստուած ինքնասպանի հոգին առանց դատաստանի է յանձնում սատանաներին։

— Այդպիսի բաների վրայ խօսելու ժամանակ չի։ հարսանիքը է։ Մեղք է, մեղք է, Սուսան, մի՛ խօսիր։

— Չէ՞, Սուսանբար, թէ ինձ սիրում ես, պատասխանի՛ր։

— Դատարկ դատարկ քիչ խօսիր, քեզանից կը խռովեմ։

— Աստուածդ սիրես, դու—քո միակ եղբօրդ արևը։

— Ո՛ւֆ, խօսք չը կայ, որ այդպէս է։

— Ի՞նչպէս, ինքնասպանները դժո՞խքն են ընկնում։

— Հա՛։

— Թէ որ մեղք էլ չունենան, արդար լինեն։

— Էլ արդարս ոնց է։

— Ախար իրան է սպանում, իսմ ուրիշին ձեռ չի տալիս։

— Բաս ինքը մարդ չի։

— Բաս ինչու առանց դատաստանի։

— Հերիք է։

— Ասի՛ր, թէ ինձ սիրում ես։

— Ինքնասպանի համար դատաստան չը կայ։ Մենք Արարիչ Աստուծոյ պատկերով ենք ստեղծված։ Մարդասպանը Աստուծոյ

պատկերն է սպանում ու դատաստանով է դժոխք գնում։ Բայց երբ որ մարդ ինքն իրան է սպանում, նա գիտես ինչ է ասում Աստուծուն։

— Ի՞նչ։

— Ցեռ, ասում է, ով Աստուած, քեզանից այնքան ամաչում եմ, որ քո պատկերովդ ինքս էլ չեմ ուզում ապրիլ։

— Մեղայ, մեղայ, քեզ Տէր Աստուած, դու չարը խափանես,—չշնչեց Սուսանը հառաչելով և երեք անգամ երեսին խաչակնքելով։

— Ինչու համար էիր հարցնում։

— Հէնց այնպէս։

— Ցեանում ես, որ մեր տէրտէրներն էլ ինքնասպանին ծէսքով չեն թաղում։ Հիմայ դու ասի՛ր, որ մի մեռել առանց «համբիսկի» թաղվի, էլ նա ի՞նչ երեսով պիտի ահեղ դատաստանի առաջ կանգնի։

— Փառք քեզ Աստուած, դու բարին առաջես,—ասաց կրկին Սուսանը և յետոյ ընկաւ մտատանջութեան մէջ։

Մինչդեռ կանանց բաժանման մէջ նորահարսը իւր ընկերուհոյ հետ զրաղուած էր այդ մռայլ խօսակցութենով, աղամարդկանց մէջ նորափեսային մի ուրիշ միտք էր տանջում։

Ինչու համար էին այն մարդիկը յարձակվում նորապսակների վրայ։ Ո՞վ էր այն տղան, որ յիշոցներ էր տալիս։ Սէյրան... Սէյրան, այդ ինչ անուն է, որ Սուսանի բերանից լսեց Ռուստամը։ Երևի Սուսանի բարեկամներից մէկն էր, որ հարսանիքատանը հարբել էր։ Սուսանի ծնողների հետ կռուել ու եկել, որ ճանապարհին սիրը նորապսակներից հանի։ Չէ՛, այդպէս չէ, այստեղ մի բան կայ, որ ոչ ոք չի ուզում պարզ պատմել Ռուստամին։ «Թուրք էր, շաալատանների մէկն էր», ասում են, փիէ՛, նա հայերէն էր խօսում, ինչպէս թէ թուրք էր։ Չէ՛, անպատճառ մի թաղուն բան կայ, Ռուստամի սիրան էլ վկայում է այդ։ Չէ՛, Ռուստամը անպատճառ պիտի իմանայ, թէ չէ՛, սիրտը կը տրաքի։

Այդպէս էր մտածում Ռուստամը, սեղանի շուրջը պտոյտ գալով և հանդիսականներին զանազան ծառայութիւններ անելով։ Նա իւր կասկածանքով լի հայեացքը ձգում էր հերթով հանդիսականներից ամեն մէկի երեսին և խորը նայում, կարծես թէ, կամենալով կարդալ նրանց դէմքերի վրայ բոլոր գաղտնիքը։ Բայց հանդիսականների դէմքերը ոչինչ չէին արտայայտում, բացի հոգե-

կան ուրախ տրամադրութենից գինի-արաղի ազդեցութեան տակ։ Ռուստամը նամանաւանդ ստէպ-ստէպ նայում էր Սմբատին, որը գլուխը կրծքին թեքած, ընթրիքին չէր մասնակցում։ Երբ Ռուստամը նայում էր, վերջինը, կարծես թէ, ինստինկտարար խոյս էր տալիս իւր նորափեսայի զննող հայեացքներից։ Ռուստամի սուր աչքերը այդ նկատում էին, նկատում և կրկնապատկում նրա կասկածը։—«Նա ինչու է տխուր, նա ինչու հաց չի ուտում, հրքմ, ինչի վրայ է մտածում։ Նա երեսիս էլ չի ուզում մտիկ անել, տես, տես ինչպէս է աչքերի տակով մտիկ անում։ Մտիկ արա, մտիկ արա, պտիկ պտիկ պատառներ է դնում բերանը և ծամում, որ իբրև թէ ուտում է։ Չէ, մի բան կայ, մեր տղայ, որ հացը բողազովդ ներս չի գնում։ Հրմ, ինչ բան է, բաս ես չը կարողանամ իմանալ։—Չէ, ես պիտի իմանամ, թէ չէ սիրտս կը տրաքի»։

Մինչդեռ այդ կասկածաւոր մտածմունքները չարչարում էին Ռուստամին, ինչոյքը հեռվեռէ կենդանանում էր։ Սկսեցին կենացներ։ Թամադան մի կարճահասակ, նիհար, բայց կարմրագէմ, հաստ և չէկ բեղերով, քառասուն ու եօթը տարեկան մի մարդ էր։ Դա մի հին գրագիր էր, որ երկար տարիներ արքունական ստորին հիմնարկութիւններում քաշքշվելով, վերջը իրան համար մի գումար էր կազմել, որի տոկոսիով մի կերպ ապրում էր։ Ինչպէս Շըպպանիին էր Շամախում յայտնի և նշանաւոր որպէս «զարանգիզի», այդպէս և այս հին չինովնիկն էր յայտնի իբրև Թամադա։ Ո՛ր հանդիսում, որ հարսանիքում, վերջապէս ինչ ուրախութեան տեղում որ լինէր, նա միշտ Թամադա էր ընտրվում և այդ պատճառով քաղաքում նրան կոչում էին ոչ իւր անունով, այլ —«Թամադա—Կրճի»։ «Թամադա—Կրճին» նախ և առաջ հրամայեց խմել նորապսակների կենացը։

— Թագոր-Թագուհիի կենացը, հուռռայ,—գոռաց նա, բաժակը բարձրացնելով։

— Հավ հավ հուռռայ,—կրկնեցին հանդիսականները, բաժակները պարպելով։

Յետոյ «Թամադա-Կրճին» հրամայեց կրկին լցնել բաժակները։

—« Կնքօօր-Սօլղուշի» կենացը,—դարձեալ գոռաց նա։

— Հուռռայ։

— Մին ալ լիցրեցեք Թամներդ։

Հանդիսականները լցրին իրանց բաժակները։

— Ղօսպօդա,—սկսեց Թամադան,—մեան օլիւմ (ես մեռնիմ), մին էկստրրընի կոնծեցէք օրշիյ կանպանիի կենացը։

— Էկստրրընի, էկստրրընի, հավ հավ ադա հուռռայ—բացականչեցին միաբերան բոլոր հանդիսականները և կրկին դատարկեցին իրանց բաժակները։

Այնուհետև «Թամադա—Կրճին» մէկ էլ լցրեց բաժակը, վեր առաւ իւր աջ ձեռով, բարձրացաւ ոտի վրայ, ձախ ձեռը դրաւ կողքին և կարճիկ իրանը դուրս ցցեց։ Հանդիսականները հետևեցին նրա օրինակին։

—Ղօսպօդա, զա,—սկսեց Թամադան մի առանձին չնչաղրութեամբ։

— Զա,—կրկնեցին բոլոր հանդիսականները։

—Զդարովիե,—շարունակեց Թամադան։

— Զդարովիե,—կրկնեցին բոլորը։

— Նաշեղո։

— Նաշեղո։

—Սմբատա։

—Սմբատա։

—Բարխուդարիչա։

—Բարխուդարիչա։

—Վիպիսմ։

—Պիպիսմ։

—Հավ հավ հուռռայ,—աւարտեց «Թամադայ Կրճին»։

—Հուռռայ,—կրկնեցին հանդիսականները։

Եւ այդպէս հանդէսը կենդանացաւ և երաժիշտները ոգևորվեցին։ Թառի լարերը պարսիկ նուագողի թանձր հինայով ներկած բարակ մատների տակ լեզու ստացած, մի առանձին ոգևորութեամբ էին արտայայտում արևելեան Մուսայի խոր հառաչանքները։ Շիրազի երգեցողի լայն կոկորդից դուրեկան ներդաշնակութեամբ դուրս էին հեղվում անմահ Հաֆըսի սիրահարական խօսքերը այնպէս, ինչպէս մաքուր ջուրը կկլկլալով դուրս է հոսում զովարար աղբիւրից։ Փոքրիկ զանգակներով զարդարված դահիրան անդադար պտույտ էր գալիս երգեցողի ձեռում։ Եւ դահիրայի խուլ ձայնը թառի ոգևորիչ հնչիւնների հետ ախորժալի ներդաշնակութիւն էր կազմում։

Վերջապէս ընթրիքը աւարտվեց և հարբած հանդիսականները շուռ ու մուռ գալով վեր կացան և սկսեցին հերթով պարել։ Զը պարողները և պարով չը հետաքրքրվողները քաշվեցին դահլիճի այս

ու այն անկիւնը և խումբ-խումբ հաւաքված սկսեցին խօսել ու զուարճանալ։ Ամենքը ուրախ էին, ամենքի դէմքերի վրայ փայլում էր բերկրութիւն, բացի երկուսից—Սմբատից և Ռուստամից։

Առաջինը մէն-մենակ հեռացած դահլիճի մի անկիւնը ծխախոտ էր քաշում։ Ռուստամը գիժ ոչխարի պէս անհանգստութեամբ պտտում էր դահլիճի չորս անկիւնները։ Կասկածը, այդ վտանգաւոր զգացմունքը, հեռդնեռ նրա մէջ զօրեղանում էր անդսպելի կերպով, չը նայելով, որ ընդամենը մի քանի ժամ էր, որ նրա մէջ ծագել էր այն։ Ռուստամը կասկածում էր ամենքի և ամեն բանի վրայ, կասկածում էր Սմբատի, կասկածում էր հանդիսականների ամենայն մի առանձնախօսութեան, կասկածում էր մինչև անգամ երաժշտութեան այս ու այն եղանակի վրայ։ Երբ նա տեսնում էր, որ հիւրերից երկուսը առանձնացած խօսում են, իսկոյն մտածում էր։—«Անպատճառ ինձ վրայ են խօսում, ախ, եթէ իմանամ, ինչ են խօսում»։ Եւ նա զգուշութեամբ մօտենում էր խօսողներին և երեսը նրանցից դարձնելով ականջ էր դնում։ Բայց երբ լսում էր, որ խօսակցութիւնը բոլորովին մի ուրիշ առարկայի մասին է, նա նոյն զգուշութեամբ հեռանում էր, ինքն իրան ասելով «գիտեմ ինձ վրայ էին խօսում, բայց երևի ինձ տեսան, որ խօսքները փոխեցին»։

Ահա այդ կասկածանքով տանջվելով, Ռուստամը անդադար պտտում էր դահլիճում, ինչպէս մի վիրաւորված եղջերու անտառումը, երբ նրա ականջին հասաւ մի խօսք և նա մնաց մեխված տեղն ու տեղը։ Այս անգամ խօսողները երկու երիտասարդներ էին, որ գինու ազդեցութենից հազիւ կարողանում էին ոտի վրայ կանգնել։ Ռուստամը կանգնած էր նրանց յետևում, այնպէս որ չէր նկատվում։

—Քեզ ասում ամ հինչրիւ բողաղը, հարաս դիւրիւստ հինչրիւ խտեղ,—ասում էր խօսողներից մէկը, ձեռով ցոյց տալով իւր կոկորդը։

—Ա՛ քիչի չէ ա, ցըբ ցըբ։

—Դիւ մեռնես, ուզորթ ամ ասըմ։

—Բաս նրան թողած, հինչի դրան եկաւ։

—Փահ, արախա կորվեա, բաս հէրը։

—Ըռազի չէէր։

—Չէէ։

—Խեղճ աղջիկ, հիմիկ հով ա իմանըմ, սրբոր բըլթբլթըմ ա։

—Հըմ, խակի խօսկ կայ, չիտեսար բաս հինչպէս սրտը քինաց։

—Ցեսսայ, հինչպէս չէ, նրան ալ տեսայ։

—Ցղին։ Ամա նամարդ հինկերները լաւ փախան հա։

—Ես ալի չամ հաւատամ, քի աղջիկը։ . . .

—Բան դիւ խակի ջանիլթուն չես արալ Աղա, թող, աղա, ջանիլ աղջիկ, ջանիլ աղայ, հըմ,—ասաց երիտասարդը, գլուխը խորհրդաւոր կերպով շարժելով։

—Ասուած մի արասցէ, որ Ռուստամը իմանայ հա։

—Դալդան աթըլան թոփուդա դեագեար։ (*)

Երաժիշտները կրկին պարելու եղանակը հնչեցին և խօսողները շտապեցին դէպի պարի հանդէսը։

Ռուստամի դէմքը թղթի գոյն ստացաւ, աչքերը վառվեցին, շրթունքները կապտեցին, ծնկները թլացան և քիչ մնաց թաւալվում էր դահլիճի յատակի վրայ։

—Ինչ եմ անում, տղամարդ չեմ, ինչ է,—ասաց նա ինքն իրան, աշխատելով անտարբեր ձևանալ։

Նա բեղերը և շրթունքները կրծոտելով, մի քանի վայրկեան մնաց անշարժ։

—Չէ, էլի համբերութիւն է հարկաւոր, կարելի է սուտ է,—ասաց նա կրկին ինքն իրան,—կարելի է այս մարդիկ նրանց թըշնամիներն են։ Համբերութիւն, եօթանասուն և երկու ժամ համբերութիւն։ Տէր Աստուած, դու կարողութիւն տուր։

Այդ ասելով Ռուստամը զսպեց իրան և շտապեց դէպի հանդիսականները։

VIII

Հարսանիքի չորրորդ օրն էր և առաւօտ։ Գիւնազը և Բարխուդարը վաղուց արդէն զարթել էին քնից։ Իսկ Սմբատը միւս սենեակում դեռ ևս քնած էր։ Սովորականից դուրս այսօր նրան երկար միջոց չէին զարթեցնում քնից։ Թէ և խանութ գնալու ժամանակը արդէն անցել էր։

Բարխուդարը իւր մշտական ընկեր չիբուխը բերանում դրած,

*) Յետևից արձակվածը կրնկին կը կպչի։

երկար ծխում էր, սենեակում յետ ու առաջ քայլելով։ Գիւլնազը պատուհանի դէմ նստած, նայում էր դէպի փողոց։ Երկու ամուսինների դէմքը ևս արտայայտում էր մի ինչոր ներքին խորին անբացատրելի անհանգստութիւն։ Բարխուդարը ամեն անգամ ծխի քուլաները բերանից բաց թողնելուց յետոյ, դուրս էր թողնում կրծքից մի խոշոր հառաչանք, որից յետոյ նա մի քանի վայրկեան կանգնում էր և իւր անորոշ հայեացքը ձգում դէպի սենեակի առաստաղը։ Գիւլնազը տէպ տէպ երեսը բոլորովին կպցնում էր լուսամտի երկաթէ վանդակի փեղկերին, կարծես թէ, աչքատեսով որքան կարելի է հեռու ու հեռու նայելու։ Երբեմն Բարխուդարը մօտենում էր լուսամտին և նոյնպէս անհամբերութեամբ դէպի փողոցը նայում։

—Չի երևում,—հարցնում էր նա Գիւլնազին անդադար, այնպիսի ձայնով, որ վերջինը հազիւ լսում էր։

—Համբերիր, համբերիր, այ մարդ, ինչ է սիրտդ բերանդ ընկել...ուֆ,—խօսեց վերջապէս Գիւլնազը։ Լաւի զարմանալի մարդ ես, ինքդ ասում ես «չեմ հաւատում», էլի հենց չես դինջանում։ Եկաւ, չեկաւ մէկ չի, էլ ինչ ես ոտի ձեռի ընկել եարաբ։

—Քեզ ու ինձ համար մէկ է, բաս խալխը, բաս ինչով կրկապես խալխի բերանը։

—Ցունը քանդվի էս ագաթը դնողի, տունը քանդվի հալալ։ Ցանջվիր, չարչարվիր, աչքդ ջուր արա, թէ ինչ է, մին պոչը կարված Շըպպանիկ պիտի դայ ու քեզ աչքալուսի բերի։ Բաս մեր աչքերը, բաս մեր սիրտը, մենք չենք ճանաչում մեր երեխին։ Ո՞ւմ տանն է մեծացել նա՝ խալխինը, թէ մեր աչքի առաջ։ Չէ, պիտի Շըպպանիկը մէջ տեղ լինի, չէ, նրա մատը հենց խառն պիտի լինի։ Վա՛յ մեղ, վա՛յ մեղ։ Հերիք է մին հուշտ, մին սխալ, հերիք է մին օր բանը ուշանայ, մէկ էլ տեսար տղան կատաղեց։ Մէկ էլ տեսար տղի հոր ու մօր, բարեկամների, ազգականների լեզուները փորները ընկաւ, սառան, քարացան, կապտեցին ու հառայ զալմաղալ դցեցին։ «Ձեր տուած աղջիկը էդպէս է հա էնպէս»։ Տէր, Տէր Արարիչ Աստուած, Տէր մեղայ քո զօրութենին, դու դատիր, երկնային անեղ թագաւոր։ Դատիր, տես, մեր բաղդը, երեխու բաղդը։ Ամ ձեռումն է։

—Հերիք է, հերիք է, ինձ համբերութենից մի հանիր։ Մտիկ արա դուրս, տես գալիս է, թէ չէ։

Գիւլնազը երեսը կրկին կպցրեց պատուհանի վանդակին։

—Ոդ կոտրվի, վիզդ կոտրվի, Շըպպանիկ կնիկ, դէ եկ էլի։

—Սիրտս ասում է, որ էլի մին բան կայ, այ կնիկ, թէպէտ էս լոյս ցերեկվայ պէս պարզ իմանում եմ ու հաւատում, որ իսկի բան չըկայ։

—Համբերիր, անհամբերութիւնից մտքդ էլ սիրտդ էլ մոլորվում են։ Իզուր տեղից վատ վատ բաներ ֆիքր մի անիլ, այ մարդ, հոգի ունես տալու ահեղ դատաստանի առաջ։

—Հրմ, հոգի ունիմ։ Հոգիս, Գիւլնազ, սատանաների բաժին կլինի, թէ որ...թէ որ երկու սնաթ էլ Շըպպանիկը ուշանայ։

—Երեսիդ խաչակնքիր, մեղայ եկ Աստուծուն, չարը մտքիցդ հանիր։ Ուֆ աչքդ դուրս դայ, Շըպպանիկ։

—Մտիկ տուր, մտիկ տուր, Գիւլնազ։

Բարխուդարի խօսակցութիւնը և շարժուածքը վերին աստիճանի տխուր և յուսահատական էր։

—Ա՛խ, գալիս է,—բացականչեց յանկարծ Գիւլնազը, պատուհանից վեր թռչելով։

—Թող դայ։ Չար, թէ բարի, խայտառակութիւն, թէ պատիւ։

Գիւլնազը չտապով դուրս վազեց։

—Դիլ դիլդիլ՝ այ Չան, այ չօրօշ,—լսվեց դրսից Շըպպանիկի տուր ձայնը։

Բարխուդարը մի հառաչանք արձակեց կրծքից։

—Ներս վազ տուր, ա կնիկ, աչքդ լիսի, խահլաթս, ա կնիկ, ա մարդ, Շըպպանիկի գլխին մին թազա չալ ես չարչով, ես թոռ, ես արուրշումի քեալայազի։

Այդպէս բացականչելով և պարելով ներս վազեց Շըպպանիկը։

Բարխուդարի թթուած դէմքի վրայ մի քանի վրայ կեան փայլեց ուրախութեան մի ժպիտ այնպէս, ինչպէս երբեմն ձմերային երկնքում արեգակն է ամպերի տակից փայլում։

—Խահլաթը գլխիդ է,—բացականչեց Գիւլնազը, մի նոր և նուրբ բրդեայ չալ ձգելով Շըպպանիկի գլխին։

—Արևի լուսի պէս՝ պարզ։ Աստուծ հարաշտարակի պէս՝ սուրբ։ առա՛, դա Սանամն ա խրկալ ձեզ աչքալիսի։

Շըպպանիկը դրպանից հանեց և Գիւլնազին տուաւ մի մեծ կարմրափայլ նուռը, որ զարդարուած էր բարակ ոսկեայ թերթիկներով և վրան մի քանի մեխակներ ցցած։ Բացի դրանից նա թագուն Գիւլնազի ձեռը դրեց և մի ինչ որ չորի կտոր, որի վրայ վերջինը մի խորհրդաւոր հայեացք ձգելով, իսկոյն թաղցրեց փեշի տակ։

—Աս չալը կնկանդ խանլաթը, բաս քունը, ա մարդ,—դարձաւ Շըպպանիկը Բարխուդարին, համարձակօրէն երկու ձեռքերով բռնելով նրա օձիքից։

Բարխուդարը ձեռը կոխեց իւր գրպանը, հանեց մի հինգ մանէթանոց թղթադրամ և խփեց Շըպպանիկի ճակատին, մի խորը հառաչանք արձակելով կրծքից։ Այդ վայրկեանին, կարծես թէ, վչտացեալ հօր կրծքից վայր ընկաւ մի ահագին ժայռ և նրանիւար ու դալկացած ծերունական դէմքը փայլեց մի քաղցր ժպիտով։

—Ցեմնում ես, Բարխուդար, ես քեզ ասում էի, որ իմ երեխան հրեշտակի պէս անմեղ է,—ասաց Գիւլնազը, ուրախութենից դողալով։

—Բարխուդարը քեզանից լաւ էր իմանում, որ անմեղ է, թող մարդկանց լեզուները չորանան։ Օրէս դէն էլ ես պարզերես եմ աչխարհում,—բացականչեց Բարխուդարը և սկսեց ծխախոտի չորտերերը ափերի մէջ արորել, որ չիբուխը նորից լցնի։

—Կուժ ծախողանց Սէյրանի բաբագը ճիւր իլի, թող հիմի դիւչմանները ճաքան, արաքան մէջներան,—բղաւեց Շըպպանիկը, կրծքին երկու ձեռքերով խփելով։

—Դէհ, Շըպպանիկ, գնանք,—հրաւիրեց Գիւլնազը։

—Քինանք, քինանք, հանց աս մրնութիս քինանք, խնամիանք քեզ ան սպասում։

Գիւլնազը անցաւ միւս սենեակ, հագուստը փոխեց և Շըպպանիկի հետ շտապով գնաց Սանամանց տունը։

Բարխուդարը մնաց միայնակ։ Նա մօտեցաւ միւս սենեակի դռներին, բացեց, նայեց ներս և կրկին փակեց։ Բարխուդարը յետ դառաւ, արխալուղի թևի միջից դուրս հանեց մի բաւական երկար պարան, որը շատ սապոնված լինելուց փայլում էր։ Ցեստոյնա գդակը գլխից վերցրեց, դրաւ մի կողմ և պարանը ձգեց յատակի վրայ իւր ոտների տակ։ Նայելով աջ ու ձախ, Բարխուդարը չոքեց պարանի առաջ, երեսը դէպի արևելք, ձեռքերը խաչաձև դրաւեց կրծքին և գլուխը քիչ թեքելով դէպի աջ ուսը, աչքերը յառեց սենեակի առաստաղին։ Նա աղօթում էր։—«Ցէր ամենակարող Աստուած, Ցէր ամենակարող Աստուած, չնորհակալ եմ, հազար անգամ չնորհակալ եմ, որ դու քո կարող—զօրութիւնով ազատեցիր ինձ էս չար մարդից։ Փառք քեզ, փառք քեզ, մեծ է քո զօրութիւնը, դու չը թողիր, որ իմ մեղաւոր հոգին սատանաների բաժին լինի։ Բարիշիր, Ցէր Աստուած, բարիշիր, չար սաղայելը ինձ մոլորեցրել

էր, աչքերս սեացրել էր, ես քեզ մոռացել էի։ Երեխաս անմեղ էր, անմեղ էր, ես էլ հաւատում էի մարդումս, բայց էլի չարը ինձ մի քանի սնաթ համբերութիւնից հանեց, մոլորեցրեց։ Ումուդ եմ, ողորմած Աստուած, որ հիմայ կը բախչես մեղայ եմ գալիս, առաջիդ չոքած աղօթք եմ անում, ոտերդ լզում եմ»։

Բարխուդարը գլուխը թեքեց կրծքին և արխալուղի թևով սրբեց աչքերի արտասուքը։ Այնուհետև նա կրկին գլուխը բարձրացրեց և մի բոպէ ևս փնթփնթաց քթի տակ և գդակը ծածկելով, բարձրացաւ տեղից։ Նրա դէմքը այժմ խաղաղ և հանգիստ էր։

IX

Նորապսակների տանը հիւրերը անդէն հաւաքվել էին։ Գրանք Ռուստամի ամենամօտիկ բարեկամները և ազգականներն էին, որոնք Սանամի հրաւէրով եկել էին այսօր հարսանիքը աւարտելու կամ, ինչպէս իրանց էին ասում, «քեալլափաչախարան» կատարելու։ Զը նայելով որ առաւօտեան դեռ տամնումէկ ժամն էր, սեղանը արդէն պատրաստ էր և հիւրերը չարվել էին նրա չուրջը։ Ռուստամը այժմ ևս ոտի վրայ ծառայում էր հիւրերին։ Իսկ Սուսանը միւս սենեակումն էր, ուր ժողոված էին կանայք։

Գիւլնազը Շըպպանիկի հետ մտաւ կանանց բաժանման մէջ։ Սուսանը երեսին հաստ քող ծածկած նստած էր սենեակի մի ծայրում, հանդիսականներից բաւական հեռու։ Նրա մօտ նստած էր Սուսամբարը։ Երբ Գիւլնազը ներս մտաւ, Սուսանբարը քչփչաց Սուսանի ականջին և վերջինը իւր հագուստը ուղղելով, հանդիսաւոր կերպով ոտի կանգնեց։ Ուրախ ժպիտը երեսին, Գիւլնազը մօտեցաւ նրան և մի ջերմ համբոյր դրոշմեց իւր սիրելի աղջկայ ճակատին։

—Շանսօր իլի, շանսօր իլի, ուրախութենով ապրին, աՀին, բազմանան,—բացականչեցին հանդիսականները, գրէթէ միաբերան։

—ՇօրՕչ, չօրՕչ, գիւչմանդաՕզի քեՕռ օլսուն,*)—մէջ մտաւ Շըպպանիկը, որը իւր դերը երբէք չէր մոռանում։

Գիւնազը մի թղթադրամ խփեց Շըպպանիկի ճակատին, հանդիսականները հետևեցին նրա օրինակին։

Ներս մտաւ Ռուստամը։ Գիւլնազը դիմաւորվեց և նրա ճակա-

*) Թշնամու աչքը կուրանայ։

տին նոյնպէս համբուրեց։ Ռուստամը ամաչելով և կարմրելով թեքեց իւր գլուխը և յարգանքով համբուրեց Գիւլնազի աջ ձեռը։ Դա մի հանդիսաւոր րոպէ էր, որ անցաւ խորհրդաւոր լռութեամբ։ Շեպպանիկն էր, որ իւր սովորական երգով ընդհատեց այդ լռութիւնը։

Սկսեցին ճաշել։ Ռուստամը անցաւ տղամարդկանց բաժանման մէջ։ Այժմ նա ուրախ էր և նրա երեսին այլ ևս չէր նշմարվումային անհանգիստ մռայլութիւնը, ինչպէս հարսանիքի գիշերը, երբ նա թունաւորված սրտով չուռտու-չուռտու էր անում դահլիճում։ — «Ախ, չար լեզուներ, չար մարդիկ, ինչ բաներ էք հնարում մի անմեղ արարածի անունը կեղտոտելու համար»։ — կրկնում էր նա ինքն իրան։

Շեպպանիկի ուրախութիւնը անսահման էր։ Նա իրան համարում էր այն օրուայ հերոսուհի, որովհետև խիղճը հանգիստ էր։ Անդադար մօտենում էր նա Սանամին և ուրախ ուրախ քչփչում։ Ինչ էին խօսում նրանք, — այդ միայն իրանք գիտեն։ Սակայն Սանամի յարաբերութեան մէջ նշմարվում էր խորին շնորհակալութիւն դէպի Շեպպանիկը։ Հանդիսաւոր էր նոյնպէս և Գիւլնազը։ Վերջին ժամանակ նրա տխրութեան սաւանով քօղարկված երեսին այսօր խաղում էր մի քաղցր ժպիտ։ Նա մի առանձին քնքշութեամբ էր նայում թէ Սուսանին և թէ հանդիսականներին։

Բայց ամենից ուրախ, գոնէ ըստ երևոյթին, էր Սուսամբարը։ Սա անընդհատ ծիծաղում էր, երբեմն և ծափահարում, զանազան սրախօսութիւններ անում և հանդիսականներից սրան ու նրան ծաղրում։ Իսկ մանաւանդ նա ակնարկում էր Շեպպանիկին, որ չէր կարողանում, ինչպէս ինքն էր ասում «ըստ տածի օֆտեան-կնալ»։

— Շեպպանիկը որ կայ, մի մեռել լուանող ժամհար է, — ասում էր Սուսամբարը, — ինչ մեռել, որ ասէք, լողացնում է։ Մեռելը արքայութիւն կը գնայ, թէ դժոխք, այդ նրա գործը չէ, միայն թէ մեռելահարը ստանայ։ Չէ՞ Շեպպանիկ։

— Իմ լվացած մեռելներս չիմ արքայութիւն ան քինամ, — պատասխանեց Շեպպանիկը։

— Ինչպէս չէ, հըմ, հիմայ այնքան աներեսն ես, որ կասես թէ Սուսամբարին էլ արքայութիւն ես ուղարկել։

— Հանց մէջումն ես նստած քի, ա բախտավոր։ Հինչ ա իլալ,

մարդդ-ալ փոդ, ալ դովլաթ, ալ տուն, ալ տեղ չիր ու չնորք, հինչն ա պակաս եարաբ։

— Մարդս հարուստ է, բայց մի կտոր բան կայ, որ չի կարողանում առնել։ Դրան ինչ կասես։

— Յարաբ նա հինչ բան ա։

— Այ, այստեղ որ կայ։

Սուսամբարը այդ ասելով, աջ ձեռը դրաւ իւր ձախ կրծքին։

— Սրբաբդ։

— Հա, մի կտոր միա, որ մարդս չի կարողանում առնել ինձանից։

— Հալբաթ չատ թանդ ես ծախում։

— Էժան, բայց մարդս չատ սիմիզ (մլատ) մարդ է։ Դա օրական տասն անգամ բարկանալուց և ամեն առաւօտ քացախած երեսը վրէս ծռելուց ասել ոչինչ չի տալիս։ Շատ էժան չի, Շեպպանիկ։ Քո խմանալով, քանիսին ուղարկած կը լինես այդ արքայութիւնը։

Սուսամբարի այդ խօսքը հանդիսականների մէջ ձգեց մի վիրաբերի ազմուկ։ Այս ու այն կողմից սկսեցին ծաղրել, ծիծաղել, բարկանալ և յանդիմանել Սուսամբարին։

— Նոր նոր հաւեր ան դուրս եկաք, արկաթի ձուեր ան ածում, — ասաց մէկը։

— Հով ա տեսալ հինչրիս օրս, որ կնիկը մարդի վրայ ուրիշների մօտ բամբասի, — աւելացրեց մի ուրիշը։

— Ախար դէ կարդացած ա՞ բան չնորքը չի նշանց տայ, վիշտ իրեսիդ մեռնենք թափվի հալա։ — մէջ մտաւ երրորդը, քիթ ու պռունգը մի կողմ շուռ տալով։

Դա Սանամի տալոջ աղջիկն էր։ մի բաւական չափահաս կին։

— Ես դրուստն եմ ասում, — շարունակեց Սուսամբարը։ Դուք ձեր ցաւերը ինչքան ուզում էք թագցրէք ձեր կրծքի տակ, որ այն տեղ սիրտներդ մրջմրջ ուտի հա ուտի ու փչացնի ձեզ։ Դու էլ խնամի, — դարձաւ նա Սանամի տալոջ աղջկան, — դու էլ Շեպպանիկի լուացած մեռելներից ես ասիր։ տեսնենք, օրական քանի անգամ է Ազրաիլը մէջքիդ վրայ ճաչ ուտում։ Մի վախիր, ես չատ լաւ եմ իմանում, զլխիդ մազերի չափ մարմնիդ վրայ ճիպոտի կապոյտ գծեր կան։ Բայց դու հէնց էլի դրան ու նրան ասիր — չէ։ Ումը որ հաւատացնես, ինձ իսմ չես կարող։

—Ես իմ մարդիս ապրանքն ամ, դուն ամ, նա իմ գլխիս տէրն ա, հինչ որ ուզում ա, անում ա, քեզ հինչ գործ ա հանում։ Թէ որ նա ինձ թագում ալ ա, սիրիլան ա թագում։

—Խօսք չը կայ, խօսք չը կայ, սիրելուցն է թակում, բաս։ Հըմ, թքեմ այն սէրի վրայ, որ ճպոտի կծու լեզվովն է խօսում։ տար, տար այդ սէրը քեզ լինի ոտով ու գլխով, խնամի ջան։ Կնոջ ապրուստը, օրը ինչ է, որ իւր մարդու աչքում մին ձիու պատիւ էլ չունի։ Մարդ ձիուն օրական այնքան է թումարում, խոշրէշ անում, ճակատից ու աչքերից պաչում, ինչքան որ ճիպոտն է քո մէջքդ պաչում։ Թաղցրու, թաղցրու ինչքան ուզում ես, էլի ճութը դրսումն է։

—Ը՛մ, խրատողիդ իրեսին կպչես հալա։ ախը՛ր զարտալթար կուլսից հինչ իր սորվիլիս։ Առա էէ։

Այդ ասելով Սանամի տալոչ աղջիկը բարկացած աջ ձեռի հինգ մատերը չուցց և Սուսամբարին ճանդ արաւ։ Ցայտնի չէր, ինչպէս կը վերջանար այդ վիճաբանութիւնը, դուցէ կռիւ դառնար, եթէ Շըպպանիկը չընդհատէր։

—Լաւ ա, ա կնանիք, լիզիմներդ փորներդ քաշեցէք, ձեզի չան կանչալ, քի մարդի ուրախութիւնը հարամ անէք,—ասաց Շըպպանիկը և դահիրան վերցնելով, սկսեց ածել ու երգել։ Սուսամբարը այժմ թեքվեց դէպի Սուսանի ականջը և սկսեց քշփշալ։

—Հիմայ դրանք կասեն, թէ դու էլ բախտաւոր կնիկ ես։ Չեն իմանում, որ սիրող ու հոգիդ նրա մօտն է, մարմինդ էլ տուել են Ռուստամին, որ չարչարվես ու տանջվես։

—Խոցոտված սրտիս աղ մի՛ շաղ տալ, Սուսամբար։

—Սիրտս կսկծալուց եմ ասում, մի՛ վախիր։ Էհ, հինչ պիտի արած, ճարդ կտրված պիտի վիզդ ծռես ու տանես։ ինչոր ճակատիդ գրած է, խօ Աստուծոյ հետ չես կարող կռիւ անել։

—Ուզում ես դրուստն ասեմ, Սուսամբար։

—Ասիր։

—Ես էլ առաջվայ պէս չեմ տանջվում։

—Բաս, ճարդ ինչ կը սովրես էլի։

—Չեմ սովրել, բայց որ ասում եմ, չեմ տանջվում, ինձ համար չեմ ասում, իմ բանը պրծած է։

—Բաս ում համար ես ուրախ։

—Հոգս ծնողներիս դրութիւնն էր, հինց որ նրանց ազատեցի, էլ կարծես թէ ես ցաւ չունիմ։ Ցանում ես, մայրս այսօր ինչ-

պէս ուրախ է, տես, հինց նրա ուրախ լինելն է ինձ հանգստացնում։ Խեղճ կնիկ, մի տարի էր, որ քո հալված ու պչկած երեսը ծիծաղ չէր տեսնում։

Այդ խօսքերը արտասանելու միջոցին Սուսանի աչքերից կրկին դուրս թափվեցին արտասուքի մի քանի կաթիլներ և թրջեցին նրա այտերը։ Նա հանեց իւր արխալուղի գրպանից մետաքսեայ թաշկինակը և սրբեց երեսը ու աչքերը։ Թէպէտ նա արտասվում էր, բայց չէր հեկեկում և նրա մաշված կուրծքը չէր բարձրանում ու ցածանում, ինչպէս հարսանիքի երեկոյին։

—Հերիք է, Սուսան, արտասուքիդ կաթիլները տեղերի պէս ծակոտում են կտրված սիրտս։ Օրէս դէն լացդ անօգուտ է, հիմայ զօրով քեզ համար պիտի ուրախութիւն ստեղծեմ։

—Սուսամբար, մի բան խնդրեմ։

—Հրամայիր։

—Շարաթը մի քանի անգամ կը գնաս մեր տուն, որ մօրս ժամանակը ուրախ անց կենայ։

—Աչքիս վրայ։

—Հօրս մասին էլ տեղեկութիւններ կը բերես ինձ։

—Լաւ։

—Մի բան էլ եմ ուզում ասել, բայց քաշվում եմ։

—Ինձ հետ էլ ես նազ ու բազ անում, Սուսան։

—Լաւ, ասեմ։ Հարսանիքի գիշեր, որ ես ուշաթափվեցի, Սմբատը վազ է տալիս մի մօտիկ գինետուն ինձ համար ջուր բերելու։ Այնտեղ նա պատահում է Սկյրանին, կռվում են ու Սմբատը թակում է Սկյրանին։ Այդ բանը երեկ ինքը, Սմբատը, պատմեց ինձ։ Սուսամբար, եթէ ինձ սիրում ես, հինց այսօր գնա նրանց տուն ու Սկյրանի մասին ինձ համար տեղեկութիւն բեր։ Սկյրանին թագուն տես, ինձանից բարեւիր և ասիր, որ ես էլի առաջվայ Սուսանն եմ։ Աչխատիր սիրտ տալ, կարելի է մոռանայ ինձ և մի կերպ ճանապարհի կանգնի։ Թէպէտ խելքս չի կարում, որ նա փոխվի։ Ասիր թող ինձ ների, որ ես այսքան չարչարեցի իրան։ Իմացար։ Այդ իմ վերջին խնդիրն է, Սուսամբար։

Սուսանը թէ և չընչելով, բայց իւր խօսքերը արտասանելիս ծանր և անյոդոդոդ եղանակով, ամենայն մի բառը առանձին չեչտելով և երբեմն խորը հառաչելով։ Ի նա թէպէտ արտաքուստ խաղաղ էր, սակայն նրա աչքերի մէջ երևում էր խորին յուսահատութիւն։ Թաշկինակը տարաւ Սուսանը դէպի աչքերը և սրբեց տա-

մուկ թերթերումնքները։ Հանդիսականները չէին նկատում թէ Սուսանի երեսքողի տակ ինչ է կատարվում։ Նրանք զրաղուած էին ճաչելով։

—Գէհ, Սուսամբար էլ ուրիշ խօսք չունի,—չարունակեց Սուսանը,—ինչոր խնդրեցի, կը կատարեա, ազաչում եմ։ Հիմայ մի քիչ կերակուր մօտ բեր, որ մօրս մօտ ուտեմ։

Սուսամբարը վեր կացաւ տեղից և սանտուրին հրամայեց մի սարելի փլաս բերելու։ Սուսանը քողի տակ սկսեց ճաչել։

Վերջապէս ճաչը աւարտվեց։ Հանդիսականները վերջին անգամ չնորհաւորեցին նորապսակներին և հարիւր տեսակ աղօթքներով մաղթեցին նրանց բախտաւորութիւն ու ցրվեցին իրանց աղները։

Մեղրամիսը անցաւ և Ռուսամը կրկին Սանամին թողնելով դառն արտասուքի մէջ, ճանապարհ ընկաւ Թէյմուր-խան-Շուրայ իւր առևտրական գործերով։

X

Զմեռն էր, հիւսիսային զօրեղ քամին կատաղութեամբ ձիւնի խոշոր ու չորթ քուլաները սրահից հաւաքելով, զարնում էր Հայրապետանց տան դռներին ու պատուհաններին։ Երեկոյ էր։ Մարիամ բաջին մինչև մէջքը քրսինի տակը խրված, առջևը մի սկուտեղ դրած, բրինձ էր մաքրում։ Նա ընթրիքի համար պիտի չլաւ պատրաստէր, որ դեռ առաւօտեան բազար գնալիս պատուիրել էր Հայրապետը։ Չը նայելով, որ օրը բաւական մթնել էր, բայց Մարիամ բաջին ճրագը վառել չէր։ Նա ուզում էր, որ բրինձը ընարի, վերջացնի ու յետոյ տեղից վեր կենայ։ Սենեակում բացի նրանից ոչ ոք չը կար։ Դրան ճեղքերից ձիւնի կարկանման հատիկները ներս սրընթացով, կուտվում էին կիսամաչ կապերտներով և փոխաթներով ծածկված յատակի վրայ։ Երբեմն երբեմն քամին այնպէս սատականում էր, որ վզզալով, կարծես թէ, ուզում էր սենեակի դռները դուրս հանել կրունկից։

Վերջին ամիսները Մարիամ բաջին բաւական փոխվել էր։ Ներութիւնը այդ կարճ ժամանակում նրան միանգամայն յաղթել էր։ Նրա նիհար բազուկները հալվել էին ու կպել կողքերին, երեսի գանգատաւոր կաչին զրժզժվել էր ու հաւաքվել աչքերի տակ, ինչերի չուրջը և ծնօտի վրայ։ Նրա արիւնաքամ չրթունքները իրարու կպչելով, փակում էին առջևի ատամներից զուրկ բերանը։

Մի տարուց աւելի էր, որ Մարիամ բաջին դադարել էր գլուխը հինայով ներկելուց։ Այդ պատճառով նրա գլխի մազերը այժմ երկու գոյն ունէին—արմատից սկսած մի մատնաչափ՝ ճերմակ, իսկ այդ տեղից մինչև ծայրը՝ կարմիր։ Այդ մի առանձին մրուայլութիւն էր տալիս նրա դէմքին։ Թէև Մարիամ բաջին զրազված էր բրինձ մաքրելով և զգուշութեամբ չալթուկի հատիկները ընտրելով, զարնում էր քրսինի վրայ, բայց մտքով նա խրատուզված էր ուրիշ բաների մէջ։ Ինչ էր մտածում խեղճ կինը, ինչ մի ծանր միտք էր զրաղեցնում նրա ծերացած ուղեղը։ Նա մտածում էր իւր միակ զաւակի մասին, մտածում էր և նրա սիրտը կսկծում, որովհետև երկար մտածողութենից յետոյ, ոչ մի ուրախալի եզրակացութեան չէր հասնում։

—Լաւ դրուստ վեց չարաթ է, որ նա գլուխ է վեր առել ու գնացել զարիբութիւն,—ասում էր ինքն իրան Մարիամ բաջին հառաչելով։—Ո՞րտեղ է գնացել, ինչ բանի է գնացել—ոչ ես գիտեմ, ոչ Հայրապետը, ոչ էլ մի ուրիշը։ Սէյրան, Սէյրան, թարթափիլ անեն բազդաւոր մէրերը, նրանք էլ ազայ ունեն զարիբ տեղերում, ես էլ ասում եմ, որ ունիմ։ Լէյ, կեանքս մաշվել է, մի մազ դառել, էսօր էգուց մին հուշտի է բանդ, որ նա էլ կորվի։ Երկնային թագաւոր, արևս մայր է մտնում, էլի դու ինձ չես խնայում։ Ինչ ասեմ, ինչ անեմ, էլի փառք քո զօրութենին, էլի թող քո կամքը լինի։

Մարիամ բաջին մի հայեացք ձգեց սենեակի առաստաղին և երեսին խաչակնքեց։ Յետոյ նա մի քիչ իրանից հեռացրեց բրինձի սկուտեղը, ձեռքերը ծալեց, դրաւ քրսինի ծայրում և գլուխը դրաւ կոնների վրայ։ Անցաւ մի բոպէ։ Մարիամ բաջին գլուխը բարձրացրեց, սկուտեղը առաջ քաշեց և դարձեալ սկսեց ինքն իրան խօսել։

—Ցերեկը ծառից, մազը մարդս գլխից առանց քս հրամանի

չի ընկնում։ Տէր Աստուած։ ինչ։ որ լինում է։ քո կամքովն է լինում։ օրհնեալ լինիս դու և օրհնեալ լինի քո կամքը։ Ամենքին էլ բախտաւոր չինեցիր։ ամենքի բանն էլ դրատեցիր։ ինչուս եարաբ։ ես ինչ մեղաւոր էի։ որ դու ինձ էս օրին հասցրիր։ Ինչու համար։ եարաբ Աստուած իմ ազին հեռացրիր ինձանից։ զցեցիր չարերը։ քամրազդացրիր։ Ախար որտեղ է նա։ ինչ գործի է։ Ինքը ասաց։ թէ մի ազի հետ ընկերացել է ու նրա հետ գնում է Ղուրայ։ որ լագդու չարեր առնի ու բերի էստեղ ծախելու։ Ի՞նչով է առնելու։ Հայրապետը փող չի տուել նրան։ ինքն էլ իսմ տափ դարդակ էր։ մին ու դրուշ էլ մօտը չունէր։ Ինչքան ֆիքր եմ անում։ մին բան չեմ հասկանում։ Ինքը ասում էր։ որ Ղուրայ է գընում։ հիմայ մէկը ասում է։ Դերբենդումն է։ մէսը թէ Շուրումն է։ մի ուրիշը թէ Պեարովսկումն է։ էլ չը գիտեմ ինչ։ Եարաբ ումից կարող եմ մին դրուստ խաբար իմանալ։ ով կասի ինձ։ Հայրապետին խօսացնել չի լինում։ Սէյրանի անունը տալիս նրա ջինները հանաքվում են։ Էհ։ եարաղան Աստուած։ էլի դու։ էլի քո փեշիցն եմ բռնում։ դու հանը նահանին չես տալ։ իմ երեխաս մեղաւոր չէր։ Նրանք փչացրին։ խելքից հանեցին։ Սարարի տունը բարբաղ լինի։ իրան գլխին տեսնեմ։ հա։ բարբաղ լինի սարարի տուն ու տեղը։

Եւ Մարիամ բաջին վերջին խօսքերը արտասանելու ժամանակ գլուխը կրկին բարձրացրեց։ նայեց առաստաղին և աջ ձեռով մի քանի անգամ կրծքին զարկեց։ Այդ բոլէին նրա աչքերը։ դէմքը և ում հասարակ բոլոր շարժուածքը լցված էին խորին արամութեամբ։ Զարմանալի բան։ Քանի որ Սէյրանը Շամախումն էր։ քանի որ նա Մարիամ բաջու աչքի առաջն էր։ Մարիամ բաջին սակաւ անգամ էր դժբաղդութեան յանցանքը ուրիշների վրայ ձգում։ Նա մեղադրում էր իւր որդուն։ սրան էր համարում բոլոր անցքերի գլխաւոր պատճառը։ Իսկ եթէ պատահում էր։ որ Մարիամ բաջին մի ուրիշին մեղադրէր։ այդ լինում է այն ժամանակ։ երբ Սէյրանին հանդիպած էր լինում մի նոր դժբաղդութիւն։ ինչպէս այն առաւօտ։ երբ Սէյրանը գիշերով գինետունը թակվել էր։ Բայց այժմ։ երբ Սէյրանը օտարութեան մէջ էր։ այժմ Մարիամ բաջին իւր որդուն անմեղ էր համարում և գրէթէ անպայման անմեղ։ Այժմ նա հաստատած էր։ որ Սէյրանը անբախտացել է ոչ թէ իւր «գժութիւնների»։ այլ ուրիշների պատճառով։

—Ուֆ։ Բարխուդար։—շարունակեց Մարիամ բաջին։ կրծքին

խփելով—Բարխուդար։ էս իրիկվայ ժամաժամքին դուշ եմ թակում ու Աստուած կանչում։ որ նա քո հաչին դայ։ Հա։ Բարխուդար։ կնիկդ օրս ընկնի։ Հա։ տափը փուչ դառնայ։ դու ոտաբաց լինիս։ ինչտեղ ում կոխես։ քեզ ծակծակի։ Հա։ կոկծալի հառայդ։ դաղ ու բիդադդ։ ամեն ալլահդ երկինք բարձրանայ։ բայց Աստծու ականջին չը հասնի։ Դու։ դու։ քեաֆթառ։ էս օրին հասցրիր բալիս։ Հրմ։ հիմայ ինչ ցաւ է կալել քեզ։ Խակի ինչ ցաւ։ Հիմայ բախտաւոր աներ ես դառել։ փեսայ ունես։ կնիկդ պապար-պապար է անում առաջիդ։ աղջիկդ զառ ու զառբօֆի։ ոսկի ու արծաթի մէջ է ապրում։ Աղջկաղ մին ձեռը եղում։ մէսը՝ մեղրումն է մնացել։ էսօր էգուց էլ մինը կը ցնդի։ էլ բանդրդ լաի կդրսավի։

Աւարտելով այդ մենախօսութիւնը։ Մարիամ բաջին կրկին լռեց և խորասուզվեց մտածողութեան մէջ։ Այդ ժամանակ քամին աւելի սաստկացաւ։ պատուհանի ապակիները սկսեցին շարժվել իրանց տեղերում։ Դռների մի թայը բացվեց և կրկին սաստկութեամբ խփվեց։ ներս փչելով ձիւնի ալիքները։

—Ուֆ։ աշխարհը քարուքանդ իլաւ։ Երկնքի փարդան ճղվել է։ Աստծու բարկութիւնը գլխներիս է թափվում։ Ինչ տեղ մնաց էս մարդը Եարաբ։ Կիրակի գիշեր է։ երևի։ ժամ է գնացել աղօթք անելու։ Եարաբ։ ում համար ես աղօթք անում։ Անիրգմտանք մարդ։ սիրտդ խաչիսաչ հարելու քարի պէս պինդացել է ու սև սեւացել։ և չէ ցաւում մինիկ երեխիդ համար։

Մարիամ բաջին մի քանի վայրկեան ես լռեց։

—Երեկ երեկոյեան Աուսանդարը էստեղ էր։ Լաւ կնիկ է։ խեղճը ինքն էլ լաց իլաւ։ Նա ինձ սիրտ էր տալիս։ Բայց ինչքան հարցրի։ նա էլ մի դրուստ խաբար չը կարողացաւ ասել Սէյրանի մասին։ Ինչ կը պատահի։ Եարաբ։ թէ որ զորդ Սէյրանս Շուրումն է։ Հակառակի պէս։ էն գիւլլախորով Ռուստամն էլ է Շուրումը։ Եարաբ։ Սէյրանս ինչ կասի նրան։ էն մեռածն էլ։ թիկնամէջը տափը կպածն էլ ինչ կանի։ Սէյրանս տաքարիւն տղայ։ էն օխտամիչն էլ հուրսաթափ Ազրահիլի սոնկ է։ ով է իմանում։ զարիր քաղաքում երեխիս գլխին ինչ օյին կը բերի։

Մարիամ բաջին բրինձը վերջացրեց։ սկուտեղը մի փոքր իրանից հեռացրեց և քրսնի երեսը ձեռով մաքրեց բրնձի հատիկներից։ Ցեռոյ նա մի ձեռը սենեակի յատակին։ միւսը քրսնի ծայրին յենելով։ ուզում էր բարձրանալ։ երբ գուռը յանկարծ բացվեց

և զգուշութեամբ ներս մտաւ ձիւնով ապիտացկած չարշաֆի մէջ փաթաթված մի բարձրահասակ կին։

—Ողորմի Աստուած։

Մարիամ բաջին զարմացած յետ նայեց և կրկին նստեց տեղը։ Ներս մտնողը Գիւլնազն էր։ Մի քանի վայրկեան երկու բարեկամները նայեցին իրարու, թէ և մութը թոյլ չէր տալիս պարզ որոշելու իրարու դէմքը։ Մարիամ բաջին ճանաչեց Գիւլնազին։

—Ողորմի Աստուած,—կրկնեց Գիւլնազը չարշաֆը դմփից հանեց և ձիւնը թափ տուաւ։

Մարիամ բաջին մի զարմացական հայեացքով նայեց նրան ոտից գլուխ և կապիտ ձայնով պատասխանեց։

—Ոչ ողորմի ծնողացդ։

Այդ ասելով նա բրնձի սկուտեղը առաջ քաշեց և ինքն իրան ամամաց։ «Եարաբ որ քամին է անեւևսին էս կողմ փչել։»

—Մի զարմանար, Մարիամ բաջի, քայլդ եկել է քեզանից հալ-օվնալ իմանալու,—շարունակեց Գիւլնազը, ուշադրութիւն չը դարձնելով Մարիամ բաջու կապիտ պատասխանին։ Յետոյ նա չարշաֆը մի կողմ ձգեց և առանց հրաւէրի իւր հարևանի կողմից նստեց քրոջի ծայրին։

—Տափին դիպչեն եարաբ քայր ունեցողները։ Ես քայր չունեմ,—ասաց Մարիամ բաջին, երեսը Գիւլնազից չուռ տալով և մազերը ուղղելով։

—Մի հաւատացիր, վեր կաց, ճրագը վառիր, որ երեսդ տեսնեմ, քանի ժամանակ է կարօտել եմ։

—Դուրս եկ, բանիդ գնա, ես բայզուշ եմ, սիրում եմ մէն—մէնակ խաւար տեղում նստել։ Խաւարած սրտիս, սնացած օրիս ճրագի լոյսից ինչ ճար։ Թող ճրագը ջնջեմ—ջնջեմ վառի նա, որի սիրան էլ ճրագի պէս վառ է, իմը չտուց է խաւարվել։

—Մարիամ բաջի, դու լմնիս մնիկ Սկէրանիդ արեր, կծված մի խօսիր։ Լսիր, մանիկ տուր ինձ, տես իմ սիրտը ուրախ է, յետոյ ինձ նախատիր։

—Եարաբ աղղ է պակաս, թէ մաղղ։ Ինչ կայ, եկել ես զվեխ, չեմ իմանում, մի տարուց յետոյ ինչպէս իլաս, որ միտդ ընկանք։

—Ոչ ապս է պակաս, ոչ մազաս, ինձ պակաս է քոբարեկամութիւնը,—պատասխանեց Գիւլնազը, աւելի ու աւելի մեղմ եղանակով։

—Աստծուն է յայտնի, որ էս մի քամբախտ տարին ինձ ինչ է նստել։—Մարիամ բաջի, ասելը աւելորդ է, ոտանց քեզ ոչ կերածս եմ խմացել, ոչ խմածս։ Քանդ ապա լեզի է իլել, գիշեր ու ցերեկս ախ ու վախով եմ անցկացրել։

—Խմացանք, կարճ կարիր։

—Ես եկել եմ, Մարիամ բաջի, ազաչելու քեզ, որ դու նամլաթ տաս չար սատանին ու ինձ հետ հաշտվես։

—Ինչ, վազ կը տամ հրէս։

—Իմանում եմ, դու չատնեղացած ես, Մարիամ բաջի, բայց...

—Ձեռ քաշիր, Աստուած սիրես, ձեռ քաշիր։ Ձեմ իմանում, էլ Մարիամի ինչն է մնացել, որ դու նրա հետ բարեկամութիւն անես։ Գնա, մարդ աղջկանդ ծոցը ու բախտաւոր ապրիր, ինչ գործ ունես մեզ պէս Աստծու ու մարդու աչքից ընկածների հետ։

—Դուշմանս չը լինի էնպէս բախտաւոր, ինչպէս որ իմ աղջիկն է։ Հըմ, ցաւերս չես իմանում։ Աղջիկս օրից օր մոմի պէս հալվում է, վախս նա է, որ շուտով ձեռից դուրս գայ։

—Մի վախիր, չի մոնիլ աղջիկդ, հալա շատ ու շատ կապրի, տիզ կը լինի ու պատին կը կպչի,—պատասխանեց Մարիամ բաջին դառն հեգնութեամբ։—Կարելի է նշանածի ֆիքրն է անում, դրել տուր, որ գայ, աղջկդ քէֆը կը բացվի,—աւելացրեց նա արհամարհական եղանակով։

—Հերիք է, Մարիամ բաջի, էդ խօսքերդդ հէնց կասես, որ էրված սրտիս աղ ես շաղ տալիս։ Խնայիր ինձ, ես իմանում եմ, որ դու կսկծալուց ես էդպէս խօսում, բայց մեր օվնան էլ իմացիր։

Գիւլնազը այդ խօսքերը արտասանեց մի այնպիսի դառն և խղճալի ձայնով, նա մի այնպիսի վշտալի հառաչանք արձակեց, որ Մարիամ բաջու խիղճը մի վայրկեան վառվեց։

Մարիամ բաջին ճրագը վառեց և մէջ տեղ դրաւ։ Մոմի աղօտ լոյսը լուսաւորեց Գիւլնազի սկսրացած երեսը, սպրտնած այտերը, ցրտից կապտած շրթունքները և նիհարութիւնից աւելի ներս թաղված աչքերը։ Մարիամ բաջին մի քանի վայրկեան նայեց նրա երեսին, լաւ ու մունջ վերցրեց բրնձի սկուտեղը և գնաց խոհանոց։ Շատ չը քաշեց և նա կրկին վերադառնալով, նստեց իւր առաջվայ տեղը։

—Երեք օր է Սուսանս ինձ տանջում էր իւր աղաչանք ու

պաղատանքով — սկսեց դարձեալ Գիւլնազը — ինդրում էր, որ քեզ մօտ դամ։ Ղորդը ասեմ, Մարիամ բաջի, երեսս չէր պատում քաշվում էի։ Երեխաս ասում է, թող բախշի լինի Մարիամ բաջին, որ ես նրան էդքան չարչարանք եմ տուել։ Էհ, չեմ իմանում, որ ինչ երեսով պիտի Աստծու առաջ դուրս գամ։ Ցեսնում ես, Մարիամ բաջի, հիմիկվանից էն կեանքի համար է ֆիքր անում երեխաս, այդ բախտաւոր լինել է։

— Էրված սրտիս աղ մխիթար։ Գնա, էդ խօսքերը ասիր էն մարդուն, որի սիրտը փիհ է կոխած, իմը չառաց է հալվել։ Ես ինչ կարող եմ անել աղջկադ համար։

— Մարիամ բաջի, դու շատ բան կարող ես անել երեխիս համար։ Հէնց որ նրա աչքը ընկնի աչքիդ, հէնց որ դու առաջվայ պէս նրա երեսին մի ուրախ ծիծաղեցիր, իմացիր, որ վարդի պէս կը բացվի ու ծաի պէս փարվող կանի։ Երեք օր է, որ ինքը հէնց քեզ վրայ է խօսում, քեզ է ցանկանում տեսնել։

— Ասիլ։

— Ասիլ, որ նահլաթ տաս չար սատանին, չարչով դգես ու ինձ հետ միասին . . .

— Նրա զուլումին վաղ տամ, հա։ Լաւ, աչքիս վրայ, հրէս էս սահթիս, ըմ ամաչես վարսիցդ։ ամաչես — ասեց Մարիամ բաջին կէս հեգնօրէն և կէս բարկացած։

— Դու լինես Սէյրանիդ արեը, երեխիս մի ոպանիր։

— Ինչ ես դատարկ դուրս տալիս։ Ես իսօ երեխիդ Ազրահիլը չեմ։ վայ, կրակ-ալօվի մէջ ընկայ էլի։ Տէր Աստուած — բացականչեց Մարիամ բաջին։

— Դու ու քո Աստուածը։ Մարիամ բաջի, հէնց մին սնոթով գնանք։

— Զեռ քաշիր, դու լինես էս ժամաժամքը։

— Օրհնեալ լինի քո ողորմութիւնը, Աստուած — բացագանչեց Գիւլնազը, մի աղերսող հայեացք ձգելով Մարիամ բաջու երեսին։

Այդ ժամանակ դռները կրկին բացվեցին և ներս մտաւ Հայրապետը ձիւնի մէջ կորած։

— Բարի երեկոյ, ողորմի Աստուած — ասաց նա, Գիւլնազին չը նկատելով և փափաղը գլխից հանելով, որ ձիւնը թափ տայ։

Գիւլնազը չալը քաշեց բերանին, վերկացաւ և յարգանքով գլուխ տուաւ Հայրապետին։

— Ողորմի ծնողացդ — պատասխանեց Մարիամ բաջին և նոյնպէս կանգնեց ոտի։

Հայրապետը աչքերը կուչ բերելով նայեց Գիւլնազին։

— Բարով, ա կնիկ, լաւ քեզ տեսնողին — ասաց նա մի այնպէսի բարեկամական եղանակով, որ կարծես, ոչինչ չէր անցել նրանց միջովը։

Գիւլնազը գլուխը չարժեց ի նշան շնորհակալութեան։

— Նստիր, նստիր, տեսնենք։ Էհ, փառք քեզ Աստուած։ Քէչան դիւնա-դիւն չաթմազ, ջաղատն դիւն դիւնա։ (Անցած օրին օր չի հասնի, եթէ օրերը իրարու կապես)։

— Հրամ էդ որ Աստուց է, որ մեզ միասի ես գցել։ Գիւլնազ խանում, հարցրեց նա, նստելով քրսոնի կողքին և Գիւլնազին նոյնպէս հրաւիրելով, որ նստի։

— Հրամ ասիր, տեսնենք, ինչպէս է իլեը որ մեզ միասի ես գցել — կրկնեց Հայրապետը։

— Մենք ձեզ իսկի մաքներիցս չենք հանել, որ մէկ էլ նորից միա գցենք — համարձակվեց չչնչալ Գիւլնազը։

Յետոյ նա չալը քաշեց երեսին և մի ծնկան վրայ նստեց քրսոնի միւս անկիւնում։

— Բաս էդպէս — ասաց Հայրապետը և նա արխալուղի գրպանից հանեց թամբաքուի քիսան, գօտիից դուրս քաշելով չիբուխը, որ լցնի։

— Օրհնեալ լինի Աստուած։ Գիւլնազ ջան, անցաւ գնաց մեր առաջվայ բարեկամութիւնը, այ հայ, հայ։ Հիմայ էլ որ միաս է ընկնում, ծուխը քթիցս է դուրս գալիս։

— Արիսային կայ, եկել է, որ բարեկամութիւն հաստատի նորից։ Չէ, էլ անցածը անցաւ, կտրված շուշան սաղացնել չի լինի — մէջ մտաւ Մարիամ բաջին։

— Ղորդ ես ասում, Մարիամ բայց էլի մարդու սրտին հովութիւն է ժամանակ-ժամանակ հին բարեկամներին տեսնելը։ Ինչ անեմ, թուրքը անօրէն է, բայց խօսքը օրինաւոր, ասում է «ախանն բիր օղլի, օղա քիւս օղլի»։ (Հօրը միակ տղայ, ամէն էլ փուչ)։ Սէյրանը իրան էլ փչացրեց, ձեր անունն էլ սաղ քաղաքով չով արաւ։ Իզուր տեղը, մեզ էլ խօ տեսնում ես, Գիւլնազ, ինչ օրը գցեց։

— Օղուլը իսկի մեղաւոր չի։ Աստուած սաբաբի գլխին քար դցի հալա։

—Քո բանը չի, Մարիամ, դու լեզուդ կծած պահիր։ Հերիք է, հերիք է, ինչքան ինձ փչացրիր, այ կնիկ։

—Մարիամ բաջին զորդ է ասում,—մեջ մտաւ Գիւլնազը,—մեղաւորը Սէյրանը չի, մենք ենք։ Էհ դէ անցած բանէ, մոռացէք, բախշեցէք։

—Ոչ դուք էք մեղաւոր, ոչ էլ մենք։ Աստուած Հոպէսէր աւզում ու Հոպէս էլ արաւ, հիմայ բանը բանից անցել է, բախտաւոր լինէք։ Թող Սուսանդ գարնան ծառի պէս ծաղկի, կանաչի։

—Շնորհակալ եմ, բարով Սէյրանիդ էլ պահենք։ Էգուց Մարիամ բաջուն թող, որ հետս տանեմ աղջկաս մօտ։

—Աչքիս վրայ, ուզում ես, ես էլ կը գամ,—համաձայնվեց Հայրապետը։

—Ը՛հ, ասորդի ազայ ասորդ,—բացականչեց Մարիամ բաջին, աչքերը չռելով և մի սպառնողական հայեացք ձգելով իւր ամուսնու վրայ։

—Արիւնս մի պզտարիւ քեզ ասում եմ, այ կնիկ, թէ չէ, նահլաթ չար սատանին հա։—Գիւլնազ ջան, ինձանից բարեւիր Բարխուդարին ու ասիր, որ ես էլի նրան իմ բարեկամ եմ համարում։

—Սմբատիս արեւը վկայ, որ հէնց ինքն էլ ձեր ֆէքրն է քաշում։ Վերջին ժամանակները խեղճ մարդը ձեր հոգսից տիզ է դառել ու պատին կպել, թէպէտ զորդ է ինքը խօսք չի ասում։

—Իմանում եմ, իմանում եմ, ինչպէս չէ, օհօ Բարխուդարին ես լաւ եմ ճանաչում, նրա սիրտը չատ բարի է։ Գիտնում ես Մարիամ կնիկ, ես քեզ ասում էի, որ նա կակուղ մարդ է, հէնց դու հակառակվում էիր, թէ չէ չէ չէ։

Հայրապետը ոգեորվեց։

—Գիւլնազ ջան, ասիր Բարխուդարին, որ հէնց էգուց մեր տուն շնորհ բերի։ Թող զայ, թող գայ, որ մեր հին մեղքերը սրբենք։

—Եարաբ Աստուած, էս մարդի խելքը ինչու քամին տուիր,—կրկին մեջ մտաւ Մարիամ բաջին, երեսը դէպի աստուածը դարձնելով։

—Եաղի է գլխիս էլի, եաղի։ մին էս լեզուդ ներս քաշես, այ իժ օձի զաւակ։ մեղայ քեզ, սատանան ասում է, սաղրիդ տակը գցիր ու չան սատակ արա էլի։

—Թէ կուզ մորթես, էլի ես սուս չեմ անելու։

—Լեզուդ տակովիկից կը հանեմ։

—Հանիր, բայց քանի որ բերանումս է, խօսելու եմ։ Բաւ ես սուս անեմ, էլ ով պիտի խօսի, այ մարդ։ հնմ։ Ցանս քանդեցին, բալիս չղերը գցեցին, աւարտ արին վաթանից, մեզ էլ էս օրին հասցրին։ Հիմայ չարչով է գցել ու եկել գլխներիս կեղծաւորութիւն է անում, բաս ես սուս անեմ։ Չէ, ես Հոպէս բարեկամներին չեմ ուզում։ Գնա, գնա ինքդ էլի տաւջվայ պէս Բարխուդարի ոտները ջուր արա ու խմիր։ Գնա, էլի մին տասքան արաղով խարտիր։ Ինչ ուզում ես արա, ես երես չեմ պարանիլ նրանց, թէ որ վզից էլ քաշեն։

Մարիամ բաջու այդ զառն ու կծու խօսքերը այս անգամ Հայրապետին բոլորովին համբերութիւնից հանեցին։ Նա փափաքը գլխից վերցրեց, մի կողմ դրաւ, վեր կացաւ կանգնեց, սպրանեց, կապանեց, տաւմները կրճատեց և բռունցքները սեղմելով, ուզում էր յարձակվել իւր կնոջ վրայ, բայց այս վայրկեանին մի զէպք պատահեց։ Քամին կատաղի զօրութեամբ դրսից զարկելով, բացեց սենեակի դռները։ Երկին ներս թափվեցին ձիւնի բուռն ալիքներ։ Ճրագը հանգաւ և խաւարը տիրեց սենեակում։ Մարիամ բաջին և Գիւլնազը մի թեթեւ ճիչ արձակեցին։ Հայրապետը տեղն ու տեղը մնաց անշարժ։ Մի քանի վայրկեան բոլորը լուռ էին։ Վերջապէս Հայրապետը դռները ծածկեց։

—Լդանք-լդապատառ լինիս, այ քամի,—ասաց Մարիամ բաջին և մոմը վառեց։

—Գիտնում ես, Աստուած էլ է բարկանում զլխիդ քո էդ չար լեզուի համար,—գոչեց Հայրապետը։

—Դու քո Աստուածը, մի նեղանար,—ասաց յորդորել Գիւլնազը Հայրապետին։ Ինչ անենք, որ ասում է, սիրտը կծկում է, թող սրան աղուն թափիս, որ հանդարտանայ։

—Դաւրս եկ, կորիր, քեզ հետ էլ բան ու գործ չունիմ,—բարկացաւ կրկին Մարիամ բաջին խեղդված ձայնով և շտապով գնաց խոհանոց։

—Սատանի ծնունդ է էլի, էհ, ես քեզ բերդին ինչ ասեմ հա,—զոռաց նրա յետեւից Հայրապետը և նստեց իւր տեղը։

Գիւլնազը անմեղով, որ ինքը Հայրապետի հետ մնաց միայնակ, չարչովը վերցրեց, որ գնայ։

—Խակի չը նեղանաս, Գիւլնազ ջան, ես նրա քիթիս պատնիկը ջարդ ու փշուր կանեմ, չատ է կատաղել։ Ասիր Բարխուդարին, որ ես էլի պատրաստ եմ նրա հետ բարեկամութիւն անելու։

—Շնորհակալ ենք։ Բայց Մարիամ բաջու քեֆին չը կպչես, խեղճ է, սիրտը ցաւում է։ Տես թէ որ կարող ես, խնդրի բեր, որ միասին ինձ հետ դայ ազգկան մօտ։

—Աչքիս վրայ, արիացին կաց։

Գիւղնագը մի քանի անգամ համեստութեամբ և խորին յարգանքով գլուխ տուաւ Հայրապետին ու դուրս գնաց։ Իսկ Հայրապետը չիրուխը նստից լցրեց, վառեց ճրագից և սկսեց ծխելով շրջել սենեակում յետ ու առաջ։

XI

Փետրվար ամսի սկիզբն էր։ տարվայ այն ժամանակը, երբ Թէյմուր-խան-Շուրայ քաղաքում ձմեռը սովորաբար գտնվում է իւր ամենասառուցեալ ժամանակամիջոցում։ Մի խիստ մութ երեկոյ էր։ Երկնքից իջնող ձիւնը Տիւտիւային Գաղստանի բարձրադագաթ սարերից փչող մրրկից հալածվելով, խաւար միջնորդի մէջ պատում էր կատաղի ալիքների պէս Շուրայի արեւելեան կողմում կար մի կեղտոտ կարավանսարայ։ Այդ կարավանսարայի օթևաններից մէկում նստած էր մի երիտասարդ։ Օթևանը ունէր մի փոքրիկ դուռ և մի փոքրիկ պատուհան և լուսաւորվում էր մի հոտարակ թիթեղեայ կանթեղով, որ դրած էր փոխաթեներով ծածկված խոնաւ յատակի վրայ։ Դրսից ձիւնի ալիքները սարսափելի քամու զօրութիւնից օթևանի դրան և պատուհանի ճեղքերից ներս մտնելով, դիպչում էին ուղղակի երիտասարդի կերպարանքին։ Օթևանում ոտտակ ցուրտ էր։ Բայի կանթեղի արտադրած թոյլ ջերմութիւնից նրա մէջ չը կար ուրիշ վառելիք, որ մեղմացնէր այդ տաղնապութիւնը։ Այդ պատճառով երիտասարդը ոտից ցդուխ փաթաթված էր սև նափունջիի մէջ։ Ներս թափվող ձիւնը հաւաքվել էր նափունջիի վրայ և ծածկել սպիտակ սաւանով։ Գոտոլէնի դեղնագոյն լոյսը հազիւ հազ կանթեղի մրոտ ապակի միջով թափանցելով, սփռվել էր երիտասարդի դէմքի վրայ։ Հոգեկան դառն տանջանաց ծանր վշտերի մի խորը կնիք դրոշմված էր այդ դէմքի վրայ։

Այդ Սէյրանն էր։

Ինչու համար է եկել նա Շուրայ, ինչ մտադրութիւն ունի։

Ասում են թէ ատանձնութիւնը առ հասարակ մարդուն արա-

մադրում է մենակոս լինելու։ Այդ միտքը անպայման ճշմարտութիւն է, թէ չէ,—այդ մենք չը գիտենք։ Գիտենք միայն, որ մեր հերոսը այդ ձմեռային երեկոյ մենակ նստած սառն օթևանում, թաղուած էր խորը մտածողութեան մէջ։ Սէյրանը քրքրում էր իւր մօտիկ անցեալը, քննում, քննադատում էր այն բոլոր փարձանքները, որ վերջին ժամանակները անցան նրա գլխով։ Եւ այդ ժամանակ նա երբեմն երբեմն սկսում էր ինքն իրան խօսել մի այնպիսի բարձր ձայնով, որ եթէ օթևանում մէկը լինէր, պարզ կարող էր լսել նրա խօսքերը։

—Որքան որ մտածում եմ, որքան որ գլուխս արաքացնում եմ, մի և նոյնը, մի և նոյնը, մի և նոյնը,—խօսում էր Սէյրանը։ Սուսան, Սուսան, քարացած խղճմտանքով արարած, լաւ խարեցիր ինձ, լաւ գլխատակիս բարձ դրիր։ Հա, շատ լաւ, շատ լաւ խարեցիր։ Բայց չէ, ապատիր, ապատիր, շատ երկար չի քաշիլ։ Եռ, հրմ, եռ ինչ...

Սէյրանը ձեռը դրաւ ճակատին և մի քանի բոպէ լռեց։

—Ապրիր, ապրիր փառաւոր կերպով,—շարունակեց նա, ձեռը ճակատից հեռացնելով։ Պարծենում ես, հա։ Պարծեցիր, բայց այդ էլ իմացիր, որ ինչպէս էլ լինի, էլի պրչդ իմ ձեռումն է և ես եթէ որ ուզենամ, կարող եմ հէնց վաղը, հէնց այս գիշեր փոխել քո բախտը։ Դու իմ ծնողների կեանքը թունաւորեցիր, մօրս զրկեցիր իւր միակ զաւակի երեսից, ինձ չորերը ընց թողիր, որ դու այսօր հանգիստ տանդ նստես։ Չէ, դու քո հօր նամուսն էիր ուզում պահել։ Իրաւունք ունես։ Բայց ինչ ես մտածում, միթէ կարծում ես, որ ես նամուս չունեմ։ Միթէ կարծում ես, որ ես այնքան փչացած եմ, որ չեմ կարող պատիւս պաշտպանել։ Երեխայ ես, խեղճ, չես ճանաչում Սէյրանին։ այ ես քո։ «Ապրիր, ապատիր և կը տեսնես, թէ Սուսանը քեզ ինչպէս էր սիրում և ինչպէս նա կը զոհվի քեզ համար»։ Այդ քո բերանից դուրս եկած խօսքերն են։ Բան ինչ չուտ մտացաւոր։ Սուսանի հարստութիւնը, տուն ու տեղը, ոսկի—արծաթը, զան ու զարդը, փլաս ու գղման քեզ չեցրին, հա։ Լաւ, ինձ էլիր խաբում, հա։—Ապատիր, համբերիր, շատ էլ խաբվող մարդ չմնաս։ Սէյրանին։ Դու ուզում էիր քո և քո ծնողների իրրև թէ ընկած անունը ուրիշների աչքում բարձրացնել։ Նրանց նամուսը մաքրել և այդ պատճառով ինձ թողիր ու գնացիր Ռուսաստանն։ Լաւ, բաս Սէյրանը, բաս նրա նամուսը։ Չը լինի թէ կարծում ես, որ նա էշ է, չի հասկանում։ Ինչդ քո անունը ուրիշ-

նրի բերանից ազատեցիր, իսկ իմ անունը կեղտոտելով, դցեցիր սաղ քաղաքի բերանը։ Խեղճ ողորմելի, կարծում ես, որ այսքանն էլ հասկանալու խելք չունի Սէյրանը։ Նա՝ Տէր Աստուած, Տէր Աստուած, միթէ ես այնքան փչացել եմ, ընկել եմ, որ էլ ոտի վրայ կանգնելու կարողութիւն չունիմ։

Սէյրանը գլուխը քիչ թեքեց դէպի մէջքը և իւր անտրոշ հայեացքը մի քանի բոպէ յառեց օթեանի առաստաղին, որի փռած ու սեացած կոճերը կատարի ծանրութենից ծռվել էին ու ճաքճքել։ Նա մտածում էր, թէ ինչպէս ինքը խայտառակվել է իւր ընկերների առաջ, թէ ինչպէս այդ ընկերները ամէն անգամ իւր երեսին կրկնում էին Շամախում, «վախկոտ ես, անաղնիւ ես, նամուս չունես՝ որ աչքերդ բաց հարմացուցիր քեզանից իսկեցին, ուրիշին տուին» և այլն և այլն։

—Ղարդուշանց Եմիրը, Եմիրը, տես ինչքան ընկել եմ, որ նա էլ է ինձ ծաղրում։ Նա էլ մինչև անգամ ինձ վրայ լեղու է բանացնում, փահ քո փափաղ տափը մանի Սէյրան ջահիլ հա,—ասաց նա, երկու ձեռքերով մի ուժգին հարուած տալով գլխին, որ ծածկված էր Ղազանչի մոխրագոյն երկարամազ չուլլահիով։

—Հարցնող լինի, թէ էլ այսուհետև ինչ երեսով եմ ապրում ընտանիքիս աչքից ընկած, Շամախու մէջ խայտառակված, ընկերներիս մօտ ծաղրի ու ծիծաղի առարկայ դառած, էլ ինչ երեսով եմ մտիկ անում ուրիշներին։ Շամախում չը կարողացայ ապրել, դուրս եկայ, Ղուբայ գնացի։ Խեղճ մայր, դու հիմայ հաւատացած ես, որ ողորմելի է անում։ Խեղճ պառաւ, խեղճ պառաւ, ծնվեցի թէ չէ, հենց օրդ անցաւ։

Սէյրանը բարձրացաւ տեղից և սկսեց փոքրիկ ուռնեղ օթեանի երկարութենով շրջել յետ ու առաջ։

—Տէր Աստուած, Տէր Աստուած, ինչեր են խօսում հիմայ մեր ջահիլները Շամախում։ Ինչ պիտի խօսեն, ամէն անգամ անունս տալիս երեսները ծռում են ու թքում։ օհ, ճակատս ամօթից քրտնում է, երբ որ մտաբերում եմ նրանց։ Հիմայ ամենքը հաւաքված շիրաչխանաներից մէկում խմում են։ Մինը ուզում է կենաց խմել, միւսը չի ուզում խմել «չունեցի նա նամարդ, բէնամուս է, մեր դատի անունը բէարուն արաւ սաղ քաղաքում»։ Ճշմարիտ է, իրաւունք ունէք տանելու, ես խայտառակ արի ձեր դատի անունը։ Բայց ապատեցէք, Սէյրանը շատ էլ բէնամուս ջահիլ չէ, ապատեցէք և կը տեսնէք։

Դրսում քամին շարունակ փչում էր։ Սէյրանը մօտեցաւ պատուհանին և սկսեց նայել դուրս, դէպի կարավանսարայի բակը։ Մի քանի բոպէ շարունակ նա մտիկ արաւ, թէև նրա աչքերը պատուհանի սառնապատ ապակիների միջով ոչինչ չէին կարողանում որոշել դրսում։ Յետոյ Սէյրանը երեսը շուռ տուաւ և կրկին սկսեց շրջել յետ ու առաջ բաւական հաստատ և կանոնաւոր քայլերով։

—Երեկ ես բազարում տեսայ քո մարդուն, Ռուստամին,—շարունակեց խօսել Սէյրանը, տեսայ և արիւնս գլխովս տուաւ։ Ես ուզում էի մօտենալ, խանչալս փորը կոխել, թափան—թիրիքը դուրս թափել։ Ուզում էի փողոցի սպիտակ ձիւնը ներկել նրա կարմիր արիւնով, որ գուցէ սիրտս հովանայ։ Բայց ես այդ չարի։ Զը կարծեմ, որ վախեցայ նրանից, չէ, չարի որովհետև հիմայ մտածում եմ, որ նա այնքան մեղաւոր չէ, ինչքան որ դու ես մեղաւոր։ Սուսան, եթէ ես վրէժ եմ ուզում հանել, լաւն է ձեր երկուսից հանել, թէ չէ միայն Ռուստամի արիւնը ինձ չի հովացնիլ։ Հրմ, իմանում եմ, իմանում եմ, Սուսան, դու ինձ այնքան մոռացել ես, որ սրան ու նրան էլ հաւատացրել ես, թէ Սէյրանին իսկի երեխայութիւնից չես ճանաչել։ Այդ ես գիտեմ որ ասել ես։ Հէնց ընկերներս էլ այդ պատճառով են ինձ այդքան ծաղրում։ Զարան դիզի Շերպանիկին ծռողներդ դցել են քաղաք, որ այսուհետև ոչ այնուհետև չով անի, թէ «դուժ ծախողանց Սէյրանը իզուր ուզեն է դրան ու նրան ասել, թէ Սուսանը նրա հարմացուն է եղել, այդպէս արել, այնպէս արել» և այլն և այլն։ Առաջին, որ ես ոչ ոքի չեմ ասել իմ բերանով այն բաները, ինչ որ խօսում են քաղաքում։ Երկրորդ թէ որ խօսում են, սուտ են խօսում։ Սուսան, Սուտ է, որ դու իմ հարմացուն ես եղել երեխայութենից, սուտ է որ ես քեզ հետ խօսել եմ, տեսնվել եմ։ Ամէն ցաւերից ազատվել ես, արխային ապրում ես, հիմայ ուզում ես Սէյրանին սուտ դուրս բերել հնա։ Լաւ, շատ լաւ, Սէյրանն էլ խելք ունի, ցիմար չէ։ Թող չը հաւատան, թող ծաղրեն, ինչքան ուզում են, բայց ես չատով, չատ չատով ամենքին ցոյց կը տամ, կը հաստատեմ, որ ես սուտ չեմ ասել, թէ ինչ որ խօսում են, գոնէ նրա կէսը, կիսի կէսը դորդ է։ Թող մարդդ Ռուստամը, որ հաւատացած է թէ ես չաղլատան եմ, թող տեսնի թէ ով է այդ չաղլատանը։

Սէյրանը կրկին նստեց և ընկաւ մտատանջութեան մէջ։ Քառորդ ժամի չափ նա գլուխը ձեռքերին յենած, մնաց անշարժ։ Յետոյ նա դարձեալ վեր կացաւ տեղից և կրկին սկսեց շրջել

յետ ու առաջ, այս անգամ աւելի արագ և աւելի ամուր քայլերով։

—Արիւնս գլխովս է տալիս, աչքերս մթնում են, երբ որ մտածում եմ թէ ինչեր են խօսում ինձ վրայ ընկերներս։ Չէ, անպատճառ, անպատճառ ես պիտի վրէժս առնեմ։ Էլ որ օրվայ ջահիլն եմ, որ այսօրվայ օրն էլ իմ նամուսը չը կարողանամ ցոյց տալ նրանց։ Հա, վճռված է։ Ես դեռ Շամախումն եմ մտածել այդ բանը, եթէ ոչ էլ ինչու համար եմ չոլերը ընկել, ինչու համար եմ Շուրայ եկել։ Բայց Տէր Աստուած, Տէր Աստուած, ինչպէս հանեմ վրէժս, ինչպէս հաստատեմ, որ ես, որ ես . . .

Սէյրանը չաւարտեց իւր խօսքը։ Նա կրկին կանգնեց պատուհանի առաջ և սկսեց նորից դէպի դուրս նայել։ Յետոյ նա երեսը շուռ տուաւ և մի քանի վայրկեան անթարթ աչքերով նայեց աղօտալոյս կանթեղին։

—Հա, ինչպէս հաստատեմ, որ ես... որ ես.. նահլաթ քեզ չար սատանայ,—ասաց նա, ճակատին մի ուժգին հարուած տալով և յետոյ անդիտակցաբար նայեց մէջքին կապած խանչալի կոթին։ Ինչպէս հաստատեմ, որ ես Սուսանի հետ սիրահարական յարաբերութիւններ եմ ունեցել, ինչպէս։

Մի քանի անգամ նա ինքն իրան կրկնելով «ինչպէս, ինչպէս», կանգնեց օթեանի մէջ տեղում և աջ ձեռը խանչալի կոթի վրայ դնելով, իսկ ձախը՝ ճակատին, թաղվեց մտածողութեան մէջ։ Մի քանի րոպէ նա այդ դրութեան մէջ մնաց։

Երբեմն Սէյրանը ձախ ձեռը ետ հեռացնելով ճակատից, դնում էր խանչալի կոթի վրայ և աչքերը յառում օթեանի առաստաղին։ Այդ ժամանակ նա շրթունքները կրծոտելով, ստէպ ստէպ արտասանում էր հատ ու կտոր խօսքեր, օրինակ. «աչքերը»» «ուսը»» «ան մազ»» «կուրծքը»» և այլն և այլն։

Յանկարծ գլուխը քարշ ձգեց, ձեռքերը հեռացրեց խանչալից և սառն օդի մէջ կրծքից արձակեց մի ծանր հառաչանք։ Կարծես թէ նրա ուսերից այդ հառաչանքի հետ միաժամանակ ընկաւ մի ճնշող ծանրութիւն։ Յետոյ նա զարմանալի արագութեամբ մօտեցաւ օթեանի անկիւնին, վերցրեց այդ տեղից մի ինչ որ բան և շտապով կոխեց երկար արխալուղի գրպանը։ Այդ վայրկեանին նրա թթուած դէմքի վրայ սահեց մի կիսով չափ անախորժ և կիսով չափ խորամանկ ժպիտ։ Նրա շրթունքները դողացին, ճակատի կնճիռը բացվեց և աչքերը փայլեցին չարախնդիր կայծերով։

Քամին շարունակում էր փչել անասելի զօրութեամբ, օթեանի

նի պատուհանը և դռները փոքր էր մնում, որ խորտակվէին։

—Չէնց այս րոպէին, ուշացնել հարկաւոր չէ։ Եթէ մի քիչ ուշանայ, էլի, էլի կըսառչեմ։ Ցեծիր արկաթը, քանի որ տաք է։ Հա հա հա, կարծում ես որ ազատվեցիր, պրծար, հապա տեսնենք։

Սէյրանը չուլլահին պինդ սեղմեց գլխին, խանչալը մէջքում ուղղեց և ձեռը գրպանում դնելով, չոշափեց մի քանի անգամ գրպանը ու դիմեց դէպի դռները։

—Թող չամախեցիները իմանան, թէ ես էլ չամախեցի եմ,—ասաց նա բարձր ձայնով։ Թող ինձ ճանաչեն, որ ես չեմ կարող այս անպատվութեան տանել։ Ես նրա խանութը ճանաչում եմ, այստեղից շատ էլ հեռու չէ։ Նա իմ երեսը չէ տեսել, ինձ չէ ճանաչում, անպատճառ ինձ կընդունի, կըհիւրասիրի։ Նա գինի արաղ էլ է ծախում, ես կըխմեմ, կըհարբեմ նրա գինով և յետոյ, յետոյ, իհարկէ գինու փողերը կըվճարեմ հա հա հա։

Այդ ասելով, Սէյրանը օթեանի դռները բացեց և շտապով դուրս գնաց։ Նա անցաւ կարավանսարայի բակը, դուրս ելաւ փողոց և անհետացաւ ձիւնի խառն ալիքների մէջ, որ կատաղի զօրութեամբ կռվում էին խաւար մթնոլորտի մէջ։

XII

Կարավանսարան գտնվում էր մի բաւական ընդարձակ հրապարակի վրայ։ Այդ հրապարակից քառորդ վերստաչափ հեռու, մի բաւական ընդարձակ փողոցի ծայրում, կար մի խանութ երեք դռներաւոր։ Այդ Ռուստամի առևտրական խանութն էր։ Ինչպէս արդէն մեզ յայտնի է, Ռուստամը Շուրայում մի քանի տարի պարապում էր վաճառականութեամբ։ Երկու տեսակ ապրանքներ էր նա ծախում։ Առաջինը հագուստեղէն, այն է՝ մահուդ, չիթ, կտաւ և ուրիշ սոյնանման կտորներ, երկրորդը ուտելիք և ըմպելիք, այն է՝ օղի, գինի, իւղ, ըրինձ և ուրիշ դանազան տեսակ խմիչքներ և մանր մունր պարագաներ։ Խանութը բաժանված էր նոյնպէս երկու մասերի մի տախտակեայ պատով ներսի կողմից։

Նոյն ժամին, երբ Սէյրանը իւր օթեանից դուրս վազեց, Ռուստամի խանութի երեք դռներից մէկը կիսով չափ բաց էր։ Այդ ըմ-

պելիքների բաժինն էր։ Այստեղ Ռուստամը մի քանի շամախեցի հայերի հետ ընթրում էր։ Սեղանի գլխում նստած էր ինքը Ռուստամը։ Նրա աջ ու ձախ կողմերում նստած էին երկու առևտրական ընկերներ, որոնցից մէկը մի միրքաւոր երիտասարդ էր լազգու հագուստով, իսկ միւսը՝ առանց միրքի մէջին տարիքով մի մարդ էր Շամախու հագուստով։ Սրանց մօտ նստած էին երկու ուրիշ հիւրեր, որոնք Շամախուց նոր էին Շուրա եկել։ Դրանցից մէկը առողջակազմ և հաստ երեսով մի երիտասարդ էր մօտ երեսուն տարեկան, իսկ միւսը՝ մի պատանի կէս ասիական կէս եւրոպական հագուստով։

Ռուստամի ընթրիքը այդ երեկոյ սովորականից մի փոքր հարուստ էր, որովհեան նա հիւրասիրում էր իւր նորեկ համաքաղաքացիներին։ Նայելով թէ Ռուստամի և թէ միւսների դէմքերին, երևում էր, որ նրանց գլուխները բաւական տաքացած են գինով։ Ռուստամի ընկերները ոգևորված խօսում էին նորեկների հետ, հարց ու փորձ էին անում դրանց իրանց հայրենիքի, ընտանիքի, ազգականների և ուրիշ բաների մասին։ Իւր ընտանութեան համեմատ, Ռուստամը ամենից սակաւ էր խօսում։ Միայն երբեմն նա ևս հատուկտոր հարցեր էր տալիս նորեկներին և նոյնպէս հատ ու կտոր պատասխաններ ստանալով, կրկին լռում էր։

—Ասում են, որ կուժ ծախողանց Սէյրանն էլ է այստեղ, ղոնդ է,—հարցնում էր նորեկ պատանին։

—Ես երեկ լազգի բազարում տեսայ նրան, խանչալ էր առնում,—պատասխանեց Ռուստամի ընկերներից մէկը։

Ռուստամը լսելով «Սէյրան» անունը, աչքունքը թթվացրեց և մի հարցական հայեացք ձգեց նորեկ պատանու վրայ։ Վերջինը չը նկատեց։

—Ուզում եմ նրան տեսնել,—կրկին խօսեց պատանին։

—Ի՞նչ գործ ունես նրա հետ,—հարցրեց միրքաւոր և լազգու հագուստով երիտասարդը, մի և նոյն ժամանակ աչքի տակով նայելով Ռուստամի երեսին։

—Նրա մայրը ինձ խնդրել է, որ մի քանի խօսք ասեմ նրան։

—Էգուց կարող ես լազգի բազարում տեսնել, կարծեմ միշտ այնտեղ է լինում։

—Ի՞նչ գործի է։

—Չեմ իմանում։ Երեկ ես էլ իրանից հարցրի, ոչինչ չ'ասաց, աչքունքը ծռեց ու հեռացաւ։

—Շատ է հպարտացել, կասես թէ ոսկու մաղան է գտել։ բայց ինքը քաղցած զրկուում է, հագին հալաւ չունի,—ասելացրեց անմիրուք առևտրականը։

—Ասում են չալ առնելու է եկել,—մէջ մտաւ հաստերեսանի նորեկը։

—Ցաւերովդ։

—Հայրը փող տուած կըլինի էլի։

—Հօր մօտ նրա անունը տալ չի լինում, ինչ փող,—մէջ մտաւ պատանին։Ես դուրս գալուս օրը հարցրի, ասում եմ, Հայրապետ ապեր, Սէյրանին որ տեսնեմ Դաղստանում, ինչ ասեմ։ Նա երեսիս ծռեց մտիկ արաւ ու ասեց։ «Կ'ասես, որ այնտեղից էլ գէնը կորչի։ որ անունը չը լսի»։

—Լաւի փչացաւ էն գեղան,—կրկին մէջ մտաւ անմիրուքը։

—Փչացաւ,—կրկնեց հաստ երեսանին։

Ռուստամը գլուխը թեքեց կրծքին և ձեռը ճակատին դրաւ։ Անմիրուք առևտրականը նայեց նրայ վրայ և զարձաւ խօսողներին։

—Խալխի ցաւը մեզ չէն տվել։ թողէք Սէյրանին, քէֆ արէք, տեսնենք։

—Ռուստամ ջան, այդ էլ քո կենացը,—ասաց նա Ռուստամին, մի բաժակ գինի ձեռին։

Ռուստամը գլուխը չարժեց ի նշան չնորհակալութեան։

—Քո կենացը,—կրկնեցին ամենքը միաբերան և բաժակները դատարկեցին։

Դրսից մէկը երկու անգամ դռներին զարկեց։

—Ո՞վ ես,—հարցրեց Ռուստամը, մօտենալով դռներին։

—Աստուծոյ հիւրը։

Դռները բացվեցին և Սէյրանը երես առ երես հանդիպեց իւր ամենասոխերիմ թշնամուն Ռուստամին։ Սէյրանը պէտք է ասած, որ Ռուստամին չատ էր տեսել այն ինչ վերջինը Սէյրանին թէ և Շամախում տեսել էր, բայց չէր ճանաչում թէ դա իւր հակառակորդն է։

Առաջին վայրկեանին Սէյրանը չփոթվեց, տեսնելով իւր սրտին ամենատելի այդ կերպարանքը։ Բայց նա կարողացաւ իրան զսպել։

—Ո՞վ ես,—կրկին հարցրեց Ռուստամը, բայց մի և նոյն ժամանակը չը կարելով անկոչ հիւրի ճանապարհը։

—Մի շամախեցի տղայ,—պատասխանեց Սէյրանը, իւր հանացքը ձգելով խանութում նստողների վրայ։

—Աչքիս վրայ տեղ ունի ամեն մի շամախեցի,—ասաց բարեկամաբար Ռուստամը, Սէյրանին ներս թողաւ և դռները կրկին ծածկեց։

—Օհ՝, Սէյրան ջահիլ, դու որտեղ, այստեղ որտեղ,—բացականչեց լազգու հագուստով։

—Գեալեան—աղամըզ, *)—բացականչեց մէկը։

—Դուրմաղ ինան բաղ օլմազ, *)—աւելացրեց միւսը և կանգնեց ոտի վրայ։

—Սէյրան,—կրկնեց Ռուստամը անպիտակցաբար և իւր հայեացքը բեւեռեց այդ անունը կրողի վրայ։

—Ռուստամ, ինչ ես ասում, չես ճանաչում։ Դա մեր շամախեցի կուժ ծախող Հայրապետի տղան է, համեցէք արա, ինչ ես կանգնել,—շարունակեց լազգու հագուստով։

Ռուստամը տեղից չշարժվեց։ Նա զարմացած նայում էր հերթով բոլորի երեսներին։ Սէյրանը ձիւնի մէջ կորած եափունջին մի կողմը շպրտեց, համարձակ քայլերով շարժվեց առաջ և, առանց Ռուստամից հրաւիրվելու, մօտեցաւ սեղանին և նստեց հասարակ փայտից շինած նստարանի վրայ։ Պատանին մօտեցաւ նրան և ձեռը մեկնելով ասաց։

—Շամախուց նոր եմ եկել, մայրդ չատ բարև արաւ և ասեց որ...

—Շնորհակալ եմ,—ընդհատեց Սէյրանը, անփոյթ կերպով սեղմելով պատանու ձեռը և երեսը մի կողմ շուռ տուաւ այնպէս, որ վերջինը ստիպվեց լռելու։

Վերջապէս Ռուստամը ուշքի եկաւ և ընդունելով իւր նախկին դիրքը, սառնասրտութեամբ նստեց սեղանի առաջ։

—Այ տղայ, Համբարձում, նոր գինի, Սէյրանը մրսած կը լինի, թող քիչ տաքացնենք նրան,—հրամայեց լազգու հագուստով միրքաւորը։

---

*) Եկողը մեր պարանը։

*) Վերկենալով բէգ չիլինի։

Այդ երկու թրքերեն ֆրազները սովորական կոմպլիմենտներ են, որ շամախեցի ջահիլները քէֆի ժամանակ ուղղում են անպատակի հիւրին ընդունելիս։

—Հա՝, գինի տուէք, ես շատ եմ ծարաւ,—ասաց Սէյրանը, գլխից ձիւնաթաթախ չուքահին վերցնելով և մի կողմ դնելով։

Խանութի փոքրիկ և աչխոյժ գործակատար Համբարձումը մի բոպէում մէջ տեղ դրաւ երկու լիք չիշեր, չընայելով որ սեղանը լիքն էր կիսատ չիշերով։

—Կոնծիր, ներսդ տաքացրու, որ դուրսդ էլ տաքանայ։

Սէյրանը կարծես թէ հենց մի այդպիսի առաջարկութեան էր սպասում։ Նա վերցրեց բաժակը, դատարկեց, վերցրեց երկրորդը, նոյնպէս դատարկեց և դրաւ սեղանի վրայ։

Ռուստամը իւր հայեացքը նրանից չէր հեռացնում։ Միւսները նոյնպէս զարմացած նայում էին նրան։ Միրքաւոր երիտասարդը այդ նկատելով, բարձրացաւ տեղից և յայտնեց։

—Ովոր չի ճանաչում, թող ճանաչի։ Դա մեր շամախեցի կուժ ծախող Հայրապետի տղան է, մին քէֆ անող ջահիլ։ Մի այդպիսի տղայ չի լինիլ, Ռուստամ, ես դրան երկու տարի առաջ Շամախում մի լաւ քէֆումն եմ ճանաչել։

Ռուստամը կրկին նայեց Սէյրանին և լռեց։ Իսկ Սէյրանը, նստողների վրայ ուշադրութիւն չը դարձնելով, կրկին համարձակօրէն լցրեց երկու բաժակներ և դատարկեց։

—Այ ապրես, ապրես, Սէյրան ջահիլ, տղայ դու ես, որ առանց նազի քանդ չինում ես,—բացականչեց միրքաւոր երիտասարդը։ Ցետոյ նա աչքով արաւ հանդիսականներին և սրանք մի մի բաժակ լցնելով, սովորական խօսքերով շնորհաւորեցին Սէյրանի գալուստը և դատարկեցին։

Խնջոյքը տաքացաւ և ամենքը սկսեցին իրարու յետևից բաժակներ լցնել ու դատարկել, բացի Ռուստամից, որը Սէյրանի ներս մտնելուց յետոյ լուռ էր և ոչնչին ձեռը չէր տալիս։

—Հայրապետ ապօրը ես ճանաչում եմ, ինչպէս չէ։ Նա հօրս հետ լաւ բարեկամ է, մեր տուն Զատիկ, Զուր օրհնանք շնորհաւորելու էր գալիս,—մէջ մտաւ հաստ երեսով երիտասարդը, որ Շամախուց նոր էր եկել։ Ցերբ մի լաւ կոնծենք Սէյրանի կենացը։

—Իրան երկու երկու խմացրէք, որ մեր չափին հասնի,—աւելացրեց միրքաւոր երիտասարդը։

Բացի Ռուստամից ամենքը Սէյրանի կենացը խմեցին։ Սէյրանը երեք բաժակ գինի իրարու յետևից դատարկեց իբրև թէ ինը-չան խորին շնորհակալութեան։

Քառորդ ժամից յետոյ խնջոյքը բոլորովին տաքացաւ։ Միրքաւոր երիտասարդը սկսեց անկարգ-անկանոն պարկերէն երգել, կամ ուղիղն ասած, գոռալ խիստ անախորժ ձայնով։ Միւսները սկսեցին խօսել, վիճաբանել, բացի Ռուստամից, որ լուռ ու մունջ երեսին գինու բաժակը մօտեցնում էր շրթունքներին ու դարձեալ յետ դնում չը խմած։

Սէյրանը նոյնպէս լուռ էր, սակայն նրա գլուխը տաքացել էր և փոքրիկ աչքերի բիբերը արդէն փայլում էին։

Երբ հանդիսականների գլուխը խառնվեց, Ռուստամը, որի առնական բիրտ դէմքը պատել էր սովորական մռայլութիւնը—արմունկները դրաւ սեղանի ծայրին, գլուխը յենեց ձեռքերի ափերին և մնաց այդպէս անշարժ։ Նա մտածում էր։

—Սէյրան, Սէյրան։ Կասես թէ սուր ասեղով ծակեցին մարմինս, երբ ես լսեցի այդ անունը։ Դա նա է։ Սիրաս վկայում է, որ այստեղ մի բան կայ էլի։ Բայց ինչ բան պիտի լինի։ Նա խօ սուտ էր, սուտ էր։ Հը՛մ—Զէ՛, անցեալ օրը Գեամազանց Մուրադը մի էյհամ գցեց խօսելու ժամանակ։» Սէյրանը եկել է, սոված շունը կատաղած է լինում, մուղայիթ կաց հա» ասաց նա։ Սէյրանը իմ կնկայ առաջվայ փեսացուն է։ Այդ ես անցեալ շաբաթ եմ իմացել։ Սուսանի ծնողները նրան Սէյրանից յետ են կարել ու ինձ են տուել։ Մեր քաղաքի ադաթն է, մէկի վրայ նշանել ու յետոյ ուրիշին տալ։ Այստեղ զարմանալի բան չըկայ։ Բայց, Տէր Աստուած, Տէր Աստուած, սիրտս չըգիտեմ ինչու, էլի ասում է թէ անպատճառ մի դաղանիք պիտի լինի։ Ի՞նչու համար է նա գիշերվայ կիսին եկել։ Ո՛չ բարեկամներ ենք, ո՛չ ազգականներ և ոչ էլ իրարու ճանաչում ենք։ Մէկ էլ որ նա իմանում է, թէ ես ով եմ։ Տէր Աստուած, ինչքան ֆիքր եմ անում, էլի չեմ հասկանում։ Եկել է, սուս ու փուս նստել ու խմում։ Կասես թէ, տասը տարի է, որ ինձ հետ ընկերութիւն է անում։ Ի՞նչ լրութիւն, ինչ աներեսութիւն, հրմ։ թէ վերկենամ, կոնից բռնեմ ու դուրս ձգեմ։ Տես, ինչպէս է ճակատի տակից, աչքերը պլղած մտիկ անում ինձ։ Մարդ կարողանայ իմանալ, թէ նա հիմա ինչ է մտածում։ Տէր Աստուած, ինչպէս է լակում։ Կասես գիժ լինի։ Հարբել է, աչքերը պլպլում են։ Ի՞նչու է այդքան խմում։ Բայց, Տէր Աստուած, ընկերներիս դէմքը բաս ինչու է փոխվել։ Նրանք ինչու են կասկածանքով մտիկ անում ինձ և նրան։ Համբերեմ, երևի

բանը չուտով կըպարզուի, խօ իզուր չէ եկել նա այստեղ։ Էլի սիրտս օձ կծեց։ Էլի հարսանիքի գիշերվան տանջանքը։

Այդպէս մտածելով Ռուստամը իւր մատների արանքով մտիկ էր անում հերթով կամ Սէյրանի կամ միւսների երեսներին։

Վերջապէս միրքաւոր երիտասարդը բարձրացաւ իւր տեղից և ասաց։

—Տղերք, գիշերը անցնում է։ ժամանակ է տուն գնալու։ Բաժակներդ լցրէք, որ մեր թանգագին Ռուստամի կենացը մէկ էլ լաւ կոնծենք, շնորհակալութիւն անենք ու ցրվենք։

Ամենքը անյապաղ կատարեցին միրքաւոր երիտասարդի առաջարկութիւնը, մի մի բաժակ լցնելով և տեղերից վեր կենալով։

Սէյրանը անշարժ էր։

—Ռուստամ, Աստուած մինդ հազար անի,—ասաց բարձր ձայնով և հանդիսաւոր եղանակով նոյն միրքաւոր երիտասարդը։—Տղերք, միաբերան Աստուց խնդրենք, որ նա չուտով Ռուստամին մին լաւ ղոչ տղայ պարգևի։

—Ամէն, ամէն, Տէր Աստուած,—կրկնեցին միաբերան բոլորը։

Սէյրանը լուռ էր։

—Սէյրան, վերկաց, ինչ ես քնել, գոչեց միրքաւորը։

Սէյրանը իւր թուլացած իրանը ուղղեց և բարձրացաւ տեղից։

Միրքաւորը մի բաժակ գինի լցրեց և առաջարկեց նրան։

—Ա՛ռ, կոնծիր և Աստուց խնդրիր, որ նա մին լաւ արդի բախշի Ռուստամին։ Հը՛, չուտ արա, ինչ ես պառաս կնկայ պէս թուլացել։

Սէյրանը բաժակը վերցրեց և մի հայեացք ձգեց բոլորի վրայ։ Նա կազդուրեց իրան և գլուխը հպարտութեամբ թեքեց դէպի մէջքը։ Յետոյ նա աջ ձեռը դրաւ խանչալի կոթի վրայ և ձախ ձեռով բաժակը գլխից վեր բարձրացնելով, արտասանեց հետևեալը։

—Աղա թամադա, ինչպէս հրամայեցիր, ես էլ կանկանում եմ պարոն Ռուստամին երկար կեանք, առողջութիւն, հարստութիւն, տուն, տեղ, ձեզ պէս ընկերներ և ինձպէս հիր...հուռռայ։

—Հուռռա,—կրկնեցին միայն Շամախուց եկածները։

—Այ զոչագ, լաւ ճառ ասել գիտես հա՛ բարեկամ,—բացականչեց միրքաւորը։

Ռուստամը իւր աչքերը չէր հեռացնում Սէյրանի երեսից։

Սէյրանը չարաւնակեց։

—Աղա թամադա, ինչպէս հրամայեցիր, խնդրում եմ Աստուծուց, որ Նա Ռուստամին պարգևի մի լաւ զոչ, զոչաղ տղայ զաւակ, որ լինի իրա նման շնորհքով, աչխատող և...

—Ամէն, ամէն, Տէր Աստուած,—կրկին բացականչեցին Շամախուց նոր եկածները։

—Վարդապետի լեզու ունի,—մէջ մտաւ առանց միրուքի առևտրականը, որ ամենից քիչ էր խօսում։

—Սարգիս վարդապետի աչակերտ կաւեն դրան հա, լաւ ճանաչեցէք,—աւելացրեց միրքաւոր երիտասարդը։ Հըմ, Սէյրան, էլ ասելիք ունես, ասիր։

Սէյրանը չրթունքները կրծոտեց և ձեռը աւելի ամուր սեղմեց խանչալի կոթին։

Ռուստամի զննող հայեացքը բևեռված էր նրա վրայ։

—Տայ Աստուած, որ Ռուստամի տղան աչքունքով էլ, երեսմերեսով էլ իրան պէս լինի, որովհետև...

—Հըմ,—բացականչեց անհամբերութեամբ միրքաւորը։

—Հըմ,—արտասանեց անդիտակցաբար Ռուստամը։

—Որովհետև...որովհետև...նահլաթ քեզ չար սատանայ։

—Որովհետև գինին շատ զոր է անում գլխիդ,—միջամտեց կրկին անմիրուք առևտրականը։

—Թողէք, թողէք վերջացնի,—հրամայեց միրքաւորը։

—Որովհետև ես գիտեմ, որ Ռուստամի տղան, հաստատ գիտեմ, որ նա...նահլաթ չար սատանին։

—Հըմ,—չեչտեց միրքաւորը։

—Հըմ,— կրկին արտասանեց Ռուստամը։

—Կարճ կապիր,—աւելացրեց անմիրուքը։

—Որ Ռուստամի տղան կամ աղջիկը (այդ Աստուած է իմանում), որ պիտի շուտով ծնվի....

—Չէ, շատ է երկարացնում։

—Որ պիտի շուտով ծնվի, չէ թէ իրան Ռուստամին կընմանի, չէ, նա երես—մերեսով, աչքունքով կընմանի կուժ ծախող Հայրապետի տղայ Սէյրանին, ինձ, ինձ...

Վերջին խօսքերը արտասանելով, Սէյրանը բաժակը առանց դատարկելու չպրտեց խանութի քարայատակի վրայ։ Գինու չթռանները ընկան հանդիսականների երեսներին, ի միջի այլոց և մի կաթիլ Ռուստամի բաց ճակատին։

Հանդիսականները զարմացած նայեցին Սէյրանի երեսին։

Ռուստամը ինչպէս կար կանգնած, նոյնպէս և մնաց։ Միայն նրա դէմքը մի վայրկեանում փոխվեց կտաւի պէս սպրտնելով։

Էլ բոպէի չափ տիրեց լռութիւն։ Ո՛չ ոք չընտակացաւ Սէյրանի խօսքերի միտքը։

—Բաժակը ինչ էր արել քեզ,—ընդհատեց խորհրդաւոր լռութիւնը անմիրուք առևտրականը։

—Բաժակը։ Ես բաժակը փչրելով, փչրում եմ այն մարդու պատիւը, որին դուք այդքան պատվում էք և որը այդ բաժակի տէրն է։

Ռուստամը կատաղեց։ Նա մի քայլ առաջ չարժվեց դէպի Սէյրանը, բայց կրկին կանգնեց և աջ ձեռը առաջ տարածելով, շնչասպառ ձայնով ասաց։

—Պարոն Սէյրան, ես քեզ չեմ ճանաչում, առաջին անգամն եմ տեսնում երեսդ։ Ասիր, տեսնեմ, ինչու համար ես եկել իմ խանութը և ինչ պատճառով ես այսպիսի անպատվութիւն անում։

—Անպատիւ մարդու խանութում անպատվութիւն անելը արդարութիւն է։ Ես եկել եմ, որ քեզ ճանաչեցնեմ այստեղ լինողներին (նա մատնացույց արաւ հանդիսականներին)։ Բէնամուս ջահիլ, ես քեզ խօսք տուեցի։ Դու նրա միտքը չընտակացար։ Եթէ ուզում ես, կարող եմ պարզ ասել...

—Սէյրան, ինչ ես դուրս տալիս, գինին քեզ գժվացրել է,—ընդհատեց միրքաւոր երիտասարդը։

—Այդ քո բանը չի, քաշվիր։ Ես որքան էլ որ հարբած լինիմ, գիտեմ թէ ինչ եմ խօսում։

—Դուրս եկ, կորիր, թէ չէ, Աստուած գիտէ, որ արիւնս գլխովրս է տալիս,—գոռաց Ռուստամը մի այնպիսի զօրեղ և կատաղի ձայնով, որ բոլոր հանդիսականները սարսեցան։

—Թող կորչի այն մարդը, որի նամուսը աղբի մէջ է թաղված։ Ռուստամ, աչքերդ բացիր, ես Սէյրանն եմ, այն Սէյրանը, որ քո ընտանիքում երկրորդ հայր կրլինի շուտով։ Գնա, գնա, քաշիր չղերը ընկած կնոջդ կատը և յետոյ ջուրիաթ արա ինձ հետ խօսելու։

Ռուստամի համբերութիւնը սպառվեց։ Կատաղած առիւծի պէս նա վազեց դէպի խանութի պատը։ Մի վայրկեանում նա խլեց երկար գնօրդան (գնօրդա-խանչալի մի տեսակն է, որ աւելի երկար է և քիչ կեռ) և մերկացնելով յարձակվեց Սէյրանի վրայ։

Հանդիսականները չփոթվեցին, բարձրացաւ մի խառնաչփոթ

աղմուկ։ Միրքաւոր Երիտասարդը մտաւ մէջ տեղ և քաջութեամբ կարեց Ռուստամի առաջը։

—Թող թիքա թիքա անեմ չուն չան լակոտին, թող, ասում եմ,—գոռաց Ռուստամը, աչխատելով դուրս պրծնել միրքաւորի գրկից։

—Կնիկը պիտի մի մարդ ունենայ, թող մեզանից մէկը դուրս գայ մէյդանից,—ասաց Սէյրանը նոյնպէս մերկացնելով իւր խանչալը։

—Կծիր լեզուդ, թէ չէ ես էլ համբերութիւնից դուրս եկայ,—գոռաց նրա վրայ անմիրուք Երիտասարդը։

Շամախուց նոր եկածները Սէյրանին բռնեցին։

—Թող, ասում եմ, թէ չէ փորդ կըխրեմ,—բղաւեց կրկին Ռուստամը, գեօրդան պաղաղացնելով միրքաւոր երիտասարդի գլխին։

Սէյրանը խանչալը դրեց պատեանի մէջ, մօտեցաւ խանութի անկիւնին, վերցրեց եաթաղանը, ձգեց թեին և դուրս վազեց, բացականչելով։

—Եթէ չես հաւատում, գնա, գնա, բաց արա կնկանդ կուրծքը և մարկ տուր սև խալին, սև խալին, սև խալին։

—Ճաքեց սիրտս, բաց թող, քեզ ասում եմ, խալը, խալը, կրծքին սև խալը, ուֆ։

Ռուստամը թուլացաւ միրքաւորի գրկում և գեօրդան ընկաւ նրա ձեռից։

—Բռնեցէք, մի թողնէք, որ փախչի, ես նրան կտոր կտոր պիտի անեմ,—գոռաց միրքաւորը։ Նա հանեց իւր խանչալը և դիմեց դէպի դռները։

—Իգուր է, նա կորաւ, գնաց,—բռնեցին նրան նոքեկները։

—Ջուր, ջուր բերէք, խեղճ ողան մեռնում է,—բացականչեցին չորս կողմից Ռուստամին շրջապատելով։

—Չեմ մեռնում, փոքր ջուր, սիրտս այրվեց,—փչրված ձայնով արտասանեց Ռուստամը, գլուխը բարձրացնելով։

—Ուշքի եկ, Ռուստամ, կորաւ այն լակոտը,—ասաց միրքաւորը, բռնելով Ռուստամի թևից։

—Ո՛չ ոք չէ հաւատում նրա կեղտոտ խօսքերին,—մէջ մտաւ հատ երեսանին։

—Նա ինքը անպատիւ է եղել սաղ քաղաքում, ուզում էր որ ջիգրը քեզանից հանի,—աւելացրեց պատանին։

—Սաւաղ,—դարձաւ Ռուստամը միրքաւոր երիտասարդին, ոտի

կանգնելով և աչխատելով զսպել իւր վրդովմունքը։ Սաւաղ, վազ տուր և հէնց այս րոպէին մի ձի վարձիր, առ փողը, տար։

Նա հանեց գրպանից փողի քսակը և մեկնեց Սաւաղին։

—Ի՞նչ ես անում,—հարցրեց զարմացած վերջինը, քսակը չ'ընդունելով։

—Լաւ խաբեցին, լաւ քանդեցին տունս։ Ես աննամուս եմ, ախ մայր, մայր, մեղաւորը դու ես, կեղտոտեցիր անունս։ Կուրծքի խալը, հրամ Սուսան, բաս այդպէս։

—Ռուստամ, դժվել ես, ինչ ես դուրս տալիս,—ասաց Սաւաղը, անմեղ կնկաղ մասին ինչ բաներ ես մտածում, խելքի եկ։ Նա արդար է։

—Ինչով իմանամ, որ արդար է։ Եօթը սարերի յետևում ինչ գիտեմ, թէ նա ինչեր է անում։ Կուրծքի խալը, օհ, այդ լաւ նշան չէ, ես...

—Լաւ նշան չէ, զորդ է,—կրկնեց անմիրուքը։

Ռուստամը նայեց նրա երեսին և աւելի սպրանեց։

—Ինչ եմ անում,—ասաց նա ինքն իրան։ Տղամարդ ես, խելքի եկ։ Ռուստամ, ֆիքրդ հաւաքիր, նամուսդ չի մոռել տարիր։ Տրղերք, եթէ ինձ սիրում էք, եթէ իմ ընկերութիւնը ձեզ համար գին ունի, աղաչում եմ հէնց այս րոպէին ինձ համար մի ձի վարձեցէք։

—Հերիք է, Ռուստամ, ինչ երախայութիւններ ես անում,—հակառակվեց Սաւաղը։

—Զորդ ես ասում, հերիք է, այսուհետև ամէն բան վերջացած է, բայց ձի վարձիր, դիտես, ձի վարձիր։

—Թող լուսանայ, յետոյ կը վարձենք, քիչ հանգստացիր, կապոյտ կապտել ես բարկութիւնից։

—Անիծվեն ձեզ պէս ջահիլները,—կատաղեց կրկին Ռուստամը և դէպի դուրս վազեց։

—Բռնեցէք, բռնեցէք, տղերք,—դուչեց Սաւաղը, վազտալով Ռուստամի յետևից։

Ամէնքը բացի խանութի գործակատար Համբարձումից, հետևեցին նրան, անյապաղ միասին դուրս թափվելով։

Ձիւնը շարունակում էր բրդել երկնքից, քամին սաստկացել էր։

Ռուստամը անհետացաւ ձիւնի ալիքների մէջ։

XIII

Առաւօտ էր, քամին դադարել էր, ձիւն չէր գալիս։ Զմերայնի թոյլ արեգակը իւր մեղմ ճառագայթները սփռել էր ձիւնի սպիտակ սաւանով ծածկված Շուրայի շրջակայ դաշտերի, սարերի և անտառների վրայ։

Սէյրանը եափունջու մէջ փաթաթված և օթևանի մի անկիւնում կուչ եկած, ծխում էր։ Նրա անքնութիւնից և հարբեցողութիւնից ուռած ու կարմրած աչքերը յառած էին օթևանի յատակի մի կէտին։ Խղճալի էր այդ բոպէին Սէյրանի կերպարանքը։ Խտաբոյս և կեղտոտ մազերը խճճվել էին ու սփռվել նրա նիհար ճակատի վրայ։ Նրա գունաղուրկ դէմքը, սեղմված շրթունքները արտայայտում էին մի ներքին հոգեկան ալեկոծութիւն։ «Ինչ արի ես, Տէր Աստուած, ինչ արի,—կրկնում էր անդադար ինքն իրան Սէյրանը, բոլոր շնչով ներս քաշելով և կրկին բաց թողնելով ծխախոտի թանձր ծուխը։ «Ինչպէս ծնվեց իմ գլխում այդ չար միտքը»,—ասում էր նա, երբեմն իւր ձախ ձեռը ևս հանելով եափունջու տակից և նայելով մատների ծայրերին։

Ստէպ ստէպ նա գլուխը և ուսերը ցնցողաբար շարժում էր, ինչպէս մի մարդ, որ մտաբերում է մի քաղցրելի և զզուելի տեսարան։

Բա՜ հ, նա զզում է, նրա մազերը ցցվում են, երբ միտն է ընկնում այս գիշերվայ իւր վարմունքը։ Նա ինչ մի չար ոյժ էր, որ ստիպեց Սէյրանին դիմել այդ սարսափելի միջոցին։ Տէր Աստուած, Տէր Աստուած, ինչ հետևանք կունենան Սէյրանի խօսքերը, ինչպէս կը տանի Ռուստամը այդ խայտառակութեանը։ Օ՜օ, Սէյրանը գիտէ, գիտէ, նա լսել է թէ Ռուստամը ինչ բնաւորութեան տէր մարդ է։ Ասում են թէ նա հէնց այս գիշեր ճանապարհ է ընկել դէպի Շամախի։ Ինչու է ճանապարհ ընկել։ Հըմ, ինչու պիտի ճանապարհ ընկնէր, ով լինէր Ռուստամի տեղը, որ մի բոպէ մընար։ Ռուստամը կատաղի, ինքնասէր, կիսավայրենի լազգինների

մէջ ապրած մարդ է։ Նա համբերել չէր կարող, մանաւանդ ուրիշների մօտ, մանաւանդ իւր ընկերների մօտ, որոնց յարգանքը նա միշտ վայելել է իբրև մի պատուասէր, մի նամուսով մարդ։

Սէյրանը ծխախոտը ձգեց մի կողմ եափունջին քաշեց ուսերին, բարձրացաւ տեղից և սկսեց օթևանում շրջել յետ ու առաջ։

—Բա՜ս, այ ինչ ասել է չամախեցու նամուս,—շարունակեց ինքն իրան խօսել Սէյրանը։—Ռուստամը անպատճառ գնաց տեղեկանալու, ստուգելու իմ յայտնած գաղտնիքը։

Գաղտնիքը ստուգվելու է, նա տեսնելու է Սուսանի կրծքի խալը։ Ո՜հ Տէր Աստուած, Տէր Աստուած, եթէ հնար լինէր այդ խալը հէնց այդ բոպէին ջնջելու։ Այն ժամանակ ինչով կը վերջանար բանը։ Այն ժամանակ Սէյրանը ինքը կը կորչէր։ Բայց արդեօք աւելի լաւ չէ՞, որ Սէյրանը ինքը կորչի, քան թէ, քան թէ, այս, մի անմեղ, մի անարատ արիւն թափվի։ Չէ, արդէն ուշ է, բանը բանից անցել է։ Ռուստամը տեսնելու է խալը, իսկ տեսնելուց յետոյ ինչ կանի նա, այդ Սէյրանի համար չատ պարզ է։

—Ուֆ,—խորը հառաչեց Սէյրանը, աջ ձեռով մի ուժգին հարուած տուաւ ճակատին և մնաց օթևանի մէջ տեղում անշարժ։ Յանկարծ նա ձեռը հեռացրեց ճակատից և բացականչեց բաւական բարձր ձայնով։—«Սուսան, այդ ինչ չարութիւն էր, որ ես արի քո դէմ, չէ՞ որ դու արդար ես, ինչպէս մի անմեղ երեխայ, մաքուր ես, ինչպէս այսօրվայ արեգակի լոյսը։ Ի՞նչ տեղ հասցրի քո հաւատարմութիւնը։

Այո՜, ինչ տեղ հասցրեց Սէյրանը Սուսանի հաւատարմութիւնը։ Չէ՞ որ նա Սուսանին սիրում էր, չէ՞ որ հէնց այս սէրն էր, որ տանջում էր նրան։ Բայց ինչպէս պատահեց, որ մի ամսվայ ընթացքում այդ սուր սէրը, սուր ատելութեան փոխվեց։ Ո՞վ էր մեղաւորը, ով էր Սէյրանին փոխողը։ Մթթէ այն ներքին փտած, զզուելի որդը, այն թունաւոր օձը, որ «ինքնասիրութիւն» է կոչվում։ Տէր Աստուած, Տէր Աստուած, մթթէ կարելի է այդպէս ցոյց տալ ինքնասիրութիւն։ Ոչ, ոչ, այսպէս լազգիներն էլ չեն անում։ Այդ վրէժխնդրութիւն չէր, այդ վախկոտութիւն էր, կեղտոտ վախկոտութիւն։ Սէյրանը լսել է և ինքը դեռ մի չարաթ առաջ աչքով տեսել է, թէ լազգին ինչպէս վրէժխնդիր է լինում իւր հակառակորդից։ Լազգին իւր թշնամուն սպանում է, երես առ երես կանգնելով նրա առաջ և սպանում է իւր վրէժը հանելու համար, ճշմարիտ վրէժը։ Լազգին տղամարդ է, տղամարդու հետ է կռվում և

ինչպէս է կռվում—եափունջու վրայ *)։ Լազգին երբէք կինամարտից վրէժ չէ հանում, թէ և այդ կինը իրան մինչև հոգու խորքը վիրաւորած լինէր։ Իսկ Սէյրանը, նա ումից է հանում իւր վրէժը։ —Մի թոյլ մի անդօր արարածից։ Սուսանից։ Ինչու, ինչով է մեղաւոր Սուսանը։ Ինչ է արել Սէյրանին։—Ոչինչ, ոչինչ։ Տէր Աստուած, նա մի խեղճ աղջիկ էր։ Ծնողները տուին իրանց ցանկացած մարդուն և ինքն էլ գնաց։ Ի՞նչ կարող էր անել։ «Չէ, ես վատ բան արի։—դարձեալ բարձր ձայնով սկսեց խօսել Սէյրանը,—շատ վատ բան արի, այնքան վատ, որ ոչ ոք, ոչ ոք չէր անիլ իմ տեղը։ Ախ Աստուած, միթէ ես այնքան ատելի էի քո աչքում, այնքան դու ինձ մոռացել էիր, որ գոնէ մի վայրկեան այս երեկոյ ինձ չը մտաբերեցիր։ Ի՞նչ անեմ հիմայ, ինչպէս արածս յետ դարձնեմ, թքածս ինչպէս լղեմ։ Կը լղեմ, կը լղեմ, եթէ միայն այդ կարելի լինի։ Ծանրը մեղք է, շատ ծանր։ Կայէնի սպանութենից էլ ծանր։ Ցուդայի մատնութենից էլ աններելի և զզուելի։ Ոչնչացրու ինձ, Տէր Աստուած, վեր առ այս աշխարհի երեսից։ Հոգիս տար դժոխք բաժանիր սատանաներին։ Հա, բաժանիր և հրամայիր, որ ասեղների ծայրերին ցցած խորովեն գեհենի կրակի մէջ։ Եա, Սէյրանս, դարշելի արարածս, արժանի եմ այդ պատժին։ Բայց ոչ, ապատիր, միթէ արժանի եմ, միթէ միակ մեղաւորը ես եմ . . .

Սէյրանը մօտեցաւ օթեանի պատուհանին և սկսեց նայել դէպի կարավանսարայի բակը։ Նրա անորոշ հայեացքը անցնում էր բակում գտնվող մի առարկայից դէպի միւսը։ Նա կամ մտիկ էր անում դատարկ, փէյնաթաթախ տայլերին, որոնց մօտ կապած ձիերը, գլուխները մի մսուրի մէջ մտցրած, գարման էին ուտում, երբեմն խրխնջալով, կամ մտիկ էր անում տախտակեայ ծածկոցի կտուրին, որի տակ մի խումբ տայլապաններ խարոյկի շուրջը տաքանալով խօսում էին ու ծիծաղում։ Մօտ քառորդ ժամ նա մնաց այդ դրութեան մէջ։ Յանկարծ նա երեսը շուռ տուաւ, ձեռքերը խաչաձև դարսեց կրծքին, գլուխը քիչ թեքեց դէպի աջ ուսը և սկսեց ինքն իրան խօսել։—Ծնվեցի թէ չէ, այս

*) Դաղստանում կատաղի թշնամիները երբեմն եափունջին սիրում են գետնին և նրա վրայ մենամարտում սրերով։ Հակառակորդը եթէ ոտը եափունջուց դուրս դրաւ, յաղթված է համարվում։ Այդ սովորութիւնը այժմ հետզհետէ թուլանում է։

Ս. Հ.

աշխարհում մի բախտաւոր, մի հանգիստ օր չը տեսայ և սպասում եմ, որ այսուհետև տեսնեմ։ Այսուհետև, երբ բանը բանից անցել է, երբ յոյսերս մեռել են։ Չէ, որքան որ մտածում եմ, ուրիշ ելք չը կայ բացի մէկից։

Արտասուքի կաթիլները դուրս գլորվելով նրա աչքերից և սահելով նիհար երեսով, թրջեցին նորարոյս միրուքը։ Նա հանեց արխալուղի գրպանից մի կեղտոտ թաշկինակ և նրանով ցամաքացրեց աչքերը։

—Մնացէք բարով, ծնողներ, մնաս բարով, մայր իմ։ Ես ձեզ այնքան չարչարել եմ, որ լեզուս անգամ չէ պատում ներողութիւն խնդրելու։ Բնան տարով դուք չուտ ծերացաք իմ պատճառով։ Ներեցէք և դուք, Բարխուդար, Գիւլնազ և Ամբատ, հա, ես ձեզ էլ շատ տանջեցի։ Հա, Բարխուդար, ես քեզանից ներողութիւն եմ խնդրում, ես քո անունը ի զուր տեղը Շամախում կոտրեցի։ Ով որ լինէր քո տեղը ուրիշ կերպ չէր կարող անել։ Հիմայ ես գիտեմ, որ այդ բոլորի մեղաւորը ես եմ։ Սուսան, Սուսան, քեզ ինչ ասեմ, քեզանից ինչ երեսով ներողութիւն խնդրեմ։ Մեղքս այնքան ծանր է, որ ներողութիւն խնդրելը անգամ մի ուրիշ յանցանք կը լինէր։ Բայց ինչպէս անեմ։ Դու անպատճառ զոհվելու ես իմ չար ստախօսութեանը։ Հրմ, ինչպէս անեմ։

Սէյրանը կրկին լռեց և դարձեալ ընկաւ մտածողութեան մէջ։ Ջ'անցաւ երկու րոպէ, երբ նա յանկարծ գլուխը բարձրացրեց և կրկին սկսեց խօսել բարձր ձայնով։ —«Էհ, վճռված է, էլ երկար մտածել հարկաւոր չէ, փչրված ամանը չի կարելի սաղացնել, իսկ կոծկել ես չեմ ուզում։ Մնում է միայն մի միջոց և այդ միջոցը իմ ձեռին է։ Ահա։

Այդ ասելով, Սէյրանը յանկարծ եափունջին ուսերից ցած գցեց, կանգնեց օթեանի մէջ տեղում և խանչալը մերկացրեց։

Այդ ժամանակ նրա աչքերը փայլեցին կատաղի հրով, շրթունքները սեղմվեցին, քթի պնչերը չռվեցին։ Նա մտիկ արաւ խանչալի այս երեսին, այն երեսին և կոթը աւելի ու աւելի աջ ձեռում սեղմելով, փոքր առ փոքր բարձրացրեց։ Նա խանչալի ծայրը պահեց կրծքից մի փոքր ներքև, ձախ ձեռը յենեց կողքին և իւր հայեացքը դարձնելով աջ ձեռին, որով սեղմած ունէր խանչալի կոթը, բարձր ձայնով ասաց։

—Առանց հաղորդվելու, բայց մեղքերս խոստովանելով, Տէր Աստուած, տալիս եմ իմ հոգին Սադայելի ձեռը։ Խանչալ, անցիր

օրը քո ծախողը գովում էր քեզ, ես քեզ մինչև այժմ չեմ փորձել, տեսնենք ինչպէս ցոյց կը տաս հունարդ։

Սէյրանի ձախ ձեռը թուլացաւ, ընկաւ կողքին։ աջ ձեռը դողաց և յանկարծ խանչալը ընկաւ օթեանի յատակի վրայ սուր ծայրով և խրվեց գետնի մէջ։

—Չէ, չեմ կարող, Աստուած չէ թողնում։

Նա վերցրեց խանչալը և չպրտեց օթեանի մի անկիւնը։

—Դու չես կարող Սուսանին մահից ազատել,—ասաց նա, նայելով խանչալին։ Դեռ ժամանակ կայ, ժամանակ կայ իմ սրխալը ուղղելու։ Այս բոպէին, հէնց այս բոպէին վարձել մի ձի և չտապել նրա յետևից։ Ես կարող եմ հասնել նրան։ Ես կը հասնեմ, ճշմարտութիւնը կը պատմեմ, կասեմ, որ սուտ եմ ասել, կասեմ, որ հարբած էի։ Այդ լաւ պատճառ է, հարբած լինելու։ Տէր Աստուած, գոնէ այս անգամ ինձ միտդ բեր, այս անգամ օգնիր, իսկ յետոյ ինչ ուզում ես, կանես։ Արարիչ Աստուած, քո ձեռին է ամեն բան, կարող ես Ռուստամի ձիու մի ոտը ճանապարհի կիսում կոտրել կամ իմ ձիուն թեւեր տալ։

Այս ասելով, Սէյրանը եափունջին կրկին ձգեց ուսերի վրայ, վեր առաւ խանչալը, դրեց պատեանի մէջ, երեսին երեք անգամ խաչակնքեց և դուրս գնաց։

Դրսում քամի չկար, արեգակ էր, բայց եղանակը սաստիկ սառն։ Սէյրանը ուշադրութիւն չը դարձնելով իւր հագուստին, դիմեց դէպի հրապարակի միւս ծայրը և անհետացաւ նեղ փողոցներից մէկում։

XIV

Այդ օրից ուղիղ մի շաբաթ էր անցել։

Իրիկնադէմ էր։ փետրվարի թոյլ արեգակը արդէն հորիզոնից ցած իջնելով, մայր էր մտնում։ Շամախու կիսախարխուլ շինութիւնները, հողի և քարերի կոյտերով ծածկված կեղտոտ ու ցեխոտ փողոցները ներկայացնում էին մի մելամաղձոտ տեսարան։ Ցերեկվայ աշխատանքից յոգնած և թուլացած բնակիչները դանդաղութեամբ դիմում էին իրանց տները, ով գիտէ ինչ մտքերի մէջ խորասուզված։

Օրը շաբաթ էր։ Վերջին երկրաշարժի հարուածից ջախջախված վաղեմի եկեղեցու զանգակները ժամեար Մովսէսը միատեսակ զարկերով հնչեցնում էր բաւական ներդաշնակ կերպով։ Սպիտակահեր ծերունիները, յենվելով իրանց ձեռնափայտերի վրայ, պառաւ կանայք չարշաֆների մէջ փութաթված, կուզկուզալով դիմում էին դէպի Աստուծոյ տաճարը, իրանց սովորական աղօթքը կատարելու։

Տէրտէրները առ ժամանակ փողոցում հաւաքված, եկեղեցու դռների առաջ մի քանի բարեպաշտների հետ խօսում էին ու գանգատվում ժողովրդի վրայ, որ եկեղեցի չէ յաճախում։ Նայեցէք այս կողմ, ահա մէջ տեղում կանգնած է Տէր-Աբրահամը, երկու ձեռքերը գաւազանի ծայրին յենած և երկար ու չալ միրուքը առաջ ցցած։ Նա համ խօսում է, համ էլ մտքում համարում եկեղեցի մտնողների թիւը։ Ահա տէրտրտմեան ձեռքում պատացնելով մօտեցաւ «մոլթանի Գասպարը»։—Օրհնեա տէր,—ասաց նա և թեքելով գլուխը, ցոյց տուաւ տէրտէրին իւր մաշված փափաղի ծայրը։—«Աստուած օրհնի,—պատասխանեց տէրտէրը և խկոյն քթի տակ աւելացրեց աչքունքը ծռելով, «դէնրժկան եկաւ»։ Մոլթանի Գասպարը միշտ գանձանակ էր գցում քառորդ կոպէկից ոչ աւել, այդ պատճառով Տէր Աբրահամը շատ էր ատում նրան և «դէնրժկա» էր անուանում։

Վերջապէս փոքր առ փոքր բարեպաշտների թիւը չատացաւ և տէրտէրները քաշվեցին ներս, որ ժամերգութիւնը սկսեն։

Անգամը, որ Շամախու ամենաեկեղեցասէր պառաւներից մէկն էր, զանգակների ձայնը լսելով, խկոյն չարշավը դցեց գլխին։

—Սուսան, մինչև յետ գալս չայը պատրաստիր, որ ցրտից գամ մի երկու բաժակ տաք տաք խմեմ,—հրամայեց նա, դռներից դուրս գնալիս։

—Աչքիս վրայ,—պատասխանեց Սուսանը և չտապեց կատարելու իւր սկեսրոջ հրամանը։

Անցաւ քառորդ ժամ Սանամի դուրս գնալուց, Սուսանը գընաց խոհանոց, ինքնաեռում կրակ գցեց և կրկին վերադարձաւ սենեակը։

Պառկվելուց յետոյ առաջին վեց շաբաթվայ ընթացքում Սուսանի առողջութիւնը բաւական կազդուրվել էր։ Նրա նիհարած և պշկած երեսի վրայ կրկին սկսեցին երևել նախկին կայտառութեան նշանները։ Բայց աւաղ, այդ բարեփոխութիւնը երկար

չը տեսնեց։ Անցան առաջին չարաթները և նա կրկին սկսեց թառամել և այս անգամ աւելի արագ։

Սանամը այդ նկատում էր։

—Ախչի, ինչդ է պակաս, որ օրից օր էդպէս հալվում մաշվում ես,—հարցնում էր նա ստէպ-ստէպ։

—Չեմ իմանում,—պատասխանում էր Սուսանը մի հոգոց հանելով ամեն անգամ։

—Ախար էլի։

—Ով է իմանում, կարելի է նրանից է։

—Ինչից։

—Պատճառաւոր . . .

—Ղորդ, հոգը զլխիս, ախար երկու հոգիս ես . . .

Եւ այդպէս, վերջապէս Սանամը գտաւ իւր հարսի մաշվելու պատճառը և դադարեց անհանգստացնելու վերջինին իւր միատեսակ և ձանձրացուցիչ հարցերով։

Երբ Սուսանը առանձնացաւ սենեակում, նստեց թախտի վրայ և սկսեց նիհարած ձեռքերին նայել։

—Ղորդ է ասում սկեսուրս, չատ եմ լղարել, մատներս չոփեր են դառել, ոսկորներս համարել կարելի է,—ասում էր նա ինքն իրան, ձեռքերը սեղմելով և բանալով։

Մի բոպէի չափ նա պարապեց իւր ձեռքերով, իսկ յետոյ կլոները ծալելով, դրաւ կոնատակին և ընկաւ մտածմունքների մէջ։

Դեռ երեկ գիշեր Սուսանը Սէյրանին երազում տեսաւ։ Ինչպէս փոխվել էր Սէյրանը, որքան ուրախ և զուարթ էր նա։ Սուսանը երբ նրան տեսաւ ուրախ, ինքն էլ ուրախացաւ։ Նա մօտեցաւ իւր սիրեցեալին, բռնեց նրա ձեռից, ուզեց որ խօսի, բայց սիրեցեալը մի ծուռ հայեացք ձգեց Սուսանի վրայ, ձեռը խլեց, երեսը շուռ տուաւ և առանց մի խօսք ասելու, հեռացաւ։ Արտասուքը աչքերում Սուսանը նայում էր Սէյրանի յետևից, բայց սա ուշադրութիւն չէր դարձնում, գնում էր ու գնում։ Նա կարծես թէ փախչում էր Սուսանից, ինչպէս մի զարհուրելի գազանից, որ կարծես թէ պիտի իրան կլանէր։ Սուսանը բարձր ձայնով գոչեց նրա յետևից, «Սէյրան, Սէյրան, մի փախչիր, ես եմ, ես եմ, Սուսանդ եմ»։ Սէյրանը մի քանի վայրկենաչափ երեսը պարանեց Սուսանին։ Ով, Տէր Աստուած, որքան զարհուրելի էր նրա դէմքը։ Նրա աչքերը այրվում էին, բերանից կրակ էր դուրս գալիս, ինչպէս թոնրից։ Նա աջ ձեռը բարձրացրեց դէպի երկինքը, մի բան արտասանեց, բայց ինչ էր այդ բառը, Սուսանը չը լսեց։ Յետոյ Սէյրանը կրկին երեսը շուռ տուաւ Սուսանից և սկսեց փախչել։ Սուսանը վազ տուաւ, որ հասնի, բայց ինչպէս կարող էր հասնել նրան։ Սէյրանը վազ էի տալիս ինչպէս մի ձի։ Սուսանին մինչև անգամ այսպէս թւաց, որ Սէյրանը մէջքից ներքև ձի էր, իսկ վերևը մարդ։ Տէր Աստուած, Տէր Աստուած, այդ ինչ է նշանակում, ինչպէս բացատրել այդ երազը։ Երեկ առաւօտեան գոռալով և սարսափած Սուսանը զարթեց քնից և իսկոյն բացեց «Էֆիմերզէն» ու մտիկ տուաւ։—«Օրը բարի է, երազը քառասուն օրն կատարի»։

—Քառասուն օր, ախ ինչ ուշ, ինչպէս պիտի կատարվի,—ասաց բարձր ձայնով Սուսանը,—Տէր Աստուած, դու չարը խափանես, բարին առաջնորդես։

Սուսանը երեք անգամ երեսին խաչակնքեց։

—Նա ինձանից խռովել է, այդ ես իմանում եմ,—դարձեալ չարունակեց խօսել Սուսանը։ Բայց մինթէ այժմ նա ինձ ատում է։ Անկարելի բան է։ Չէ, ես չեմ հաւատում, չեմ հաւատում, որ Սէյրանը ինձ ատելիս լինի։ Սէյրանը ինձ ատել չի կարող, չի կարող, նա ինձ սիրում է, սիրում է խելագարի պէս։ Այդ է վատը, այդ է իմ անատանելի ցաւը։ Մայրս ասում է, որ Հայրապետը այժմ ուզում է հաշտվել հօրս հետ, որ նրանք էլի առաջվայ պէս չարունակեն իրանց բարեկամութիւնը։ Իսկ Մարիամ բաջին չի ներում ինձ, նա չէ ուզում մեզ հետ հաշտվել։ Քանի քանի անգամ մօրս ուղարկել եմ, որ նրան ինձ մօտ բերի, բայց նա չէ եկել։ Խեղճ կնիկ, եթէ դու ամեն բան հասկանայիր, եթէ դու իմ ցաւերը իմանայիր, կարելի է, որ քո որդին այսօր օրքա օրքա չ'ընկնէր։ Ասում են, որ նա Շուրումն է։ Ինչու է գնացել, ինչ գործ ունի այնտեղ։ Մազերս փչաքաղվում են, մարմինս զարզանդում է, երբ միտս է ընկնում, որ Սէյրանը այնտեղ կարող է Ռուստամին պատահել։ Հա, երկուսն էլ, երկուսն էլ կը փչանան, տաքարիւն ազերք են։ Բայց հազար անգամ երանելի կը լինեմ, եթէ նրանց տեղ ես կորչեմ, փրչանամ այս աշխարհում։ Սէյրանը ուզում է երեւի Ռուստամից հանել իրան սիրը։ Բայց, ինչով է մեղաւոր խեղճ Ռուստամը։ Տէր Աստուած, Տէր Աստուած, հերիք է ինչքան ինձ պատեցիր, ու այժմ հոգիս, ազատիր ինձ վերջապէս։

Սուսանը կոնները յենեց ծնկներին և գլուխը դրաւ ձեռքերի ափերի մէջ։ Եւ այդ ժամանակ նրա առաջ սկսեց պատկերանալ իւր անցեալը։ Նա մտաբերեց իւր մանկութիւնը, երբ Սէյրանի հետ

ամառ օրերը գլխարաց արեգակի մէջ տիկին-տիկին էր խաղում։ Նա յիշեց երկրաչարժի օրը, երբ ինքը Սէյրանի հետ մնաց հողի տակ։ «Երանի, հազար երանի, եթէ ես հէնց այն օրը մնացի, ինչու՞ ինձ ազատեցիր, Աստուած։ Ինչու։ Որ ես էլ չարչարվեմ, ուրիշներին էլ չարչարեմ հա։

Յետոյ Սուսանը մտաբերեց ուսումնարանական կեանքը, յիշեց դեղնած ու պչկած Հռիփսիմէին, որ օրական հինգ անգամ սովորում էր իւր աշակերտուհիներին «Հայր մերը» կրկնել և ամէն անգամ ինքը երեսը դէպի աղօթարան չոքած, ձեռքերը կրծքին ծալած, աղօթում էր, իւր կապտած շրթունքները շարժելով։ «Մեռաւ խեղճ կնիկը, գնաց այն աշխարհ, նրա հոգին հիմայ արքայութիւնումն է։ Հա, երանի քեզ, կոյս, որ դու այս ցաւերը չես քաշել, աշխարհից հեռացած և Աստուծուն նուիրված»։

Այնուհետև Սուսանը մտաբերեց իւր ընկերուհիներին և Սուսանարին։ Սուսանարը ասում է, որ ինքնասպանի հոգին առանց դատաստանի Աստուած դժոխքն է ուղարկում։ Վայ ինձ, վայ ինձ, սատանան քանի քանի անգամ է ուզեցել ինձ խաբել։ Սպանեմ ինձ և բացի ինձանից մի ուրիշ անմեղ անարատ հոգի։ օ՜օ՜ այդ դժուար է։ շատ դժուար է»։

Ինքնասպանութեան միտքը սարսափեցրեց Սուսանին։ Նա այդ բանից վախեցած, բարձրացրեց գլուխը և սկսեց անգիտակցաբար նայել սենեակի առաստաղին։ «Ի՞նչ մեղ ունի այն փոքրիկ արարածը, որ դեռ նոր պիտի աշխարհ ընկնի»։

Մի քանի վայրկեան այդ մտքով զբաղված, Սուսանը նայում էր առաստաղին։ Յետոյ նա գլուխը թեքեց կրծքին և կրկին սկսեց մտիկ անել իւր նիհարած ձեռքերին։

— Չէ, շատ եմ մաշվել — ասաց նա ինքն իրան, — շատ եմ մաշվել, սրտիս թոթոցն էլ սաստկացել է։ Օրերով հաց չեմ ուտում։ Տէր Աստուած, Տէր Աստուած, չէ՞ որ այդ էլ ինքնասպանութիւն է։ Դէհ, հերիք է, հերիք է ինչքան տանջեցիր, երեսդ ինձ պարանիր, մի խռովիր գլխիս, աղաչում եմ . . .

Այդ ասելով Սուսանը չոքեց, դողդոջուն ձեռքերը պարզեց դէպի երկինք և սկսեց աղօթել։ Նա մահ էր խնդրում Աստուծուց։ Նրա կապտած, արիւնաքամ շրթունքները ցնցողաբար դողդողում էին և նրա կիսամաշ աչքերի մէջ փայլում էր խորին մտայլութիւն։ Երբ Սուսանը գլուխը վեր քաշեց, երկար գիսակները թափվեցին նրա ոսկորացած ուսերի վրայ։

Այդ դրութիւնում Սուսանը նմանում էր այն վանական անարատ կուսին, որ նիւթական աշխարհից հրաժարված, ձգտում էր հոգիանալ և համբարձուիլ երկինք, դէպի հոգիների սփերան։

XV

Դարձեալ եկեղեցու զանգակները հնչեցին։ Քաղաքի հիւսիսային կողմում, դէպի Ղուբայ քաղաքը տանող ճանապարհի վրայ երևեցաւ մի ձիաւոր լազոյ չուլլահին գլխին սեղմած և սև եռփունջու մէջ փաթաթված։

Ռուստամի ձին յոգնած էր և հազիւ կարողանում էր փոխել իւր ոտները։ Եօթներորդ օրն էր այդ օրը, որ Ռուստամը Շուրայից դուրս էր եկել։ Եօթն օր շարունակ, առանց որ և է քաղաքում հանգստանալու, նա ճանապարհ էր գալիս։ Թէ ինչ մարմնաւոր և հոգեկան տանջանքներ էր կրել Ռուստամը այդ եօթն օրվայ ընթացքում, — այդ նկարագրել անհնարին է։ Կարելի է միայն այդքանը ասել, որ նա անհամբերութեամբ դիմում էր դէպի Սուսանը, դիմում էր դէպի այն արարածը, որ «Ռուստամի նամուսը ծախել էր ուրիշներին»։

— Լաւ կորաս, լաւ փչացաս քսանեւեօթ տարում աշխատած անունս, — կրկնում էր նա անդադար, մտրակելով ձիուն և անցնելով Դաղստանի սարերը ու դաշտերը։

Եւ այդ մտքով յափշտակված, ինքն իրան մէջ խորասուզված Ռուստամը ուշադրութիւն չէր դարձնում ոչ քամուն, ոչ ձիւնին ու բուքին և ոչ էլ որ և է վտանգին։

Վերջապէս ահա նա հասել է Շամախի, կէս ժամ ևս, և ահա նա կանգնած կը լինի Սուսանի դէմ ու դէմ։ Սակայն զարմանալի բան։ Եօթն օր է նա անհամբերութեամբ շտապում է Շամախի հասնելու, եօթն օր է որ նրա միտքը կաչկանդված է միայն և միայն շուտ տեղ հասնելու ցանկութեամբ։ Իսկ այժմ, երբ նա գրէթէ Շամախումն է, այժմ կարծես թէ նա այլ ևս չէ շտապում։ Մի միտք, որ մի բոպէ, գէթ մի վայրկեան նրա գլխով չէ անցել այն ժամից սկըսած, երբ նա կատաղած դուրս թռաւ խանութից — այժմ յանկարծ ծնվեց նրա ուղեղում։ այժմ, երբ ընդամենը միայն կէս ժամ է մընում, որ պիտի ամէն ինչ պարզվի։

—Ի՞նչ պիտի անեմ, եթէ Սէյրանի ասածը հաստատվի,— ասաց նա յանկարծ ինքն իրան և քաշելով ձիու սանձը, կանգնեց ճանապարհի մէջ տեղում։

Ռուստամը բարձրացրեց իւր գլուխը, նայեց դէպի քաղաք և նրա հայեացքը ընկաւ ռուսաց եկեղեցու բարձր գմբեթի վրայ։

—Բահ, հրէս եկեղեցին էլ երևում է, ես հասել եմ,—չարունակեց նա խօսել ինքն իրան։ Ինչու եմ եկել, հըմ։ Բահ, ինչպէս թէ ինչու եմ եկել, մթթէ այդ ինձ յայտնի չէ։ Ես եկել եմ, հա եկել եմ իմանալու այն, ինչ որ ուզում եմ իմանալ։ Բայց եթէ իմացայ, եթէ ստուգվեց նրա ասածը, յետոյ։ Հըմ, նահլաթ, նահլաթ քեզ չար սատանայ։

Նա մի քանի անգամ չարունակ կրկնեց «նահլաթ քեզ չար սատանայ», նայելով մերթ եկեղեցու գմբեթին, մերթ իւր ձիու բաշին։ Յայտնի չէր ինչու, վերջին անգամ «նահլաթ քեզ չար սատանայ» արտասանելուց յետոյ, նա խկոյն կուռը մեկնեց և ձեռի ափով շոյելով ձիու բաշը, ասաց։ «խեղճ հէյվան, խեղճ հէյվան, շատ ես նեղացել»։ Մի րոպէ նա այդ դրութեան մէջ մնաց, յետոյ յանկարծ նա մտրակեց ձիուն և ձին խրխնջալով սկսեց առաջ գընալ։ Բայց մի քանի քայլ չ'անցած, նա կրկին քաշեց սանձը և կանգնեց։ Այս անգամ նա աջ ձեռը յենեց թամբի գունդի վրայ, մէջքը քիչ թեքեց և ընկաւ մտածողութեան մէջ։ Անցաւ մի քանի րոպէ ևս, և նա իրանը ուղղելով, կրկին նայեց դէպի քաղաք։ Այդ ժամանակ թայլ կերպով նրա ականջներին հասաւ եկեղեցու զանգակների ձայնը։ Դողոցի նման մի բան զգաց նա մի վայրկեան երբ լսեց այդ ձայնը։

—Մայրս հիմայ չարշովի մէջ փաթաթված, եկեղեցու սևացած սիւնի տակ կանգնած, աղօթք է անում ինձ համար, որ «զարիր օլքաներում նրա մենակ բալին Աստուած խաթարալից հեռու պահի»։

Ռուստամը մտաբերեց իւր մօրը աղերսող դէմքով եկեղեցու պատկերներից մէկի առաջ մոմ վառելիս, մտաբերեց և ձեռը յանկարծ դրաւ աչքերի վրայ, մի քանի անգամ կրկնելով «խեղճ մայր, խեղճ մայր»։ Թէ ինչու էր այդպէս խղճում Ռուստամը իւր մօրը— այդ ինքն էլ որոշ չը գիտէր։ Բայց մի քանի անգամ այդ խօսքերը կրկնելուց յետոյ, նա ձեռը հեռացրեց ճակատից, ոտերով բոթեց

ձիու փորին և առաջ գնաց։ Անցաւ մի յիսուն քայլ և դարձեալ նա ձիուն պահեց։

—Պէտք է ճշմարիտը իմանալ,—դարձեալ սկսեց նա ինքն իրան խօսել—այդպէս չի կարելի։ Պէտք է ես իմանամ, թէ ով է այս բանում գլխաւոր մեղաւորը։ Ասենք թէ խալը...ուֆ։

Ռուստամը ապտակ տուաւ ճակատին և մի քանի վայրկեան լռեց։

—Ասենք թէ նա երևեցաւ Սուսանի կրծքի վրայ,—չարունակեց նա—ասենք թէ Սէյրանի խօսքը ուղիղ դուրս եկաւ։ Յետոյ։ Ո՞վ է մեղաւորը, Սուսանը, Սէյրանը, թէ մի ուրիշը։ Սուսանին մայրս է ուղել ինձ համար, ուրեմն նրա մասն էլ խառն է, ուրեմն նա էլ է մեղաւոր։ Զարանդիզի Շերպպանիկը միշնորդ է եղել, ուրեմն նրա մասն էլ է խառն, ուրեմն Շերպպանիկն էլ է մեղաւոր։ Քանիսը, քանիսը, Տէր Աստուած։ Մայր, մայր, ինչու դու կենդանի թաղեցիր քո Ռուստամին։ Դրանով ես պարծենում, որ նրան սիրում ես, այդ է քո մայրական խնամքը։ Շերպպանիկ, հըմ, դու սատանաների աղբից գոյացած արարած, դու խորամանկ կնիկ, նոր չալ էր հարկաւոր քեզ, հա։ Լաւ, շատ լաւ, սպասիր, սպասիր և կը սատանա։ Տէր Աստուած, Տէր Աստուած, հասել եմ, հասել եմ, բայց կարծես թէ մի բան ինձ վախեցնում է։ Ինչիցն եմ վախում, ումից։ Լաղդիների մէջ ապրած մարդու սրտում «վախ» ասած բանը ինչ է անում։ Չէ, ես չեմ վախում, ես կնիկ չեմ, աղամարդ եմ։ Գնա, գնա, հէյվան, տար տիրոջդ։

Ռուստամը մտրակեց ձիուն և հասաւ քաղաքի ծայրին։ Օրը դեռ չէր մթնել, երբ նա մտաւ փողոցները։ Ռուստամին սկսեցին հանդիպել ծանօթ դէմքեր, բայց նա խորասուզված լինելով իւր մտքի մէջ, ոչ ոքի վրայ ուշադրութիւն չէր դարձնում։ Այս ու այն կողմից ծանօթները նրան տեսնելով, զանազան նշաններով սկսեցին ողջունել նրա զալուստը։ Նկատում էր թէ ոչ Ռուստամը այդ բարևները, բայց անտարբերութեամբ մի հայեացք ձգելով բարեկոչների վրայ, նա առանց պատասխանելու անցնում էր։ Երբ նա հասաւ իրանց փողոցի ծայրին, այստեղ կրկին պահեց ձիուն։

—Հասել եմ, Տէր Աստուած,—անցաւ նրա մտքով,—Տէր Աստուած, ջնջիր Սուսանի կրծքից այդ նշանը, ոչնչացրու խալը, եթէ միայն կայ, ապա թէ ոչ իմ աչքերը կը տեսնեն։ Մի կորցնիր հոգիս, Տէր Աստուած, մի թողնիր, որ ես դժոխքի կերակուր դառնամ, ես չեմ ուզում, չեմ ուզում արիւն թափել։ Ո՜հ, եթէ կարելի

լինէր ծակել սիրտս և միջի արիւնով ջնջել Սուսանի կրծքի այդ խալը, որ ես չը տեսնեմ։ Սիրտս վկայում է, որ կայ այդ խալը Սուսանի կրծքի վրայ,—աւարտեց Ռուստամը և ձիուն մըտրակելով, հասաւ իրանց դռներին։ Նա արագութեամբ ցած թռաւ ձիուց և մի ուժգին հարուած տալով դռներին, բացեց և ձիու սանձը ձեռին ներս մտաւ։

Ռուստամը գլուխը վեր բարձրացրեց և նրա հայեացքը ընկաւ պատշգամբի վրայ կանգնած մի կանացի կերպարանքի վրայ։ Այդ ժամանակ կարծես թէ մէկը սաստիկ հարուած տուաւ նրա յետևից։ Ձիու սանձը ընկաւ նրա ձեռից և ինքը մի քանի քայլ առաջ գնաց ու կանգնեց։ Կանացի կերպարանքը անշարժ կանգնած նայումէր Ռուստամի վրայ։ Ռուստամը գնաց առաջ, բայց ձիուն մտաբերելով, յետ դառաւ կրկին, սանձը վերցրեց և ձեռով նշան արաւ կանացի կերպարանքին։

Սուսանը չը հաւատաց իւր աչքերին, նա չը հաւատաց, որ իւր առջև կանգնած է ամուսինը։ Սակայն երկար չը տևեց նրա երկմտութիւնը, նա ուշքի եկաւ, մի ինչ որ բառ արտասանեց բարձր ձայնով և պատշգամբից գլխակոր ցած իջաւ։ Ամուսնական պարտաւորութիւն էր, թէ մի ուրիշ զգացմունք, այդ ինքը գիտէր, միայն Սուսանը մի ուրախ ժպիտ երեսին դիմաւորեց Ռուստամին։ Բայց որ այդ ժպիտը կեղծ էր և ակամայ—այդ երևում էր Սուսանի աչքերից, որոնց արտայայտութիւնը չէր համապատասխանում երեսի փոփոխութեան։ Սուսանը վազեց դէպի Ռուստամը, որ բարևեն իրան։ Բայց նրա հայեացքը ընկաւ վերջինի ծռմռված դէմքի վրայ, նա չը կարողացաւ առաջ շարժվել և կանգնեց մի քանի քայլ հեռու։

—Ո՞ւր է սկեսուրդ,—հարցրեց յանկարծակի Ռուստամը իւր կոշտ և անյողդողդ ձայնով։

—Ժամումն է,—պատասխանեց Սուսանը, ձեռքերը կրծքին խաչելով և գլուխը քարշ ձգելով, ինչպէս կախաղանին դատապարտված մի յանցաւոր։

Ռուստամը ձիու սանձը բռնեց և տուաւ Սուսանին։

—Ո՞վ կայ տանը։

—Մէնակ եմ,—պատասխանեց Սուսանը, սանձը առնելով։

—Մէնակ ես։

—Մէնակ եմ։

—Հըմ։ Լաւ, տար և ձին կապիր ախոռում, գարի ու դարման

ածիր առաջը, շատ ածիր, իմացար։

—Աչքիս վրայ,—պատասխանեց Սուսանը և շտապեց իւր ամուսնու հրամանը կատարելու։

—Ցնատ չուտով տուն եկ,—աւելացրեց Ռուստամը, նափունջին ուսերից ձգելով թամբի վրայ։

Երբ Սուսանը ձիու սանձը ձեռին քիչ հեռացաւ, Ռուստամը նայեց նրա յետևից և ինքն իրան ասաց։ «ինչ անմեղ է ձևացնում իրան։ Ցնատ նա արագութեամբ բարձրացաւ պատշգամբի վրայ և առանց հանելու, ցեխոտ կօշիկներով մտաւ սենեակը։ Նա մօտեցաւ և նստեց պատի տակ չինած թախտի վրայ, երեսը դէպի բակը։ Մի րոպէ չանցած, դրսից լսվեց Սանամի ձայնը։

—Ղորդ ես ասում, ախչի, որտեղ է, որտեղ է, դէ, ասիր, ախչի, սիրտս ճաքեց, տրաքեց քիթս։

Ռուստամը լսելով այդ ձայնը, քթի տակ ասաց ինքն իրան. «ուրախացել է»։

Սանամը գլխակոր ներս վազեց։

—Ռուստամ, բալա, դու ես...ը՝ ես քո ոտերի տակին թարթափել անեմ, վայ ես բոյիդ մեռնեմ, բարով հազար բարով ես եկել, այ զեղա։ Մօտեցիր, մօտեցիր, այ զեղա, որ մին պաչեմ էդ սիրուն աչքերդ։

Այդ ասելով, կարօտեալ մայրը յարձակվեց իւր սիրեցեալ զաւակի վրայ, որ համբոյրներով ծածկէ նրա երեսը։ Բայց սիրեցեալ զաւակը հրեց նրա կրծքին և երեսը մի կողմ շուռ տուաւ։

—Ախչի, մաղս կտրվի, տղաս չի թողնում, որ իրան մօտենամ, այ զեղա, չես սմաչում։ Թող պաչեմ, թող պաչեմ, ախար քանի վախտ է պռօշներս կարօտել են։ Ախ, քոռանամ ես, խելքս Աստուած առել է գլխից, ախար դու ցրտից ես գալիս։ Ախչի Սուսան, չուտ արա սմավարը տուն բեր, չայ չինի, որ բալաս տաք տաք մին քանի ստաքան խմի։ Ռուստամ, բալաս, ասիր, խոսիր, քէֆդ, հալդ, օվհալդ։ Հըմ, մին տեսնեմ, լղարել ես, թէ քօքացել, հըմ, ինչու չես խոսում հա, զորդ, քար կտրվեմ, ցրտից ես եկել...

Եւ այդպէս միամիտ Սանամը քնքշութեամբ գուրգուրում էր իւր զաւակին, ուրախութենից զանազան պատմաններ անելով նրա շուրջը։ Նա իրարու յետևից զանազան հարցեր էր առաջարկում և Ռուստամից պատասխան չը ստանալով, ինքն իրան պատասխանում էր։

Սուսանը ինքնաեռը ներս բերաւ և սկսեց շտապով թէյ

պատրաստել։ Սանամը չարչվը չպրտեց մի կողմ, ճրագը վառեց և դրաւ սեղանի վրայ։ Ճրագի լոյսը տարածվեց Ռուստամի տխուր և սպրանած դէմքի վրայ։ Նա լուռ էր և չփոթված պառում էր ցեխոտ կօշիկներով սենեակի այս անկիւնից դէպի միւսը։

Մինչև այդ բոպէն միամիտ Սանամը չէր նկատել իւր որդու տխրութիւնը, իսկ երբ նրա հայեացքը ընկաւ Ռուստամի երեսին, խեղճ կինը զարմացաւ։

—Հըմ, չէ ախար, հըմ այ գեղա, թող տեսնեմ, այ գեղա, ինչ է ինել, որ աչք-ունքդ կախ ես դցել—հարցրեց նա, չփոթվելով և վախվախելով ձեռքերը առաջ տարածած։

—Նեղացած եմ,—պատասխանեց վերջապէս Ռուստամը։

—Դինջացիր, դինջացիր, բալա։ Սանամը քար ու քեսասդ կարվի, նա տաք տեղ նստի, դու չոլերում, ցրտի ու ձիւնի տակ չափ հա չափ անես։ Քար կարվի Սանամդ, քար։ Դինջացիր, տեղերդ չինեմ, հա։

—Շինիր։

—Առաջ չորերդ փոխիր, քրտնած ես, կը մրսես։ Ձայ խմիր, հաց կեր ու յետոյ։ Ախչի Սուսան, ինչ իլաս քեզ, չայ բեր, փլով եփիր։

Սուսանը երկու բաժակ չայ բերաւ։ Ռուստամը իրարու յետևից դատարկեց և կրկին հրամայեց, որ անկողին պատրաստեն չուտով։

—Դու հեռացիր միւս սենեակը,—ասաց նա Սանամին։

—Ի՞նչ, ինչ ասացիր, հեռանամ,—հարցրեց Սանամը զարմացած, որպէս թէ նրան մի անկարելի բան էին հրամայում։

—Գնա, թող քիչ հանգստանամ, էգուց կը խօսենք։

—Բաս էս գիշեր, էս գիշեր, ես պիտի կողքիդ քնեմ։

—Ձեռ քաշիր,—կրկնեց Ռուստամը կոշտ ձայնով։

—Չէ, բաս գլուխդ ցաւում է, ցուրտ է կպել բեր տեսնեմ, դու ինձանից կեղծում ես։

Սանամը մօտեցաւ Ռուստամին և ձեռը դրաւ նրա ճակատին։

—Ձեռ չես քաշելու, փիէհ,—բացականչեց Ռուստամը, հրելով իւր մօր կրծքին։

—Ցաքացրած ես, բեր, խալդար կապենք վզիդ,—շարունակեց Սանամը, ինքն էլ չը հասկանալով թէ ինչ է խօսում։ Ցեսար, տեսար, Սուսան, ես առաւօտեան ասացի, որ երազ եմ տեսել, ասացի որ կամ երեխա է գալու, կամ գիր ենք ստանալու։ Ռուստամ, քեզ

էս գիշեր երազումս մին սև ձիու վրայ նստած տեսայ, սև ձին գօվլաթ է։ Հա, դու չափացնում էիր, ես էլ յետևիցդ...

—Լաւ է, լաւ, էգուց, էգուց կը պատմես, ձեռ քաշիր,—ընդհատեց Ռուստամը իւր մօր չատախօսութիւնը։

—Ինչ անեմ, ուրախութենից ինքս էլ չեմ իմանում ինչեր եմ դուրս տալիս։ Մուրարա կուզես։

—Չէ, եթէ ինձ սիրում ես, այս գիշեր մի խօսացնի։ Նեղացած եմ։

—Հա նեղացած ես, բալաս, հա, թող տեղերդ պատրաստեմ,—ասաց Սանամը և մօտեցաւ անկողնին, որ Ռուստամի համար պատրաստի։

Ամբողջ այդ խօսակցութեան ժամանակ Սուսանը ինքնաեռի կշտին կանգնած, ձեռքերը ծոցում ծալած, մտիկ էր անում կամ Ռուստամին կամ Սանամին։ Երբ Ռուստամը իւր հայեացքը ձգում էր նրա վրայ, Սուսանը իսկոյն աչքերը ցած էր գցում։

Սանամը պատրաստեց անկողինը և երկու բաժակ չայ խմեց, անդադար նայելով իւր որդու երեսին և չը համարձակվելով որ և է հարց առաջարկել նրան։ Սուսանը չայ չէր խմում, նա շարունակ նայում էր իւր ամուսնուն, կարծես թէ ձգտելով նրա դէմքի վրայ կարդալ այն, ինչ որ մտածում էր Ռուստամը։

Սանամը մի անգամ ևս փորձ արաւ իւր որդուն մօտենալու և խօսացնելու, բայց այս անգամ Ռուստամը նրան վճռողաբար հրամայեց, որ իրան հանգիստ թողնի ու հեռանայ միւս սենեակը։

Դառն էր Սանամի համար այդպէս չուտով բաժանվել իւր որդուց, բայց տեսնելով, որ հնար չը կայ հակառակվելու և վախենալով, որ մի դուցէ աւելի բարկացնի Ռուստամին, հնազանդվեց և վերին ստիճանի տխրութեամբ հեռացաւ իւր սենեակը։ Սանամի և Ռուստամի սենեակները իրարուց բաժանվում էին մի բաւական ընդարձակ նախագաւթով, որ միշտ լիքն էր լինում այլ և այլ տեսակ կապեաններով, որ Շուրայից ուղարկում էր Ռուստամը։

XVI

Առանձնանալով Սուսանի հետ, Ռուստամը կողպեց դռները և հրամայեց Սուսանին ինքնաեռը մի կողմ դնել։ Սուսանը կատարեց նրա

հրամանը և քաշվելով սենեակի մի անկիւնը, ձեռքերը խաչաձև ծալեց կրծքին և դարձեալ սկսեց նայել իւր ամուսնու երեսին։ Մի ժամի չափ Ռուստամը լուռ ու մունջ շրջեց սենեակում։ Մի ամբողջ ժամ նա ոչինչ չը խօսեց, ոչ մի բառ չարտասանեց։ Սուսանը կամենում էր խօսել, հարցնել Ռուստամին նրա տխրութեան պատճառը, բայց ամեն անգամ, երբ հայեացքը ձգում էր նրա երեսին, Սուսանի լեզուն կապվում էր։ Վերջապէս Ռուստամը դադարեց յետ ու առաջ շրջելուց և յանկարծ շրներով և խանչալը մէջքին պառկեց անկողնի վրայ։

—Մօտեցիր ինձ,—հրամայեց նա Սուսանին։

Սուսանը դողալով մօտեցաւ անկողնին և կանգնեց նրա առաջ, գլուխը խոնարհած։

—Ձիուն դարի ու զարմանաւոր։

—Տուի։

—Շատ։

—Շատ։

—Հը՛մ,—ասաց Ռուստամը և լռեց։

—Ինչ փափուկ անկողին է, Սուսան։ Այդ ո՞ւմ համար է։

Սուսանին այնքան զարմացրեց այդ տարօրինակ հարցը, որ նա չիմացաւ թէ ինչ պատասխանէ։

—Չես լսում։

—Հը՛մ,—հարցրեց Սուսանը աւելի ու աւելի զարմանալով։

—Ո՞ւմ համար է, ասում եմ, այս անկողինը։

—Քեզ համար։

—Ինձ համա՞ր։ Շատ շնորհակալ եմ...բա՜ս...նազլաթ քեզ չար սատանայ։

Սուսանը նայեց նրա երեսին և դողալով մի քայլ յետ քաշվեց։

—Ինձ համա՞ր է։

—Քեզ համար։

—Բաս միւսը։

—Ի՞նչ միւսը։

—Միւս անկողինը։

Սուսանը այս ու այն կողմ նայեց, կարծես թէ աշխատելով խոյս տալ Ռուստամի զննող հայեացքից։

—Չես իմանում։

—Ի՞նչ։

—Ես քեզ հարցնում եմ, թէ...ը՛մ...նազլաթ քեզ չար սատանայ։ հարցնում եմ, թէ որտեղ է երկրորդ անկողինդ։

Սուսանը լուռ էր։

—Չես լսում։

—Ի՞նչ ես ասում,—հարցրեց Սուսանը դողդոջուն ձայնով, մի և նոյն ժամանակ ապշած նայելով Ռուստամի ուսերին։

—Ես հարցնում եմ, թէ ո՞ւր է երկրորդ անկողինը,—կրկնեց Ռուստամը։

—Չեմ հասկանում։

—Չես հասկանում, թէ ինչ եմ ասում...այ միւսը, որ, որ...

Ռուստամը չը կարողացաւ, թէ չը կամեցաւ, բայց չաւարտեց իւր խօսքը։ Բարկութենից նրա շունչը փաթաթվեց և նա բարձրանալով անկողնից, սկսեց շրջել յետ ու առաջ։ Նա մտածում էր։ «Սատանայ, ինչպէս կարողանում է անմեղ ձեանալիմ առաջ, իբրև թէ ոչինչ չէ հասկանում»։

Մի քանի րոպէ Ռուստամը շրջեց, յետոյ նա մօտեցաւ անկողնին և պառկեց առանց հանվելու, այնպէս, ինչպէս նեղս էր մտել։ «Նազլաթ քեզ չար սատանայ, նազլաթ,—ասում էր նա մրքումը—եթէ երևեցաւ խալը, Տէր Աստուած, Տէր Աստուած։ Կարելի է նա տեսել է երեխայութեան ժամանակ, կարելի է նա երկրաշարժի օրն է տեսել, երբ նրանք միասին հողի տակն են մնացել, Կարելի է ինքը չէ տեսել, այլ լսել է իւր մօրից, որ նկատած կը լինի բաղանիքում կամ մի ուրիշ տեղ, մերկ ժամանակը։ Չէ, չէ, բաս հարսանիքի գիշերվայ անցքը, բաս այն երկու ջահիլների խօսակցութիւնը։ Օրիորդ ժամանակ, հը՛մ...Այս մէկը սուտ է, ես իմացայ։ Ինչ որ պատահել է, պսակվելուց յետոյ է եղել։ Ես ինչ գիտեմ, եօթը սարի քամակում, թէ նա այստեղ ինչեր է արել։ Իսկ մայրս, մայրս յիմար պառաւ է, տանը չէ նստել։ Ուֆ։

Եւ Ռուստամը արձակեց կրծքից մի դառն հառաչանք։ Քառորդ ժամ Ռուստամը այդ դրութեան մէջ մնաց, նայելով սենեակի առաստաղին և անդադար հառաչանքներ արձակելով։

Սուսանը նրա երեսը չէր տեսնում, միայն պատի տակ կանգնած, ձեռքերը ծոցում ծալած, լուռ ու մունջ անորոշ հայեացքով նայում էր սենեակի պատերին, առաստաղին, յատակին և այլն։

Յանկարծ Ռուստամը բարձրացաւ տեղից։

—Նստիր,—հրամայեց նա Սուսանին։

Սուսանը անշարժ էր։

—Նստիր, քեզ ասում եմ, ինչ ես կանգնել։

Սուսանը նստեց։

—Հարկաւոր է քիչ էլ համբերել—ասաց ինքն իրան Ռուստամը և սկսեց կրկին յետ ու առաջ շրջել։

Մի ժամի չափ ևս նա շրջեց։ յետոյ մօտեցաւ սենեակի դռներին, բացեց և աջ ու ձախ նայելով, կրկին փակեց դռները և յետ դարձաւ։ Նա մօտեցաւ թախտին և նստեց, ոտները քարշ ձգելով։

—Չես պատասխանում,—դարձաւ նա Սուսանին, որ դեռ նըստած էր թախտի վրայ մի քիչ հեռու իւր ամուսնուց։

—Ի՞նչ։

—Ասիր, տեսնեմ, որտեղ է միւս անկողինը։

—Ինչ անկողին։

—Որի վրայ, անառակ կնիկ, դու քնում ես Սէյրանի հետ։

Սուսանը վեր թռաւ տեղից և ապշած նայեց նրա երեսին։

—Սէյրան,—կարողացաւ միայն արտասանել նա և մնաց տեղն ու տեղը կանգնած։

—Հա, Սէյրանը։ Դու նրան չես ճանաչում, չես ճանաչում կուժ ծախող Հայրապետի տղայ Սէյրանին։

Սուսանը լուռ էր։

—Պատասխանիր, լիրը, չան զաւակ, պատասխանիր, ճանաչում ես,—կրկնեց Ռուստամը, աշխատելով ձայնը շատ էլ չը բարձրացնել։

Նա վեր թռաւ տեղից և բռնելով Սուսանի թևից կրկնեց մի քանի անգամ։ «չես ճանաչում, չես ճանաչում»։

—Սէյրանին ճանաչում եմ,—վերջապէս չնչեց Սուսանը թոյլ կերպով։

—Ո՞վ է նա։

—Մեր հարևանի տղան։

—Հարևանիդ տղան և քո, և քո, և քո երկրորդ մարդը, չէ՞…

Ռուստամի շնչառութիւնը քանի գնում էր, այնքան սաստկանում, իսկ ձայնը խեղդվում։

—Ինչ ես խօսում,—մրմնջեց Սուսանը, ապշած նայելով Ռուստամի երեսին, որ նրա թևը բռնած ունէր իւր ձախ ձեռով։

—Ես ո՞վ եմ,—հարցրեց Ռուստամը ուղիղ Սուսանի աչքերին նայելով։

—Դու Ռուստամն ես։

—Քո ինչն եմ։

—Իմ մարդը։

—Սուտ ես ասում, անիծված կնիկ, քո մարդը Սէյրանն է, Սէյրանը, Սէյրանը։ Խոստովանվիր, ասում եմ, թէ չէ…

Այդ ասելով Ռուստամը յանկարծ բաց թողաւ Սուսանի թևը, խանչալը մերկացրեց, մի երկու քայլ հեռու թռաւ և կանգնելով նրա դէմ ու դէմ, ասաց. «տեսնում ես»։

Կանթեղի լուսաւորութեան տակ խանչալի բերանը փայլեց ինչպէս կայծակ։

Սուսանի մարմնով մի սառսուռ անցաւ, բայց յանկարծ նա, կարծես թէ մի բան մտաբերելով, ուշքի եկաւ և ասաց.

—Հիմայ հասկացայ։ Ռուստամ, քեզ չար լեղուները խաբել են։ Սէյրանին ես ճանաչում եմ, նա իմ առաջվայ փեսացուն էր, ծնողներս քեզանից առաջ նրա վրայ էին ուզում պսակել։

—Դու նրան սիրել ես, անիծված, խոստովանվիր, ողջ քաղաքն է ասում։

—Սիրել եմ և այժմ էլ սիրում եմ։ Բայց, Ռուստամ, ես անմեղ եմ, անմեղ եմ անկողնիդ առաջ, ինչպէս այս ճրագի լոյսը։

—Սիրում ես, բայց անմեղ ես, լռիր, լիրը, դու նրա հետ գործ ես ունեցել, խոստովանվիր, թէ չէ ես կը հաստատեմ։

—Թող իմ հոգին դժոխքի կերակուր դառնայ, եթէ ես սուտ եմ ասում։ Ես Սէյրանին սիրում եմ, բայց նրա հետ գործ չեմ ունեցել,—պատասխանեց Սուսանը աւելի ու աւելի անյողդողդ ձայնով։

—Ինքը Սէյրանն է ասում։

—Անկարելի է։

—Սուտ չեմ ասում, անիծված, ինքը Սէյրանն է ասում։

—Սէյրանը, ախ, Տէր Աստուած, նա սուտ է ասել։

—Սուտ է ասում։ Բացիր կուրծքդ։

Սուսանը չը հասկացաւ Ռուստամի միտքը։

—Ցետ քաշիր հալաւդ, բացիր կուրծքդ, ասում եմ, թէ չէ արիւնս գլխովդ է տալիս։

Սուսանը անզգայաբար, դողդոջուն ձեռքերով հեռացրեց իրարուց չապկի ծայրերը։ Կանթեղի լոյսը ընկաւ Սուսանի կրծքին և լուսաւորեց նրա բամբակի պէս սպիտակ ստինքը։

Ռուստամը խանչալը ձեռում, կողքին քարշ գցած, մօտեցաւ Սուսանին և գլուխը թեքելով նրա կրծքին, մտիկ տուաւ։

—Խալը, խալը, նա ճշմարիտ է ասում, հրէս խալը...

Բացագանչելով այդ խօսքերը, Ռուստամը խելագարի պէս ատամները կրճտելով, յարձակվեց Սուսանի վրայ։ Նա սեղմեց նրա իրանը իւր աջ ձեռի ամուր բազկով, բերանը՝ կպցրաւ կրծքին և տղրուկի պէս բոլոր շնչով սկսեց ծծել նրա մարմինը։

Սուսանը զգաց սաստիկ կսկիծ։ Նա ձեռքերը բարձրացրեց, որ պաշտպանվի, բայց նրա աջ ձեռը ամուր դիպաւ խանչալի սուր բերանին և վիրաւորվեց։ Լսվեց մի թեթև ճիչ և Սուսանի անշնչացած դիակը դուրս պրծնելով Ռուստամի գրկից, գլորվեց յատակի վրայ։ Մի ձեռում արիւնոտ դաշոյնը բռնած, իսկ միւս ձեռը օդի մէջ տարածած, Ռուստամը նայում էր Սուսանի անշնչացած դիակին։ Զարհուրելի էր նրա դէմքը։ արիւնալի աչքերը վառվում էին այրվող ածուխի կտորների պէս։ Նրա հաստ շրթունքներից կաթում էին Սուսանի կրծքից ծծած արիւնի կաթիլները։

Այդ դրութեան մէջ Ռուստամը նմանում էր սովածութենից կատաղած մի գայլին, որը առաջին հարուածով անշնչացնելով գառնուկին, պատրաստվում է նորից յարձակվելու, որ իւր սուր ժանիքներով յօշոտէ ողորմելի զոհը։ Անցաւ մի քանի վայրկեան և Ռուստամը խանչալը մի կողմը շպրտելով, չոքեց Սուսանի դիակի մօտ և գլուխը թեքելով, սկսեց զննել նրա կուրծքը։ Կարմիր արիւնը դուրս բղխելով նրա կծած տեղից, ողողում էր Սուսանի մարմարիոնի պէս ճերմակ կուրծքը։ Ռուստամը գրպանից հանեց թաշկինակը և արիւնը սրբեց։

—Խալը, խալը, կրծքի խալը, ահա։ Ես սխալվեցի։ Խալը այստեղ է, ես միւս կողմն եմ կրծոտել։

Այդ ժամանակ Սուսանը թեթև կերպով շարժվեց։ Նրա աչքերի ծանրացած կոպերը յետ քաշվեցան և բիբերը բացվեցան։

—Անմեղ եմ, անմեղ եմ, Աստուած, քեզ յայտնի է, ներիր իմ մեղքերը և յետոյ առ հոգիս։

Սուսանի աչքերը կրկին փակվեցան և նա մնաց անշարժ։

Ռուստամը նայում էր նրա դէմքին։ Ցանկարծ նա արագութեամբ վեր թռաւ տեղից և խանչալը սենեակի յատակից ճանկելով, որոտաց։

—Ճանաչիր, անիրաւ, լաղդի Ռուստամն եմ ես, տես ումն ես խարում, չար Ցուլիանոս։ Ես Ռուստամն եմ, Ռուստամը, բէնամուս չեմ, նամուս ունեմ։

Դուրս թռաւ ողորմելի զոհի կրծքից մի ահարկու ձայն և այնուհետև տիրեց լռութիւն։

Սենեակի դռները դղրդացին և դռռալով ներս թռաւ Սանամը։

XVII

Առաւօտ էր։ Շամախու ամբողջ հայ բնակիչները տեղից շարժված խուռն բազմութեամբ դիմում էին դէպի արևմտեան կողմը քաղաքի։ Այն փողոցը, ուր գտնվում էր Սանամի տունը, արդէն բոլորովին լիքն էր խառնիճաղանճ ամբոխով։ Մեծ թէ փոքր, կին թէ տղամարդ, ամենքը իրարու սեղմելով դիմում էին դէպի Սանամի տունը, որ այդ ժամանակ ներկայացնում էր սիրա մորմոքող մի տեսարան։

Ոստիկանները աշխատում էին յետ մղել ամբոխը, բայց ամենքը աշխատում էին մի կերպ առաջ շարժվել։

—Հայիվ, հայիվ, էն գեօղալը,—լսվում էր այս ու այն կողմերից։

—Ասում են, որ ինչքան գեօղալ էր, էնքան լաւ հոգի ունէր։

—Խեղճ ողորմելին անմեղ տեղը փչացաւ գաղանի ձեռին։

—Ռուստամը կիսով չափ էլ մեղաւոր չէ,—մէջ մտաւ մօտ քսան ու երկու տարեկան մի երիտասարդ եւրոպական ձևով հագնված։

—Բա՛։

—Մեղաւորը մեր քաղաքի վատ սովորութիւնն է։ Երեսը կապած աղջկան տալիս են մի անծանօթ տղային։ Տղան ուրիշների խօսքին հաւատալով պսակվում է և ուրիշների խօսքերով էլ կարծիք է կազմում իւր կնոջ վրայ։ Եթէ մէկը մի ծուռ բան է ասում թէ և սուտ, նրա աչքերը արիւնով լցվում են, խելքը կորցնում է և ահա այդպէս է անում։

—Է՛հ, Աստուած ինչոր գրել է մեր ճակատին, պիտի կատարվի, մնացեալը դատարկ բան է,—ընդհատեց երիտասարդին մի քառասուն տարեկան մարդ։

—Հայիվ, հայիվ։

Այդպիսի և ուրիշ սրանց նման ցաւակցական դարձուածներ էին լսվում անդադար ամբոխի միջից։

Իսկ ինչ էր կատարվում այդ ժամանակ Սանամի տանը։ Այդ դժուար է մանրամասն նկարագրել։

Սենեակներից մէկում յատակի վրայ ձգած էր Սուսանի արիւնաշաղախ և արիւնաքամ դիակը։ Պատուհանի վերին ապակիներից առաւօտեան լուսոյ ճառագայթները խուռն ամբոխի վրայով հաղիւ հազ ներս սահելով, լուսաւորում էր դիակի բաց երեսը։ Խաղաղութեան հրեշտակը իւր թեները տարածելով այդ պայծառ երեսի վրայ, հովանաւորում էր նրան մի տեսակ մաքայլ ստուերով։ Պարսկական շքեղանկար կապերաը, որ սփռված էր դիակի տակ, ծածկվել էր Սուսանի արիւնով։ Դիակի շուրջը հաւաքվել էին Սուսանի ծնողները, ազգականները, բարեկամները և մօտակայ հարեւանները։ Գիւղացը, անսպասելի տարաբախտութեան զօրեղ հարուածով փչրված մայրը, չոքել էր իւր սիրելի զաւակի անշունչ դիակի գլխի կողմում և ողբում էր նրա յանկարծահաս կորուստը։ Նա փետում էր իւր ալէխառն մազերը և կեղեքում էր կուրծքը իւր եղունգներով։ Երբեմն երբեմն դուրս էր թռչում այդ մաշված կրծքից մի կատաղի վայրենի գոռոց և ամբոխը սարսում էր այդ ձայնից։ Դիակի աջ կողմում կանգնած էր ծերունի Բարխուդարը ձեռքերը ծոցում խաչաձև ծալած։ Նրա գունասպառ դէմքի վրայ կենդանութեան եթէ մի նշան կար, այդ նրա խոցոտված սրտի կսկիծը արտայայտող աչքերն էր, որոնք բեւեռված էին Սուսանի խաղաղ և հանգիստ դէմքի վրայ։ Այդ բոպէին Բարխուդարի մէջ, կարծես թէ, կատարվում էր այն հոգեկան պրոցեսը, որ տեղի ունէր Քրիստոսի աջակողմեան աւազակի մէջ, երբ սա երեսը մեծ նահատակին դարձրած, աղերսում էր նրան չմոռանալ յաւիտենական կեանքում իւր մեղապարտ հոգին։

Դիակի ձախ կողմում նստած էր Սուսամբարը։ Ինչ էր անում Սուսանբարը,—այդ ոչ ոք չէր կարող հասկանալ։ Նա կամ կատաղաբար համբուրում էր իւր դժբաղդ ընկերուհոյ երեսը, կամ անյաղութեամբ լիզում էր նրա փակ աչքերը, երեսը, ձեռքերը, գլուխը և կամ հեռու քաշվելով, փետում իւր մազերը և սուր եղունգներով կեղեքում մերկացած կուրծքը։

Սուսանբարի յետևից երկու երիտասարդներ աշխատում էին յետ մղել Սուսանի դիակից Սմբատին։ Սմբատի դէմքը ահռելի էր։ Նրա կուրծքը բաց էր և մազերը խճճված ու ճակատին թափված։ Նրա վառված աչքերը փայլում էին կատաղի հրով և նա անդադար գոռում էր։

—Բաց թողէք, անիծվածներ, բաց թողէք, ես պիտի խեղդեմ, պիտի չանստատակ անեմ, Ռուստամ...Ռուստամ...

Բայց երիտասարդները Սմբատին իրանց գրկում սեղմած, աշխատում էին մի կողմ քաշել նրան։

Սուսանի դիակի ոտների կողմում չոքած էր Մարիամ բաջին։ Արտասուքի բուռն կաթիլները դուրս թափվելով աչքերից, ողողում էին նրա նիհար ու պչկած երեսը։ Նա անդադար իւր երկու ոսկորացած ձեռքերը բարձրացնելով, մերթ ծնկներին էր խփում, մերթ մերկացած կրծքին։

Մարիամ բաջու յետևից պոռոտ էր գալիս Հայրապետը։ Միամիտ ծերունին, կարծես թէ, չէր կարողանում հասկանալ թէ ինչ է կատարվում և ինչ է պատահել։ Նա զանազան տարօրինակ շարժումներ էր անում։ Նա շարժում էր իւր ալեխառն գլուխը, ձեռքերը տարածում օդի մէջ, շրջում էր այս ու այն կողմ, սրան ու նրան զանազան անհասկանալի հարցեր առաջարկելով։ Հայրապետը գոռում էր, գոչում, բայց ոչ ոք նրա վրայ ուշադրութիւն չէր դարձնում։

Մինչդեռ դիակի շուրջը կատարվում էր այդ տեսարանը, Սանամի ննջարանում տեղի ունէր մի ուրիշը։ Երկու ոստիկաններ սենեակի դռներում կանգնած, յետ էին մղում Սանամին, որ գոռալով, մազերը փետելով, կուրծքը ճանկռտելով, գլխամոլոր ձգտում էր ներս։ Նրա յետևից խռնվում էր ամբոխը մեծ բազմութեամբ։

—Անիծվէք, գիւլախորով իլէք, բաց թողէք բալիս երեսը տեսնեմ, նրան տանում են դատաստանի...վայ երեխաս ձեռիցս դուրս է գալիս.....

Իսկ ինչ էր անում այդ ողբերգութեան գլխաւոր դերակատարը, Ռուստամը։ Նրա ճակատագիրը պարզ էր։ Ռուստամի աջ կողմում կանգնած էր ոստիկանապետը, ձախ կողմում մի փոքրիկ սեղանի շուրջը նստած էր քննիչը։ Սակայն ակնոցները ուղղելով, քննիչը խոժոռ դէմքով նայում էր յանցաւորին և զանազան հարցեր առաջարկում։

Ռուստամը լուռ էր և գլուխը քարշ ձգած։ Նա կարծես թէ քննիչի հարցերը չէր լսում։ Քննիչը տեսնելով որ Ռուստամը յամառութեամբ լռում է և բացի «ես եմ սպանել»—ից, ոչինչ չէ ուզում պատասխանել, գրիչը դրաւ սեղանի վրայ և ասաց ոստիկանապետին։

—Տարէք բանտը, պահեցէք մի առանձին տեղ մինչև իմ գալը։

Ռուստամին դուրս տարան։ Բայց հենց որ նա նոր էր ոտը դրել պատշգամբի վրայ, ամբոխի միջից յանկարծ լսվեց մի աղաղակ և նոյն վայրկեանին ճանապարհի հագուստով մի երիտասարդ առաջ վազեց։

—Սէյրանը, ախ, դու Յուլիանոս, թողէք չանսատակ անեմ։

—Դուռաց Ռուստամը, կամենալով վազել դէպի երիտասարդը։

Ոստիկանները նրան պահեցին։

Սէյրանը բացագանչում էր։

—Բռնեցէք Ռուստամին, մի թողնէք մօտենայ Սուսանին։ Ես սուտ եմ ասել, սուտ, խաբել եմ։ Սուսանը անմեղ է, անմեղ է հրեշտակի պէս։ Խալը ես երեխայ ժամանակս եմ տեսել։ Սպանեցէք ինձ, գլուխս կտրեցէք։ Ես եմ մեղաւորը։

—Նա անմեղ էր, հոգիս էլ կորաւ,—բացագանչեց Ռուստամը և թուլացած ընկաւ ոստիկանների գիրկը։

Ամբոխը Սէյրանին ճանապարհ տուաւ։ Սէյրանը վազեց ներս, ուր ձգած էր նրա անմեղ սիրեկանի արիւնաքամ դիակը։

Անցաւ մի րոպէ և դրսում եղողները լսեցին մի ձայն։

Այդ աղջանակի արձակման թնդիւնն էր։

—Բալա, վայ, բալա, վայ։

Այդ Մարիամ բաջու ձայնն էր։

ՎԵՐՋ

ԲԱՌԱՐԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

Ա.

Աբբռլու՝ ամօթով։
Ագեամ՝ եթէ։
Արագ՝ երեկ։
Այբէժառ՝ տգեղ։
Առաղ՝ անամօթ։
Աման Ալլահ՝ ախ Աստուած։
Աղղիգեառ՝ ինքան—պատուած։
Աբա՝ ալ՝ չուտափոյթ։
Ալօվ՝ քոց։
Աբուռ՝ ամօթ։
Աբխային կենալ՝ միամիտ լինել։
Աչբզ՝ վախկոտ։
Աղաչ դավասի՝ փայտակռիւ։
Ալթի զոզ՝ վեց ընկոյզ (խաղի անուն)
Արխա՝ օգնական։
Աղափ՝ ազապ՝ աշխարհ չը մտած։
Արախաթուն՝ երեխայութիւն։
Աչբզ՝ ոխ։
Աղարթմիշ անել՝ ճերմակացնել։

Բ.

Բաշիբալա՝ գլխացաւ։
Բիթիլ՝ բոթել։

Բահարվայ, դարնան։
Բարբաղ լինել, քանդվել։
Բանդուվանի քցել, կաշկանդել։
Բոյ-բուսաթ, հասակ։
Բրախ տալ, բաց թողնել։
Բիշտի տալ, բոթել։
Բոշբոզաղ, դատարկապորտ։
Բէդզադ, սինլքոր։
Բէբէդ, բիբ։
Բաշտամիշ անել, սկս՝ել։
Բուզմայ, ծալեր։
Բէնամուսութիւն, անամօթութիւն։
Բոլուք, շատ։
Բլբլալ, շատախօսել։
Բեսօվ, ահ տալու բացականչութիւն։
Բալա, որդի։
Բիւթուն, բոլորը։
Բաջի, քոյր, Շամախուա դորձ է ածվում իբրև «մայրիկ»։
Բէշիգբեարթմա, վաղօրօքնչանել։
Բեանդին խոշ, մարդուն ախորժելի։
Բէհ, կանխիկ վճար։

Գ.

Գիլասար, կապոյտ հող։
Գդուլ, կարճահասակ։
Գեօղալ, գեղեցիկ։
Գեօկչակ, գեղեցիկ։
Գիւլ, գայլ։
Գիւբօռնաթ, նահանգապետ։
Գեղա, ծառայ։

Դ.

Դունիա, աշխարհ։
Դարա մանլա, նեղքևի թաղ։

Դալու, մէջք։
Դիլ դիդիլ, բացականչութիւն։
Դահրի դադահ, բացականչութիւն։
Դիլիլի դիլ դիլ, բացականչութիւն։
Դուդուկ, զուռնա։
Դուա անել, աղօթել։
Դոշ թակել, կուրծքը թակել։
Դադ ու բիդադ, ախ ու վախ։
Դէնրժկայ, քառորդ կօպէկ։
Դարզի, դերձակ։
Դամաղ, քիմք։
Դէնդ ու դանդասար լինել, ձանձրանալ։
Դէլ խօսել, զառանցել։
Դնդղել, թակել։
Դաղաչ, հայր։
Դեսվ, դեւ։
Դեսանակ, գաւազան։
Դեսատա, խումբ։
Դունիա դեօղալի, չնաշխարհիկ։

Ե.

Եաղի, թշնամի։
Եարար, նպաստաւոր։
Եարադան Աստուած, ստեղծող։
Երիհաա, գնա հաա։
Եախա, օձիք։

Զ.

Զուռնաղաւալ, դափ ու զուռնա։
Զարանդիզի, միջի մարդ։
Զառ ու զառբօֆ, արծաթ ու արծաթաթել գործուած։
Զըզբաղըզ, ծայրէ ի ծայր։
Զարդանդել, գողալ։

Զոլեր, գծեր։
Զալիմ, զօրեղ։

Է.

Էյհամ անել, ակնարկել։
Էօլմիշ, մեռած։

Ը.

Ըռռեխ, բերան։

Թ.

Թունդուր, թոնիր։
Թարազ, ուղիղ։
Թառանչ քաշել, հառաչել։
Թաֆտա, մետաքսեղէն։
Թափահարել, թափ տալ։
Թաղնիլ, անկանոն նստել։
Թափան-թիրիք, փորոտիք։
Թառլան ղուշ, ուրուր։
Թամբալ, ծոյլ։
Թավաքալի, միամիտ։
Թոլ իլիլ, թաւալվել։
Թարթափիլ անել, թռթռալ։
Թայ, ընկեր։
Թալասմիշ իլիլ, շտապել։
Թափշուր անել, յանձնել։
Թարիֆ անել, գովել։
Թիափիկ, աքացի։
Թիր լափաշվել, երկար ձգվել։
Թոռ, մետաքսեայ ցանցաձև գոր-
ծուած։

Ի.

Իսլիմայ, արծաթաթել գործուած։

Ինջիլ թուզ։
Ինջիմիշ իլիլ, վիրաւորվիլ, նեղա-
նալ։

Լ.

Լխլխել, տատանիլ։
Լալազար, պուտ։
Լալ, համր։
Լահ թակել, թառանչել։
Լախացնել, թուլացնել։
Լօղայ լօղայ, պարծենալով։
Լափաշվել, մեկնվել։
Լախկոթու տալ, վայրահաչել։
Լակել, խմել։
Լալանալ, համրանալ։
Լալարանդ, համրացած։
Լեազու թափել, տղրուկ կպցնել։
Լայեաղ անել, արժանի համարել։

Խ.

Խարարա-չահար, աւերակ քաղաք։
Խաբարդար, ուշադրութիւն։
Խշտել, չուտափոյթ կարել։
Խզատակ, պարանոց։
Խամուշ, խաղաղ։
Խաչալաթութիւն, պարտաւորու-
թիւն։
Խօշբէշ անել, շոյել։
Խալդար, մանանեխ։
Խլշած, սրած։
Խիզան, զաւակ։

Ծ.

Ծվան, զուռնայի ծայրը։

Կ.

Կեղել, գաղել, թագցնել։
Կռուճ, կտոր։
Կունդուստոր, կոնսիստորիա։
Կչկուռ, հանգոյց։

Հ.

Հալ-օվհալ, դրութիւն։
Հար մին, իւրաքանչիւր։
Հուրսոտվիլ, բարկանալ։
Հայա, պատկառանք։
Հուվի հռչնել, կարմրել։
Հալաւ, չապիկ։
Հարաքաթ, ջանք։
Հուրս, բարկութիւն։
Հանդավար, կողմ։
Հայասրդ, անամօթ։
Հէյվարա, ստոր, դատարկաբան։
Հալալիգա, առ այժմ։
Հուշտ, առիթ։
Հալլա, ամէն։
Հաղը գալ, հաւանել։
Հուրսաթափ, բարկութիւնից աբ-
ռաքող։
Հայիֆ, ափսոս։
Հէյվան, կենդանի։
Հայալու, ամօթով։
Համբիսկ, անբիծք, սաղմոս։
Հարաշտարակ, հրեշտակ։
Հաբա, գեանում փոքրած փոքրիկ
փոս։

Ղ.

Ղարմախ-ղարմախ, կեռ-կեռ։

Ղայթաղի, լեղգեվար պարի մի ե-
ղանակ։
Ղափմիշ անել, խլել։
Ղէյիդ կարվի, բանդ կարվի։
Ղմիշ անել, սիրտ անել։
Ղաթով, միջով։
Ղուշ անել, գրկել։
Ղալաթ անել, սխալվել։
Ղահրել, կնճռել։
Ղրմզի հոլ հոլ, կարմրափայլ։
Ղադր, արժէք։
Ղուշղուշվել, գրկուել։
Ղարաչի, սև։
Ղուլ, ստրուկ։
Ղաթվիլ, ալվե։
Ղժղժվիլ, ծալծալվել։
Ղարափալթար, սև հագ ստով։
Ղըրիաթ, ինքնասիրութիւն։

Ճ.

Ճութղի, ճուպպա, գլխի մազերի
ծածկոց։
Ճընթռ, պատառոտված։
Ճախ, ցախ։
Ճոնդ, ծայր։
Ճըճեխել, ջախջախել։
Ճամբալա կուկուչլինել, ուժաթափ-
վել։

Մ.

Մուղամմաթ, եղանակ երաժշտու-
թեան։
Մուշտարի, գնող։
Մինիկ, միակ։

Մանալ, խմանալ։
Մինդարալթի անել, մինդարի տակը դնել։
Մահլայ, թաղ։
Մռափել, քնել։
Մահլադաւասի, փողոցային կռիւ։
Մուռափ, նիրհ։
Միթամ, իբրև թէ։
Ման, կէս պուզ։
Մարալ, եղջերու։
Մանրաքա, հանդէս։
Մինդար, նհալի։
Միխակի, թոռի ծայրերը։
Մոլթանի, կռապաշտ։
Մուշկի, բարակ կաշի։

Ն·

Նիզարան, անհանգիստ։
Նաֆաս, շունչ։
Նահլաթ, անէծք։
Նամարդ, տմարդ։
Նահախդան, իղուր։
Նաղլ անել, պատմել։
Նաչառնիկ, նաչալնիկ—դաւառապետ։

Շ·

Շիր ու շիքիլ, դէմք։
Շթռայ, շիթ, կաթիլ։
Շուլլահի, Դաղստանի գդակ։
Շիր—շնորք, կերպարանք։
Շարմաղ, կեռ։
Շամբալութ, շաղանակ։
Շիւտ թամամ, պրծաւ գնաց։

Շիքեաստա, պարսկական երգի մի եղանակ։

Ո·

Ողող, ուղեղ։

Ջ·

Ջով անել, հռչակել։
Ջըրթմա տալ, կոփել, մատները իրարու խփել։
Ջիմ, բոլորը։
Ջախլախ անել, կոտրտել։
Ջաթու, պարան։
Ջմուշկ, կօշիկ։
Ջաթու քեսասան, թոկից փախած։
Ջոփ, փայտի կտոր։
Ջորթ, կոշտ։
Ջալթուկ, կեղեւով բրինձ։
Ջարչով, կանանց ծածկոց։
Ջաքրան, կանանց հագուստ։
Ջուրու, մինչև։
Ջանախ, փայտեայ աման։

Պ·

Պինչ, քթածակ։
Պլոզ-պլոզ, չռված։
Պչկել, թառամել։
Պեան, դորձ։
Պարով, բարեաւ։
Պլշած, անթարթ։

Չ·

Չին, սատանայ։

Զուրիաթ, համարձակութիւն։
Զալլաթ բաշի, դահճապետ։
Զլով, սանձ։
Զահտ անել, ջանք անել։
Զանըմ, գեօղըմ. հոգիս, աչքս։
Զին-ջավահիր, թանդագին քար։

Ռ.

Ռաղի ըլիլ, համաձայնվիլ։

Ս.

Սաչ, ծամ։
Սարֆ, ձեռնտու։
Սաբաբ, պատճառ։
Սատին, բրդէղեն գործուած։
Սոնկ, որդի։
Սումարան, ուսումնարան։
Սիլիկ-բիլիկ, փաղաքշանք։
Սաֆ անել, բաց անել։
Սօղուչ, ճախակողմեան, խաչեղբայր։
Սէկլատար, սեկրետար, քարտուղար։
Սել, հեղեղ։
Սաղ օլ, ողջ եղիր։
Սաղրի, ամուր կաշի։
Սախկզ, ծամոն։
Սովրաթ անել, զրոյց անել։
Սաթաբզ քեափակ օլան, ծախու թեփ ունեցող։
Սուխարի Սարգիս, ժլատ Սարգիս։
Սաբահի, առաւօտեան։

Վ.

Վախտ-բէվախտ, ժամանակ անժամանակ։

Վաթան, հայրենիք։
Վազմաներ, մատուրա։
Վիժա, թիզ։
Վաս սալամ, պրծաւ գնաց։

Տ.

Տընդղել, ծեծել։
Տական, տակից։
Տափան կպչել, գետնին կպչել։
Տիւրին կեալ, շարժվել։

Ց.

Ցեքով, ձեռքով։
Ցեքան, ձեռքից։
Ցեքապաց, ձեռքարաց։

Փ.

Փախըլութիւն, նախանձ։
Փուսունիկ, սև բողոճ։
Փիհ, ճարպ։
Փարվազ անել, զարգանալ։
Փայիզ, աշուն։
Փուչիկ, փամփուշտ։
Փափաղ, գդակ։
Փալաս, կարպետի հասարակ տեսակը։

Քի.

Քեալթա, պարկեշտ։
«Քեանդիւկ» Մանան, մականուն։
Քուլա-քուլա, գունդ գունդ։
Քօհնայ, հին։
Քեօնդալա գցել, կողքի վրայ գցել։

Քեռամալ փայտ, օձաձև փայտ։
Քեանդռ, պարան։
Քիրթ կարել, յանկարծ կարել։
Քիթիվ անել, քթվել։
Քալաֆ, կարժ, չուլ, չուլ։
Քեռը փէշման, փոշիմանած։
Քեալլափաչախարան, հարսանիքի երրորդ օրը երբ հիւրերին կերակրում են ոչխարի ուռուզլխով։
Քրսին, ասիական վառարան։
Քիշի, մարդ։
Քեասագ, հողակոշտ։
Քոմակ, օղնութիւն։

Օ.

Օվդար, լաւ տանտիկին։
Օֆարիմ, գովասանական բացականչութիւն։
Օուջ, ձեռի ափ։
Օֆտեան գեալ, յաղթել։
Օխլամիշ, վիրաւորած։

Ֆ.

Ֆալախկայ, պատժելու գործիք։
Ֆլան բէշմաքան, այս ինչ, այն ինչ։

ՍԽԱԼՆԵՐ

ԵՐ.	ՏՈՂ.	ՏՊՈՒԱԾ Է.	ՊԻՏԻ ԿԱՐԴԱԼ.
4 —	22	էին	էր
5 —	22	վրա	վրայ
6 —	12	յոնքերը	յոնքերը
7 —	16	սուք	սուգ
10 —	11	չարժում	չարժվում
12 —	22	լսողի մէջ	լսողի վրայ
12 —	24	Սա	Սրանք
19 —	3	կրկին նորից	դարձեալ
19 —	21	ալեխառն	ալէխառն
20 —	2	հոռռայ	հուռռայ
21 —	6	ղորթ	ղորդ
21 —	24	փթած	փտած
22 —	21	կոպի	կոթի
22 —	27	խօսքերից	խօսքերիցդ
22 —	34	Սէյրանիտ	Սէյրանիդ
23 —	11	լսում եմ	լսում ես
23 —	32	բէշիդքեարթմա անենք	բէշիդքեարթմա անենք
24 —	27	այնպէս	այդպէս
26 —	14	թամքի	թամքի
26 —	19	խաղաղում	խաղաղվում
26 —	22	կենդանութիւնից-	կենդանութիւնից։
28 —	27	դու դու	դու
29 —	1	,որ այս	,այս
29 —	3	քաղելով	քաղելով
31 —	18	կճռոտած	կնճռոտած
35 —	19	ոչիլ	ոջիլ
39 —	19	տունչերը	դունչերը
40 —	8	պարդեր	պարդեր
41 —	22	ես	սև

ԵՐ·	ՏՈՂ·	ՏՊՈՒԱԾ Է·	ՊԻՏԻ ԿԱՐԴԱԼ·
42	16	Նշան դրէք	Նշանդրէք
47	4	սոի	ոսի
53	32	չոք	չոգ
54	2	բաշիրի	Բաշիրի
54	22	մտածմունքներին	մտածմունքը
57	36	բուղմաններով և վազ-մաններով	բուղմաններով և վազ-մաններով
58	20	մանէթի	մանէթին
58	21	հափի	հաբի
58	35	եռեից	հեռանան
59	32	ես էլ իմ	ես էլ եմ
63	2	փթում էր	փոում էր
64	12	լըկտվածի	լըկտավածի
64	25	ողողը	ուզեղը
68	15	թոռ	թիւ
69	34	ընտանիքներր	ընտանիքները
70	7	անցքերից՝ յուղված վինելով	անցքերից յուղված վի-նելով՝
74	37	խեղջմ	խեղճ
75	8	կծքի	կրծքի
75	18	եվոում	եւում
75	33	կայյ	կայ
77	36	Ոէյրանի	Սէյրանի
78	23	վինի ուր՝	վինի՝ ուր
81	3	,մէկը	մէկը՝
83	7	առնրման	առնրմ ան
86	24	նրա	նրանց
89	6	չըպպանիկին	Շըպպանիկին
90	21	քողը	չղթան
92	19	լեզուդ կպչի՝	լեզուդ դամաղիդ կպչի՝
97	4	բոպէ	բոպէին՝
101	4	քարեր	քարերի
101	17	լայն չաբկի՝ ընկեր	լայն չապկի ընկեր՝
102	2	տերևաձև՝	տերևաձև
102	7	տակից՝	տակից

ԵՐ·	ՏՈՂ·	ՏՊՈՒԱԾ Է·	ՊԻՏԻ ԿԱՐԴԱԼ·
102	30	փղած	փտած
102	34	իմանում է	իմանում թէ
103	4	հուղում	հողում
103	22	որ հաց՝	հաց՝
105	11	կապը՝ կարած	կապը կտրած՝
105	21	—ցեռոյ՝ յետոյ՝	—ցեռոյ՝ յետոյ՝
106	21	բարով	պարով
108	7	փողներից	փողոցներից
108	26	մինոուն	մինոյնն
109	34	նրանց վրայ	նրանցից
110	31	ունէն՝	ունէին՝
111	3	երեսին՝	իրեսին՝
117	31	հաց	հանց
121	5	միաբերանբոլոր	միաբերան
124	8	դանձակեցի է՝	դանձակեցի է՝
124	21	սիլի պէս	սելի պէս
136	33	Սօլդուշ	սօլդուշ
139	29	արտէն	արդէն
141	25	վրայկեան	վայրկեան
143	10	անդէն	արդէն
146	13	կույսից	կոյսից
147	23	գինեատուն	գինետուն
149	12	առանձին՝	առանձին
158	27	ապակի	ապակու
163	3	արկաթը	երկաթը
172	11	բեռնեցին	բռնեցին
174	11	կերպարանքր	կերպարանքը
186	24	բարևեն իրան	բարեի նրան
189	33	հրամանց	հրամայեց
198	16	ոսոիկանների	ոստիկանների
202	2	քանդվել՝	քանդվել՝
202	16	բացականչութիւն՝	բացականչութիւն՝
208	27	Շարմաղ՝ կեռ՝	Ղարմախ՝ կեռ՝

ՊԵՏ· ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԹԻՖԼԻՍ

Ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնները կարելի է ստանալ ՔԷ. ընկերութեան գրասենեակից եւ ՔԷ. Կենտրոնական եւ միւս հայ գրավաճառանոցներից։

	Ռ.	Կ.
1) Թաւամազ մեղու. թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան։	—	40
2) Կարմիր լապտեր. թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեան։	—	50
Նոյնը առանց կազմի	—	30
3) Թովմաս եղբօր տնակը. թարգ. օր Ն. Տէր-Մարկոս.	—	60
Նոյնը առանց կազմի	—	45
4) Մանկական երգեր. Գամառ-Բաթիպա	—	25
Նոյնը առանց կազմի	—	15
5) Մարեխ և նրա ջնջելու հնարները. Տէր-Բարսեղեանի	—	10
6) Առողջապահական ընթերցանութիւն,—Նեղ և խոնաւ բնակարանների մասին, Հ. Ս. Ադաբէլեանի	—	10
7) Սրբոյ Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց	—	80
8) Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսութեան, Մորիս-Բլօքի, փոխադր. Ս. Պալասանեանցի	—	50
9) Ռօբինզոնի պատմ. Դիւտ քէն. Աղանեանցի	—	60
10) Գամառ-Բաթիպայի բանաստեղծութիւնք կազմ.	1	20
Նոյնը առանց կազմի	—	50
11) Ուխտաւորք, գործ Վիլհէլմ Հաուֆի	—	75
12) Գառնուկ և լուսատանիկ, Էկպեր Բրիսատիոր Շըմիդտի. թարգմ. Նուարդ	—	25
13) Սայեաթ-Նովա, ազգային երգիչ	—	5
14) Ծննդեան պատմութիւնը և Մայիսեան տօնը Ֆինլանդիայում	—	10
15) Ազաթանգեղեայ պատմութիւն	1	—

Ռ. Կ.

16) Գիւղական խալիֆայ Ա. Աբրահամեանցի..... — 50
17) Վանայ Սաղ Գ. Շերենցի..... — 75
18) Փոչիկ Ա. Աբրահամեանցի..... — 20

Բացի սոցանից նոյն տեղերում վաճառվում են ընկերութեան հետևեալ գրքերը՝

1) Ուսումնարանների առողջապահութեան հարցեր. բժ. Ա. Բարայեանցի..... 1 —
2) Կրքեր և նոցա ազդեցութիւնը առողջութեան վրայ. բժ. Ա. Բարայեանցի..... — 30



15228